Տօքթ. ՅՈՎՍԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ

(ԾԵՐԵՆՑ)

ԹՈՐՈՍ ԼԵՒՈՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ - ԳՐԱՎԱՃԱՌ

ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Յ. Գ. ՊԷՐՊԷՐԵԱՆ — ՏՆՕՐԷՆ

891.99
Շ-45

Նվէր
Հայաստանի [illegible] Թանգարանին
[illegible] [illegible]

891.99
Ճ-45
10 NOV 2011

Տօքթ. ՅՈՎՍԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ
(ԾԵՐԵՆՑ)

ԹՈՐՈՍ ԼԵՒՈՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ – ԳՐԱՎԱՃԱՌ
ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ
Յ. Գ. ՊԷՐՊԷՐԵԱՆ — Տնօրէն

Տպագրութիւն Ի. Ա. ԻՐԱՆ
ՊՈՍԹՈՆ
1917

14.05.2013
35208

PUBLISHED BY
H. G. BERBERIAN
BERBERIAN BOOK STORE
P. O. BOX 34, STA. A.
BOSTON, MASS.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР
4363-78

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

Այսօր ուրախութեամբ հրապարակ կը հանենք մեծանուն պատմավիպագիր Տքթ. Յովսէփ Շիշմանեանի (Ծերենց) ԹՈՐՈՍ ԼԵՒՈՆԻՆ, որուն առաջին, երկրորդ եւ երրորդ տպագրութիւնները — մօտ 50,000 օրինակներ — լափած են Թուրքիոյ եւ Կովկասի հայերը:

Չորրորդ տպագրութիւնը կ'ընենք՝ Ամերիկահայն ալ անմասն չթողելու համար այս պատուական երկէն, որուն պակասը վաղուց զգալի եղած էր մեր մէջ:

Աշխարհաւեր պատերազմին իբր հետեւանք, Ամերիկահայը այսօր գրեթէ բոլորովին զրկուած է հայերէն գրքերէ: Պոլիսը մեր գրքերուն աղբիւրն էր, ուրկէ կրնայինք առատօրէն բերել եւ տարածել Ամերիկահայուն գրենական պէտքերուն, բայց դժբաղդաբար այդ աղբիւրը ցամքեցաւ մեր առջեւ, եւ կը վախցուի որ բոլորովին ալ չորցուած ըլլան անոր ակը:

Ուրեմն, իբրեւ գրավաճառ, մեզի կը մնար միջոցներ խորհիլ հայերէն լաւագոյն գրքերէն գէթ քանի մը հատը հայթայթել Ամերիկահայուն ժամանակաւորապէս՝ անոր գրքերու հանդէպ ունեցած ծարաւը յագեցնելու համար մասամբ:

Այս դիտաւորութեամբ ձեռնարկեցինք հրատարակելու շարք մը գիրքեր, որոնց առաջինն է «Թորոս Լեւոնի»ն, եւ յաջորդաբար պիտի հրատարակենք Ծերենցի միւս գործերն «Երկունք»ը եւ «Թէոդորոս Ռշտունի» ն,ինչպէս նաեւ ուրիշ կարեւոր հրատարակութիւններ:

Լիայոյս ենք որ Ամերիկահայը պիտի գնահատէ մեր ջանքերն ու զոհողութիւնները:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ

Մայիս 1, 1917
Պօսթըն, Մէս.

ՏՕՔԹ. ՅՈՎՍԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ

(ԾԵՐԵՆՑ)

Վիպասան եւ հրապարակագիր

Ծնած է Կ. Պոլիս, 16 Սեպտ. 1822

Մեռած է Թիֆլիս, 17 Փետր. 1888

ԹՈՐՈՍ ԼԵՒՈՆԻ

ԳԼՈՒԽ Ա.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1145-ԻՆ

ԲՈԼՈՐՈՎԻՆ տարբեր քաղաք մըն էր Կոստանդնուպոլիս քաղաքը Քրիստոսի 1145 թուականին, որ այսօր Ստամպօլ կ'անուանուի. ամէն պատմիչներ և ճանապարհորդներ սքանչանալով կը պատմեն անոր հըրաշալիքը՝ որ թէ' Եւրոպայի ժողովրդոց և թէ Ասիոյ Արաբացւոց զարմանքը կը շարժէր։ Հիմակուան Նուրի Օսմանիէին տեղը՝ համբաւաւոր հռովմէական Ֆօրում բռնուած կրկէսն էր, ընդարձակ ձուաձեւ տարածութեամբ, փառաւոր կամարակապ դահլիճներէ և արձաններէ շրջապատեալ, և մուտքի համար երկու յաղթական կամարներ կը յաջորդէին, 120 ոտք վերամբարձ Տօրիկեան սիւն մը՝ Փիդիասի ձեռագործ պղինձէ Ապողոնի արձան մը կը կրէր, որուն գլուխը արեւի ճառագայթներ կը ցոլային՝ գաւազանը և գունտը ձեռքին մէջ։ Պուքօլէօնեան արքունիքը, որ հազար տարի կայսրերու բնակարան եղաւ, իր փառաւորութեամբ, ընդարձակութեամբ և ամրակառոյց հաստատութեամբ գերիվեր էր քան Կապիտոլէոնը, քան Պերկամայի արքունիքը, Ադրիանոսի կիզիքի տաճարը, Եգիպտական բուրգերը և փարոսը։ Երեք գմբեթներ անոր գուխը

կը պսակէին և պղինձէ ոսկեզօծ երդիքը Իտալական մարմարէ սիւներ կը վերցնէին. իր աճագին պարտէզները աստիճանաբար Պրոպոնթիսի ծովեզրը կ'իջնէին, հինգ եկեղեցիներ իր մէջ կը պարփակէր. Փռիւգեան կնճեայ սիւներով կամարակապ ու անրաւ սենեակներն ու սրահները՝ մօզայիքներով, արձաններով և պատկերներով որ տեսնողներուն զարմանք կը պատճառէին։ Արեւելեան պերճանք և արեւմտեան ճաշակ միացած էին զարդարելու համար այս քաղաքը. օտարականը կ'ապշէր երբ ամէն անկիւնի գլուխ՝ հոս ոսկեղէն դուռ՝ հոն մարմարինէ մարդոց և կենդանիներու արձաններ, անդին պղինձէ փիղեր կը տեսնէր։ Եւ գարնան ժամանակ բնութեան գեղեցկութեան չափ չկար։ այդ գեղեցիկ ծովը ցամաքը կը շրջապատէր իր հսկայ ծառերով, իր հարուստ բոյսերով, իր համով պտուղներով, իր գեղեցիկ առուակներով, սոխակներու երգերով, և Կոստանդինի քաղաքը կանգուն իր բարձր պարիսպներով, որու ամրութիւնն էին երեք հարիւր ութսուն և վեց աշտարակներ, վեհ կ'երեւար քան ամէն մայրաքաղաքները, դիրքով, օդով և իշխանութեամբ. ու մոռցնել կուտար Հռոմը, Երուսաղէմը և Բաբելոնը։

Ժողովուրդը, ինչպէս բոլոր մեծ քաղաքներու մէջ ամէն վիճակի մարդիկներուվ լեցուն, ամէն տեսակ կերպարանքներու և հագուստներու զանազանութիւն կ'ընծայէր աչքերու. իսկ այն պալատին և կրկէսին շրջակայքը՝ իշխանաւորաց գահաւորակները, տապետաց ձեւերուն խրոխտութիւնը, զինուորաց արհամարհոտ գոռոզութիւնը, հասարակ ժողովրդեան զբաղման երթեւեկը՝ դիտող աչքերու զբօսանք մըն էր։

Բայց այս ժողովրդեան բարոյական և ներքին վիճակը արտաքին տեսքին տարբեր կերպով կը պատասխանէր. քաղաքին մէկ մասը՝ աղտոտ, զազիր, մշտընջենաւոր մութի դատապարտուած, վասնզի հարուստները տուներով կը նեղցնէին ճամբաները ու աղքատներուն խաւար և աղտեղութիւն կը ձգէին։ Նեղ ճամ-

բաներու մէջ գողեր ու մարդասպաններ կը վխտային և ամէն չարագործութիւն կը դիւրանար խաւարին մէջ։ Արդարութիւն չկար ամենեւին և ոչ ամօթ, վասնզի անզգամութիւնը օրէնքներէ չէր պատժուեր և ոչ ալ հեղինակը կը նշմարուէր։

Այս վիճակին մէջ անշարժ բան մը եթէ կար և որ փոփոխութիւն չէ կրած տարիներէ ի վեր, ծովն էր օձապտոյտ շրջաններով որ Վոսփորէն վար նոյնպէս անփոփոխ կը տարածուէր իր փայփլուն և գեղեցիկ ալիքներով և երկինքը իր անջինջ պայծառութեամբ։ Եւ այս ծովուն վրայ, ինչպէս այսօր, նաւերն ու նաւակները կը վխտային, նաւաստիներուն աղաղակը, խուժանին շարժումներն ու ժխորը ամէն բան կը կենդանացնէր, ձայները՝ փոխանակ Թրքերէն ըլլալու յունարէն էին. շարժումները աւելի եռանդուն էին և ասիական ծանրութիւնը չունէին։

Վեցզուգաթի նաւակ մը Իշխանաց կղզիներէն կ'իջնէր ան միջոցին, ճեղքելով ջուրը ուժգնութեամբ և կը մերձենար արքունեաց ծովեզրին որ դէպի Պրոպոնտոս կը խոնարհէր։ Պալատական պաշտօնեայ մը՝ նաւուն մէջ ղեկին քով նստած էր, քովը երիտասարդ մը որ գրեթէ չէր խօսեր, և հազիւ միավանկերով քովի շարունակ խօսող պաշտօնատարին երբեմն կը պատասխանէր. ճերմակ բեհեզեայ նիւթ մը գլուխը փաթթած, լայն և բարակ մոխրագոյն վերարկու մը վրան, ասուէ բանուած բաճկոն մը հազիւ կ'երեւէր, որ իր անդրավարտիքին վրայ կ'իջնէր, ոտքերը կօշիկներ և իր վրայ ամենեւին զէնք չկար. կը դիտէր, կը լռէր, կը տեսնէր, բայց իր սուր և խոր ու սեւ աչքերը՝ իր երկայն արտեւանունքներէն ծածկուած, երբ դիմացինին երեսը կը նայէին այն ժամանակ միայն պարզութեան ու միամտութեան քօղ մը կ'առնէին և իր միտքը բոլորովին հեռու էր։

Կարելի չէր սուր աչքի մը իր կորովի ձեւը չի նըկատել, Թէպէտ ինք Թոյլ և անհոգ կերպ մը առնել

կը ձեւանար. ու աչքերը՝ որ մարած էին ընդհանրապէս, յանկարծ մռայութեան փայլակներ կ'արձակէին, իր դեռաբոյս ընչացքն և գանգուր մօրուքը՝ մասամբ իր ծնօտը կը ծածկէին, մազերը՝ գլուխը կը պսակէին, և այդ զօրաւոր ու ջղուտ կազմուածքը՝ հազիւ քսանքսաներկու տարու զինք կարծել կուտար տեսնողներու. միայն երկու յօնքերուն մէջ խորհրդածութեան ուղիղ գիծը կրնար մատնել թէ այս պարզութեան տակ խորին խորհուրդներ կը ծածկուէին:

Նաւակը ծովեզրը հասաւ և պաշտօնատարին զինուորներն ու ծառաները դուրս թափեցան օգնելու իրենց տիրոջը՝ որ իշխանական ծանրութեամբ քայլերը կ'առնէր. իսկ մեր երիտասարդը՝ առանց բերանը բանալու, տարեց՝ գրեթէ յիսնամեայ մարդու մը ձեռք տուաւ և ելաւ, ու երբ թէ աչքերը գոց՝ կը հետեւէր պաշտօնատարին՝ որ երբեմն ետին դառնալով և իրեն աչք մը ձգելով՝ պարտէզներու, ծաղիկներու, արուեստական լճակներու, կամուրջներու և արձաններու մէջէն կը շարունակէր իր ճամբան, մինչեւ որ հասան փառաւոր դրան մը առջեւ, ուր չքեղազարդ սպասաւորներու և թիկնապահներու խումբ մը կ'իմացնէր ինքնակալին ներկայութիւնը: Հոն, պաշտօնատարը առաջ անցնելով՝ նուաստ խոնարհութեամբ ողջունելով գոռոզ երիտասարդ մը՝ որ անձնապահապետի պաշտօնը ունենալ կ'երեւար, անոր ցոյց տուաւ պատանին և կամաց ձայնով մը.

— Ահա՛ ապստամբ Հայուն որդին, զոր ըստ բարձր հրամանի բերի, ըսաւ:

Երիտասարդ անձնապահապետը, որ կոմսի տիտղոսն ունէր, ամբարտաւանութեամբ.

— Սպասեցէ՛ք, պատասխանեց և գլուխը անդին դարձուց:

Իսկ Աղոտամբէն Որդէն՝ բառի մը, շարժմունքի մը, վատութեան մը, ամբարտաւանութեան մը և ո՛չ մէկ փոքրիկ մասնիկը կորսնցուց. իր ծածկուած աչքերը ամէն բան կը տեսնէին և իր անտարբերութիւնը ամէն

բան կը լսէր: Եւ, զարմանալին այն է որ, այդ կոշտ արհամարհանաց, այդ երիտասարդին յունական տիտղոսին ներքեւ Հայ մը նշմարելով նաեւ՝ անդրդուելի կերպարանքը հաստատ պահեց: Վասնզի, արտին անթափանց խորերուն մէջ, իր արհամարհանքը՝ կայսերական պալատան գմբեթներէն ա՛լ աւելի բարձր երվասնզի արդէն որոշած էր իր նշանաբանը՝ — Համբերութիւն անխռով: Ուստի, նոյնպէս մարած աչքերու քօղով կը դիտէր այդ թիկնապահաց զինուորական խումբը՝ որ 3500 հոգի էին՝ մեծ մասամբ Հայերէ կազմուած, ոսկի և արծաթ զէնքերով պերճացեալ:

Ամէն վայրկեան շարունակ կը հասնէին՝ էրէ-էլչիներ, յորտաղտի-ներ, ամնապալմաներ և ամնաչատրէաչներ, նաեւ ամնաողնաչաններ՝ կայսերական ընտանիքի անդամներէն: Իսկ ծերակուտականներու, հիւպատոսներու, ներքինապետներու, պատրիկներու, սեբաստոսներու, զօրավարներու, կիւրապալատներու, դանձապետներու, մետրապօլիտներու և ուրիշ բարձրաստիճան կղերականներու և իշխանազուն տիկնանց ու օրիորդաց անբաւ շարժմունքը, անոնց ճոխ պերճանքն ու ոսկեթել կերպասներ, ծիրանիներ, ակունք և մարգրիտներ աչքերը կը շլացնէին, աննկարագրելի էր. ինչպէս իւրաքանչիւրին իրարու հանդիպած վայրկեանին՝ սիրոյ, բարեկամութեան և քաղաքավարութեան ցոյցերը, որ Աստուած միայն գիտէր թէ՝ որքան ատելութիւն, որքան նախանձ, որքան հեռ կը ծածկէին մեծ մասը:

Եւ Աղոտամբէն Որդէն այս ամէնը կը դիտէր և կը խորհրդածէր իր միամիտ կերպարանքին ներքեւ, մինչ դեռ մեծ շարժմունք մը, բոլոր պալատականները կը դղրդէր, իմացնելով թէ՝ կայսերական ներքին սենեակները բացուեցան:

Նոյն վայրկեանին, զինուորական հագուստներու պարզութեամբ մարդ մը, կորովի և քաջակառոյց կազմուածքով, դիտող աչք մը յանկարծ նետեց մեր պա-

տանիլին և դէպի իրեն ուղղելով քալուածքը, հեգնող ամբարտաւանութեամբ մը վերէն վար զննելով՝

— Կ'երդնո՛ւմ, ըսաւ, որ ապստամբ Լեւոնին տղան ես դուն. առանց պատասխանին ալ սպասելու, շարունակեց. հայրդ նախ երբեմն Կիլիկիա ճանչցայ, եղբայրդ հոս ճանչցայ, և քանի մը ներկաներու դառնալով՝ արհամարհանօք մը աւելցուց:

— Առիւծներն ալ իրենց վիժածը ունին, և իր երկայն սուրին շառաչիւնովը հեռացաւ, ու ամբողջ սեթեւեթեալ պալատականներ խորշելով ճամբայ կուտային իրեն, մինչեւ անհետացաւ:

Ծերը, որ իր երիտասարդ տիրոջը քով կեցած էր յարգանօք և արձանի պէս մինչև նոյն վայրկեանը կենաց նշան ամենեւին չէր տուած, այս վերջին նախատանաց ձայնէն յանկարծ ցնցուելով՝ աչքերը դարձուց անոր, որ անշարժ իբր անզգայ, հանդարտ ձայնով մը.

— Ի՞նչ է, Բա՛րկէն, հարցուց:

— Լսեցի՞ր, տէ՛ր, այս մարդուն հայհոյութիւնը:

— Լսեցի:

— Գիտե՞ս թէ ո՛վ է այդ անզգամը:

— Գիտեմ, Անդրոնիկոսն է:

— Ո՛հ, թէ որ ինձ թողուէր...

— Գիտե՛մ ինչ պիտի զրուցես, գիտեմ թէ ի՛նչ կ'ընէիր, բայց քեզի ըսած եմ թէ՝ ես և ինձ հետ գըտնուողները՝ ոչ կիրք, ոչ բարկութիւն, ոչ զօրութիւն, ոչ ցոյց, ոչ խելք և ոչ զգայութիւն պիտի ունենան, ուրեմն դուն ալ պէտք է իմ օրինակիս հետեւիս՝ մինչև որ ժամանակը գայ: Համբերել և լռել, այս է մեր օրէնքը:

Եւ այս խօսքերը այնպիսի ցուրտ արեամբ և անհոգութեամբ ու կամաց ձայնով զրուցուեցան, նաեւ Բարկէն այն վայրկեանին այնպիսի անհոգ ձև մը առաւ որ, ոչ կրցաւ նշմարել թէ՝ աս խօսքերը ապագային վրէժխնդրութեան օրէնքը կը պարունակէին:

Եւ ահա՛ արքունի սենեկապետ մը մօտենալով այս մեր խումբին.

— Հայ Լեւոնի որդին Թորոս ո՞վ է, հարցուց:

Երիտասարդը իբր քունէ արթնցած.

— Ե՛ս եմ, պատասխանեց:

— Եկուր ուրեմն, կայսրը քեզ կ'ուզէ, ըսաւ սենեկապետը:

Երբ դահոյից սենեակին առջեւն հասան, պահապանները ըստ սովորութեան Թորոսի վրայ փնտռեցին որ զէնք չի գտնուի. արարողապետը իրեն իմացուց թէ՝ ի՛նչ էր երկրպագութեան և շարժման ձեւը, և իբրեւ թէ կասկածելով լողլին իմացականութեան վրայ կրկնեց և ներս մտցուց:

Արծաթէ պատուանդաններով ոսկեղէն դահոյից վրայ նստած էր Մանուէլ Կոմնենոս կայսրը, զոր մեր պատմիչները Կիռ Մանուէլ կ'անուանեն, Կոստանդին Պէրպէրուժէնին որդին էր՝ որ Լեւոնը գերի տարեր էր: Յաղթանդամ և կորովի երիտասարդ մըն էր, պսակն ի գլուխ, գաւազանն ի ձեռին՝ շրջապատուած ի՛նչ որ բնութիւնը և մարդկային արհեստները սքանչելիք կրցեր են ստեղծել, չորս կողմէն շրջապատուած մեծամեծներէ և տիկիններէ:

— Վե՛ր կաց, որդիդ Լեւոնի, ըսաւ կայսրը, արև և ազատութիւն կը շնորհեմ քեզ, տուն և ռոճիկ և ամէն պէտքերդ գանձէն պիտի հոգացուին. ջանա՛ արժանի լինիլ բարութեանցս և երախտագիտութիւնն լինի քու առաքինութիւնդ:

Եւ դառնալով կղերականաց բազմաթիւ խումբին, ուր բարձր աստիճանի պատրիարքք, մետրապոլիտք և եպիսկոպոսք ծանր և պատկառելի շարուած էին.

— Իմ կրօնական դիտաւորութիւնքս ալ, սուրբ հարք, ետքը ձեզի կ'իմացնեմ, և կը փափաքիմ որ այս ազնուական երիտասարդին հոգեկան դաստիարակութեանն ալ խնամք չի մոռնաք:

Խորին խոնարհութեամբ սուրբ հարք պատասխա-

նեցին՝ իրենց սայրասուր աչքերը Հայ երիտասարդին վրայ նետելով։

Կայսերական ընդունելութիւնը վերջացաւ և Թորոս դուրս ելաւ գահոյից սենեակէն և հազիւ թէ քանի մը քայլ հեռացաւ, փոքրահասակ մարդ մը, որ իր անձին մեծութիւն տալու համար՝ կրցածին չափ կանգուն վիզը կ'երկնցնէր, զուարթ երեսով մը իրեն մօտենալով․

— Կայսրը ինձ հրամայեց որ ձեր անձին պէտքերը խնամքով հոգամ, ուստի հրամայէ որ երթանք միատեղ ձեր բնակարանը ձեզի ցոյց տալու։

Թորոս անխօս սկսաւ հետեւիլ մարդուն։

Հազիւ թէ քանի մը քայլ մնացեր էր պալատի մեծ դրան, և ահա պարզ հագուած մարդ մը մօտեցաւ մեր կարճահասակ կոկոզավիզ պաշտօնատարին և կամաց ձայնով մը սկսաւ խօսիլ, և քիչ մը առաջ անցնելով մեր կարճուկը կանգ առաւ և բարձրկէկ ձայնով՝ բայց խոնարհաբար․

— Խնդրեմ, ըսաւ, իր բարձր վիզը վար առնելով, խնդրեմ, քիչ մը սա սենեակը մտնենք, որպէսզի լաւ իմանամ թէ ի՛նչ է ձեր յանձնարարութիւնը։

Երբ սենեակը մտան, մեր չորս անձերը, Թորոսին նստարան մը հրամցնելով, որու մօտ արձանի պէս կանգնեցաւ Բաբկէն, իրենք բաւական հեռացան, այն ատեն պաշտօնատարը ըսաւ չփոթած ձայնով մը․

— Ձեմ կրնար հասկնալ թէ իմ պաշտօնս ի՛նչ պիտի ըլլայ ան ատեն։

— Ձեր պաշտօնը պարզ ձեւ մը պիտի ունենայ և շատ հանգիստ․ ի՛նչ ռոճիկ՝ ի՛նչ ծախք որ պիտի ընէք կամ համարուիք ընելու թէ՛ տան վարձքի, թէ՛ ըռնունդի, թէ՛ զգեստի, թէ՛ ծառայի և թէ վերջապէս ամէն բանի համար պարզապէս ծոցերնիդ դնելու նեղութիւնը պիտի քաշէք։ Ահա այսչափ, և աս ալ կարծեմ շատ ծանր և անտանելի բեռ մը չի կրնար համարուիլ ոեւիցէ մարդու համար։

— Իսկ իմ պաշտօնս ի՛նչ պիտի ըլլայ։

— Կ'երեւայ որ չի կրցայ իմացնել, թէպէտ շատ որոշ զրուցել կարծեցի։ Փոխանակ այս ազնուական երիտասարդին խնամոց հոգը ունենալու՝ ծախքերն ընելու՝ վերջապէս իր մատակարարը ըլլալու ամենեւին բան մը պիտի չընէք․ երբ կայսերական թոշակները կ'ելլեն, կ'առնէք ծոցերնիդ կը դնէք, ողորմութիւն կ'ընէք, եկեղեցիներուն կուտաք, ինչ կ'ուզէք կ'ընէք։

— Այդ իմացայ, բայց ես ի՛նչ պիտի ըլլամ։

— Տէր էք լինիլ ինչ որ կամիք լինել, ինչով որ կ'ուզէք զբաղիլ։

— Ի՞նչ զրուցեմ թէ որ հարցնեն այս երիտասարդին համար։

— Ես ձեզ կ'ապահովեմ որ մէկը բան մը պիտի չի հարցնէ, և դուք ալ ազատ կ'ըլլաք չպատասխանելու։

— Բայց թէ որ ետքը խնդիր ըլլայ…

— Իմ, այսինքն ինձ յանձնողաց կողմանէ, և սա Հայ երիտասարդին կողմանէ ամենեւին խնդիր մը չի կրնար ծագիլ, միայն քեզի կը մնայ խոհեմութեամբ վարուիլ քու հաշիւներուդ մէջ և չափազանցութեամբ բան ամենեւին չընել, որպէսզի վերջը խոյզ խնդիր լինելով թէ դու քու վաստակդ չի կորսնցնես և թէ՝… վերջապէս դու չի վնասուիս։

— Հիմա հասկցայ, ըսաւ մեր բարեկամը խորին յարգանօք և զուարթութեամբ, շատ շնորհակալ եմ որ ինծի այսպէս տիրութիւն մը կ'ընէք և իմ շահերուս այսպէս կը պատասխանէք, աս ձեր բարեկամութեան չեմ գիտեր թէ ի՛նչ տեսակ շնորհակալութիւն ընեմ։

— Մի միայն մէկ կերպով, այսինքն լուռ և անշըշունչ մնալով, ամենեւին եղածին վրայ ուրիշներու հետ չի խօսելով և թէ որ կը ներէք ըսել՝ չի շաղակրատելով, վասնզի ան ատեն կ'իմացուի և գանձը ձեզի բան մը չի վճարեր։

— Իրաւունք ունիք․ ուրեմն ես երթամ քանի որ իմ պաշտօնս յայտնի եղաւ։

— Այո, բայց միայն սա դռնէն գոնէ մէկտեղ դուրս ելնենք։

— Շատ լաւ, սիրով, ըսաւ մարդը, և քանի մը քայլ առաւ դէպի դուռը, յանկարծ իբրև քունէ արթըննալով և խելաբերելով դարձաւ իր բարի խրատատուին։

— Բայց դուք ի՛նչ շահ ունիք, ըսաւ, այս գործիս այսպէս ըլլալուն որ ինծ այսչափ բարութիւն կ՛ուզէք ընել, այդ կ՛ուզեմ հասկնալ։

— Թէ որ դուք այսչափ կը հետաքրքրուիք, և ինծ այնպիսի բաներ կը հարցնէք որոնց պատասխանը չեմ գիտեր, ինծ ուրիշ բան չի մնար՝ այլ միայն քալել երթալ. վասնզի ինչպէս որ դուք բարձր հրամանաց հընազանդելու պարտաւոր էք, նոյնպէս և ես, թերևս ա՛լ աւելի։

Ուստի, քիչ մը ատեն կանգ առաւ, և դարձեալ մտածելէն վերջը՝ արթուն պաշտօնատարը հաշիւ մը ընելով որ այն մարդուն խօսքը մտիկ ընելն էր իրեն համար շահաւոր։

— Գոնէ, ըսաւ, ինծ իմացուցէք որ ո՞ւր պիտի նստին աս անձինքը, որ երբ ինծ տեղեկութիւն մը հարցընեն կարենամ պատասխանել։

— Շատ լաւ, ըսաւ խօսակիցը, երթանք մէկտեղ։

———***———

ԳԼՈՒԽ Բ.

ԲՆԱԿԱՐԱ՞Ն ԹԷ ԴԱՐԱՆ

4363-78

Այսպէս, երկու յոյն առջևէն և Թորոս ու իր ծառան ետևնուն անցան արքունի դռնէն որ ի կրկէս կը հանէր, նոյնպէս կրկին յաղթական կամարներէն, և վերջապէս մտան բուն քաղաքը, ուր բարձր երկայն պատեր, մեծամեծ դռներով պալատներ և երևելեաց տուներ կը նշանակէին, որոնց երբեմն կը յաջորդէին փոքր և ցած փայտաշէն տուներ, և ուր տեղ-տեղ ժողովուրդը կը խռնէր, ինչպէս ամէն մեծ քաղաքներու մէջ սովորական է, և դարձեալ ամայի փողոցներ, մինչև հասան պարզ դրան մը առջև, որ բարձր քառակուսի պատի մը մէջտեղ բացուած էր, և երբ դուռը զարնուեցաւ՝ շուտ մը բացուեցաւ, սովորական պարտէզ մը տեսնուեցաւ քանի մը մեծամեծ ծառերով և խիտ առ խիտ վարդենիներով զարդարուած. պարտէզին վերջին ծայրը բնակութեան տունն էր, կրկնայարկ տուն՝ բոլոր պատուհաններն պարտէզին վրայ կը նայէին երեք կողմէն։ Իսկ ինչ որ ծառայութեան կը վերաբերէր՝ միայարկ պարտէզին դրան քովի պատերուն տակ շինուած էր։

Դուռը բացողը իր հագուստներէն յայտնի՝ սովորական մաքուր տունի մը ծառայ էր, և երբ այս մեր չորս անձինքը ներս կը մտնէին, տարեց կին մը խոհանոցին դռնէն գլուխը դուրս երկնցնելով կը նայէր ընական հետաքրքրութնամբ մը։ Դռնէն ներս մտնելնին դրածնուն պէս առաջնորդը դարձաւ ըսաւ կարճուկին.

— Բարեկամ, ահա տունը ճանչցաք կարծեմ, ունիք ուրիշ փափաք մըն ալ։

— Ոչ, այլ...

— Ուրեմն մեր կողմնակի դաշնադրութիւնը կա-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм ССР

տարեալ է, ըսելով այնպիսի ձեւ մը առաւ որ կ՚իմացընէր դիմացինին թէ երկար խօսելու ժամանակ չկար. ուստի ան ալ հասկնալով բարեւ մը տուաւ և դուրս ելաւ՝ Թողլով իր երեք ընկերները այդ տան առանձնութեան չորս պատերուն մէջ, որ տաճկի կանանոցի կամ կուսանաց վանքի մը կը նմանէր եթէ իր փոքրութիւնը չըլլար: Երբ դուռը գոցուեցաւ՝ ան ատեն անծանօթը պարզ և խորին յարգանօք դարձաւ Թորոսին և ձեռքով տանը ներքին դուռը ցուցնելով.

— Կ՚ուզէ՞ք, իշխան, ձեր բնակարանը տեսնել, ըսաւ, և ինչ որ պակաս կայ հրամայել ձեր ծառային:

Իսկ ան որ տարիներէ ի վեր բացի Բարկէնէն ուրիշ մը այսպիսի վարմունք չէր տեսած, դարձեալ ամենեւին զարմանք ցոյց չի տալով իր անտարբեր կերպովն առաջ անցաւ. գտաւ փոքրիկ սրահ մը, երկու կողմը, որոնց մէկը սեղանատուն էր, միւսը հիւր ընդունելու սենեակ, իրենց ամէն կարասիքով, սրահին ծայրը սանդուխ մը որ վերի յարկը կը տանէր, ուր նոյնպէս երկու սենեակ կար, մին անկողնոյ, միւսը՝ աշխատութեան, ուր բացի կարեւոր բազմոցներէ և կարասիքներէ, կային մաքուր զէնքեր պատերէն կախուած. անկողնոյ սենեակը ազնուական երիտասարդի մը պէտք եղած ամէն զգեստեղէնք կային, նոյնպէս անկողնոյն պարզ հանդերձանքը կ՚իմացնէին թէ արթուն կնոջ մը աչք կամ ձեռք անցեր էին հոնկից փոքրիկ բաղանեաց խուց մը՝ անկողնի սենեակէն դռնով մը կը զատուէր: Երբ աս ամէնքը տեսան, առաջնորդը դարձեալ.

— Դեռ ի՞նչ բանի որ պէտք ունիք, իշխան, խընդրեմ, հրամայէք, ըսաւ:

Իսկ Թորոս առաջին անգամ իր սուր աչքերը ցուցընելով դիմացինին, ըսաւ.

— Վայրկեան մըն ալ աս սենեակը դառնանք:

Եւ երկրորդ անգամ դիմացի սենեակը մտնելով՝ չիտակ ձեռքը երկնցուց կորաձեւ ահագին սուսերին,

որ պատէն վար կախուած էր, վար առաւ՝ կէս մը քաշեց պատեանէն՝ զննեց, և ճանչնալով իր հօր Լեւոնին սուրը, և դարձեալ իր տեղը զետեղելով՝

— Բարեկամ, զրուցեց հատիկ հատիկ բառերուն վրայ կենալով, կը զրուցես անոր որ աս տունը պատրաստեց, եթէ հրեշտակ է, իմ սրտիս կէսն իրն է այս վայրկեանէս, և կեցաւ:

Մարդը՝

— Երբ հրաման ընէք հօստեղի սպասաւորին՝ պատրաստ եմ միշտ ձեր ծառայութեան, ըսաւ և խոնարհ ձեւով ողջունեց ու գնաց:

Ան ատեն Թորոս դառնալով ծառային.

— Բարկէն հայրիկ, ըսաւ, աս տանը դիրքը տեսա՞ր, ել, քանի մութը չէ կոխած, շուրջը պտոյտ մը ըրէ, դիտէ՝ առանց դիտելու, տես՝ առանց նայելու, նայէ աս տանը կռնակը ի՞նչ տեղի կը պատասխանէ, աս պատը ինչի՞ յեցեալ է, տո՞ւն է թէ պարտէզ, տեղեկութիւն մը. մի ուշանար որ կերակուր ուտենք:

Երբ Բարկէն գնաց, ելաւ Թորոս անշշունչ քննելու տախտակամած պատերուն շէնքերը, ամենէն փոքրիկ ճեղքը մանր զննութեան նիւթ եղաւ իր արծուի աչքերուն, և վերջապէս անկողնոյ սենեակին մէջ կանգնեցաւ հատուածոյ տախտակի մը առջեւ և հեգնական ժպիտ մը ծնաւ իր շրթանց վրայ:

— Ահա՛ իմ փնտռածս, կ՚ըսէր, դաւաճան տախտակ, դուն բիւզանդացի դուռ մըն ես, բայց ի՞նչ կը ծածկես քու կռնակդ, իրաւ աս անկողինը, աս բեհեզեայ վարագոյրները, աս զգեստներուն ծալքերը նաեւ կը զրուցեն թէ հրեշտակի մը թեւերը անցեր են անոնց վրայէն, բայց հազար տարի առաջ վկայուած է թէ խաւարի հրեշտակներ կային որ լուսոյ հրեշտակաց կերպարանք կ՚առնէին, և աս քաղքիս մէջ՝ աս անիծեալ Բաբելոնին մէջ լուսոյ հրեշտակ, ի՞նչ անկարելի հրաշք է. լա՛ւ, այս ամէն բան աղէ՛կ, բայց հօրս սուրը ներսի սենեակը կախուա՞ծ, ի՞նչ կը նշանակէ, ո՞վ

կը նշանակէ․ կի՞ն մը, բայց այդ սուրը յաղթանակի յիշատակաց դանձատունէն հանուած է, ինչ տեսակ կին կրնայ ըլլալ։ Բայց այսօր ինչչափ նոր պատահարք իրարու կը յաջորդեն․ բանտէ ազատիլ՝ եղբօրս դաւաճանը տեսնել որ զիս կ'արհամարհէ՝ կայսրը ու իր ամբարտաւան պատգամը, որ մինչեւ իմ հոգիս հայութենէ հանել կ'ուզէ, ինչպէս իր բոլոր ժողովրդեան հոգին քաղեր իր քահանաներուն հետ բաժներ և Աստուծոյ բան մը չէ ձգեր։ Ոհ թէ որ այդ մարդը իր թագին և իր ժողովրդոց օգուտը ճանչեր, կամ թէ ես իր տեղը ըլլայի՜...։ Ես իմ բանտիս մէջ ինչ որ իմ ազգիս՝ իմ տոհմիս անցեալին վրայ սորվեցայ իմ հօրմէս, ինչ որ սա հին Յունաց և արդի Հռոմոց վըրայ ուսայ իրենց գրքերէն՝ որ իրենց վանքերուն գրատանց մէջ փոշոտած և որդնոտած էին թէ որ այդ մեծ թագով պսակեալ գլուխը ուսած ըլլար անշուշտ այդ յիմար ճարտանքը ինծ չէր ըներ․ և փոխանակ զիս նկուն արհամարհելու՝ իմ ազգս հալածելու արեւելեան քրիստոնէութեան փաղանգ մը կը կազմէր՝ կեդրոնացնելու համար իր ազգը և զմեզ, որպէսզի արեւելքի և արեւմուտքի կարենար դիմանալ, որոնց կամ մէկուն և կամ միւսին առջեւ օր մը դիաթաւալ պիտի կործանի և այս մայրաքաղաքը պիտի դառնայ Անի մը հափափեալ և առեւանգեալ։ Բայց, ո՛վ զիս մոռացեալս, ծովուն անապատի բանտեալս՝ յիշել տուաւ այդ աղայամիտ կայսեր որ ինծ «աբէ– և ապաստա–նի–ն» կը շնորհէ․ ո՛հ, իմ սեւ լերան պայծառ արեւս, ե՛րբ քու սև ժայռերուդ վրայ պիտի կանգնիմ, և զԹորոս ան ատեն պիտի տեսնեմ իմ ազգս և օտարները, չէ՛ թէ տղայ մը որ վերէն վար կը կշռեն, այլ հսկայ մը՝ որու հետ խօսելու համար պէտք է վարէն վեր խօսին։ Եւ պէտք է այդ Անդրոնիկոս համոզուի թէ կորիւնը առիւծ է․ ո՛հ դաւաճաններ, խեղճ երիտասարդ մը իրօք առիւծ էր կորիւն առիւծու, իմ եղբայրս, իմ Ռուբէնս ճիշտ այսօրուան տարիքս ունէր, առիւծի ուժ առիւծի սիրտ

ունէր․ աչքին լոյսն առիք՝ արեւը խաւարեցուցիք․ երեք մտանք բանտ, անոնք հոն հալումաշ մեռան, և ես կ'ելնեմ, բայց խրատուած անոնց օրինակէն և անոնց սխալներէն։ Ո՛վ Աստուած իմ, տո՛ւր ինծ մտաց կարողութիւն չի մատնելու զիս մինչեւ որ Ռուբինեան խաչին դրօշակը տնկեմ Տորոսի բարձանց վրայ։ Բայց ահա առջի քայլերս ինծ կը ցուցնեն սա խաւարին մէջ, այս անօք անօգնական թշնամի երկրին մէջ բարեկամ ձեռք մը առ իս կարկառեալ, բայց բարեկամ հազար ձեռքեր միթէ իմ հարազատիս չէի՞ն կարկառեալ գեղեցիկ՝ անձնեայ՝ կորովի՝ անվեհեր՝ սիրելու համար, բարեկամութեան համար միայն ստեղծուած․ ո՛վ կրնար ըսել թէ մարդ մը կրնար գտնուիլ որ զինքն ատէր, կանայք բոլոր իրեն սիրահար էին, երիտասարդք բոլոր իր ձեռքը կը փնտռէին, ո՛հ բիւզանդեան սէր, ո՛հ բիւզանդեան բարեկամութիւն․ սա քաղաքիս պարիսպները ինչչա՛փ անիծեալ կիրք կը պատսպարեն․ այդ պալատին ոսկեզօծ շողշողուն գմբէթները քանի զազիր ապականութեանց պարիսպներ են։ Իրաւ հօրս սուրը իմ սիրտս շարժեց, բայց միթէ Անդրոնիկոս ինք չի՞ կրնար լինիլ այդ սուրը հօս՝ սա պատէն վար կախել տուողը, որպէսզի զիս ալ եղբօրս ճամբան ղրկէ և ազատի ան վրէժխնդրութենէն թէ որ Ռուբէնի նըման եղբայր մը կայ... բայց Ստեփանէ՛, բայց Մլե՛հ ի՞նչ եղան, ձայներնին չի կայ․ թէ որ անոնք չարժէին, կեանքի նշան տային, զիս բանտէն հանող մը անշուշտ չէր գտնուէր... Կիլիկիա ի՛նչ վիճակի մէջ է, ո՞վ ինծի տեղեկութիւն մը պիտի կարենայ տալ... Ես... այո՛, ես պէտք է անձամբ երթամ, բայց մինչեւ այն օրը ես պէտք է ըլլամ ան հռովմայեցւոյն պէս, որ իր հայրենիքը ազատելու համար սուտ խենթ եղաւ, ես ապուշ կ'ըլլամ, և թէ որ նա զիս այնպէս կարծէ՝ հաւանական է թէ բոլոր պալատականք այնպէս պիտի կարծեն։ Բայց ապուշ մը կին կրնա՞յ սիրել... այդ դուռը դնող, այդ սուրը կախող ձեռքը իմ դիմակս հաւանա-

կան է թէ կ՚ուզէ սկրթել… տեսնենք ո՛վ պիտի յաջողի այս խաղին մէջ, և յաղթութիւնը որո՞ւ պիտի ըլլայ: Անշուշտ իմս, այո՛, իմս պէտք է ըլլայ, վասն զի ես ցամաքի և ծովու պիտի տիրեմ. այս է գուշակութիւնը… այո՛, գուշակութիւն երազի. բայց ի՛նչ է երազը, ո՛վ կրցեր է մեկնել անոր ուսկից գալը, ի՛նչ է անոր նշանակութիւնը… ես ուզեցի իմանալ երազը՝ Մովսէսի Ծննդոց գրքէն մինչև Գորգիաս Լեոնդացի, Դանիէլի Բաղտասարէն մինչև Բռօթակոր Ապտերացի, և համոզուած եմ թէ երազները նշանակութիւն ունին, երբ որոշ են, պարզ՝ հոգւոյ յստակութեան քունի մէջ և ծնունդ՝ հանդարտութեան միտքի. ու իմ փառաւոր ծերս, իրաւի աստուածային կերպարանք ունէր իր վսեմ և լուսալիր դէմքով, իր փառահեղ մօրուքով, իր նշուլագեղ աչօք, որու ակնթարթը զիս տղայութենէ ի մարդ փոխարկած էր երբ արթնցայ:

— Ի՛նչ, ըսաւ հայրս Լեւոն, հայը՝ հայրենի հող, ձուկը ծով կը նշանակէ, դուն ծովու և ցամաքի պիտի տիրես, ու ես չպիտի տեսնեմ:

Եւ իրօք քանի մը օր անցաւ ու ինք մեռաւ, և ես մնացի մինակ աս աշխարհիս վրայ օտար, բանտարկեալ, պաշարեալ բոլոր իր թշնամիներէն… իր թշնամիները թէ որ մինակ ըլլային. բոլոր հայութեան թշնամիներէն, վասնզի ես թէ որ բանտէն կ՚ազատիմ այսօր, անշուշտ հայ մը չկայ աշխարհքիս վրայ որ հայուն անկախութիւնը և ազատութիւնը մտածէ: Մինթէ իմ պապերս Ռուբէն, Կոստանդին, հօրեղբայրս Թորոս և հայրս Լեւոն թէ որ ուզէին՝ թէ որ խնդրէին յունական արծւոյն սօթտած թեւերուն տակ մնալ Լամբրոնական Օշիններու, Հեթումներու պէս ուրանալով հայութեան իրաւունքը, հայրենեաց և ազգութեան սէրը, մինթէ այս թուլամորթ և քնէած կայսրերը, որոնք անգործ ամբարտաւանութեան, վաւաշոտութեան և աստուածաբանական վարդապետութեանց ստուեր-

ներու տակ կը թաւալին, կը մերժէի՞ն զանոնք. քաւ լիցի: Բայց անոնք արքայական արիւն ունէին երակներնուն մէջ, և այն նշանաւոր օրը կը յիշէին, ուր հայ ժողովուրդը սինլքորը, ռամիկը, շինականը, որ ազնուական չէր, որ ազատ չէր, որ եկեղեցական չէր, ոչ Վեստ Սարգիսի պէս, ոչ հրաշագործ Գետադարձ Կաթողիկոսին պէս, ոչ Կիրակոս երէցի պէս, կ՚երթար կը դիմէր Վահրամին և անոր քաջութեան ընկերացած ջարդ ու բուրդ փախստական ընելէն վերջ յունական բանակը, որ Անիի բանալիները մատնութեան նշան ձեռքը, կուդար քաղաքը պահանջելու, և ետքը՝ զէնքերը թողած յուսահատ և լքեալ Աշոտներու, Սմբատներու, Գագիկներու գերեզմանաց վրայ վերջին և անյուսութեան արցունքը կը թափէր. ահա այդ ժողովրդեան սէրն էր որ կ՚ոգեւորէր իմ պապերս և յունական ատելութեամբ ու արդար վրէժխնդրութեամբ կ՚ելնէին Տօրոսի բարձանց վրայ կանգնելու ազատութեան դրօշակը, և ես այդ սիրտը ունիմ և կ՚զգամ, ես, որ չէ թէ միայն իմ նախահարցս զաւակն եմ, այլ այս օտարական յունաց դրականութեան, որ չեն գիտեր և չեն ճանչնար իրենց Լիգուրկները, իրենց Լէոնիտասները, իրենց Արիստիտները, այլ կը նստին ժամերով և օրերով կը վիճին, կը կռուին և կը հալածեն իրենց դաւանակից եղբայրները կաթիլ մը ջուրի, հացի մը խմորի, անիմանալի բառի մը մեկնութեան համար: Խելագարնե՛ր, թէ որ Աստուած տայ ինձ կատարել իմ փափաքներս, ո՛հ, գիտեմ թէ ինչ կ՚ընեմ. բայց յոյսերս մեծ, և վիճակս դժուարին է. տեսնե՛նք:

Այս խորհրդածութեանց վրայ էր երբ Բաբկէն ներս մտաւ: Իսկ Թորոս զինքը առանց խօսեցնելու միւս սենեակը տանելով հարցուց թէ ինչ տեսաւ և ինչպէս կ՚երեւակայէր՝ բարձր պատերէ զատ բան չէր կրցած նշմարել: Ուստի առանց ժամանակ անցնելու՝ իջան ընթրելու. վասնզի արդէն ճաշու ժամանակը անցեր էր, և իրենք առաւօտուընէ մինչև երեկոյ դեռ բան

չէին կրցեր ուտել։ Բայց անօթութենէն աւելի հետաքրքիր էր Թորոս իմանալու թէ ինչ էր կերակուրի պատրաստութիւնը այս անսովոր տան մէջ, ուր դարանակալ ձեռք մը կը նշմարուէր կամ սրտի կամ կենաց· ուստի իջաւ սեղանատուն, և երբ ակնարկեց Բաբկէնի նստիլ սեղան իրեն հետ, երբ ան կը քաշուէր ըսաւ·

— Բաբկէն հայրիկ, թէ որ պարագաները պահանջեն, ես քեզի կ'իմացնեմ թէ՝ ե՛րբ ինձ սեղանակից պիտի ըլլաս, իսկ ուրիշ ժամանակ մեր բնական սովորութիւնը չենք փոխեր, և որոշ գիտցիր թէ ինձ աւելի ախորժելի է հօրս հաւատարմին և իմ տղայութեանս խնամածուին անուշ հացն ու պանիրն ուտել· քան թագաւորաց շնորհեալ խորտիկները օտարներու հետ վայելել· ու նստեցան։

Կերակուրներն ընտիր և համեղ էին առանց շռայլութեան, գինին ազնիւ էր և պտուղները պատուական, Թորոս առանց բառ մը զրուցելու ելաւ սեղանէն, տան սպասաւորը որ կը ծառայէր, հարցուց ան ատեն թէ՝ ի՞նչ հրաման ունէր երկրորդ օրուան կերակրին համար· իսկ Թորոս պարզութեամբ պատասխանեց·

— Այսօրուան կերակուրը ո՛վ քեզի պատրաստել հրամայեց անոր կը հարցնես։

Եւ ինք քաշուեցաւ վերնայարկը, նախ Բաբկէնի ապսպրելով վարի հիւրի սենեակը անկողին մը տարածել և պառկիլ ու միշտ արթուն քնանալ·

— Թէպէտ, աւելցուց նա ժպտելով, այդպիսի պատուէր մը աւելորդ էր այնպիսի մարդու մը համար որ 12 տարեկան սկսած էր հօրեղբօրը և հօրը ամէն պատերազմաց գտնուիլ և խելամուտ էր թէ թշնամեաց բանակէ շրջապատեալ՝ միշտ զգոյշ պէտք էր ըլլալ։

Եւ առանց երկար խորհրդակցութեան մտաւ անկողին ու պառկեցաւ, իբրեւ թէ իր հայրենի Վահկայ բերդին տղայութեան պահով սենեակը եղած ըլլար,

և քունը թէպէտ քանի մը ժամ ուշացաւ վրայ հասնելու, բայց վերջապէս այնպիսի տարիքի մը մէջ, որուն զանազան դիպուածներու պատճառած սրտայուզութիւնը յաղթեցին կամքին զօրութեան և քնացաւ։ Երբ արթնցաւ, ինչպէս տղայութեան սովորութիւնն էր, մէկէն ցատկեց անկողնէն և բնականաբար աչքը դարձուց խաբուսիկ դրան, որ անշարժ պատի մը կերպարանքը կը պահէր· պատուհանը բացաւ և տեսաւ որ Բաբկէն պարտէզին մէջ անխռով կը շրջագայէր· երիտասարդին ակնարկին վրայ՝ վեր ելաւ, և առաջին նայուածքը՝ յար և նման Թորոսի՝ խաբուսիկ դրանը եղաւ։

— Բաբկէն հայրիկ, ըսաւ իշխանազունը, ի՞նչ հետազննին աչք կը նետես այդ պատին վրայ, ի՞նչ տեսար։

— Հիմա չէ որ տեսայ, պատասխանեց Բաբկէն, երէկ տեսայ ես այդ դուռը, բայց վտանգը իմ կարծածիս պէս չելաւ։

— Ի՞նչ ըսել կ'ուզես։

— Ան կ'ուզեմ ըսել թէ ես կը կարծէի որ այդ դռնէն սուսերաւոր թշնամի մը պիտի ելնէ, իրօք թշնամի մը ելաւ, բայց իմ կարծած տեսակէս չէր։

— Ի՛նչ կ'ըսես, Բաբկէն, բան մը չեմ հասկնար։

— Դուն ինձ ըսիր թէ «արթուն քնացիր», և ես, արդէն միտքս դրած էի, բայց ի՛նչ օգուտ, արթուն քնանալ վարի սենեակը՝ անկողնին վրայ տարածուած, ուստի պէտք էր այնպիսի դիրք մը առնէի, որ տանը մէջի շարժումները տեսնէի և Հայոց միակ յուսոյն վրայ հսկէի· ուստի երբ ամէն ձայն դադրեցաւ քաղաքին մէջ՝ քիչ մըն ալ անկողին փոխենք ըսի, ելայ կամաց մը իջայ պարտէզ ու սօսի ծառէն յարմար անկողին մը չգտնելով՝ անոր վրայ զետեղուեցայ· և իրօք, մինչեւ կէս գիշեր ամէն տեղ լուռ էր և խաւար, բայց յանկարծ պատդ տեսայ որ ճեղքուեցաւ և տկար լոյսի գիծ մը նկարուեցաւ· ձեռքս սա պահած թուրիս տա-

րի,՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, ըսի, ինծ համբերութիւն տայ...

— Ի՛նչ, պիտի պոռայի՞ր։

— Աստուած չընէ՛. ճիւղէն ներս պիտի ցատկէի, մենք մեր Սեւ լեռը լաւ կը ցատկենք, բայց միջոցը շատ էր, պատուհանը նեղ, անշշունչ ցատկելն անհնար՝ եկողը կրնար փախչիլ, մանաւանդ որ լոյսը տկար էր, ուրեմն՝ եկողը վախկոտ, ու պէտք էր սպասել, և վայրկեանը տարի մը եղաւ. լոյսը երկայն, վերէն վար գիծը սկսաւ շարժիլ, բայց անզգալի կերպով, և ահա գլուխ մը տեսայ. փառք քեզ Լուսաւորիչ ըսի, սուրը տեղը դրի. սատանի գլուխը՝ կնկան մըն էր. բայց ի՛նչ կ'ուզէր. մտիկ կ'ընէր, կ'ուզէր իմանալ թէ դուն իրօք քուն ես. երբ ապահով եղաւ, դուռը կատարեալ բացուեցաւ, քօղարկուած լուսով մը ձեռքը մտաւ սենեակը, նախ զգուշութեամբ սենեակը զննեց, վերջը կամաց կամաց մօտեցաւ դէպի քեզ և երբ իր երեսը տեսայ՝ գլխ դող առաւ։

— Ինչո՞ւ, ի՞նչ կար երեսին վրայ, ի՞նչ էր։

— Լուսոյ պէս աղուոր էր. սատանան երբ աղուոր է, ես շատ կը վախնամ. մանաւանդ հիմա, քեզ կը դիտէր, քու վրադ կ'աղօթէր. ես ալ կ'աղօթէի որ այդ գեղեցիկ սատանային ճանկէն Լուսաւորիչ քեզ ազատէ. քանի մը վայրկեան կեցաւ, և վերջը դիտես թէ մէկը զինք ցնցեց, առաւ իր լոյսը և ինչպէս անշշունչ մտաւ՝ նոյնպէս հալածեցաւ գնաց։ Տեսիլն աներեւոյթ եղաւ։

— Ա՞յս էր բոլոր քու տեսիլքդ ու վախդ, Բարկէն հայրիկ, ըսաւ ծիծաղելով Թորոս։

— Այդ կինը թէ շատ աղուոր չըլլար՝ չէի վախնար։

— Կ'իմանամ, կը վախնաս որ խելքս անոր կ'երթայ և մեր լեռները կը մոռնամ, այնպէս չէ՞։

— Այո՛, ստոյգն ալ ատ է։ Թէ որ այդ կինը սա քաղաքը ձգէ՝ քեզի հետ գայ, իր նզով հաւատքը Թո-

ղու, Լուսաւորչի հաւատոյ, մենք անիկա մեր լեռներուն թագուհի կ'ընենք, բայց հռոմ կինը անէծած է. դու ալ իշխանը՝ լաւ ես, խելօք ես, դիտուն ես, շատ կարդացող ես, վարդապետի չափ բան գիտես, բայց կնիկ տեսած չունիս. վախնամ որ, ինչպէս մեր հայու գիրքերը մոռցար ու վանքին բանտը հռոմի գիրքերը կը կարդայիր, մեր կնիկներն ալ չմոռնաս այդ հռոմի կնկան համար։ Ես լուսահոգի հօրդ կ'ըսէի.

— Տէ՛ր, մեր Թորոս իշխանը լաւ է, բայց այդ նըզոված ազգին գրքերը կը կարդայ, վախնամ Լուսաւորչի հաւատքը մոռնայ։ Նա ինծ կ'ըսէր.

— Բարկէ՛ն, Թորոսէն մի վախնար, նա ինձմէ խելօք՝ հօրեղբօրը պէս է, օր մը մեզ պիտի մոռցնէ, մեզմէ քաջ ու մեզմէ լաւ պիտի ըլլայ, դու հոգ մի ըներ, կը տեսնես։

Ես ալ անհոգ կ'ըլլայի, բայց երբ կը տեսնէի Նարեկը բարձի թողի ու որդնոտած, փոշոտած հռոմի գիրքերը գաղտուկ կը բերէիր և գիշերն ի լուռ կը կարդայիր, Աստուած պահէ մեր իշխանիկը, կ'ըսէի։ Հիմա տեսայ այդ կինը, իր դեղձան մազերը ոսկեկապ ձգած կռնակէն, որ ականջդ ի վար քեզ դիւթել կը ջանար, վախն առաւ զիս, Աստուած քեզ պահէ, Լուսաւորիչ քեզ լոյս տայ։

— Հոգ մի ըներ, Բարկէն հայրիկ, Աստուած կը պահէ. իմ սիրտս քիչ մը ապահովցաւ. ինչպէս հռոմոց գրքերը զիս ապահով ըրին իրենց կրօնքին վտանգէն, իրենց կանայք ալ զմեզ կ'ապահովեն իրենց արանց վտանգէն։ Դուն շատ լաւ ըրեր ես, այս գիշեր անկողինդ թաչուններէն փոխ առեր ես, ալ ապահով կրնաս գիշերները քնանալ, վասնզի թշնամին քու կարծածիդ չափ զօրաւոր չէ, ո՛վ գիտէ թէ նիզակակից մըն ալ չէ մեզի։

— Աստուած պահէ հռոմի մը նիզակակցութենէն. ըսաւ ծերուկը, երեսը խաչակնքելով, հարցուր այդ Փրանկներուն թէ ի՞նչ շահ ըրին ատոնց օգնութենէն,

հռոմը կը խոստանար անուշ անուշ բարեկամութիւն, պաշար, առատութիւն, միւս կողմէ ձեռքի տակէ խոստերն ու արտերը կ՚այրէր, ցորենն ու գարին ջուրը կը թափէր, գեղն ու քաղաքը անապատ կ՚ընէր, երբ մեր Կիլիկիա հասան, քու պապուդ օրը՝ հայրս կը պատմէր, Աստուած լուսաւորէ անոնց հոգին, ձի չէր մնացեր տակերնին, ճամբան ամէնն ալ սատկած էին, մարդիկ ըսես, հալումաշ եղած անօթութենէ, հիւանդութենէ, գիտես թէ բարակ ցաւի էին հանդիպեր, մենք կը յուսայինք որ ամէնքը կը մեռնին, ան քաջ պարոններն ու Փռերները թէ որ մեր հայու հացը չուտէին՝ Երուսաղէմ չէին մտներ, բայց ան որ շատ խելօք մարդ էր, Աստուծոյ սիրուն համար ալ, իր սիրուն համար ալ, անոնց թագաւորին գնաց, պէտքերնին լեցուց. կերան, խմեցին, ութ օր չանցաւ՝ ամէն մէկը մէյմէկ ցուլ դարձան, ուժովցան, գնացին ամէն տեղ առին, Ս. Գերեզմանն ալ ազատեցին. ի՞նչ օգուտ, սա Փռանկները ուժով են, քաջ են, լաւ բազուկ ունին, բայց գլուխնին դատարկ է, խելք չունին, սա Հոռոմները հակառակն են, ուժ չունին՝ բայց շատ գիտեն, խորը կը տեսնեն, նայէ՛ անոնց տէրտէրներու աչքին, դժոխքի ճրագ կը նմանի, գիտես թէ սատանան մէջը կը պլպըլայ: Ես աս գիշերուընէ ի վեր հռոմ մարդկանցմէ աւելի կիներէն կը վախնամ:

— Փուճ տեղը կը յոգնիս, Բաբկէն, ըսաւ Թորոս լուրջ կերպով, մենք հիմա քարէ, փայտէ բարեկամ մը չունինք, պէտք է որ պատրաստուինք աս անիծեալ քաղաքէն փախչելու, ծոցերնիս ստակ մը չունինք որ նաւու մը վարձք կարենանք ընել, քու ըսածիդ պէս թէ որ խելօք ըլլանք և երբ առիթ մը պատահի ու անկից օգուտ քաղել չգիտնանք, մենք ալ քու Փռանկներէդ աւելի դատարկ գլուխ կ՚ըլլանք: Դուն նայէ սա քաղաքը, այսօր պտոյտ մը ըրէ, տե՛ս, նայէ հայ մը կը տեսնես թերեւս, ամէն հայու ականջ մի դնէր, հայերէն խօսող ուրացեալ հայ կարելի է շատ գտնես, բայց սըր-

տով հայ շատ քիչ կայ, մանաւանդ տէրտէրներէն ըզգուշացիր, անոնց լաւը սուրբ է, բայց գէշը սատանայէն ալ վատ է:

«Երբ իմ վրայ խօսք դառնայ, ըսէ թէ ապուշին մէկն է, ըսէ թէ միտքը բռնուած տարտամ մարդ մըն է, հօրը հիւանդութենէն վերջը փոխուեցաւ ըսէ, ցաւէ՛, ողբա իմ վրաս. իսկ թէ որ մարդու մը հանդիպիս, իրօ՛ք ճշմարիտ մարդու մը, քանի մը տեսութենէ վերջ, ինձ իմաց տուր անունով, տեղով, անցեալով և յետոյ երբ որ ուզեմ ինձ կը բերես: Ահա՛ քու ընելիքդ:

— Լա՛ւ, ըսաւ Բաբկէն, և ելաւ երթալու:

Շատոնց էր, Լեւոնի մեռնելէն վերջը, այսչափ երկար խօսակցութիւն չէր ունեցեր իր երիտասարդ տիրոջ հետ, ուստի ուրախ էր սրտով, թէպէտ դէմքը ծիծաղի սովորութիւնը մոռցեր: Եւ երբ դուրս կ՚ելնէր, ձայնեց Թորոս:

— Բաբկէն հայրիկ, փող ունի՞ս:

— Մէկ փող չկայ, բայց Աստուած ողորմած է:

— Ի՞նչպէս:

— Երբ ստք չունէինք՝ Աստուած ստք տուաւ, հիմա ալ ստակ չունինք, Աստուած մեծ է՝ կուտայ: Դուն հոգ մի ըներ:

ԳԼՈՒԽ Գ,

ԽՆԱՄԱԿԱԼ ՁԵՌՔԸ

— Հա՛, ըսաւ Թորոս ժպտելով՝ երբ Բարկէն գնաց, աղէկ գիտէ ծերուկը որ ես ալ փող մը չունիմ. պատուակա՛ն մարդ, Աստուած իրեն յաջողութիւն տայ. տեսնենք ինչպէ՛ս կը դառնայ և ե՞րբ, վասնզի այն մարդոցմէ մին է՝ որ պարապ դառնալ չեն գիտեր: Ի՛նչ մտածողութիւն՝ ծառին վրայէն հսկել իմ վրաս, և շնորհիւ Բարկէնի՝ իմացայ թէ ո՛վ է այն անձը որ զիս կը խնամէ, թէ որ այդ խնամքը ծուղակ մը չէ. վանքի մը մէջ բանտարկուած անձի մը սիրահարուի՛լ, ուսկի՞ց զիս տեսեր և ո՞ւր ճանչցեր է. ահա չորս տարի է որ աշխարհի հետ մեր ամէն յարաբերութիւնները խզուած էին, սենեակ մը երկաթէ վանդակներով մեզի կը ներէր կղզիին բարձրութենէն տեսնել ծովը՝ հրջապատուած, և խեղճ հայրս երկու հողի վրայ աչքերը սեւեռած, կը նայէր այն հողը՝ որ Ռուբէնի գերեզմանն էր և որու քով ինք պիտի թաղուէր, և ծովէն անդին՝ քիչ մը հեռուն Ասիոյ ծովափունքը, որոնց շարունակութիւնը կ'երթայ մինչեւ Կիլիկիա: Կիլիկիա՛, ուր երբեմն, թէպէտ տղայ, կը յիշէի առիւծը՝ որ Տորոսի բարձունքին վրայ կանգնած՝ կը դիտէ, ահա՛ մեր սահմանը կ'ըսէր, որ Աստուած որոշեր է. ահա սա լեռներուն գիծը և ծովի ալիքներուն փայլը, թէ որ կարենայի՛նք հայութեամբ լեցնել այդ երկիրը: Կը յիշեմ նաեւ այն օրը, որ ան գղեակը դարձաւ մեծ պատերազմէ մը վերջը, ուր շարունակ ամիսով հօրեղբօրս հետ մէկտեղ Սկիւթացւոց ահագին բանակի մը դէմ կը պատրաստուէին, ի՛նչ սոսկալի ամիս էր ան: Ես, մօրս և եղբօրս հետ կ'ելնէինք մեր լեռներուն վրայ այցելութեան այն խեղճ ժողովրդեան, որ փախեր ցըր-

ուեր էին կիներու, տղայոց և կենդանիներու բազմութեամբ ապաստանարան գտնելու Տորոսի ժայռերուն վրայ. մարդիկ բոլոր զինեալ՝ հօրեղբօրս և հօրս հետ բարբարոսներու բանակը կը դիտէին, որ չբաւականանալով աւարներով, գերութեամբ ու կործանմամբ, նաեւ կ'այրէին ու կը վառէին գիւղեր, աւաններ ու քաղաքներ, արհաւիրք և սարսափ պատած էր ամէնքին, ամէն անհամբեր, հօրեղբօրմէս ակնածողներ, հօրս աննկուն և յանդուգն քաջութիւնը գիտնալով իրեն կը դիմէին և կ'ըսէին.

«— Մինչեւ ե՞րբ պիտի սպասենք, դուն ե՛լ, մենք ամէնքս քեզի հետ ենք, հատանք, լմնցանք, մինչեւ ե՞րբ սպասենք:»

Իսկ Լեւոն, հայրս կը պատասխանէր.

«— Տղա՛ք, խենթեցա՞ք, ես մեծ եղբօրս սանկ վտանգաւոր ժամանակ անհնազա՞նդ ըլլամ, Աստուած չընէ, ես լաւ կշռած և խելամուտ եղած եմ որ առաքինի իշխան և հմուտ ու իմաստուն զօրավար մըն է ան, սանկ ժամանակ խորհուրդ տալը անգամ յանցանք է. երբ ըսէ «պատերազմի՛նք»՝ պատերազմինք ու մեռնինք, բայց ա՛ն տեն միայն:»

Ետքը տեսանք որ կը հասնէին Տիգրան՝ Սըպատաթ իրենց խումբերով, Գող Վասիլ իր աննկուն վաշտերով, և ահա՛ Լատինացի սպառազինուած փոքրիկ խումբ մըն ալ վրայ հասաւ և պատերազմի փողը սկսաւ հնչել Վահկայ բերդին վրայէն, փողահարները լեռները կը հնչեցնէին, ամէնքը գնացին: Ես այն տեն տասը տարու էի, և Ռուբէնը՝ որ ինծմէ երեք տարու մեծ էր, սուր մը ձեռքը՝ եկաւ զիս գտաւ.

«— Քալէ՛, Թորոս, մենք ալ երթանք պատերազմի. մենք կնի՞կ ենք որ հոս գղեակը նստինք:»

Ու ես տարտամ կը մտածէի, վասնզի սուր չունէի, երբ մայրս վրայ հասաւ, երկուքնիս ալ՝ զինեալ և անզէն՝ բերդին աշտարակին մէջ բանտարկել տուաւ:

Օր մը հոն կեցանք, մէյ մըն ալ յաղթութեան

ձայներ լսուեցան, մեր բանտին դռները բացուեցան։ Իրաւ, թէպէտ ամէն աչք սուգի արցունք կուլային, բայց դարձեալ յաղթութեան ուրախութիւնը ամէնքը գինովցուցեր էր. իսկ Հայրս երբ տեսանք՝ չփոթեցանք. չէինք գիտեր թէ ո՞ղջ էր թէ մեռած, վիրաւոր կարծեցինք և իմացանք թէ յոգնած էր և թէ յաղթութիւնը դրեթէ անոր քաջութեան սքանչելիքն էր։ Անկողնին մէջ օրերով պառկած՝ բոլոր զօրագլուխները կուգային զինքը փրկիչ կ'անուանէին, և Հօրեղբայրս նախ կը վկայէր աննախանձ թէ՝ Աստուծմէ վերջը Լեւոն Կիլիկիոյ ազատարարն և առիթն եղաւ։ Ամէն օր կուգար զինք տեսնելու։ Ի՛նչ ուրախ օրեր անցան մինչեւ գերութեան օրերը որ եկան. ո՛հ, մոռնամ ան օրերը և չյիշեմ։ Ներկային վրայ, այո՛, պէտք է մտածել, բայց ներկան անծանօթ ապագայ մը ունի. տեսնենք, սա կինը անշուշտ ինձ պիտի երեւայ և սա քօղը պիտի վերնայ. ի՛նչ կը նշանակէ, թէ որ յոյները զիս սպաննել ուզէին՝ ի՛նչ դժուարութիւն կար իրենց համար. սպասենք ուրեմն։

Սպասաւորը եկաւ իշխանը ճաշի հրաւիրելու, որ երբ իջաւ, տեսաւ որ յարգանքով կ'ողջունէր զինքը առջի օրուան մարդը, որ տուն առաջնորդեր և բնակեցուցեր էր, դարձեալ իմացնելով թէ պատրաստ էր իր ամէն հրամանները կատարել. իսկ Թորոս, իր անհոգ և միամիտ ձեւը հագնելով, պատասխանեց թէ գոհ է և գանգատի նիւթ ամենեւին չունի։ Ուստի, ճաշը կատարելէն վերջը, առանց երկար խօսակցութեան մտնելու այդ մատակարարին հետ, քաշուեցաւ դարձեալ վերի սենեակը, իմացնելով թէ՝ քուն ունի։

Թէ որ Աղէքսանդրէ սկսեալ բոլոր երեւելի մարդիկ ծանր պարագաներու նախերգանաց մէջ կրցեր են քնանալ, պէտք չէ զարմանալ, յաջողութեան ապահովութիւնը միշտ յոգնած մտքի մը քուն կը պարգեւէ, այսպէս եղաւ նաեւ մեր Թորոսին, որ դարձեալ քունի մէջ թաղուեցաւ. բայց քուն մը՝ ուր իրեն կ'ե-

րեւար թէ գեղեցիկ, ոսկեթել մազերով կին մը, թեթեւ քայլերով ստուերի մը պէս անկողնին չուրջը կը պտտի, ու քանի անգամ որ ձեռքը իրեն կ'երկնցնէր, փախուստ կուտար. աս խաղը շատ անգամ հանդիպելով՝ վերջապէս աչքերը բացաւ և մարդ չկար. աչքը խարբուսիկ դրանը դարձուց և տեսաւ կիսաբաց, թէպէտ կորովի, բնութենէն աներկիւղ, սաստիկ զարմացաւ, տեսնելով որ իր անշարժ սիրտը կը թնդար, կը բաբախէր և զօրութիւն մը զինք կը ձգէր, կը քաշէր դէպի այդ կիսաբաց դուռը։ Ուստի կանգնեցաւ գինովի մը պէս, իր մատներուն դպչելուն՝ դուռը սողաց անհետ եղաւ ու ան մտաւ նոր սենեակ մը, ուր լռութիւն և միայնութիւն կը տիրէր, քօղարկուած վարագոյրներով պատուհաններ, լոյսը կը նուազեցնէին, բազմոց մը և խորանի մը պէս բան մը կար մէկ կողմը, դէպի հոն դիմեց և հազիւ թէ քայլ մը առաւ՝ մընաց... եղբօրը Ռուբէնին կենդանի պատկերը պատին վրայ կախուած՝ գոյնզգոյն թարմ ծաղիկներով պսակուած տեսաւ. աս տեսարանը մէկէն զինք փոխեց, սըրտին փոթորիկը դադրեցաւ, ալեկոծութիւնը հանդարտեցաւ և յորդառատ արցունքի հեղեղ մը երեսն ի վար կը վազէր, ձեռքը՝ ճակատն ու մթնցած աչքերը կը գոցէին, տխրութեան արձան մը հոն կեցեր էր, երբ փափուկ պզտիկ ձեռք մը, անուշ ձայն մը իր անունը կուտար, զինք ի խորունկ քունէ արթնցուց, և երբ տղու մը պէս իր ձեռքը թոյլ տուաւ այն ձեռքին և աչքերը դարձուց անոր՝ որ զինք կը կոչէր, իրաւի սքանչելի, ազնուական և լուրջ կերպարանք մը տեսաւ, պարզ զգեստներուն, պարզ զարդարանաց և պարզ իր գեղեցիկ հասակին համեմատութեան մէջ։ Աչքերը իրեն յառած.

— Բա՛ւ է, իմ սիրուն Թորոս, ըսաւ, արցունքը մեր՝ կանանց իրաւունքն է, ձեր բաժինը վրէժն է. ես շատ գիշերներ անցուցեր եմ այդ պատկերին առջեւ արցունքով։

Իսկ Թորոս այդ ձիւնափայլ ձեռքը իր շրթանց տարաւ, ուզեց խօսիլ՝ չի կրցաւ, վասնզի արցունքն և սրտի յուզմունքը ձայնը խեղդեր էին, իր քաղցր խըրատտուն իբր գորովալի մայր ձեռքէն բռնած՝ տարաւ բազմոցին վրայ, քովը նստեցուց և բեհեզեայ թաշկինակաւ իր և անոր արցունքները կը սրբէր: Երկայն վայրկեաններ անցան և այս երկու տարբեր գեղեցկութեանց սքանչելիքը՝ իբրև հին բարեկամներ՝ ձեռք-ձեռքի, ծունկ-ծունկի, աչք-աչքի կլանուած կը նայէին, մինչև որ աչքերը կենդանութիւն առին և վերջապէս Թորոս կամաց մը ըսաւ.

— Չեմ գիտեր ո՞վ ես. բայց հրեշտակ մը չի կրնար ուրիշ կերպարանք մը ունենալ և ոչ ուրիշ ձայն մը և ոչ այդ գորովալից խնամքը. զիս՝ թշուառ պանդուխտս, հէգ բանտարկեալս, դժբախտ գերիս ո՞ւր տեսար, ինչո՞ւ կարեկցեցար և ի՞նչպէս սիրեցիր. աս պատկերին առջև չի հասած՝ հանելուկը հանել անկարելի էր, բայց հիմա կարծեմ թէ կը խելամտիմ:

— Այս էր իմ փափաքս ալ, երկայն, սովորական և անհամ տարփական խաղեր ինձ սիրելի չեն: Ուստի նախ զիս և իմ անցեալս պիտի ճանչնաս: Իմ անունս Եւփիմէ է, իմ հայրս՝ Ալէքսիս՝ Փոքր Հայոց կուսակալ՝ երբ Սեփաստիա՝ Հայոց թագաւորաց յանձնուեցաւ, Արծրունի իշխանի մը աղջկան հետ կ'ամուսնանայ և Պոլիս դառնալէն տարիներ վերջը ես կը ծնիմ. ես կաթընկեր տղայ, միակ մխիթարութիւն կը մնամ մօրս, որ իր նոր ազգութեան հետ բոլորովին չէր կրցեր հաշտուիլ մինչև իր մեռած վայրկեանը, ուստի ես հազիւ չափահաս եղած, Կոստանդին կայսրը զձեզ կալանաւոր բերաւ Կիլիկիայէն. մայրս՝ առանց ձեզ ճանչնալու՝ անմխիթար էր ձեր անկման համար. ընկերացեալ հօրս հին բարեկամաց՝ ամէն ջանք ի գործ դրաւ՝ առանց երբէք երևալու, և յաջողեցաւ զձեզ բանտէն ազատել և արքունեաց դուռը նաև բանալ ձեզի. այն օրէն և առջի տեսնուելուն՝ զիս Ռուբէնի հետ նշանելու միտք յայտնեց, մանաւանդ որ տարեկից էինք: Բայց Ռուբէնի սրտաբաց կերպը, գեղեցկութիւնը, բիւզանդացի կանանց անբարոյական վրաձգոցութիւնը, անոր ալ զուարճութեանց անյագ սէրը մօրս մտաց հաստատութիւնը խախտեց, և դեռ մէկուն չի բացուած սկսաւ ջանալ զիս համոզել որ այդ երիտասարդէն անցնիմ, քանի որ ապագայ դժբաղդութիւն մը ակներև էր, բայց իմ սիրտս այդ պատճառաբանութեանց չէր կրնար համոզուիլ, նախանձը զիս կ'ուտէր և անտարբեր կը ձևացնէր ինքզինքս. պատերազմ կար ներսս և մէկուն չէի կրնար բանալ. ուստի մօրս հնազանդելու համար ամէն ջանք ըրի, և Ռուբէնի անունն անգամ մըն ալ բերնէս չելաւ. մայրս կը կարծէր թէ մոռցեր էի, և ես Ռուբէնը կ'երազէի: Զանազան անձերու հետ ամուսնութեան առաջարկներ ըրաւ, բայց ես միշտ կը հեռացնէի, մինչև որ ծանր հիւանդութեամբ պառկեցայ, և բանդագուշանքս մօրս յայտնած էին գաղտնիքս. ուստի խեղճը բժիշկին խորհրդով զիս Ռուբէնի հետ ամուսնացնելու ամէն ջանք ընելու խոստմունք ըրաւ, և հիւանդութիւնը նոյն վայրկեանին բարեփոխութիւն ունեցաւ և օր աւուր ես առողջութեան մէջ հաստատուեցայ, գոյներս եկան. Ռուբէնի հետ մի քանի տեսութիւն՝ իր կեանքի ձևը փոխեցին, և Ռուբէն առանց մեզի սպասելու՝ առաջարկ մը ըրաւ մօրս՝ հօրը հաւանութիւնն ընդունելու պայմանաւ: Մեր ուրախութիւնը, մանաւանդ մօրս ուրախութիւնը՝ անկարելի է պատմել. բայց որքան կարճ եղան ուրախութեան օրերը: Յանկարծ դժբախտ դիպուածին լուրը տարածուեցաւ. մայրս զիս մխիթարելու կը ջանար, երբ ինք ինձմէ աւելի հիւանդ էր, ես անկողին ինկայ. սաստիկ ջերմ մը զիս կը տանջէր. նոյն միջոցին մայրս ուրիշ սենեակ մը մեռեր էր: Պառաւ հօրաքոյր մը իմ վրաս կը հսկէր երկու տարի, և հօրս բարեկամ՝ ծեր և փորձ բժիշկ մը, որ հազիւ թէ ես քիչ մը շարժելու սկսայ՝ զիս հիւծեալ և մաշած՝ Իշխանաց կղզին օդափոխու-

թեան տանել հրամայեց՝ մեր բնակարան-տունը ինք որոշելով. հոն հօրաքոյրս և ինք ինծի հետ միայն կը զբաղէին և կ'առնէին զիս մօտակայ վանքը կը տանէին մեծաւորին, և բժիշկը կը նստեցնէր զիս պատուհանի մը առջեւ. բարի և սրամիտ ծերին դիտաւորութիւնը իմացայ այն օրը երբ զքեզ հօրդ հետ տեսայ պարտէզին մէջ կը շրջագայէիք. Ռուբէն կենդանացած կարծեցի, և գետին պիտի գլորէի թէ որ արթուն ծերը, որ զիս աչքէն չէր կորսնցներ, զիս չբռնէր. մարելուն հետեւանք սոսկալի ջղային ցնցմունքներ եկան և այն օրէն կեանքը իմ երակներուս դարձաւ. զքեզ երբեմն տեսնել նոյն պատուհանէն իմ դեղս եղաւ. տեսայ դարձեալ զքեզ հօրդ դաշտային աւանէն երբ՝ բանտէն գերեզմանատուն կը տանէին, երդում ըրի այն ատեն զքեզ ազատելու համար ամէն ջանք ընել. տարի մը անօգուտ աշխատեցայ իմ պատուական բժիշկիս հետ, և երբ Մանուէլ հօրը տեղն անցաւ, ալ ապահովեցայ, իսկ քու սրտիդ համար ամենեւին երկբայութիւն չունէի, և համոզուած էի թէ Ռուբէնի այնչափ նման եղբայրը՝ որ զիս այնչափ սիրեց՝ անկարելի էր որ անոր սրտին նման սիրտ չունենար, և թէ նորա յիշատակը մեր սրտերուն հանդոյց չըլլար։

— Այսպիսի ազնիւ սրտի, այդ հրաշագեղ կերպարանաց, այդչափ իմ ազատութեանս համար եղած ճըգանց եղո՛ւկ, դառնացեալ սրտէ մը զատ ոչինչ չունիմ, և այլ կրնա՞յ բաւական փոխարէն համարուիլ։

— Ի՞նչ, ըսաւ աղջիկը, և աչքերը այնպիսի լոյսի նշոյլ մը փայլատակեցին այս հարցական բառին հետ, որ Թորոսը զարմացուց. դուն սի՞րտ մը միայն ունիս, չէ՛, Թորոս, դուն այդ սրտիդ հաւասար ապագայ մըն ալ ունիս, դուն իշխանութեան ընդարձակ երկիր մըն ալ ունիս, և անոնք կը մոռնա՞ս. ես քու ձեռքիդ երբ փափաքեցայ, քու իշխանութեանդ փառքին ալ մասնակցիլ փափաքեցայ. ահա՛ կը տեսնես որ ես շատ շահասէր եմ և շատ փառասէր, մի՛ կարծեր զիս այն կանանցմէ, որոնց մտքի ընդարձակութիւնը իրենց սըրսկապանէն անդին չկրնար տարածուիլ. ո՛հ, չէ՛, ես քեզի՝ ինչպէս Ռուբէնին՝ իշխանական աթոռ մը կը փափաքիմ. ես ձեր այս տոհմային կազմուածքին մէջ Պլուտարքոսի դիւցազունները կը տեսնեմ. ներէ՛, ես դեռ մօրս ազգին դիւցազունները չեմ ճանչնար և կըրնաս ապահով ըլլալ որ անխոնջ գործակից մը և ամէն վտանգաց անվեհեր դիմագրաւ մը ինծմէ պիտի գըտնես։ Դուն ճանչցար հօրդ սուրը՝ զոր քեզի համար պարտաւորեցայ զինարանէն գողնալու՝ իր գնոյն հարիւրապատիկը վճարելով, (նիւթական գնոյն է խօսքս) և դուն արժանի մնացիր զայն կրելու։

Թորոս առանց իմանալու, բազմոցէն ծունկի վրայ եկեր էր այս հրաշագեղ մարգարէուհւոյն առջեւ՝ իր բոլոր խոհեմութեան առաջադրութիւնները մէկդի դընելով, և երբ դադրեցաւ խօսքէն՝

— Քուկդ եմ, ըսաւ, ըրէ՛ զիս ինչ որ կ'ուզես, դուն փառասէր եմ կ'ըսես, կ'ուզես թագուհի ըլլալ, եղի՛ր, միայն Հայ եղիր, և առաջին սպասաւորդ և խոնարհ ծառադ ես կ'ըլլամ, և բոլոր իմ ազգս քու հպատակդ կ'ըլլայ, միայն թէ գերութենէն ազատի՛։

Եւ այս խօսքերը ըսելով ձեռքերը կը պագնէր, իսկ ան որ հանդարտեր էր, ելաւ վերցուց Թորոսը և թեւը մտնելով՝ դէպի կեղծ դուռը գնաց՝ որ կիսաբաց մնացեր էր և երբ կ'ուզէր մտնել, Թորոս զինք կ'արգիլէր։

— Մի՛ վախնար, ըսաւ, քու սպասաւորներդ իմ միամիտներս են, մօրս ձեռքը մեծցած. դուն ալ անշուշտ քու ծառայիդ վրայ ապահով ես, ո՞ւսկից կը վախնաս, մանաւանդ որ իրենց ապսպրուած է, առանց քու կոչիդ սանդուխէն վեր չելնել։ Կ'ուզեմ տեսնել անձամբ թէ՝ բանի մը պէտք ունի՞ս, ի՞նչ կը պակսի քեզի։»

Եւ այս ըսելով դարանները կը բանար, գզրոցները կը զննէր և տեսնելով որ դեռ բանի մը ձեռք դպուած չէր.

— Պէ՞տք է ըսել, աւելցուց, թէ ի՛նչ որ իմս է, քուկդ է, ի՛նչ որ հոս կայ՝ քու գործածութեանդ համար է· անշուշտ դուն դրամի պէտք ունիս և ապահով եմ որ գզրոցին բանալին դեռ դարձած չէ· Հիմա որ մենք ալ իրարու ենք, կը յուսամ թէ՝ իմս քուկդ է և քուկդ իմս։

— Քու աս խնամքդ, քու այսչափ երկար…

— Մի՛… ըսաւ օրիորդը, իր ձիւնափայլ մատը Թորոսի շրթանց վրայ դնելով ժպիտով մը, մի՛ գուցէ ասկից վերջը շնորհակալութիւն բառը բերնէդ հանես· մեր մէջ առեւտուր մը կայ, չէ՞ մի որ դուն ինձ աս փոքրիկ տան փոխարէն արքայական աթոռ մը պիտի տաս, աս շորերուն փոխարէն՝ ծիրանի, աս երկու ապուշ սպասաւորներու փոխարէն հպատակ ազգ մը, թէ որ խաբուող մը կայ՝ ես չեմ, Թորո՛ս։

Փոխանակ պատասխանի, Թորոս ան սիրուն ձեռքը համբոյրներով ծածկեց, երբ աղջիկը ցնցումով մը՝

— Մենք չիմացանք ժամանակը, պէտք է երթամ, ըսաւ, երբ զիս տեսնել ուզես՝ աս դարանին խորի օղակը քաշէ և ես կուգամ։

Թէ որ ես չհամարձակիմ օղակը քաշելու։

— Ամէն համարձակութիւն ինձմէ՞ կը սպասես։

— Ես որ կը կարծէի թէ աշխարհիս վրայ բան մը չկար որ զիս շփոթէր և վախցնէր, ինքզինքս փոխուած կը գտնեմ։ Ես՝ որ երբեք կայսեր գահոյից առջեւ սրտի տրոփ մը չունեցայ· ի՞նչ եղայ չեմ գիտեր։ Հիմա տղու մը պէս կը դողամ առջեւդ, ի՞նչ է աս։

— Աս կը նշանակէ որ դուն դեռ տղայ ես և պէտք է քու դաստիարակութեանդ վրայ հսկեմ ես։ Այս երեկոյ ուրեմն կերակուրէն վերջը կը տեսնուինք, երբ ամէնքը պառկին։

Եւ աս ըսելով՝ ձեռքը տուաւ որ համբուրէ և դըռնէն անհետացաւ ու գնաց։ Իսկ Թորոս մնաց հոն՝ այն դրան առջեւ բոլորովին փոխուած մարդ մը· սիրտը նոր, անծանօթ զուարթութեամբ մը զեղուն և խա-

ւար աշխարհ լուսաւոր եղած էր իրեն համար· երեկոյեան արեւի վերջին ճառագայթները վճիտ ոսկեղէն էին, ծառերու և ծաղիկներու կանանչը շատ աւելի գեղեցիկ էր քան մէկ քանի ժամ առաջ, օդը առողջ և թեթեւ է շնչելու ու վերջապէս, երբ պատուհանէն վար նայելով տեսաւ Բաբկէնը, այնչափ իրեն գեղեցիկ երեւցաւ իր փշոտ և հաստ յօնքերով և իր յիսուն կորովի տարիներով՝ որ եթէ չամչնար պիտի ցատկէր և համբուրէր։

Բայց ինքզինք զսպելով ակնարկեց որ վեր գայ։

ԳԼՈՒԽ Դ.

ԿԻԼԻԿԻՈՅ ՎԻՃԱԿԸ

Թէպէտ զուարթութիւնը կը փայլէր Թորոսի բոլոր կերպարանքին վրայ, թէպէտ ամէն պատրաստութիւն ունէր խօսելու՝ քան լսելու, բայց Բաբկէնի լուրջ և տխուր կերպարանքը առժամեայ ազդեցութիւն մը ըրին սրամիտ երիտասարդին վրայ՝ որ իր տարիքէն անհամեմատ վեր էր իր քսան տարիներուն մէջն ալ: Բաբկէն, թէպէտ հազիւ թէ պարզ կարդալ և անունը ըստորագրել միայն գիտէր, արտաքոյ կարգի խոհուն, անհամեմատ ուժով, տոկուն և անխոնջ, պատերազմի մէջ անդրդուելի, հաւատարիմ և նախանձայոյզ ազգասէր մարդ մըն էր:

Թորոսի և Լեւոնի յաջողութեանց անթոյլ գործակից և առաջինին պաշտող՝ յիշատակին երկրպագու կրօնամոլ, միտքը դրած էր որ եթէ Թորոս երկար ապրէր, անտարակոյս Կիլիկիոյ անկախութիւնը այն ողորմելի վիճակին չէր իյնար. ուստի, Լեւոն իրեն համար քաջակորով երիտասարդ մըն էր, զուրկ ան խորագիտութենէն և նախատեսութենէն, որ իշխանի և զօրավարի առաջին յատկութիւններ են:

Բայց, որովհետև հաւատարմութեան մէջ անդրդուելի էր, խնդրեց Լեւոնի ծառայութեան մէջ մնալ և անոր գերութեան՝ անբաժանելի ընկերը եղաւ, բանտին մէջ երկրորդական անձեր էին իրեն համար Լեւոնն ալ, Ռուբէնն ալ, ամէնքը երկու եղբայր նման կը գտնէին իրարու, ինք Թորոսի և իր եղբօր մէջ անբաւ հեռաւորութիւն կը գտնէր:

«Ռուբէն, կ՚ըսէր, հօրը ճիշդ զաւակն է, ուժով, թեթեւամիտ, քաջ՝ մինչեւ յանդգնութեան և հրաշագործութեան ծանր վտանգին մէջ, որ կրնան զինք երբեմն յուսահատութեան տանիլ. բայց պզտիկը, ո՛հ, իր

գլուխը երբէք չպիտի կորսնցնէ, իր հօրեղբօրը պէս պիտի ըլլայ՝ անյոյս վիճակներու մէջ անխռով և հնարագէտ:»

Ուստի, Թորոս իր հայրենասէր յոյսերուն զաւակն էր:

Ո՛չ Ռուբէնի աչազրաւութիւնը և մահը և ոչ Լեւոնի վախճանը՝ որ զինք տխրեցուցեր և դառնացուցեր էին, կարելի էր բաղդատել Թորոսի փոքրիկ մէկ հիւանդութեան հետ, ուր Բաբկէն ինքզինք կը մոռնար, ալ պարտաւորութիւնը չէր որ անքուն կը հսկէր պատանիին սնարին քով, այլ գորովագութ մօր մը աչալրջութիւնն էր. մինչեւ իր խոշոր և հաստ ձայնը դայլայլիկ մը [illegible] կը ձեւանար և կը փափկանար. եթէ կարելի [illegible], իր ահագին ձեռքերը նաեւ պիտի մանրանային՝ երբ դեղին սկահակը իրեն կ՚երկնցնէր. այնչափ հոգ կը տանէր զինքը խնամելու և տածելու ժամանակ:

Ուստի, հիմա երբ տխուր ու դառն ներկայացաւ, Թորոս՝

— Ի՞նչ կայ, Բաբկէն հայրիկ, ընքուիներդ շատ խաւար կ՚երեւան այսօր, հարցուց, միթէ ամենեւին հայ սրտով մարդ մը չկրցա՞ր գտնել:

— Երանի՛ թէ չգտնէի. գէ՛շ, իշխանիկս, գէ՛շ:

— Ի՞նչ գէշ, խօսէ՛ գլուխդ երկնցնելուդ, ո՞ւր է գէշութիւնը:

— Միտ դիր, իշխանիկս. ես հոսկից ելայ և այս անծայր քաղաքին մէջ բոլոր շուկաները պտտեցայ՝ մէկ կիլիկեցի Հայ մը տեսնելու համար, որ կարենամ լուր մը առնել թէ՝ մեր լեռները, մեր տղաքը ինչ եղան. իրիկուն եղաւ ալ յոյսս կտրեր էի, մէյ մըն ալ մէկը զիս դրդեց կամաց ձայնով.

«— Բաբկէն եղբայր, ձայնեց. գլուխս վերուցի, նայիմ երկայնահասակ մէկը, բեռնակրի հագուստներով. չճանչցայ:

«— Մի՛ խօսիր, ըսաւ, միայն ետեւէս եկուր, ես ալ քեզ կ՚ուզէի տեսնել:»

«Ո՛վ էր չէի գիտեր, ան քիչ մը առջեւէն, ես ալ անոր հետեւելով շարունակեցինք ճամբան, մինչև խեղճուկ իջեւան մը հասանք և սենեակ մը բացաւ։ Երբ դուռը գոցեց.

«— Զիս չե՞ս ճանչնար, հարցուց։

«— Չէ՛, պատասխանեցի։

«— Բարի՛ նշան, թէ որ դուն ալ զիս չճանչցար, ուրեմն սատանան ալ զիս չկրնար ճանչնալ։ Վահկեցի Կոստանդինը չե՞ս ճանչնար։

«Իրօք, Վահկեցի բերդակալն էր, և սկսաւ ինձ պատմել թէ՝ ի՞նչպէս բերդին անձնատուր ըլլալէն վերջը բռներ էին զինք Հոռոմները ու շղթայակապ նաւու մը մէջ Պոլիս կը ղրկէին, և թէ ի՛նչպէս շղթաները կոտրելով՝ նաւաստիներն ու պահապանները սպաններ և նաւը Սելեւկիոյ ծովեզրը կրցեր էր խրել և անկից Տօրոսի ծովեզերեայ ժայռերուն և մացառներուն մէջէն գիշեր ցերեկ, շատ անգամ անօթի ծարաւ, քանի մը ձիթուն, քանի մը եղջիւր միայն ուտելով, վերջապէս Սեւ լեռ գտեր էր, և թէ ի՛նչպէս հոռոմները ամէն տեղ մեր հայերը կը հալածէին, կը չարչարէին և թէ ամէնքը կը մրմռային թէ ան մեր անպիտան ազգուրաց Լամբրոնի իշխանները՝ անհոգ ու անկարեկիր էին անոնց նեղութեանց, որովհետեւ իրենք իրենց առ կայսր հաւատարմութեան վարձք առած էին՝ պատիւ և իշխանութիւն։

«Իսկ Մամեստեայ հոռոմ կուսակալը՝ ամէն օր հայն ու իր հաւատքը կը հայհոյէր, և ամէնքը Աստուծմէ Լեւոնի տղոց մէկուն հասնելուն կը սպասէին որ զէնքի վազեն։ Ուստի Կոստանդին հարցուցեր էր թէ ո՞ւր են Մլեհ և Ստեփանէ. և իմացեր էր թէ Հալէպի Նուրէտին ամիրայի ծառայութեան մէջ մտած էին. ելեր գնացեր էր զանոնք գտնելու, և հազիւ թէ Ստեփանէ համոզուեր էր Կոստանդինի հետ Կիլիկիա դառնալու, Մլեհ վրայ հասնելով՝ ոչ թէ միայն իր եղբօրը միտքը

շրջելու, այլ և Կոստանդինը մատնելու երդում ըրած էր եթէ նոյն օրը Տաճկին հողերէն դուրս չելնէր։

«Կոստանդին ալ՝ յոյսը կտրած՝ եկեր էր Պոլիս որ եթէ կարելի է, մեր կղզւոյն բանտը կոխէ, հայրդ ու զքեզ ազատէ և տանի Կիլիկիա կամ մեռնի. ուստի քեզ կ'ուզէ հիմա տեսնել։»

Իսկ Թորոս այս պատմութիւնը մտիկ ընելէն վերջը՝ առանց պատասխան մը տալու ելաւ և մտախոհ՝ սենեակին մէջ վեր վար կը շրջագայէր՝ երբ Բարկէն արձանի պէս անշարժ կեցեր էր. վերջապէս Թորոս դառն ժպիտով մը.

— Բարկէն հայրիկ, ըսաւ, շատ կ'ուզէի Կոստանդինը տեսնել, վասնզի կ'երեւակայեմ թէ ինչչափ որ շատախօս է, նոյնչափ և աւելի ալ քաջ է, բայց այս անիծեալ կառավարութիւնը՝ որ աւազակներու, գողերու համար ինչչափ անփոյթ է, այնչափ արթուն է մեզի պէս գերիներու համար. ո՛վ գիտէ թէ՝ Կոստանդինի հոս գտնուիլը ոստիկանութեան լրտեսները չեն գիտեր և արդէն կամաւ թողած են որ պտտի և տեսած ու տեսնուած մարդիկը նշանակեն։ Քանի որ Մլեհ այդչափ անարգ սիրտ մը ունի և Ստեփանէ այդչափ յողդողդ է, քանի որ Լամբրոնի իշխանքը հոռոմաց գերութենէն չեն ձանձրացեր, ես պէտք է իմ ազգիս գլխուն ճարը տեսնեմ. զրուցէ Կոստանդինին որ զիս տեսնել անօգուտ է, թող զիս Սեւ Լեռը սպասէ։ Այսչափ տարի համբերեց, շատ շատ՝ տարի մըն ալ համբերէ։ Ի՛նչ տեղեկութիւն որ բերեր է, ինձ բաւական է։ Բայց չի հարցուցի՞ր թէ ինչ միջոց, քանի՞ հոգի ունի եղեր որ այս մայրաքաղաքին դրան առջեւ կղզիի մը բանտը կոխելու յանդգնութիւնը ունեցեր է։

— Քիչ մը դրամական օգնութիւն գտնելով քանի մը եկեղեցականներէ, Գենովացիի նաւ մը վարձեր է, հինգ ալ ընկեր գտեր է իրեն պէս անվեհեր մարդիկ և այս խորհուրդը մտածեր է։

— Բայց դուն ի՞նչ ըսիր, Բաբկէն, սա մեր Կոստանդինին մտածութեան։

— Ըսի թէ յիմարութիւն է, և բարեբաղդութիւն մըն է որ արդէն բանտին դուռը բացուած ըլլալով, իրենց քաջութեան կարօտութիւն չէ մնացած որ Կիլիկիոյ միմիայն յոյսին թերեւս անօգուտ մահը պիտի պատճառէր։ Ուստի, չե՞ս ուզեր իրեն գալը՝ քեզի հետ տեսութեան համար։

— Զեմ ուզեր որ այսպիսի քաջ մարդիկ յուսակտուր ըլլան. ուստի, դուն կրնաս խոհեմաբար զիս տեսնելու անօգուտ և վնասակար հետեւանքը իմացնել։

— Արդէն գրեթէ իմացուցի, և ինք շատ տխրեցաւ, վերջին պատասխանի մը կը սպասէ վաղը, չուկայի մեծ դրան առջեւ։

— Ահա՛, վերջին պատասխանն ալ դարձեալ աս պիտի ըլլայ։ Երթալ և մեր լեռներուն մէջ ինծի ըսպասել։

— Ա՞յսչափ։ Ուրի՞շ։

— Կ'երեւայ թէ ուրիշ մտածութիւն մըն ալ դուն ունիս, Բաբկէն Հայրիկ։

— Այո՛, ունիմ։

— Խօսէ՛, ուրեմն։

— Կը հրամայե՞ս որ խօսիմ։ Ի՞նչ կ'արգիլէ որ մենք ալ Կոստանդինի պատրաստ նաւով դառնանք Կիլիկիա. կարելի՞ չէ որ Կոստանդին հազիւ հասած, դեռ մարդ իր գալուն հոտը չառած՝ մտնենք իրեն հետ նաւը և չուտով ճամբայ ելնենք։

Եւ այս խօսքերը ըսելուն՝ Բաբկէն իր երկայն ընքուիներուն տակէն իր սուր աչքերը Թորոսի բիբերուն վրայ տնկած պատասխանի մը կը սպասէր։ Այս նայուածքը և անոր նշանակութիւնը միայն Թորոս կրնար իմանալ, ուստի անխռով պատասխանեց, ոչ թէ Բաբկէնի մտքին՝ այլ սրտին խօսելով։

— Մենք մեր բանտէն ելնելուն երկրորդ օրը՝ թէ որ այս բնակարանը թողունք և փախինք, կարելի՞ է

որ կարենանք ողջ առողջ Կիլիկիա հասնիլ, միթէ բոլոր յունաց սրընթաց նաւերը մեր ետեւէն չե՞ն սրանար, միթէ ան կառավարութիւնը որ Լեւոնի մահուընէ գրեթէ տարի մը վերջը իր ապուշ տղան բանտէն ազատելու համար այնչափ բարեխնամ աղաչանաց խուլ եղաւ և հազիւ շնորհ մը ընելու գիջաւ, կը յուսա՞ս թէ գաղտնի մեր վրայ չհսկէր և մեր առաջին անխոհեմութեան անյուշ բանտի զմեզ չդատապարտէր։ Ես ալ կը սիրեմ ազատութիւն, ես ալ կը յիշեմ մեր լեռներուն պայծառ արեւը, երեկոյեան զով քամին և անջինջ երկինքին պարզութիւնը, և բան մը չկայ, աս լաւ լսէ՛, Բաբկէն, բան մը որ կարենայ զիս իմ պարտքէս, իմ առաջադրութենէս կասեցնել, բայց ուխտ ալ ունիմ որ յախուռն բան մը չընեմ։

Աս վերջին խօսքերը, որ Բաբկէնի ճակատը պարզեցին և յօնքերը իրենց բուն տեղը տեղաւորեցին, դեռ իր վստահութիւնը ամբողջ չկրցան գրաւել, և Թորոս լուռ կը նշմարէր, ուստի իբրեւ թէ անոր մտքին խորունկը չթափանցած՝ քանի մը պտոյտ ընելէ վերջ սենեակին մէջ, ըսաւ.

— Ես քեզի ուրիշ գաղտնիք մը պիտի հաղորդէի, սա դրան գաղտնիքը՝ որ պարզուեցաւ։ Օրիորդը, որ դուն նախապէս տեսար, որուն թերեւս միայն պարտական ենք մեր ազատութիւնը, հայ է մօր կողմէ և սրտով բոլորովին։

— Փա՛ռք Աստուծոյ։

— Այդ կողմանէ ալ սիրտդ հանգիստ ըրէ. առ սա քանի մը ոսկին, անցիր դիմացի կողմը՝ Ղալաթիոյ քաղաքը, հոն Հայոց եկեղեցի ալ կայ, նայէ, տեսնուէ ազգայնոց հետ, ի՞նչ վիճակի մէջ են՝ իմացիր, թէ որ առանց կասկածի ստուեր տալու՝ կրնաս իմանալ թէ Գենովացի նաւեր կան որ ոչ Միջերկրական միայն այլ նաեւ Պոնտոսի ծով կ'երթան, տեղեկութիւն ա՛ռ, ամէն ճամբայ լաւ է Կիլիկիա մտնելու համար։ Ամէնէն ապահով տեղ տեսնուելու համար հայ եկեղեցին կրնայ

ըլլալ, բայց այդ նաեւ ինծ համար արգիլուած է թերեւս, ինծ համար աս բանը չեմ գիտեր առաջինէն որչափ ընդարձակ է։ Տեսնենք...։

«Դուն խոհեմութիւն ունիս, պէտք չէ որ ես քեզի կրկնեմ, թէ ի՛նչ վիճակի մէջ ալ ըլլաս, պէտք է ջանաս իմանալ՝ բայց միշտ առանց հարցնելու։ Ժամանակը արդէն ուշ է, դուն ալ յոգնած ու անօթի, երթանք կերակուրի։»

Թէպէտ Բաբկէն իրօք անօթի էր, բայց բան մը կար որ իրեն համար վարագուրեալ էր մասամբ, այսինքն աղջիկը որ մօր կողմէն հայ էր, և որ իրենց ազատութեան համար աշխատեր էր, և քանի որ մանրամասնաբար պատճառները չէր իմացեր, իր ախորժակը կատարեալ չէր. բայց որպէսզի Թորոսի կամքին դէմ չըմեղանչէ, որ աններելի յանցանք կը համարէր, ամէն կերակուրներէն կշտապինդ կերաւ, կիզիկոնի գինին լաւ մը խմեց, և երբ Թորոս ելաւ քաշուեցաւ իր սենեակը, իր լայն յօնքերը վեր առնելով և իր սուր աչքերը անոր հետքերուն վրայ դարձնելով.

— Աստուած յաջողութիւն տայ իշխանիկս, կը մըրմըռար քիթին տակէն, դուն շատ խելօք տղայ ես որ աղջիկ մը խելքդ կը յափափէ ու քեզ կնիկ դարձնէ. ալ ես այս գիշեր հանգիստ կրնամ քնանալ, դուն զըւարճացիր որչափ որ կ՚ուզես, բաւական է որ տարին չանցած աս նզոված քաղաքին պարիսպներէն մէկ մը դուրս նետուինք...։ Մեր լեռները հարցուցի, մեր ազգին ընդհանուր վիճակը հարցուցի... իմիններս ամըչցայ հարցնելու, վախցայ հարցնելու... ո՛վ գիտէ, ի՛նչ եղան, ո՞ղջ են, մեռած են, ո՞ւր են... իրաւ է որ անոնք հարցնելու ժամանակ ալ չիկար, անշուշտ ան ալ չէր գիտեր... Լաւ տղայ է Կոստանդին, քաջ է, ինչ օգուտ որ թեթեւ է, ո՛վ գիտէ Մլեհի՞ն էր յանցանքը թէ իրեն...։

Այս մտածութիւններով սկսաւ մրափել Բաբկէն հայրիկ իր նստած տեղը, և իրօք ալ իրեն ան մրափ

իր տղայութենէն ի վեր ամենուն քունին տեղ կը բըռնէր և որ իրեն համար բաւական էր քսանըչորս ժամ պատերազմելու և քառասուն ութ ժամ քալելու։

ԳԼՈՒԽ Ե.

ԴԻՈՆԻՍ

Այս փոքրիկ տան անմիջապէս կից տուն մը կար, որուն մէկ սենեակը միայն տեսանք մենք, սենեակ կամ մատուռ աղջկան մը սիրոյն՝ որ գաղտնիք մըն էր ամենու համար, բացի ծեր Դիոնիսէն՝ որ աս որբ աղջկան ոչ միայն բժիշկ, այլ և խնամակալ, խորհրդական, սրտակից վարժապետ և հայր եղած էր միանգամայն։

Դիոնիս, տկար և նիհար մարմնին մէջ կորովի սիրտ մը ունէր, և մեծահանճար գլուխ մը, բացի անկէ, իր արհեստը որ զինք ուսմանց և գիտութեանց տարեր էր տղայ տարիքին, իր զանազան ճամբորդութիւնները ի Փոքր Ասիա, Արաբիա, Եգիպտոս և Ասորեստան իր միտքը ընդարձակեր և հարստացուցեր էին, և դիտող ու հետաքննին բնութենէն ամէն գաղտնեաց պատճառը փնտռելով, մոռցեր և թերեւս արհամարհեր էր սրտի զգացումները։

Եւ վերջապէս, երբ յոգնած և տկարացած երկար և բազմամեայ պանդխտութիւններէն Բիւզանդիոն դարձեր էր, իբրեւ թէ յանկարծ աչքերը բացուեր էին տեսնելու և իմանալու թէ ժամանակը անցեր էր. ուստի, փիլիսոփայաբար որոշեր էր իր միայնութիւնը ուսումով մխիթարել, և իր արհեստին պատճառաւ Ալեքսիսի՝ Եւփիմէի հօրը հետ բարեկամաբար և եղբայրաբար կապուեցաւ, անոր ընդարձակ պալատին մէջ իր սենեակները ունեցաւ, և առանց զգալու ան՝ մարդը որ կը կարծէր թէ ընտանեաց սէր, զաւկի սէր իր սիր-

տը մուտք պիտի չունենային, իր սիրտը գորովալից գտաւ անոնց ամենուն համար որ Ալեքսիսի էին. անոր կինը իր քոյրն էր, անոր որդիքը իր ալ հարազատ զաւակները եղան, և ազատ սիրտ ունեցող կարծեցողն օր մը տեսաւ թէ՝ իր խեղճ սիրտն ալ գերի էր տղոց ճիչելուն, խնդալուն, տխրութեանց և ուրախութեանց, ու ինքնաբերաբար քարոզող և դաստիարակ եղած էր անոնց բարոյականին, ինչպէս բժիշկ և խնամածու էր անոնց կենսականին։

Իր այս պարտաւորութիւնները կրկնապատկուեցան երբ Ալեքսիս իր մահուան անկողնին մէջ ծեր բարեկամին յանձնեց իր ընտանիքը։

Ալ այն օրէն վերջը, Դիոնիս տան հայրը եղաւ և տեսանք թէ ինչպէ՛ս ոչ միայն անոնց պէտքերուն, այլ նաեւ անոնց ամէն քմայքներուն կը ծառայէր, ու Եւփիմէ իր ազնիւ բնաւորութեամբն ու կարեկից սրտովը՝ բռնաւոր մըն էր խեղճ ծերին գլխուն, որ անոր կամքին հակառակիլ չէր գիտեր, և անձնասէր ծերութիւնը ժամանակ չէր գտներ իր բերմանն հետեւելու։

Հետեւաբար, ինչ որ Եւփիմէ կ՚ուզէր, Դիոնիս կը կատարէր. և որովհետև արհեստին ու ուսմունքին համար մեծ համբաւ ունէր, և ծանր պարագաներու մէջ կը փնտռուէր թէ կայսերական և թէ մեծատոհմ ընտանիքներէ և ամէնքը զինքը կը յարգէին, ուստի կրցեր էր յաջողիլ իր ազդեցութեամբն ու խնդրանքովը մեր Թորոսն ալ բանտէն ազատել, և այդ տան մէջ, որ անյայտ մաս մըն էր Եւփիմէի պալատին՝ տեղաւորել։

Այս ընդարձակ բնակարանին նկարագիրն ընել աւելորդ է։ Ժամանակին շռայլութիւնը՝ ինչ որ սովորութիւն ըրած էր զարդարելու համար մեծամեծաց պալատները, ընդարձակ ոսկեձեղուն սրահներ և սենեակներ՝ պատկերներով, արձաններով, գորգերով, բազմոցներով հոն շատ աւելի կը գտնուէին. և բնական է որ տարիներով ընդարձակ գաւառի մը կուսա-

կալը իր կողոպուտները մայրաքաղաքին մէջ վայելէ։ Ուստի, Ալեքսիս ծերակուտի անդամ անուանուած և իր քաղցր բնաւորութեան համար կայսեր սիրելի, տանը շքեղութիւնն ու պերճանքը մեծ պարտաւորութիւն կը համարէր, մանաւանդ որ իր Հայ թագաւորական ցեղէն կինը ամէն բանէ աւելի գոհ ընել կ՚ուզէր, վասնզի սաստիկ կը սիրէր, և անոր մելամաղձոտ և տխուր վայրկեաններէն կ՚ակնածէր, որ առանց գանգատ մը յայտնելու, հայրենի երկրին յիշատակին՝ աչքի փայլ մը կ՚ունենար, և եռանդեամբ՝ իրաւ շատ քիչ անգամ իր տղայութեան ձիարշաւները և խաղերը տարեկից աղջկանց հետ՝ կը յիշէր։

Եւ աս կինը թէպէտ բուն հայրենիքէն վտարանդի վասնզի իր պապը Սենեքերիմ թողեր էր Վասպուրական աշխարհը և եկեր էր բնակելու Սեբաստիա, բայց դարձեալ հին հայրենիքի յիշատակներով սնած, ո՛րքան որ հեռացեր էր նո՛յնքան ալ աւելի անոր վրայ սէր ունէր. ուստի, իր ամուսինը միշտ տխրութեամբ կուտար իրեն հին Հայաստանի ցանցառ նամակները՝ որ երբեմն երբեմն տեղեկութիւն կը բերէին անոր թշուառութեանց։

Ուստի, իրեն մխիթարութիւն միայն Կիլիկիոյ Ռուբինեանց յաջողութիւններն էին, և ինչ որ անոնց յառաջդիմութեան համար կը խօսուէր՝ զինքը գաղտնի ուրախութեամբ կը լեցնէին և Ալեքսիս Թորոսի ու Լեւոնի քաջագործութեանց լուրերը ինք կը բերէր կատակներով ու միշտ կ՚աւելցնէր.

— Մեզ համար անհաճոյ և քեզի համար շատ հաճելի լուրեր կան դարձեալ։

Իսկ երբ Լեւոն, իր զաւակներով գերի բերուեցաւ մեծ քաղաքը, այս կինը՝ սրտի սուգ առաւ և կրցած օգնութիւնը ըրաւ եռանդագին, ինչպէս վերը յիշեցինք։ Եւ երբ ինքն ալ մեռաւ, Եւփիմէ մնաց միայն ժառանգ հայրենի ստացուածքներու և մայրենի հայասիրութեան։

Թէպէտ, իր սէրը աւելի հետեւանք կրնար համարուիլ ուրիշ դժբաղդ սիրոյ, ինչպէս երբեմն կը յայտնէր Դիոնիս փոքրիկ ժպիտով մը՝ առանց վիրաւորելու իր սանուհին, որ անտարակոյս ո՛եւէ կատակի կըրնար համբերել երբ ան մարդէն կուգար, և աններելի կը համարէր այնպիսի զուեշտի ստուեր մը նաև եթէ ուրիշը համարձակիլ յանդգնէր։ Վասնզի, այդ չքնաղ և արքունի կերպարանքին փափկութեան ու մտաւորական սրամտութեան ներքև բուռն և խրոխտ բնաւորութիւն մը կար՝ որ կարելի էր կոտրել և փշրել բայց ոչ երբէք ծռել և հակել։

Ծերին բոլոր խրատներն ու հայրական յորդորները անօգուտ կ'ըլլային՝ երբ իր յուսալիր աչքերը հրալիր կը դառնային չանթահարելու համար իր կամքին ընդդիմահարները։

Բայց, ժամանակը և բաղդին խիստ հարուածները որ իր երիտասարդ տարիքին վրայ բռնացած, սկսած էին զինք համոզել իր խնամակալին խորհուրդներուն ջանալ զիջանիլ, և աւելի խոհեմութիւն ունենալ մեր այս պատմութեան օրերուն։

Ուստի, երբ Եւփիմէ անմիտ՝ յամառ և անխրատ վիճաբանի մը կը պատահէր և կզգար հրալից ամպը՝ որ ճակտին վրայ կը դիզուէր, կը լռէր և իր դաստիարակին ժպիտ մը արձակելով կ'առնէր կը քալէր, և հանդարտութիւնը հասնելէն վերջը՝ դարձեալ կուգար կռուի, բայց ալ զէնքերը փոխուած էին, իր սուր միտքը, փոխանակ չանթերու՝ թունաւոր նետեր կ'արձակէր, հեգնութիւն և երգիծանք կը սրանային իր շրթունքներէն։ Եւ դարձեալ այս ամէն բնաւորութեան խստութեամբ ալ՝ թէ որ կիները փախչէին իսկ իր ընկերութենէն, էրիկ մարդիկ ալ գիտնալով թէ անխոց պիտի չելնեն իր պալատէն՝ դարձեալ կը վազէին փափաքելով իր տեսութեան։ Այսչափ զօրաւոր են կնոջ մը գեղեցկութեան հրապոյրները։

Ուստի, նոյն գարնան երեկոյին Բիւզանդիոնի վըճիտ երկինքին լիրալիր լուսնով մը, նստած էին Եւփիմեայ մեծ սրահին յարակից կախաղանաւոր կիտրոնեալ պարտէզին մէջ քանի մը հիւրեր օրիորդին բազմոցին շուրջը։ Իսկ ան իրենց սիրաշունչ շողոքորթութեանց այնպիսի ժպիտներով կը պատասխանէր որ անկարելի էր որոշել թէ՝ հաճո՞յքի հետեւանք էին թէ արհամարհանքի։ Վերջապէս երիտասարդ մը որուն սնապարծութիւնը հագուստներէն կը վազէր, որուն պչրանքը հոգւոյն նուաստութեան հայելին էր, սրտնեղութեամբ ոտքի ելաւ և կիսով գլուխը դէպի օրիորդը դարձնելով․

— Զարմանք է, ըսաւ, որ Կոմնենոսի մը նաև ձեր գեղեցկութիւնը անուշ բառ մը չունի պատասխանելու, արքայազուն մը ինձի պէս, որ կայսերական պատուանդաններուն վրայ էր ծննդեամբ, թերևս շատ նըւաստացաւ հաճոյանալու համար ձեզի։

Եւփիմէի առաջին շարժումները նետի հարուած մը ընդունող առիւծին էր, և հազիւ թէ իր գեղեցիկ ճակատը ցնցեց և աչքերը փայլակեցին, միտքը եկաւ թէ իր բաղդը իրեն կը սպասէր և ինք երջանիկ էր, ուստի ելաւ հանդարտ ձևով,

— Ներէ՛, արքայազն իշխան, թէ որ ես անզգայ կը գտնուիմ ձեր կատարելութեանց որոնց բարձրութիւնը մէկը չի կրնար ուրանալ․ ուստի ձերն է յանցանքը թէ որ ձեզի հաւասարները չի փնտռեցիք։

Եւ այս խօսքերը ազնուական ծանրութեամբ մը գրուցելէն վերջը՝ նոյնպէս զամենքը ողջունելով, գլուխը բարձր՝ թագուհւոյ մը պէս իր սենեակները քաշուեցաւ, ուրախ՝ որ դիւրութեամբ ազատեցաւ ընկերութենէ մը որ զինքը կը ձանձրացնէր՝ ուրախ՝ գտնելու համար այն ընկերութիւնը որուն համար սիրտը կը տրոփէր։

Իսկ անոնք որ մնացին՝ մեղադրեցին Իսաք Կոմնենոսը որ այնպիսի նախատանօք և կոպտութեամբ վար-

ուեցաւ գեղեցիկ օրիորդին հետ, և զրկեց զիրենք անոր ընկերութենէն։ Իսկ Դիոնիս, որ անշշունչ կը դիտէր այս ամէն եղածները, զիրենք ամէնն ալ ճամբայ դնելէն վերջը, ուղղուեցաւ գտնելու իր սանուհին, որ իրեն կը սպասէր և որ զինք տեսածին պէս, մէկէն դիմաւորելով։

— Ի՞նչ է կարեւոր զրուցելիքդ, ըսաւ։

— Իմ զրուցելիքս հարցմունք մըն է, ի՞նչ է քու միտքդ հայ երիտասարդին համար։

— Այս հարցմունքդ զիս կը զարմացնէ, դուն լաւ գիտես իմ միտքս։

— Անոր միտքն ի՞նչ է։

— Անշուշտ իմ միտքս ի՛նչ որ է, անորն ալ նոյնը պէտք է ըլլայ։

— Խնդրեմ ուրեմն որ ես ալ անգամ մը տեսնուիմ իրեն հետ, ու իր բերնէն լսեմ և ըստ այնմ շարժիմ։

— Վտանգ մը կա՞յ արդեօք, շուտ մը ինձ զրուցէ։

— Շատ անհամբեր ես, զաւակս, դու իմ ըսածս ըրէ։

Եւփիմէ առանց ժամանակ անցընելու այս վերջի խօսքերուն վրայ, մէկէն սրացաւ սենեակէ սենեակ, և գաղտնի դուռը բանալով տեսաւ որ Թորոս ոտքի վրայ իրեն կը սպասէ. առանց ամենևին խօսելու ձեռքէն բռնեց, և չիտակ հոն տարաւ ուր Դիոնիս նըստած կը մտածէր, և երբ երկուքն ալ իր առջև կանգնած տեսաւ, առանց կերպարանքը փոխելու և առանց շարժում մը ընելու միայն իր սուր աչքերը Թորոսին վրայ ուղղելով.

— Եւփիմէ ըսած է քեզ իմ ով ըլլալս, ինք իմ զաւակս է, ուրեմն պէտք է ինձ միտքդ շուտով յայտնես։

Այս առանց յառաջաբանի լակոնական հարցմունքին հետեւանքը, թէպէտ երկայն էր, բայց Թորոս մէկէն՝ մէկ նայուածքով դատեց դիմացի մարդը, հարցմունքին նշանակութիւնը՝ և մօտակայ վտանգ մը։

Ուստի առանց դանդաղելու պատասխանեց։

— Թէ որ օրիորդը այսչափ գեղեցիկ և սիրելի յատկութիւններ ալ չունենար, միայն ինձ ըրած բարերարութիւնները բաւական էին ինչ որ ունիմ՝ իմ անձս իրեն նուիրելու։

— Բաւական է, ազնիւ երիտասարդ, ես ալ քեզմէ սա պատասխանին կը սպասէի։ Հիմա նստէք և մտիկ ըրէք, որ ըստ այնմ շարժինք։ Վտանգ մը կայ, և վըտանգը քու ազգայիններէդ մէկէն կը հանի, որ երբեմն քու հօրդ բերդակալն է եղեր և շատ ալ վտանգաւոր մարդ, և հիմա Պոլիս կը գտնուի ծպտեալ ու ոստիկանութեան լրտեսները զինք ճանչեր են և իրեն հետքը նաև գտեր. այս գիշեր խորհուրդ կայ զինք ձերբակալելու, բայց այս դիպուածէն վերջ կայսեր շնորհքին վրայ վստահիլ անկարելի է և մեծ անխոհեմութիւն. ուրեմն դուն ի՞նչ կը մտածես, ի՞նչ պիտի ընես։

— Դեռ հիմա այս վայրկենիս կ՚իմանամ մօտալուտ վտանգը, թէ որ կարելի է փախիլ՝ հիմա փախինք կ՚ըսեմ։ Բայց որն է ապահով ճամբան։

— Հիմա ապահով ճամբան սա տունը չի կենալն է, և ամիսի մը չափ ժամանակ ծածկուիլն ու ոստիկանութեան կարծեցնել թէ դուն փախած ես։

— Ես բանտէ նոր ելած՝ այս ընդարձակ քաղաքին ոչ լաւ տեղեակն եմ և ոչ ծանօթ մը ունիմ. ինչ որ ըսես կը կատարեմ։

— Լաւ, ուրեմն պատրաստուէ՛ շուտով դու և ծառադ։ Զգեստդ և յունարէնի կատարեալ գիտութիւնդ զքեզ չեն մատներ, խոհեմութիւն քեզի չեմ յիշեցըներ. ես զքեզ կը ճանչնամ։ Հիմա ուրեմն պէտք է ճամբայ ելնես։

Ելաւ ծերուկը և դրան մօտենալով.

— Լազար կանչեց։

Մէկէն երևցաւ արդէն մեզ ծանօթ տնտեսը։

— Պատրա՞ստ է ամէն բան։

— Այո, Տէ՛ր։

— Ուրեմն, ըսաւ Թորոսի, քու ծառադ ալ պէտք է պատրաստուի։

— Ան միշտ պատրաստ է, պատասխանեց Թորոս և շտկուեցաւ դէպ ի դուռը։ Իսկ Եւփիմէ առանց մէկ բառ մը կորսնցնելու՝ մէյ մը ծերին և մէկ մը Թորոսին կը նայէր և առանց Թորոսի թևը թողլու՝ եկաւ մինչև անոր սենեակը, և փոքրիկ կապոց մը շինելով ստակի ու ճերմկեղէնի կապասէր՝ երբ Բաբկէն իր տիրոջ հետ վեր ելաւ։ Եւփէմէ առանց բան մը խօսելու կապոցը Բաբկէնի ձեռքը տուաւ․ անկից վազեց Լևոնի կախուած սուրը առաւ, Թորոսի երկնցուց որ ան սիրուն ձեռքը իր շրթանց տանելով սուրը առաւ մէջքը կապեց։

Եւ ասոնք այնչափ արագ, բայց անխռով կատարուեցան, իբրև թէ շատոնց որոշուած ըլլային, և երեքը մէկէն ծերին քով գտնուեցան։

— Լաւ, ըսաւ ծերը, հիմա Լազա՛ր, նայէ ծառայ աղախին չի գտնուի դուրսը։

— Մարդ չկայ, Տէ՛ր․ և բոլոր լոյսերը մարած են։

— Աստուած բարի յաջողութիւն տայ ձեզի, ըսաւ ծերը և Թորոսի ձեռքը տուաւ որ նոյնպէս ձեռքով պատասխանեց։

Եւ երբ սենեակին դրան քով եկաւ, դարձեալ համբուրեց Եւփիմէի ձեռքը, որ մինչև նոյն վայրկեանին բառ մը բերնէն չէր հանած և միայն ան ատեն աչքերը արցունքով՝

— Աստուած հետդ ըլլայ, ըսաւ։

Իսկ Թորոս մէյ մը երկինք նայեցաւ, մէյ մըն ալ անոր, և գլուխը դարձուց դէպի իր ճամբան ամենայն արագութեամբ, ծածկելու համար սրտին յուզմունքը․ Բաբկէն անշշունչ կ'երթար իր շուքին պէս։

Պալատին մէկ պզտի դռնէն Լազար զիրենք դուրս հանեց և լուռ անձայն փողոցներու մէջէն արագ արագ կ'երթային այս երեք անձերը, երբ իրենց քովէն

կ'անցնէին խաւարի և անզգամութեան արբանեակներ․ մինչև որ իրենց սահմանեալ տեղը իջան քանի մը գիշերապահ խմբիկներ ալ եղան որ իրենց հարցմունք ընելու եթէ պատրաստուէին, Լազար անոնց գլխաւորին ականջէն բան մը գրուցելով ճանբայ կառնէր, մինչև հասան տան մը դրան առջև․ հոն Լազար բանալի մը ծոցէն հանելով դուռը բացաւ և իր ընկերները ներս մտցնելով դուռը կամացուկ մը գոցեց։

— Շնորհէ ձեռքդ, Իշխանդ իմ, ըսաւ, որ աս մութին ձեզ առաջնորդեմ, և Թորոսի ձեռքն առնելով տարաւ սենեակ մը Բաբկէնի համար դժուարութիւն չի կար, վասն զի մութին ալ կը տեսնէր։ Դուք հոս նստէք, ըսաւ Լազար և աներևոյթ եղաւ։ Իսկ մեր երկու Հայերն մնացին մթութեան և խաւարի մէջ, գոնէ Թորոս գիտէր թէ ի՛նչ բանի համար էր այս գիշերային փախուստը․ երբ Բաբկէն որ կարծէր գուշակել՝ ինքնիրեն կ'ըսէր․

— Իշխանիկս այս գիշեր աչք գոցած չէ, ես լաւ քնացայ… արդեօք Կոստանդնի գալը իմացա՞ծ են․ երբ այդպէս է, իրա՛ւ աս Հռոմները սատանայ են․ ես չկրցայ ճանչնալ, անոնք ի՞նչպէս ճանչցան… հիմա ո՞ւր կերթանք, անտարակոյս պիտի տեսնենք… Հռոմ աղջիկը՝ իրա՛ւ գեղեցիկ է … բայց ան սուր աչուի, մեծճակատ ծերը ո՞վ էր… է՛հ, Բաբկէն ամէն բան կ'իմանանք… Աստուած տար յաջողէինք, անգամ մը մեր Սև Լեռը գտնէինք…»

Այսպէս կը խորհրդածէր Բաբկէն, երբ Լազար երևցաւ․

— Երթանք, Տէ՛ր իշխան, ըսաւ։

Քանի մը քայլ առնելով դուռ մը բացաւ և ինքզինքնին լուսնի լուսոյ մէջ և ծովեզրը գտան։ Երեք զուգաթի նաւ մը կը սպասէր։

Հազիւ թէ տեղաւորուեցան, նաւը սկսաւ սուրալ պատռելով ծովը, թողլով աջ կողմը մայրաքաղաքին և ձախ կողմը Ղալաթիոյ ափունքը․ քանի մը ձկնորսի

նաւեր և քանի մը պահակ նաւեր միայն կային ծովուն վրայ, որոնց մէկ հատը միայն մօտենալով նաւուն և Ղազար իր նշանի բառը տալով ազատօրէն իրենց ճամբան կը շարունակէին՝ նաւուն գլուխը դէպի Ոսփոր ուղղելով միշտ։

Կ'անցնէին շարունակ և ետ կը ձգէին այսօրուան Պէշիկթաշը, Օրթագիւղը, Արնաւուտգիւղը, և կարգաւ արուարձաններու շարունակութիւնը դէպի վեր, մինչև որ հասան Թարապիայի ծովեզերեայ տան մը առջև և հոն նաւակը կեցաւ։

Այն ատեն Ղազար ցամաք ելաւ և ձեռքով հրամցնելով Թորոսն ալ, որ Բարկէնի հետ ցատկեց ու նաւէն դուրս ելաւ. նաւավարներուն քանի մը խօսք ընելով ճամբեց։ Հոն, ծովեզերքը զիրենք թողլով՝ պըտոյտ մը ըրաւ և մտաւ տանը քովի ճամբան. զարկուած երկաթապատ պատուհան մը և պառաւ կին մը ձայն տուաւ ներսէն, երբ իր անունը տուաւ.

— Աստուածածին, ըսաւ կինը, այս ատեն ի՞նչ կ'ուզես, Ղազար։

— Բա՛ց, մայրիկս, ըսաւ ձայնը, հիմա խօսելու ժամանակ չէ, զովը սառեցուց մեզի։

Պառաւը նիգերը խախտեց և քոմշտի դուռը բացուեցաւ.

Ղազար ներս մտնելով նշանացի լռութիւն հրամայեց պառաւին. և կանթեղը ձեռքէն առնելով հիւրերը ներս մտցուց և դռնապանին բնակարանը թողլով, շիտակ զիրենք մաքուր սենեակ մը հանեց, ուր անկողին և ամէն ինչ պատրաստ կար իրենց պէտքերուն համար։

Գիշերը յառաջացեր էր, լուսինը լիալիր կը թափառէր երկինքին վրայ և հանդարտ ընթացքը կը շարունակէր, ծովը հանդարտ էր նոյնպէս, իբրև թէ երբէք ալեկոծութիւն չէր ունեցեր, բնութիւնը վերջապէս իր բոլոր գեղեցկութեամբ զարդարուած խաղաղութեան կերպարանք ունէր։ Թորոս պատուհա-

նին առջև նստած կը նայէր, բայց տեսարանին գեղեցկութիւնը ոչ կը տեսնէր և ոչ կզգար. այլ մանաւանդ թէ աւելի կ'երևար իրեն ամէն բան, եւ դժուար էր որոշել թէ վերահաս վտա՞նգը արդեօք թէ գեղեցկին երեսէն հալածեալ աքսորն էր որ իրեն ծանր կը թուէր, բայց ստոյգը հոն էր որ լուսինը արիւնագոյն կ'երևէր աչքին, ծովը պղտոր հայելի մըն էր, ծաղիկները հոտ չունէին, և սոխակը՝ որ վարդերուն մէջ կը դայլայլէր, մահուան երգի պէս աւելի էր իրեն, վասնզի Նուփիմէն չկար։

— Աւա՜ղ, ուրեմն առանց անոր հայրենիքի փըրկութիւնն նաև իմ սրտիս չպիտի քաղցրանա՜յ, մրմնջեց և շտկուեցաւ դէպի անկողին. երբ յանկարծ միտքը եկաւ Բարկէնը՝ որ հոն կեցեր էր արձանի պէս. միտքը եկաւ նաև թէ՝ քանի որ դուրս ելած էին իրենց տունէն ոչ բառ մը արտասանած և ոչ ինք իր պապանձման մէջ խօսք մը ուղղած էր անոր. թէպէտ սէրը խիստ, նախանձոտ և անողոք խորհրդական մըն է եւ կը մերժէ ամէն բան որ սէր չէ, բայց Թորոս շատ մեծ սիրտ ունէր մոռնալու համար այդ ազնիւ մարդուն հաւատարմութիւնը իրեններուն և իրեն. ուստի ճամբան փոխեց և իրեն մօտենալով.

— Բարկէ՛ն հայրիկ, դուն ի՞նչ կը խորհիս աս մեր դիպուածին. ըսաւ դառն և մտերմական ժպիտով մը միայնգամայն։

— Ի՞նչ գրուցեմ, իշխանիկս վտանգ մը թէպէտ կ'երևայ մեր փախուստէն, բայց կը թուի նաև թէ յաջող ելք պիտի ունենանք, վասնզի մինչև հիմա կորած թափած չունինք։ Ո՛չ թշնամին զմեզ հալածեց և ոչ ճամբանիս կորեց և սուրը պատեանէ հանելու չպարտաւորուեցանք։

— Ճշմարիտ է, Բարկէն, թէ վտանգաւոր դիպուածներ կրնայինք ունենալ, բայց հազիւ թէ բանտէն ելած՝ բանտի սպառնալիքներու ներքև գտնուիլ շատ

ծանր է ։ Հաւերը կը խօսին․ արշալոյսը մօտ է, երթանք քնանալ քու անկողինդ...

— Ո՛հ, իմ անկողինս հոն է, ուր որ բազմոց մը կայ, Աստուած քեզի հանգստութիւն տայ, իշխանիկս ։

Թորոս հազիւ թէ անկողին մտաւ, քունն ալ իր աչքերուն վրայ ծանրացաւ, վասնզի հոգն ու յոգնութիւնը այն տարիքին մէջ քուն չեն վտարեր, նամանաւանդ թէ կ՚անուշցնեն ։ Երբ արթնցաւ, արդէն արեգակը իր ճառագայթներով երկինքին վրայ կը թագաւորէր և բոլոր բնութիւնը ոտքի վրայ էր ։

Նոյնպէս Բաբկէն դուրսի սենեակը արևուն հետ ելած, անձայն և անշշուկ կը պտտէր և առանց երևալու ձկնորսներու, նաւավարներու, ծովու և ցամաքի անցորդներու երթևեկը և իրենց օթևանած ամառանոցը կը դիտէր և ակռաները կճրտելով.

— Անիծեա՛լ քաղաք, նզովի՛ց քաղաք, հիմնայատակ ըլ՚աս, կը մրմռար ։

Եւ վերջը, երբեմն կապ մը կը ձգէր կապոցին որ օրիորդը յանձնած էր իր այլայլութեան մէջ առանց բառ մը խօսելու.

— Մեր տիկինը, Աստուած լուսաւորէ հոգին, երբէք ինձ այդպիսի ամբարտաւան աչք ձգած չունէր․ «Բաբկէն հայրի՛կ, հոգիս հայրի՛կ, Ռուբէնս քեզ եմ յանձներ, նայէ՛, կրակոտ է... Թորոս խելօք է․ բայց տղայ է...» մեղր կը վազէր շրթունքներէն, ան մեռաւ մեր բաղդը դարձաւ, վերջին անկողին լինալն էր․ նորէն ինձ յիշեց, յանձնեց, և աչքերով բռնեցի, կը սրբէր ։ «Ո՞ւր է անանկ տիկին... աս հոռոմի կանանց քիթը երկինքն է...։»

Եւ Թորոս ներսը ոտքի ձայնը լսելով՝ տղու մը պէս աչքերը դարձեալ լաւ մը շփեց ու սենեակը գնաց մտաւ ։

ԳԼՈՒԽ Զ

ԱՌԻՒԾԻՆ ԿՈՐԻՒՆԸ՝ ԱՌԻՒԾ Է

Մենք տեսանք որ Եփիմէ մինչև վերջը առանց դիմադրութեան կամ խորհրդածութեան բառ արտասանելու օգներ էր նաև Թորոսի փախստեան, վասնզի իր սրամտութիւնը՝ վտանգը յայտներ և նշմարեր էր ։ Բայց երբ սրահներու մթութեան մէջ տեսաւ թէ իր սիրելին անհետացաւ՝

— Ո՛հ, Աստուած իմ, ըսաւ և բազմոցի մը վրայ ինկաւ՝ երկու ձեռքերը երեսին վրայ սքօղելով․ իսկ Դիոնիս անխռով մօտենալով՝

— Եփիմէ՛, ըսաւ, տխրութեանց և արտասուաց ժամանակ չէ, քաջ եղիր որպէսզի կարենանք կատարեալ վտանգին առաջքը առնել ։

— Դեռ վտանգ մնա՞ց ուրեմն, ըսաւ աղջիկը սոսկումով ։

— Անշուշտ, թէ որ անհոգ նստինք, ոչինչ՝ թէ որ աշխատինք ։

— Բայց չեմ գիտեր թէ ի՛նչ պէտք է ընել ։

— Ես ամէն բան պատրաստեր եմ, անհոգ եղիր, միայն ղիս մի չփոթեր ։

— Ո՛հ, ինչպէս կ՚ուզես որ անհոգ ըլլամ, երբ իմ Թորոսս կորսնցուցի ։

— Թորոս կորսուած չէ, և վաղը ես ձեր պսակը կատարել պիտի տամ ։

— Այո՛, այդ արարողութիւնը գրաւական մըն է քու ապագայ երջանկութեանդ համար, և ով գիտէ թերևս զէնք մըն ալ է ապագային անկարծելի արկածներու համար ։

— Բայց ես Թորոսին վրայ ամենևին կասկած չունիմ ։

— Ես ալ չունիմ, մանաւանդ թէ՝ շատ համարում ալ ունիմ․ բայց ժամանակը, պարագաները, բաղդին

փոփոխութիւնները՝ մարդկային խեղճ սրտին վրայ շատ և անկարծելի ազդեցութիւններ ունին : Ես չեմ կրնար իմ Նափիմէս, իր պատիւը, իր ստացուածքը, իր գեղեցկութիւնը երիտասարդութեան փոփոխամտութեան անձնատուր ընել, պսակի արարողութիւնը բաւական դրաւական մըն է :

— Ես բոլորովին քու կամքիդ հետեւելով ալ՝ չեմ կրնար մոռնալ ամէն օրուան պսակներու ոչնչանալն պատրիարքական վճիռներով :

— Մեր եկեղեցին շատ թուլցուցած է ամուսնութեան կանոններու խստութիւնը, բայց հայոց մէջ այնպէս չէ, Անիի թագաւորները նաեւ գիտեմ ամուսնութեան կանոններուն անհնազանդ գտնուելու յանդգնութիւն շատ քիչ անգամ ունեցեր են : Բայց ժամանակ կորսնցնել պէտք չէ :

— Ես քեզի արգելք չեմ, հայրիկ, ըրէ ինչ որ կ'ուզես :

Ծերը շուտ մը ելաւ ծառայ մը կանչեց, ապսպրեց Թորոսի տան ծառայող երկու անձերը առնել, դեռ չի լուսցած՝ նաւակ մը դնել Թարապիա տանիլ. երկու որմնագործ, որ արդէն իր հրամանին կը սպասէին, բերել տուաւ և գաղտնի դուռը ամրացնելէն վերջը հըռոմէական ծեփով, (որուն գաղտնիքին հմուտ էր ինք) որմնել տուաւ ներսէն, և անմիջապէս նստաւ թուղթ մը գրեց բարեկամ հայ վարդապետի մը, ուսկից կը խնդրէր ծպտեալ իր ցոյց տուած ժամադրավայրը գտնուիլ. և երբ այս ամէն բանը կարգադրեց ու կատարեց բարի գիշեր մաղթելով իր սանուհիին՝ իր սենեակը քաշուեցաւ քնանալու :

Իսկ Նափիմէ տեսնելով իր ծեր խնամակալին անխըռով վստահութիւնը, հանդարտեցաւ, կանչեց իր նաժիշտները զինքը հանուեցնելու, և իր երկրորդ օրուան երջանկութեան մտածութեամբը զբաղած՝ մոռցաւ գրեթէ ալեկոծութիւնը որ քանի մը ժամ առաջ զինք կը տարուբերէր, և երջանիկ քունի մէջ ընկղմե-

ցաւ : Երբ առաւօտուն արթնցաւ, Դիոնիս ելած, քանի մը երեւելի անձանց այցելութիւն ըրած իր էն կարեւոր տեղեկութիւնները առած և վտանգը հեռացնելու ամէն հնարք ի գործ դրած էր : Ուստի, երբ Նափիմէին քով մտաւ, ան իր առջի նայուածքէն ապահովուած՝

— Հայրի՛կ, ի՞նչ պիտի ընենք այսօր, հարցուց :

— Կը հագուինք, կը զարդարուինք, և կ'երթանք զուարճանալու :

— Զուարճութի՛ւն... ո՛հ, բառը գեղեցիկ է, զըւարճութիւն Դիոնիսի համար, իր գիրքերէն, իր ուսմունքներէն դուրս. ո՛րչափ սուղի կը նստիմ քեզի, սիրուն հայրիկ, ըսաւ Նափիմէ և ծերին երեսները համբուրեց. Դիոնիս իր բոլոր փիլիսոփայական ծանրութեամբ չկրցաւ ախորժանքի ժպիտ մը զսպել, վասնզի ծերերուն բնական է ախորժիլ երիտասարդ զգուանքներէ : Բայց դարձեալ պէտք եղած պատրաստութիւնները տեսնել հրամայեց, ամէն բան կարգի դրաւ, և երբ ճաշը ըրին ու Նափիմէ կը հարցնէր թէ՝ պէտք չէ՞ր պատրաստուիլ, քիչ մըն ալ, կ'ըսէր ծերը, պէտք է համբերել, վասնզի ոստիկանութեան կը սպասեմ. և իրօք ծառայ մը եկաւ իմացնելու թէ՝ ոստիկանութեան մեծը կը խնդրէր այցելութիւն մը ընել պալատին տիկին Օրխորդի հրամանաւ :

Եւ ահա ոստիկանապետը ներս մտաւ ու ամենայն մեծարանքով ողջունելէ վերջ.

— Տիկի՛ն Օրխորդ, ըսաւ, խնդրեմ հրաման տուէք որ քանի մը սենեակներու փոքրիկ խուզարկութիւն մը ընեն մեր պաշտօնատարները :

— Ի՞նչ արդեօք, ըսաւ Նափիմէ, միթէ մեծ յանցանք մը կամ ոճի՞ր մը իմ տանս մէջ կը յուսացուի :

— Յուսացուի՛լ, չէ, բայց ո՛վ գիտէ, տանը յարմարութիւնը՝ դիրքը կասկածներ կրնան տալ, ուստի ամէն անոնք փարատելու համար...

— Լա՛ւ, տէր, ի՛նչ խուզարկութիւն որ կ՚ուզէք՝ կարող էք ընել։

Ան ատեն, շիտակ արդէն մեզի ծանօթ կողմը երթալով, ան սենեակը՝ որ Թորոսի անկողնի սենեակին կը պատասխանէր՝ փնտռեցին, նայեցան և երբ տախտակամածին բերանը քարածեփ պատ մը գտան, իրենց ամէն կասկածները փարատեցան և ոստիկանապետը խստութեամբ կարճահասակ մարդու մը դառնալով, որ արդէն մեզի ծանօթ է, վասնզի անգամ մը տեսանք.

— Այս երիտասարդին փախստեան պատասխանատուն դո՛ւն ես, տիար Միքայէլ, ըսաւ, հսկողութիւնը քեզի կ՚իյնար. պէտք էր որ դուն անոր ամէն շարժումները գիտնայիր, և ահա՛ մարդը անյայտ կ՚ըլլայ, և ոչ միայն ինք, այլ նաեւ անոնք՝ որ դուն տուած էիր իրեն ծառայելու, և դուն, ապուշ ու անմիտ, բառ մը չունիս պատասխան. դատարանին կը մնայ քեզի պատասխանելու. պարապ տեղ բերանդ մի՛ բանար հոս խօսելու։

— Բայց, Տէ՛ր...

— Մի՛ խօսիր, անօգուտ կ՚աշխատիս ինձ պատասխանելու համար, պահէ՛ քու բոլոր ճարտասանութիւնդ դատաւորին, անոր առջեւ միայն պէտք կայ խօսելու։ Ոստիկաննե՛ր, այս մարդը դատարան տարէք.

— Բայց անգամ մըն ալ մտիկ ըրէք. ես այդ երիտասարդին ծառայողները չեմ ճանչնար, անգամ մը միայն տեսայ երկու օր առաջ և այսօր...

— Այդ խօսքով քու յանցանքդ կը ծանրացնես, դուն չճանչցած մարդիկներուդ յանձնեցիր քու հսկողութեանդ յանձնուած մարդիկը։ Տարէ՛ք, տարէք։

Իսկ խեղճ Միքայէլ զարմացական ձեւեր ընելով և ճակտէն ջուրի պէս քրտինք թափելով, երկու ոստիկաններու մէջէն դուրս ելաւ դատարան երթալու համար։

Ոստիկանապետը յարգանքով ողջունելով Եւփիմէն և Դիոնիսի կամաց ձայնով մը յայտնելով իր զարմանքը, կ՚ըսէր.

— Տէրութիւնը կառավարող մեր մեծերը՝ իրօք զարմանալի են, ազատ կը թողուն սանկ վտանգաւոր մարդ մը աս ծովու պէս քաղաքին մէջ, մեզի լուր մը չեն տար, և խեղճ մարդու մը՝ որ իր գլխուն տէրը չէ, անոր կը յանձնեն և հիմա կ՚ելնեն մեզմէ կը պահանջեն։

— Եւ դուք Տիար, անշուշտ կը փնտռէք մէկը կրնաք գտնել։

— Անշուշտ, ըսաւ ոստիկանապետը, եթէ փախցընողը Դիոնիս չէ։

— Թէ որ ան ինքն է։

— Ուրեմն չեմ գտներ, ըսաւ ժպտելով պաշտօնատարը։

— Լա՛ւ կ՚ընես, պատասխանեց ծերը նոյնպիսի ժպիտով մը։

— Բաւական է այսչափը, իմացա՛յ, ե՞րբ ինծի հրաման մը եկաւ ձեզմէ և չի կատարուեցաւ, սիրտդ հանգիստ բռնէ, թող հայ երիտասարդը հանգիստ պըտըտի, միայն թէ Անդրոնիկոսէն զգուշանայ վասն զի ամէն չարեաց պատճառ նա է, բաւական է թէ հայ մը գտնուի խնդիրի մը մէջ՝ իր ատելութիւնը դաւ և վտանգ կը տեսնէ հոն, երկինք երկիր իրար կը խառնէ։ Քանի՞ քանի անգամ Կայսրը և Ծերակոյտը սա ապուշ երիտասարդին ազատութիւն տալու հրաման ըրին, և ինք միշտ արգիլելու ճարը գտաւ, և հիմա որովհետև ապստամբ ու վտանգաւոր Հայ մը տեսնուած կայ եղեր քաղքիս մէջ, իր գրգռութեամբ երիտասարդը կուզուի, որպէս զի բանտի դատապարտուի, և այդ Միքայէլը Անդրոնիկոսի մարդն է։ Աս խօսքերն ըսելով ոստիկանապետը թողուց և գնաց։

Իսկ Դիոնիս սանուհիին գալով, հրաւիրեց պատրաստուիլ երթալու և գտնելու համար Թորոսը։ Եւ

քիչ մը ժամանակէն վերջը երկու դեսպակ կը ձգուին պալատը և կը շտկուէին դէպ ի ծովեզր ուր գեղեցիկ նաւակ մը իրենց կը սպասէր։

Նոյն գիշերը Թարաբիայի ամարանոցին մեծ սրահին մէջ Թորոսի և Նեվիմէի պսակի հանդէսը կը կատարուէր հայկական արարողութեամբ․ Բարկէն՝ կնքահօր պաշտօնը կը կատարէր ամենայն դոհութեամբ, ներելով սրտանց Նեվիմէի արեան մէջ ինչ որ յունական կաթիլներ կը գտնուէին, և ծածկելով ինչչափ որ կարելի էր տրտմախառն ուրախութեան արցունքին քանի մը կաթիլներն։

Երբ ամէն բան կատարուեցաւ և գիշերը կէս եղաւ Դիոնիսի կարգադրութեամբ մեր հարսն ու փեսան հասարակ նաւակ մը մտած Բարկէնով՝ երկու ծառայով և մէկ նաժիշտով կ՚անցնէին դիմացի Ասիոյ ծովափունքը, և ծովեզրէն մղոն մը հեռաւորութեամբ անտառախիտ ծառերէ շրջապատեալ գիւղական ամայի տուն մը պատրաստ կը գտնէին զիրենք ընդունելու համար․ հոն ինչ որ բնութեան սքանչելիք կար․ այս երկու գեղեցիկ անձերուն ուրախութիւնը կը պըսակէր․ Բարկէն իր լեռներուն զարունը կը յիշէր, և երբ իր երկու սաները կ՚ելնէին բնակարանէն և կը սկսէին հէռանալ, իր երկայրին մէջքը հեռուանց անտեսանելի՝ անոնց հետքերուն կը հետևէր, պահապան և աչալուրջ գամփռի մը պէս ամէն ծառի՝ ամէն բըլրակի շուքը կը քննէր որ վտանգ մը անոնց չի պատահի։

Ութ օր աս երջանիկ կեանքը վայելեցին մեր նորապսակ ամոլները, և Թորոս իր հարսին քով կը գըտնէր ան ամէն գեղեցիկ և բարձր զգացումները, որ երազն են երիտասարդութեան փափաքներուն, ու իր երջանկութեան, միայն իր լեռները կը պակսէին, և այն ազգային ազատութեան սէրը, որ նախահօր Ռուբէնի արեան հետ իր երակներուն մէջ կը շրջէր։

Ութ օր էր նաև որ Դիոնիսէն լուր ամենևին չկար, այլ ըստ սովորութեան տնտեսը ամէն օր կերակուրը կը բերէր արշալոյսին հետ և մէկէն կը հեռանար որպէս զի կասկածի տեղի չտայ։

Յանկարծ երեկոյ մը ծեր Դիոնիս երևցաւ Թէպէտ շատ դժուար էր անոր երեսին վրայ զաղտնիք մը նըշմարել, բայց Նեվիմէ իրեն սիրալիր ընդունելութիւն մը ընելէ վերջը՝ երբ քիչ մը ատեն տան առջև աղբիւրին քով նստան, կասկածոտ ծիծաղով մը ըսաւ․

— Հայրիկ, դու մեզի բան մը ունիս խօսելիք և կ՚երևայ թէ կը դանդաղիս։

— Այո, Նեվիմէ, լաւ գիտցար թէ՝ բան ունիմ ձեզի հետ խօսելիք, և շատ կարևոր բան։

— Ինչո՞ւ կ՚ուշացնես, կ՚երևայ թէ շատ անախորժ լուր մը պիտի ըլլայ։

— Ես քանի օր է, Թորոսի փախստեան համար նաւ մը կը նայիմ, և այսօր հազիւ թէ փնտռածս գտայ․․․։

— Ինչո՞ւ այդչափ շուտով, հայրիկ, միթէ ինձ համար նաւուն մէջ տեղ չկա՞յ։

— Մանաւանդ թէ ան կը ցաւիմ որ իմ կարծածիս չափ շուտ չի կրցայ շարժիլ․ վասն զի այսօր փոքրիկ նամակ մը ինձ կ՚իմացնէր թէ ձեր փախստեան տեղն իմացուեր է ձեր թշնամիներէն․ ուստի, արտօրնօք եկայ քեզ տանելու, Նեվիմէ։ Մինչև որ Թորոս իր գործերը կարգի չդնէ, մինչև որ յաջողութիւնը իրեն չծիծաղի, դուն ոչ թէ իրեն օգտակար՝ այլ վնասակար կրնաս ըլլալ։

— Ամենևին, ըսաւ Նեվիմէ, որոշ և վճռողական ձայնով, կը փափաքէի մանաւանդ որ՝ դիպուածը այնպէս բերէր որ կարենայի քեզ համոզել իմ ըսածիս ճշմարտութեան։

— Քեզի հետ այս նիւթի վրայ վիճաբանիլ ինձ աւելորդ է, տէր և դատաւոր՝ այս խնդրոյն մէջ՝ ինձ-

մէ և քեզմէ շա՛տ աւելի ուրիշ մը կայ, ըսաւ ծերը՝ Թորոսին դառնալով:

Իսկ Թորոս այն միջոցին դէպի անտառին խորը աչքերը յառած կը դիտէր կէս ուշադրութիւն մը ընելով այս խօսակցութեան, ու երբ ծերը.

— Իշխան, դուն մեր խօսակցութեան կ'երեւայ թէ ուշ չես դներ, բայց ես շատ կարեւոր նիւթի մը վրայ կը խօսիմ:

— Այո՛, ձեզ ալ ուշ կը դնեմ, բայց ուրիշ բանի մըն ալ ուշ կը դնեմ, ըսաւ առանց իւր սուր աչքը խախտելու իւր նպատակէն:

Ան ատեն, Դիոնիս ու Եւփիմէ նոյն կողմը դարձուցին իրենց աչքերը և բան մը չտեսնելով դարձան Թորոսի՝ որ տեսնելով ալ՝ իրենց հարցնող նայուածքին առանց պատասխանելու, ոտք ելաւ, մէկ ձայնով.

— Բաբկէն, կանչեց:

— Բաբկէն հոս չէ, ըսաւ ծառայ մը:

— Ուրեմն, ըսաւ Թորոս, հիմա կուգայ և մեզի որոշ լուր մը կը բերէ:

— Ի՛նչ բանի լուր, հարցուց Եւփիմէ այլայլելով:

— Կ'երեւայ թէ, սիրելի Եւփիմէ, մեր թշնամիները, որոնց համար լուր առած ըլլալը իմացուց Դիոնիս մեզի այցելութիւն մը ընել կը փափաքին:

— Եւ դու հիմա որ բան մը կը դիտէիր, անոնք էին տեսա՞ր...

— Հինգ վեց հոգի և զէնքի փայլիւն տեսայ:

— Ի՛նչ կ'ըսես, հինգ վեց հոգի՛...

— Թէ որ այդչափ են մեր թշնամիները, ըսաւ Թորոս ժպտելով, Բաբկէն միայն բաւական է զանոնք ցրուելու, իսկ թէ որ անոր կրկինն են պէտք է որ ես ալ օգնեմ: Բայց խնդիրը հոն չէ, աւելցուց Թորոս, Դիոնիսի դառնալով, **Մեր Թշնամիները** կրնանք իմանալ թէ որոնք են, կայսրը և իր ստիկանութի՞ւնն է թէ մասնաւոր մարդիկ:

— Հիմա աս միջոցին քու թշնամիդ՝ Անդրանիկոս

կեսարն է, բայց թէ որ իր փոքրիկ խումբը վիրաւորուի և ցրուի՝ իրենց վերադարձը չգիտեմ թէ որչափ բազմութեամբ կրնայ ըլլալ:

— Ուրեմն մեզի պարտք կը ձգես այնպէս շարժելու որ ասոնցմէ մէկը ողջ չի դառնայ:

— Ան չէ իմ միտքս, բայց ըլլալիքը յայտնի է, մէկ փախստական մը տասնապատիկ բազմութեամբ կը դառնայ:

— Քու նաւդ ե՞րբ կուգայ հոս՝ այս ծովեզրը:

— Վաղն առաւօտ, կանուխ:

— Ահա Բաբկէն, ըսաւ Թորոս, որ ծովեզրին կողմէն կուգայ. հիմա ճիշդ լուր կառնենք... աս ծանր քալուածքէն ալ կը ցուցնէ թէ՝ վտանգը մեծ չէ:

Սպասելու լռութիւն մը տիրեց, մինչև որ Բաբկէն հասաւ, առանց այլայլութեան նշան մը ունենալու իր կերպարանքին վրայ, իբրև թէ բան մը տեսած չէր, իսկ երբ որ Թորոս նշանացի հարցուց ի՞նչ լուր կար, ան ատեն պատասխանեց.

— Ես անտառին մէջ պտոյտ մը կ'ընէի, երբ տեսայ որ քալելու և կամաց խօսելու ձայն կուգար ծառերու մէջ քիչ մը հեռուէն, ուստի, թուփի մը խըտութեան մէջ ծածկուեցայ և տեսայ որ երկուք երկուք 12—13 հոգիի չափ զինեալ մարդիկ քովէս անցան. և այնչափ մօտ՝ որ մէկ հատը՝ որ տեսած էի արդէն, ճանչցայ. նոյն մարդն էր որ ասկից տասն օր առաջ առիւծին կորիւնը կը նախատէր: Վերջապէս տեսայ որ անոնք պտոյտներ կ'ընէին անտառին մէջ խուզարկութեան համար, ուստի ես ալ կամաց մը ելայ դէպի իրենց եկած ճամբան գնացի, և տեսայ որ մակոյկ մը զիրենք բերած էր և մէջը պահապան մէկ հոգի մը ձգեր էին:

— Լաւ ըսաւ Թորոս անխռով, կարծեմ թէ մեր կերակուրի ժամանակն է և պէտք է քիչ մը բան ուտել որովհետև հաւանական է թէ վերջը ժամանակ չունենանք:

Եւ չորսերնին մէկտեղ շտկուեցան դէպի տունը, երբ դռնէն մտան, պարտէզին վրայ դիտող աչք մը պտտցուց Թորոս և Բարկէնին քանի մը բան ապսպրեց կամաց ձայնով՝ որ անմիջապէս դռներուն մէկը քարերով ամրացուց և միւսը՝ առջի վիճակին մէջ ձգեց, երբ նստան կերակուրի մեր երկու Հայերը, ըստ սովորութեան կերան, Եւփիմէ կը խաղար քան թէ կուտէր, իսկ ծերը մտախոհ քանի մը պատառ առնելէն վերջ՝

— Ի՞նչ է քու միտքդ ըսաւ Թորոսի, երբ ան դադրեր էր ուտելէ և անհոգ կը խորհէր։

— Մենք պարտական ենք ինքզինքնիս պաշտպանելու. մանաւանդ որ մասնաւոր անձի թշնամութիւնն է որ ոխերմաբար կը դարանի, և գիշերուան մութը իրեն ընկեր կ՚առնէ։ Կը տեսնեմ թէ դուն իմաստուն մարդ մը որու նման ես շատ քիչ տեսեր եմ, կը վարանիս. կ՚երևակայեմ թէ քսանը հազիւ անցած երիտասարդի մը զէնքի վարժութեան վրայ վստահութիւն չունենաս, բայց այդ մի հոգար, ես տղայ տարիքէս զէնքի վարժութեան և վտանգի մէջ ծներ և սներ եմ. անոր համար ալ աս իրիկունը չեմ մտածեր, վաղը կը մտածեմ աս իրիկուն ան մարդիկը ժամ մը չքշեր հաւու պէս կը թօթափին։

Եւ այս խօսքերը այնպիսի անհոգ արհամարհանք մը ունէին, և իր յստակ ու որոշ ձայնը այնչափ փոխուած չէր՝ որ եթէ իր մեծ աչքերուն բոցը չըլլար, որ ամէն շարժումին կայծակ կը հանէր, արձան կը կարծուէր. այն միջոցին Բարկէն ներս մտաւ.

— Ե՛լ, Իշխանի՛կս, ըսաւ, մարդիկը կուգան, ի՞նչպէս պիտի ընենք։

— Թո՛ղ զիրենք որ՝ մեծ դռնէն ներս մտնեն, դուն՝ երբ ամենքը կը մտնեն՝ դուրս կեցիր, ո՛վ որ ելնէ՝ մահուան հարուած մը տուր։

— Բայց դուն հոս մինակ ես, անոնք կամ տասն երկու կամ տասներեք են։

— Դուն լսեցի՛ր, Բարկէն հայրիկ, քու պաշտօնդ դրանը դուրսը՝ մարդ ողջ չհանելն է։

Այնպիսի անդիմադրելի եղանակաւ մը ըսուեցաւ այս՝ որ Բարկէն դուրս ելաւ առանց խօսելու, քթին տակէն աղօթք մը մռլտալով., անտարակոյս աղօթքը Թորոսին համար էր։

Տան վարի պատուհաններ երկաթէ վանդակներ ունէին. ճրագները վերցնել տուաւ, վերի փեղկերը՝ ըսաւ Դիոնիսին թէ՝ պէտք է պաշտպանել որպէս զի Եւփիմէ չվախնայ։ Իսկ ինք թռաւ սանդուխներէն վեր, Լևոնի ահագին սուրը մերկ՝ աջ ձեռքը բռնած և երկայրի սուրը մէջքը, իջաւ փայլակի մը պէս. Եւփիմէ որ անխօս կեցեր էր գգուանքով ձեռքը համբուրեց.

— Սիրտդ հանգիստ բռնէ, ժամ մը չանցեր, ասիկա դիպուած մըն է, ըսաւ, վաղուան համար մտածենք։

Աս անխռով խօսքերը թէպէտ կ՚ապահովէին քիչ մը անոր սիրտը, և կ՚ուզէր խօսիլ, բայց չկրցաւ, ու նոյն միջոցին տեսաւ որ Թորոս զինք ձգեց դուրս ելաւ պարտէզ և տան դուռը վրայէն գոցեց, ու պատին քով թուփերու մէջ ծածկուեցաւ։

Ինք տան շուքին մէջն էր, ո՛վ որ դռնէն մտնէր որոշ կը տեսնէր լուսնի լոյսով. և ահա կիսաբաց դուռը բացուեցաւ և մէկիկ մէկիկ մէկիկ գողի պէս կը մըտնէին իր սպասած մարդիկը, մտնողը մէյ մը կանգ կ՚առնէր, չորս կողմը կը դիտէր, և դէպի դուռը կը յառաջանար։ Երբ եօթը ութը հոգի ներս մտան և առջի մտնողները տան դրանը և թուփերուն մօտեցան, ահագին և սոսկալի ձայն մը որոտաց. Թորոս ինքն էր և հարուած հարուածի վրայ կը յաջորդէր. արդէն երեք հոգի գետինը կը տապլտկէին և երկուքը փախան. հազիւ ան ատեն երեք հոգի թշնամիներէն կարողացան անոր վրայ յարձակիլ, բայց այս յարձակումն ալ նոյնչափ օգտակար եղաւ իրենց՝ որչափ առ-

ջի յանկարծակի գալը․ երկու հոգի դարձեալ մահացու վիրաւոր կ'իյնային, և իր ահագին սուրը մէկդի կը թռցնէր զէնքերու բեկորներ, թևեր, մատեր, և վիրաւորներ, կամ վատեր դուրս կ'ելնէին, Բարկէնը կը գտնէին որ հարուած մը միայն տալով կը պառկեցնէր զիրենք․ և որպէս զի արգելք չըլլան ուրիշ ելլողներուն, խղճմտաբար ոտքերնին կը քաշէր և պատին տակ կը դիզէր։

Երբ երեք չորս եղան դիակները և տեսաւ որ դեռ ներսը զէնքի հարուածները չեն դադրիր․

— Քիչ մըն ալ ներս մտնենք, ըսաւ, վասն զի երկայն եղաւ,

Ճիշդ ժամանակին մտաւ, վասն զի չորս հինգ հոգի Թորոսը շրջապատած՝ սուրերնին ձեռուընին կանոնաւոր յարձակում կ'ընէին․ ասոնց մէկին կռնակին՝ Բարկէնի սուրին հարուածը՝ զայն գետին գլորեցուց, և այս անակնկալ օգնութիւնը միւսը ամենքը յուսահատեցուց․ փախչելու որոշումը տուին։ Թորոս սաստիկ յոգնած էր, իսկ Բարկէն կըսէր․

— Ասոնք ալ թող երթան սատանային գիրկը․ ուժ ոգն է․ բաւական է որ սա ինկածներուն մէջ ան անպիտան մեծաբանն ալ գտնուի որ չէր հաւատար թէ առիւծու կորիւնն միշտ առիւծ է։ Ապրի՛ս Իշխանիկս, տես քանի մարդ դիաթաւալ կացուցեր է․․․ ես գիտէի որ քաջ էր, բայց ինչչափ ժամանակ է ոչ կռիւ տեսած էր ոչ զէնք գործածած․․․ Լա՛ւ սկսանք, մեր Սև Լեռն հասնինք, ան ատեն տասնապատիկ պիտի մեծնայ․․․

Աս միջոցին լռութիւն տիրած էր պարտէզին մէջ, զէնքի շաչիւն և չառաչիւն ամէն բան դադրած էր միայն քանի մը վիրաւորներ և հոգևարներ կը տքային․ ան ատեն Թորոս՝

— Բացէք դռներն գոչեց։

Եւ տան դռներն բացուեցան, ճրագներն վազցուցին տունն ու պարտէզը լուսաւորեցան․ դուրսն ու

ներսը եօթը ութը դիակներ կային և մեր քաջակորովը կանգնած էր անոնց մէջ, կ'ապսպրէր ծառաներուն ողջ մնացողները ներս առնել և դարմանել։ Իսկ Նեփիմէ՝ երբ տեսաւ Թորոսը ողջ բայց արիւնով ներկուած, և երբ իմացաւ թէ չէր անգամ վիրաւորուած, աչքերը ուրախութեամբ երկինք կը վերցնէր, գոհութիւն կուտար Աստուծոյ։ Եւ առանց ծառաներուն ըսպասելու ինք ջուր կը բերէր որ իր փեսան լուացուի մաքրուի։

Երբ Թորոս ան ահագին աշխատութենէն վերջը բազմոցին վրայ տարածուեցաւ, Նեփիմէի երևակայութեան մէջ աշխարհիս բոլոր Աքիլլէսներէն և Հերակլէսներէն աւելի բարձր էր․ ուստի դառնալով Դիոնիսին՝

— Վաղը, նաւը որ պիտի գայ, մենք ալ մէկտեղ կ'երթանք, այնպէս չէ՞ հայրիկ ըսաւ։

Իսկ Դիոնիս առանց պատասխանելու աս հարցման Թորոսին կը նայէր որ նոյնպէս պատասխան չտալով ծերին կարծիքը կուզէր իմանալ։ Իսկ ան երբ տեսաւ թէ երկուքն ալ լուռ կեցեր են՝

— Ո՞ւր է Բարկէն, Բարկէն հայրի՛կ, սկսաւ կանչել։

Բարկէն ներս մտաւ գլուխն ու երեսը ծածկած և հազիւ քանի մը քայլ կրցաւ առնել միայն՝ նստաւ և գլորեցաւ․ ամենքը տեղերնէն ցատկեցին ելան և գըլուխը բոլոր արիւնաշաղախ տեսան․ ինք մարած էր կամ մեռած։ Դիոնիս մէկէն մօտեցաւ, զննեց, գըլխուն պատռածը լուաց, վէրքերը դարմանեց պատեց և իմացուց թէ սուրի հարուած մը ճակտին ոսկորը թէպէտ կոտրեր էր, բայց ուղեղին չէր վնասած, ուստի ապահովցուց ամէնքը յուսացնելով թէ քիչ մը ժամանակէն կրնար առողջանալ բոլորովին։ Աս վերջին խօսքը մխիթարեց Թորոսը, բայց Նեփիմէի խընդիրը չլուծեց։

ԳԼՈՒԽ Է

ԱՐԾՐՈՒՆԵԱՑ ՇԱՌԱՒԻՂ ՄԸ

Դիոնիս թէպէտ ուրիշները ապահովցուց Բաբկէնի համար, բայց զինքը մէկ երկու ժամ ամենևին չթողուց և պաղ ջուր շարունակ գլխուն վրայ դնել հրամայելէն և իրեն խօսիլը արգիլելէն վերջ, ելաւ պըտոյտ մը ըրաւ անկեալներուն մէջ· ամէնքը մեռած կամ հոգեւարք էին, տասն և մէկ հոգի։

Ծերը սկսաւ մտածել. ուրեմն երկուքը մեռած էին և առաւօտուն երկրորդ այցելութիւն մը կարելի էր Անդրոնիկոսի կողմէն՝ որ անոնց մէջ չկար, և Դիոնիս կ'երևակայէր թէ՝ անշուշտ այդ խումբին գլխաւորը գտնուած էր ան, ուրեմն փախած էր և պիտի դառնար, և թերևս Բաբկէնի հարուածը տուողը ան ինքն էր։ Ուստի, ծառայ մը առած հետը և լապտեր մը, դէպի ծովեզրը գնաց, և ծովուն քով մարդ մը տեսաւ որ կը ջանար գրկելու ուրիշ ահագին մարդ մը որ ինկած էր գետին, և որ տեսնելով թէ երկու հոգի դէպի իրեն կուգան, ցատկեց մակոյկի մը մէջ որ ծովեզրն էր ու միջոց մը անցնելով կեցաւ և սկսաւ դիտել· ծռեցաւ Դիոնիս և զննեց մարդն ու իր վէրքը· մարդը՝ Անդրոնիկոս ինքն էր, վէրքը՝ սուրի մը հարուած՝ որ թոքը վիրաւորած էր, և թէ որ ձգուէր մահաբեր կրնար ըլլալ, ուստի շուտ մը ծոցէն շիշ մը հանելով՝ թաշկինակը թրջեց և վէրքին բերանը խըցեց· արեան դադրիլ և դեղին զօրութիւնը Անդրոնիկոսի հառաչանքներուն ձայն մը հանել տուին։

Այն ատեն ծերը քիչ մը մտածելէն վերջ, դէպի

ծովեզրը գնաց և մակոյկին մէջ կեցող մարդուն ձայն արձակեց։

— Բարեկա՛մ, ըսաւ, դուն կը տեսնես որ մենք քու տիրոջդ թշնամի չենք, իր վէրքը պատեցինք, և եթէ կ'ուզես իր կեանքը ազատել, եկուր մեզի օգնէ, որպէս զի կատարելապէս զինքը ազատենք մահուընէ։

Մարդը քիչ մը մտածելէն ետքը, խրեց իր մակոյկը ցամաք, ելաւ նաւէն և ծառային հետ շալկելով վիրաւորը շտկուեցան դէպի տուն։ Եւ այսպէս, Դիոնիս ապահովեցաւ թէ՝ ալ մարդ չկար լուր տանելու մայրաքաղաքը։ Մանաւանդ որ բուն թշնամին իրեն ձեռքն էր։ Միայն չէր կրնար գուշակել թէ ի՞նչ ընդունելութիւն պիտի ընէր Թորոս իր մահացու թըշնամին ձեռքն անցնելով· և գոհ եղաւ, երբ լոյսը մօտեցնելով տեսաւ որ ան անտարբեր՝ և հազիւ թէ արհամարհոտ աչք մը ձգեց իր ոխերիմ թշնամիին վըրայ, և Բաբկէնին մօտ կ'ուզէր տեղաւորել որպէս զի դիւրին ըլլայ երկուքին ալ միասին խնամք տանիլ։

Բայց ծեր բժիշկը որ Թորոսի մեծահոգիութիւնը կը տեսնէր, նոյնը չէր հաւատար ոչ Անդրոնիկոսի և ոչ Բաբկէնի համար, ուստի զատ սենեակներ երկուքն ալ զետեղել կը մտածէր։ Եւ ահա, Եւփիմէ երևցաւ սենեակին դուռը Բաբկէնի ձեռքէն բռնած՝ որուն անխռով կ'առաջնորդէր դէպի սենեակը, իմացնելով Դիոնիսի թէ ինք իր հիւանդը նայելու մտադիր էր, իսկ թշնամիին խնամքը ուրիշներուն կը վերաբերէր։

Դիոնիս, մակոյկին պահապանը և ծառայ մը Անդրոնիկոսի քով ձգելէն վերջ, երկու մնացած ծառաներուն հետ մօտակայ ամայի և անջրդի հեղեղատի մը մէջ նետել տուաւ դիակները ու երբ ամէն բան կարգի դրաւ, դարձաւ տուն իր վիրաւորները տեսնելու։ Անդրոնիկոս կը զառանցէր, ուստի պէտք եղած դարմանները՝ ինչ որ կարելի էր անանկ տեղ մը, ապըսպրելէն վերջ, Եւփիմէի սենեակին դրան առջև եկաւ

և տեսաւ Բարկէնը որ անկողնին մէջ նստած կը պատմէր Թորոսի։

— . . . ինծի ըսիր թէ դունէն ողջ մարդ պիտի չելնէ, ես տեսայ փախչողները․ ըսածդ մոռցայ։ Հօրեղբայրդ ըսած էր մեզ․ «Տղաք փախչողին մի դպիք, թողէք երթան,» միտքս հոն գնաց, երբ ուշաբերեցի վազեցի եաւնուն, մէկը դունէն տասը քայլ անդին գետին փռեցի, միւսը մեծ էր, ուժով կը թուէր ծովուն մօտ հասայ, դարձաւ, ի՛նչ տեսնեմ, մեր մարդն էր Աղուէս, կաց, ըսի, առիւծին ձագը տեսա՞ր, հազիւ թէ սուրը կուրծքին դրի, գլխուս սուրի լաւ հարուած մը իջեցուց, ինք ալ գլորեցաւ։ Աչքերս մթնցան, աղբիւրին վազեցի, լուացի արիւնը, տեսայ որ չկարիր, վերարկուս վէրքին վրայ դոցեցի, հոս եկայ գլուխս պտոյտ կուգար։ Տիկինին ձայնը լսեցի որ՝ «Բարկէն հայրիկ» կը կանչէր և ալ ինչ եղայ չիմացայ․․․

— Լաւ, ըսաւ Դիոնիս, ես ալ քեզի արգիլած եմ որ չխօսիս, հանդարտ պէտք է նստիս։

Բարկէնը լռեց և Եւփիմէ ամէնը ճանրեց ու իր վրան առաւ զայն խնամել, դուս ելան և հոն, Թորոս ու Դիոնիս սկսան խորհրդակցիլ երկրորդ օրուան ճամբորդութեան վրայ եթէ նաւը գայ, և որոշեցին որ Թորոս երթայ, իսկ Բարկէն առողջանալէն վերջ Դիոնիսի և Եւփիմէի հետ գայ։

Ուստի աս որոշումը ընելէ վերջ արդէն կէս գիշերն անցած էր, Թորոս ընկողմանեցաւ բազմոցի մը վրայ, իսկ ծերը երբեմն իր հիւանդներուն այցելութիւն կ'ընէր, երբեմն կը մրափէր մինչև արշալոյսը երևցաւ։ Բարկէն քանի քանի անգամ նոյն գիշերը աղաչեց Եւփիմէի որ զինքը թողու և հանգչի․ բայց ան չարունակ պաղ ջուր դնելով գլխուն և լռել հրամայելով լռեցուց։ Եւ երբ տնտեսը ըստ սովորութեան իրենց պատրաստ կերակուրը բերաւ, իջաւ առանձին

պատուէրներ տալու և ետքը իր հիւանդին քով քաշուեցաւ։

Թորոս և Դիոնիս նաւուն գալը կը դիտէին, և նաւ չէր երևար․ ծովեզրը կիջնէին, լուր չկար, և այսպէս կ'անցունէին ժամանակը մինչև կէս օր։ Անդրոնիկոսի վիճակը ծանր էր, թէպէտ Դիոնիս չէր յուսահատած, իսկ Բարկէնը ինքզինք լաւ կը գտնէր կամայ ակամայ իր բռնաւոր տիրուհիին ձեռքը մնացեր էր․ Թորոսի կը հարցնէր «Ալ բաւական չէ՞» որ ան կը ժպտէր և պատասխան չէր տար։ Կէս օր եղաւ և ճաշի նստան, թէպէտ ամենուն սիրտը անհանդարտ․ Դիոնիս երևակայելով որ Անդրոնիկոսի մը անհետանալը չէր կրնար յուզմունք մը չհանել և ոստիկանութիւնը՝ Թորոսը փնտռելով զայն պիտի գտնէր․ Թորոս իր նաւուն կը սպասէր և Եւփիմէէն ու Բարկէնէն պիտի բաժնուէր․ Բարկէն որ իր տիկնոջ խնամքներէն կը քաշուէր, կ'ամըչնար և ձեռքէն ազատելու ճարը չէր գտներ․ միայն Եւփիմէ անխօս անմռունչ բժշկին հրամայած պաղ ջուրը Բարկէնին գլխուն առանց պակաս ընելու նըստած տեղէն ծովը կը դիտէր․ անոր համար ալ հազիւ քանի մը պատառ կերած ելաւ հիւանդին քով երթալու։

Դիոնիս իմացուց թէ՝ ալ Բարկէնին համար վտանգ չկար․ և թէ ուղեղին ցնցմունքը վէրքին և հարուածին հետևանք հիւանդութիւնն ալ անցեր էին․ ուստի հանգիստ կրնար ընել, իսկ Եւփիմէ առանց պատասխան տալու գնաց վեր և հազիւ թէ սենեակը ելաւ և պատուհանին աչք մը ձգեց՝ գողի մը պէս մատուըներուն վրայ կոխելով իջաւ սանդուխէն և պարտէզին դուռը գտաւ․ հոն տնտեսը դիմաւորելով ձեռքի կապոցը առաւ․

— Նաւէն լուր առի՞ր, հարցուց։

— Գենովացի նաւը կուգայ․ ջուրը պիտի առնէ ու ճամբայ ելնէ։

— Լաւ, դուն մտիր սեղանատուն և իմաց տուր։

Եւ ինք կապոյը ձեռքը սրացաւ վեր, մտաւ իր սենեակը։

— Բարկէն հայրիկ, բժիշկը քեզի հրաման կուտայ ելնելու, և հանդարտ ու ծանր քալելու. դուն ինչպէս ես։

— Ո՛հ տիկին, Աստուած քեզի երկար կեանք տայ, ես լաւ եմ, ահա կը տեսնես, ըսաւ ճակտին լաթը վերցնելով և կանգնելով։

— Չէ՛, մի արտորար, ըսաւ Նւփիմէ, վէրքը լաւ մը փաթթեց ինչպէս տեսեր էր Դիոնիսէն, գլխարկը գլուխը դրաւ, հիմա հանդարտ քայլերով դուրսի սրահը գնա՛, ինծի սպասէ։

Եւ այս խօսքերը այնպէս մայրենի անուշութեամբ մը ըսաւ, որ խեղճ Բարկէնի աչքերը լեցուեցան և առանց բերանը բանալու ձեռքը երկնցուց. Նւփիմէ ձեռքը առաւ և կորովի ծերը իր շրթունքները վրան դնելուն՝ երախտագիտութիւնն և որ մեծն է մանաւանդ իր համարումը կը յայտնէր, բոլորովին զղջալով իր առաջին գիշերուան կասկածներուն վրայ։ Ուստի դուրս ելաւ, նստաւ սրահը, և որովհետեւ տիկինը ըսած էր թէ՝ ալ առողջ էր, միտքն ինկաւ թէ անօթի է, և զղջաց թէ ի՞նչպէս տիկնոջը չէր հարցուցեր թէ՝ ի՞նչ կրնար ուտել։

Այս ծանր խորհրդածութեան վրայ էր Բարկէն, երբ Թորոս և Դիոնիս սանդուխին վրայ երեւցան կամաց ձայնով խօսելով.

— Դուն չես ճանչնար Նւփիմէն, կ՚ըսէր ծերը, ոչ թէ միայն դուն, ես նաեւ չգիտեմ թէ ի՞նչ կերպով պիտի կարենամ ազատիլ ձեռքէն։

— Ես ալ չեմ ուզեր և չեմ կրնար իրմէ զատուիլ. բայց դուն ազնիւ բարեկամդ իմ, դուն որ աշխարհք կը ճանչնաս, լաւ կրնաս դատել իմ վիճակս, և թէ ի՛նչ վտանգներու դիմագրաւ պիտի երթամ. ինչպէս այսպիսի անձ մը... բայց դուռը կը բացուի...

Երկու խօսակիցները ապուշ մնացին՝ տեսնելով որ

սենեակէն դուրս ցատկեց վայելուչ և պարզ հագուստով, մէջքը դաշոյնով, խիստ ժպիտով տասնեւութ տարեկան գեղեցիկ և կորովի պատանի մը, որ առանց խօսելու սրահին մէջ կանգնեցաւ, և անքթիթ իրենց կը նայէր։ Անոնց զարմանքէն աւելի մեծ եղաւ Բարկէնի հիացումը, որ ձեռքերը երկինք վերցնելով,

— Փա՛ռք Աստուծոյ, կեցցէ՛ մեր քաջ տիրուհին կանչեց.

Եւ լռութիւնը դարձեալ յաջորդեց։ Վերջապէս Դիոնիս դառնալով Թորոսի,

— Տեսա՞ր Իշխան, ըսաւ, ես քեզի չըսի...

— Լաւ, ըսաւ Թորոս, ես կեանք մը ունէի զոհելու Ազգիս համար, կէսը դուն կը յափշտակես, Նւփիմէ։

— Ո՛չ այդպէս, կեանք մը ունէիր նուիրելիք Ազգիդ, ահա երկուք ունիս անոր նուիրելիք, իմ երակներուս մէջ ալ կայ այդ քու Արծրունեաց արիւնդ, և Դիոնիսին դառնալով աւելցուց Նւփիմէ անխռով, ժամանակ պէտք չէ կորսնցնել, երթա՛նք Բարկէն բաւական զօրեղ է, ի՞նչ կը դանդաղինք։

— Դուն պէտք է մտածես թէ ձեր օգտին համար ես հոս պէտք է մնամ, գոնէ քիչ մը ատեն։

— Մեր օգուտը՝ Աստուած և քու ընկերութիւնդ է։ Անոնք պարապ խօսքեր են հայրիկ, ոչ դուն առանց ինծի կրնաս ապրիլ, և ոչ ես առանց քեզի և Թորոսի։ Ահա ինչ որ ստացուածք ունիմ հոս է, իսկ մնացածը՝ որ չեմ կրնար տանիլ՝ կը թողում յափշտակողին, կամ ան է որ Թորոսի բաղդը ինձ հաղարապատիկը կուտայ, կամ ան է որ՝ եթէ ողջ մնացինք՝ անշուք և առանձին կեանք մը կը վարենք գոհութեամբ, Աստուծոյ այն անհամար արարածոց պէս՝ որոնց վաղուն Նա ինք կը հոգայ։

Եւ ձեռքը ծերին բերնին վրայ դնելով, ժպիտով մը՝ որ չպատասխանէ, ձեռքէն բռնեց և Թորոսի ալ ակնարկեց ծրարը առնել որ ներսն էր, ու ինք առջեւէն

կ'իջնար. իսկ Թորոս երբ սենեակը մտաւ, իր աչքին առջի բանը որ զգաւ Նեփիմէի դեղձան մազերու ոսկեկոյտն էր որ գետինը փռուած կը կենային, առաւ համբուրեց անոնք և նայեցաւ երկինք ու շնորհակալ եղաւ Աստուած այդպիսի կին մը իր առջեւը կը հանէր որ հայրենեաց զոհողութեանց առաջին՝ իր գըլխուն վրայէն կը սկսէր: Ուստի առանց երկմտելու առաւ վերարկուն, զէնքերը ու ծրարը և սկսաւ հետեւիլ անոր՝ որ զուարթ երեսով ամէնէն առաջ կ'երթար անվախ և համարձակ:

Հիւսիսային հովը ուժով և յաջող կը փչէր. նաւը իր բոլոր առագաստները բացած կը սահէր կը թռէր և մեր չորս ճամբորդները երեւալէ զգուշանալով՝ նաւակներու հետաքրքիր նայուածքներէն կը հեռանային Վոսփորի ափունքներէն, և վերջը ահագին մայրաքաղաքին տեսութենէն գոհ և ուրախ սրտով, և դեռ մութը չհասած, ցամաքը սկսաւ անհետանալ և Մարմարայի մէջ կը յառաջանային հանդարտ ու խաղաղ:

Խեղճ Բարկէն դեռ անօթի էր, թէպէտ ուրախ, և իր ուրախութիւնը կ'աւելնար քանի որ միայն երկինք ու ծով կը տեսնուէր: Երբ մեր նաւորդները իրենց սպարտական ընթրիքն ըրին և վերջը Դիոնիս Բարկէնի վէրքը գննեց և լաւ վիճակի մէջ գտաւ. երբ ամէն բան յաջող և երջանիկ սկիզբով երջանիկ կատարուած կը խոստանար՝ Բարկէն ոչ թէ առողջ այլ և երիտասարդ կ'երեւէր, և երբ Նեփիմէ իրեն աս աշխուժին վրայ կը կատակէր, ան՝ Տարտանէլը թէպէտ դեռ չէին անցեր՝ ծիծաղելով կ'ըսէր,

— Տիկին մի զարմանար, իմ լեռներուս հոտը ես արդէն շնչեցի:

ԳԼՈՒԽ Ը.

ՀԱՅՐ ՍՈՐԲԸ

Նեփիմէ ուրախ էր, վասն զի ինչ որ սրտին սիրական ունէր հետն էր. Բարկէն ուրախ էր, վասն զի կինը, զաւակները և հայրենիքը պիտի տեսնէր, Թորոս թէպէտ անթափանց՝ ուրախ էր վասն զի կը յուսար, քանի որ կը հեռանար՝ ազատութիւն, փառք, հայրենի ժառանգութիւն և ամէնքը ունենալու. թէ որ մէկը կար որ անտարբեր կ'երեւար և որ թերեւս դժգոհ ալ էր առանց յայտնելու՝ Դիոնիս էր. որամիտ փորձառու և նախատես. ամէն բան կը քննէր, ամէն բան կը հարցնէր, նաւապետին նաւաստիներուն հետ կը խօսէր, հեռուն նաւ մը՝ ծոց մը՝ իր սուր աչքերէն չէր վրիպեր. և դիտակը, նորահնար գործիքը ձեռը բըռնած իր հետաքրքրութեան օգնականն էր: Նաւը որ ինք վարձեր էր թէպէտ, Կիլիկիա երթալու նպատակաւ, բայց Գենովացի նաւապետին Կիպրոս ըսեր էր. ան միտքով որ Կիլիկիոյ սահմանները երբ հասնին՝ հոն ելլեն: Մանաւանդ որ ինք համոզուած էր թէ Կիլիկիոյ բոլոր ծովեզերքը խիստ պահպանութեան վիճակի մէջ էին, և տէրութեան նաւեր Թորոսի սպասելու հրաման առած էին: Ուստի երբ առանձին իր մըտածութեան հետ կը մնար, Նեփիմէի յանդուգն յամառութիւնը կը նզովէր և ինքզինք կը մեղադրէր՝ որ բաւական քաջութիւն չէր ունեցեր դիմադրելու անոր աս ուղեւորութեան. թէպէտ երբ անոր մօտենար՝ իւր բոլոր մաղձը, տխուր նախատեսութիւնները, անոր զուարթ կատակներուն և ծիծաղներուն առջեւ կ'անհետանային:

Եթէ մխիթարութեան առիթ մը կար՝ այն էր որ, տասն օր հազիւ թէ եղած՝ նեղուցները անցեր և միշտ յաջողակ հովով՝ աջ ու ձախ Արշիպեղագոսի կղզիներու մէջէն կը սահէին, ոչ սարակինոսաց հէն՝ ոչ ասպատակ որ այն ժամանակները սովորական էին եւ ոչ բիւզանդական կայսրութեան պատերազմական նաւ մը իրենց հանդիպած չունէր: Ձախ կողմը Տորոսի լեռները արդէն իրենց ժայռոտ գլուխները կը ցուցնէին, որոնց վրայէն Բաբկէնի աչքերը չէին զատուեր. վարընդլի սկիզբը և նախաշաւիղն էին Սեւ լեռներուն. ուստի կամաց և անմռունչ կ'երգէր երգը՝ զոր Ռուբէնի աջի ընկերները՝ Տարոսի բարձունքներուն վրայ նոր հասնելով՝ երգած էին:

Սեւ լեռներ, սև լեռներ,
Ձեր գլուխներ է յամպերէ մըթընցեր,
Դուք ամպեր, սեւ ամպեր,
Ո՞ւսկից կուգաք, ո՛վ ամպեր,
Ինչո՞ւ մութ էք, ո՛վ ամպեր:

Հեռու երկիր բարձրաբերձ են մեր լերինք,
Սպիտակափայլ միշտ ձիւնազարդ գըլխընին,
Հոն արեգին պայծառ նշոյլք չեն տոչոր,
Ի բնակիչսն նոքա անուշ կ'ակնարկեն:

Սև լեռներ, սեւ լեռներ,
Ձեր գլուխներ է յամպերէ մըթընցեր,
Դուք ամպեր, սեւ ամպեր,
Ո՞ւսկից կուգաք, ո՛վ ամպեր,
Ինչո՞ւ մութ էք, ո՛վ ամպեր:

Փոթորկալից մեզ բուռն հողմեր հոս բերին,
Մեծին Հայոց Մասիսն էր մեր խանձարուրք,
Արագածու գլուխն էր մեր արքունիք,
Նըպատ՝ Գրգուռ՝ բիւրակն էր չմեմարան:

Սեւ լեռներ, սեւ լեռներ,
Ձեր գըլուխներ է յամպերէ մթնցեր,
Դուք ամպեր, սև ամպեր,
Ո՞ւսկից կուգաք, ո՛վ ամպեր,
Ինչու մութ էք սեւ ամպեր:

Ըսէք ուրեմն թէ օտար չեմք, ո՛վ ամպեր,
Մեծին Հայոց մենք ևս որդիք հարազատ,
Հոս վըտարեալ ի մարդադէմ գազանաց,
Ազատութեան ի սուրբ անուն կը դռամք:

Սեւ լեռներ, սև լեռներ,
Ձեր գլուխներ է յամպերէ մըթընցեր,
Դուք ամպեր, սև ամպեր,
Ո՞ւսկից կուգաք ո՛վ ամպեր,
Ինչու մութ էք, ո՛վ ամպեր.

Ո՛վ բարեկամ դուք ամպեր,
Տո՛ւք մեզ ձեր շուք ո՛վ ամպեր,
Եւ ի շռինդ և յոր մարտի,
Մեզ օգնութիւն տո՛ւք չանթեր:

Պայծառ գիշեր մըն էր ան կ'երգէր. երիտասարդութեան գեղեցիկ օրեր, սիրոյ և յաղթութեան յիշատակներ ամէնքն այն երգին հետ իր անդրդուելի սիրտը կը տրոփէին, երբ փոքրիկ թաթի հարուած մը ուսին՝ զինք ուշաբերեց:

— Ի՞նչ է տիրուհիս.

— Բաբկէն հայրիկ, ըսաւ Եւփիմէի անուշ ձայնը, ի՞նչ կ'երգէիր:

— Է՛հ, մեր լեռները, մեր երիտասարդութեան յիշատակները կ'երգէի, մեր տղաքը ո՛վ գիտէ ի՞նչ կ'երգեն, ննջեցելոց երգեր թերեւս. տեսնենք թէ մեռելներու քունէն ի՞նչպէս պիտի արթննան:

— Ի՞նչ կը կարծես, հիմա որ երթանք, չէ՞ կարելի որ անտարբեր մնան ձեր իշխանները Թորոսի ձայնին։

— Մեր իշխանները, տիրուհիս, միշտ անտարբեր կը մնան. բայց մեր Լեռնցիք զանոնք կ'արթնցնեն, թէ որ պէտք ալ ըլլայ կը բռնադատեն որ միանան և նաև հնազանդին. Թէ որ իշխաններուն մնայ, որ թէպէտ քաջ են, բայց նախանձոտ և հպարտ, մենք միշտ ողորմելի գերի կըլլայինք ամենուն՝ Յոյնին և Սարակինոսին։ Բայց ժողովուրդը տեսա՞ր, ամէնքն ալ գինւոր են ամէնքը կը կռուին. անոնք էին որ Ռուբէնի՛, Կոստանդինի՛, Թորոսի ձայնին միացան ու ժողվուեցան. ո՛հ, Թորոսը տեսնէի՛ր, հա մեր իշխանիկը անոր կը նմանի. բայց ի՞նչ մարդ էր, երկու աչքերն երբ մէկուն վրայ ձգէր գիտէիր թէ սիրտը կը կարդայ, գէշ մտածողն ալ, լաւ մտածողն ալ, աչքին երեալէն կը վախնային. մեր մեծ վարդապետները՝ ան մեծ մօրուք եպիսկոպոսները՝ ամենքը կը վախնային իրմէ, ինչ խօսք որ ըսէին կը չափէին, մեր Լեռը՝ ամբողջ վանք ու անապատ է, կարգաւոր աբեղայ լեցուն, մէկ հատ չկար որ անկից չակնածէր. շատին խօսիլ չէր տար. մարգարէի պէս գիտէր թէ ինչի՞ համար եկած են, ի՞նչ կուզեն. մենք անոնց սեւ հրեշտակ կ'ըսենք, Թորոսին սպիտակ հրեշտակ կ'ըսէինք. նա անոնցմէ խելօք էր, լա՛ւ, բայց բան մը զուրցե՞մ, Տիրուհի, օր մը եղաւ որ մենք անկից խելօք բան խորհուրդ տուինք, նա մտիկ չըրաւ։ Ան մեծ կռիւն որ եղաւ, ուր Լեւոն՝ աս մեր իշխանիկին հայրը՝ որ առիւծի կը նմանէր, այնպէս քաջացաւ որ ողջ բանակի մը գործ կատարեց, ամէն իշխանները զարմացեր մընացեր էին, ժողովուրդը միայն Ռուբէնեանները կուզենք ըսին. մենք ալ կայինք հոն ժողովրդեան քանի մը հարիւր խելօքները. ըսինք որ այդ իշխանները այս օր Թորոսի ու Լեւոնի քաջութեամբ ազատեցան Սկիւթներէն՝ վաղը անոնց դէմ դաւաճանութիւն կ'ընեն. քանի որ պատրաստ այստեղ են՝ ամէնքը բռ-

նենք հաւի պէս կտրտենք՝ արքայութիւն ուղարկենք.
շատ չէ յիսուն վաթսուն հոգի մեծ ջօջերէն, բոլոր
երկիրը կը խաղաղի, ամէնքն ասոնց կը հնազանդին,
Հայը կը լինի մէկ սիրտ մէկ հոգի։

«Իրենք ներսն էին, Վահկայ բերդին աւագանին վրայ նստած մեծ ու պզտիկ իշխանները, մենք պարտէզին ծայրը կայնած էինք։ Հոն, մեծ իշխանը, մենք ինչ որ առանձին խօսեր էինք, բառ առ բառ իշխանաց ըսաւ թէ ասոնք ազգին խաղաղութեան համար, հիմա այս վայրկեանին դուրսը այսպէս խօսեցան, և խորհուրդ ըրին որ ձեզի ջարդեն. մենք ապուշ մնացինք, իսկ Թորոս մեզ յանդիմանեց, իշխանները վստահեցուց, սիրոյ խաղաղութիւն յորդորեց և ըսաւ,

«— Եթէ Աստուած իր ծառաներէն ոմանց առաւելութիւն տայ, պէտք չէ հպարտանալ և ո՛չ ալ նախանձիլ, այլ յօգուտ ժողովրդեան և իւր ազգութեան և արդարութեան գործածել.

«Ու ամէնքը սիրով ու ընծաներով ճամբեց։ Այսպիսի անձ մըն էր, որ իր թշնամիներն անգամ գիտէր բարեկամ ընել, թէ որ անգամ մը միայն տեսնուէր։ Ետքը իր եղբօր օրով՝ մենք գիտենք որ հայ իշխաններ, Լատին իշխաններ եկան ձեր թագաւորին հետ միացան, որ առաջ բարեկամ էին՝ կուտէին կը խմէին մէկտեղ, եթէ մենք անոնք ամենքը սպաննած ըլլայինք, ուրկէ ետք, մեր վրայ պիտի ժողվուէին։ Էն խելօքն ալ որ անիրաւութենէ վախնայ, անիրաւին կերակուր կըլլայ։

— Չէ՛, այնպէս չէ՛, Բարկէն, ըսաւ Թորոսի կամաց ձայնը. անիրաւութիւնը միշտ վատ բան է. ան կարծուած այսօրուան օգուտը շատ և չկարծուած վընասներ կը ծնանի. աւելի լաւ արդարութեամբ մեռնիլ քան թէ անիրաւութեամբ իշխել։

— Ես գիտեմ որ դուն հօրեղբօրդ պէս կը մտածես, փառք Աստուծոյ որ անոր ալ կը նմանիս և կը յուսամ թէ նոյնպէս ալ յաջողիս։

— Բայց ո՞ւր պիտի հանէ մեզի նաւը, հարցուց Բաբկէն։

— Այդ ինծ չվերաբերիր, ահա՛ մարդը՝ որ պաշտօն ստանձնած է մեզ ցամաք հանելու։ Ան վայրկեանէն իր պաշտօնը կը լմննայ՝ իմս կը սկսի։

— Այո՛, ըսաւ Դիոնիս, որ Կիլիկիոյ ափունքներուն վրայ չոկած իր դիտակը անթարթափ կը նայէր, բայց մենք, Իշխան, չպիտի կարենանք հոս ցամաք ելնել, այլ պէտք է շիտակ Կիպրոս երթալ, վասնզի շարունակ ծովեզրը նաւեր կ՚երեւան որ կ՚երթեւեկեն, անշուշտ մեզի համար է իրենց զգուշութիւնը։

— Ո՛վ որ հնազանդիլ չգիտեր, չգիտեր նաև հրամայել, քու է հիմա իշխանութիւնը, ըրէ՛ ինչպէս գիտես, ինչպէս արժան կը դատես։

Ուստի, Դիոնիս ուղղուելով նաւապետին՝ և իրեն հետ քիչ մը խորհրդակցելէն վերջ, նաւը ուղղեցին Կէպրոսի վրայ, մանաւանդ որ հովը յաջող էր և քիչ վերջը ահա ցամաքը սկսաւ անհետանալ և կղզին երեւիլ։ Իրօք մեր ճանապարհորդները բաւական ձանձրացեր էին ծովէն, ցամաքի զրկումը սկսեր էր զիրենք յոգնեցնել, ուստի, Նեփիմէ առանց իր զուարթութիւնը կորսնցնելու նաև ցամաք մը ոտնակոխելու մեծ փափաք ունէր. և երբ Կիպրոսի հիւսիսային կողմը սկսաւ նկարուիլ՝ արմաւենիներու բարձր գլուխները երեւիլ, Դիոնիս որ զգուշութիւն և նախատեսութիւն ինքն էր, կասկածելով խնդրեց նաւապետէն որ փոխանակ Կիւրինէ քաղաքին մօտենալու քիչ մը դէպի արեւելք՝ անշէն տեղ մը ցամաք հանէ, ուր գիւղ մը և քանի մը հիւղեր կ՚երեւէին ցիր ու ցան. շուտով մակոյկ մը մեր չորս ճանապարհորդները ծովեզերքը հանեց և նաւը սկսաւ հեռանալ իր ճամբան։

Թէպէտ Բաբկէնի սիրտը տխուր էր Կիլիկիոյ ափանց հեռանալուն, բայց զարմանքով կը նայէր այս կղզիին՝ որ շատ նմանութիւն ունէր իր հայրենի երկրին հետ. նոյն ծառերն էին, նոյն բերքերն և նոյն

լեռներու գօտիները, նոյն կլիման ու բրինձը, միայն հոս Հայու լեզու և Հայու կերպարանք չկար։ Ուստի, տրտում կ՚երթային ծովեզրը հիւրընկալ տեղ մը գտնելու համար, երբ Նեփիմէ՝ որ Թորոսին թեւն ի վար կախուած կը քալէր։

— Տե՛ս, ըսաւ, սա սեւազգեստ մօրուքով հեծեալը որ անսովոր գլխարկը մը դրած լերան ստորոտը կը ձիավարէ։

Թորոս մէկէն թեւը ազատեց և սրացաւ դէպի այն կողմը, վասնզի վեղարաւոր հայու վարդապետ մը տեսաւ։

— Հա՛յր սո՛ւրբ, ձայնեց ուժգին։

Եկեղեցականը ձին դարձուց և սկսաւ ան կողմը ձիավարել հանդարտիկ և երբ հասաւ, մօտեցաւ Թորոս ակնարկ մը նետելով և երկայնահասակ, թիկնաւէտ, կենդանի աչքերով վաթսուն տարեկան ծեր մը տեսաւ, որ աւելի զինուորի կը նմանէր իր շարժումներէն՝ քան թէ խաղաղութեան քարոզ՝ սեղանի պաշտօնէի մը, որ նոյնպէս իր սուր աչքերը Թորոսի ուղղելով կը զննէր։

— Աստուած օգնական, հայր սուրբ։

— Աստուած պահապան, որդեակ։

— Այս կողմերը Հայոց բնակարան ո՞ւր կրնայ գտնուիլ։

— Հոս, մեր Ս. Մակարայ վանքը կայ։

— Ձեզ նեղութիւն տալ չէ մեր միտքը, բայց քանի որ ազգային անձեր կան, մեզ աւելի սիրելի է անոնց հիւր ըլլալ։ Հոսկից շատ հեռո՞ւ է վանքը, Հայր սուրբ։

— Երկու ժամի չափ կը տեւէ։

— Ուրեմն ներեցէ՛ք մեզի՝ ձեր ազգայնոց, որ ձեզ ընկերանանք։

— Սիրով և ուրախութեամբ, որդեակ, ըսաւ վարդապետը, և խորազնին ակնարկ մը ձգելով ամենուն

վրայ և երիտասարդի մը պէս ցատկելով ձիէն ու Նափիմէին նայելով աւելցուց.

— Կը տեսնեմ որ ձեր մէջ այնչափ երիտասարդ և տկար անձեր ալ կան և որ աւազի վրայ քալելէն այնչափ յոգնած ու կարմրած են՝ որ աս դարվերն շատ նեղութեամբ պիտի ելնեն. ուստի, սիրով կ'ընծայեմ իրենց իմ կենդանիս:

Աս խօսքերուն շնորհակալութեան բառ մը ըսելով Թորոս, փետուրի պէս ձիուն վրայ դրաւ Նափիմէն, և Բաբկէնին յանձնեց, ու ինքն ալ Հայր սուրբին ընկերակցութեամբ սկսան յառաջանալ: Քիչ մը ատեն լռութեամբ ճամբան շարունակելնէն վերջ, իբրեւ թէ երկու կողմն ալ կը սպասէին իրարու՝ որ առաջինը ըլլան խօսելու, վերջապէս Հայր սուրբը չկրնալով համբերել և Թորոսի յամառութենէն ձանձրացած՝ ըսաւ ժպտելով,

— Զարմանալի է. Տիար, որ այսպիսի թարմ պատանեակ մը հետերնիդ աս օտար երկիրները կը պըտըտցնէք:

— Զարմանքի ժամանակի մէջ կ'ապրինք: Հայր սուրբ, ըսաւ Թորոս անխռով, անոր համար կը տեսնէք զիս որ բանի մը վրայ և ոչ ձեզի պէս աստուածաշնորհ անձի մը երկսայրի սուրին վրայ կը զարմանամ, և մանաւանդ թէ ուրախութիւն նաեւ կը զգամ որ քաջ նիզակակից մը մեզի կ'աւելնայ:

— Լա՛ւ, որդեակ, ըսաւ վարդապետը, ուրախ եմ որ ժամանակին հարկը կը ճանչնաք, և ես ձեր այս տարիքին վրայ՝ տեսնելով այդ սրատես խոհեմութիւնը՝ մեծ յոյս կ'առնեմ, և իմ փափաքներս ու երազներս գրեթէ կատարեալ կը տեսնեմ:

— Շատ մութ կը խօսիք, Հայր սուրբ:

— Ես շատ պայծառ կը խօսիմ, բայց դուն իշխան, չէք ուզեր հասկնալ և ձեր խոհեմութիւնը չափազանցութեան կը տանիք, և ան մարդուն որ իր կեանքը քառասուն անգամ՝ մանաւանդ թէ հազար

անգամ ձեր և ազգին փրկութեան համար վտանգի դրած է, վստահութիւն ցուցնելէ ալ կը զգուշանաք, և դեռ նոր տեսութիւն մը իմէ գլացաք:

— Խնդրեմ ձեր անունը ինձ շնորհել, ըսաւ Թորոս հետաքննին և հրամայական աչք մը դարձեալ Հայր սուրբին վրայ նետելով:

— Կոստանդին Բարձրբերդցին եմ, որ անցեալները դեռ ամիս ու կէս հազիւ կայ Բաբկէնին հետ տեսնուեցայ Պոլիս, դուք զիս չէք ճանչնար և ես ալ ձեզ Բաբկէնի ընկերութենէն երեւակայեցի:

— Եւ Բաբկէն դարձեալ քեզ չճանչցա՞ւ:

— Ան ատեն զիս ուրիշ հագուստներով տեսաւ, եւ սեւ մօրուքով:

— Բայց դուն վտանգ մը անցուցիր Պոլիս, և շատ չէ որ հոս եկար:

— Այո՛, աս նզովից արմատ Յոյները իմացեր էին իմ գալուստս, ուստի նոյն գիշերը զիս ձերբակալել միտքերնին դրած էին և ես փոխանակ դռնէն անցնելու, ինչպէս կը սպասէին, երդիքէն անցայ և իմ ճամբաս գնացի խաղաղութեամբ և փոխանակ Կիլիկիա ըլլալու, ինչպէս կը յուսային, եկայ Ս. Մակար քանի մը ամիս ճգնելու, մինչեւ որ այցելութիւն ըլլայ Աստուծմէ:

Ու երբ Թորոս աս խօսքին վրայ փոքրիկ ժպիտ մը արձակեց, Կոստանդին ծիծաղով մը պատասխանեց, բայց դարձեալ շուտով ծանրութիւն մը առաւ. վասն զի երիտասարդին վսեմ ձեւերը ակնածութիւն կը հըրամայէր և Կոստանդին կ'ըսէր ինքնիրեն.

— Ցիրաւի, Թորոս անունով ալ բնութեամբն ալ կենդանացեր էր եղբօրորդիովը. տեսնենք քաջութեամբ ալ թէ անոր կը նմանի՝ Թորոս Բ. կ'ունենանք:

Ծովեզրը արդէն ձգեր էին և դէպի վեր կ'ելնէին անտառոտ ժայռերու և պարտէզներու մէջէն, հեղեղատի մը աջն ու ձախ շաւղին հետեւելով. և Բաբկէն

որ անկարծելի տեղ մը Հայոց վանք գտնելուն ուրախ էր և շատ ալ նմանութիւն իր Սեւ լերան բնութեան և կղզիին մէջ՝ և նաեւ Եփիմէի անվեհեր ձիավարութեան վրայ՝ զուարթ դէմքը զգեցաւ, բոլորովին։ Անոր՝ Հայր սուրբին պաշտօնին վրայ, Հայոց ընդհանուր եկեղեցականաց վրայ տեղեկութիւն կուտար, անոնց ճգնաւորական կեանքին վրայ գալով, կը պատրաստէր Եփիմէն անապատական ընթրիքի մը, վասն զի օրն ալ արդէն սկսած էր երեկոյ ըլլալ։ Եւ ահա մեծամեծ աւազաններ, և տեղ տեղ պարտէզներ ուր մշտադալար նարնջենի և կիտրոնի էր, չէնքի մը մօտենալը կը ցուցնէին, և վերջապէս եղեւին անտառի մը ստորոտը երեւցաւ Սրբոյն Մակարու վանքը, և մեր հինգ բարեկամները քանի մը վայրկեան ետքը՝ առաջնորդութեամբ Վանահօր, իրենց բնակարանը կը հանգչէին։

ԳԼՈՒԽ Թ,

ԿԻՊՐՈՍԻ ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ

Այն գիշերը մեծ ուրախութեամբ և զուարթութեամբ վայելեցին վանքին հիւրընկալութիւնը մեր ուղեւորները, և Բաբկէն զարմանքով տեսաւ սեղանին վրայ իր քով նստած աշխարհականի զգեստներով ճերմակ մօրուքով մէկը որ իր առանց խօսելու՝ իր բոլոր ծանրութեամբ և լաւ ախորժակով կուտէր, Բաբկէն երբեմն երբեմն քմծտի ակնարկ մը կը նետէր աս նոր սեղանակցին, որ ամենևին իրեն ուշ չէր դներ. վերջապէս վանահայրը տեսնելով թէ՝ սեղանին վրայի լռութիւնը այս պատճառաւ իրօք վանականաց սեղան մը կը դառնար, ինք որ աբեղաթող կը համարէր այն օրը իր միաբաններուն։

— Բաբկէ՛ն հայրիկ, ըսաւ. ձեր ճամբու ընկեր վարդապետը չէ՞ս փնտռեր։

— Հայր սուրբ, ես կը յուսայի և կը փափաքէի զինքը հոս գտնել. բայց ձեր հրամանը գիտէ անօրինել, մենք գինուոր ենք՝ կրօնաւորաց համար ալ ըսուած ենք թէ գինուոր են՝ իրենց վանահօր կը հնազանդին։

— Անոր փոխարէն ահա քեզի ուրիշ բարեկամ մը ես գտայ, Սեւ լեռնէն է նա ալ, իրեն տեղեկութիւն ինչո՞ւ չես հարցներ։

Բաբկէն քննող աչքով դարձեալ նայեցաւ քովինին, բայց չկրնալով ճանչնալ, և սեղանին հօրթի՝ կաքաւի և կաթնեղէնէ պատրաստուած խորտիկներն ու համադամներն՝ Կիպրոսի տեսակ տեսակ գինիներն իր ախորժակին յարմար գալով, և անոր յամառ լռութենէն ձանձրացած։

— Հայր սուրբ, ըսաւ, աս բարեկամը՝ ինծմէ անօթի կ'երեւայ, ոչ անուն կուտայ և ոչ ձայն կը հանէ:

— Բարկէն, ըսաւ քովինը չեշտակի իրեն նայելով, զիս չես ճանչնար։

— Աստուա՛ծ վկայ Կոստանդին ինքն է, նա է անոր ձայնն է, ըսաւ Բարկէն դէպի անոր դառնալով և աչքերը խոշոր խոշոր բանալով, փառք Աստուծոյ ողջ է։

— Փառք Աստուծոյ որ զիս ճանչցար։

— Թէ որ ձայնդ չլսէի, խաչ որ պիտի չճանչնայի։

Ամէնքը սկսան խնդալ, ուրախութիւնը կը տիրէր սեղանին վրայ. Վանահայրը որ պատուական և իմաստուն անձ մըն էր և որու իմացուցած էր Կոստանդին որոնք ըլլալնին, կատարեալ հիւրամեծար գտնուեցաւ իրենց, և խոստացաւ ամէն դիւրութիւն և ապահովութիւն ճարելու Տօրոսի լեռները գտնել տալու համար Հայ իշխանին։ Այն գիշերը ապահովութեան և վստահութեան վիճակի մէջ՝ Դինիս իր տաժանելի աշալրջութենէն յոգնութիւն կ'առնէր Բարկէն ուրախ էր ամէն բան դիւրանալուն. Թորոս թէպէտ սակաւախօս՝ գոհ էր ամէն բան մինչեւ այն օր անվտանգ յաջողելուն։ Եւփիմէ միւսին գոհութիւնը տեսնելով զուարթութիւնը գեղեցկութեան հաւասար կը փայլեցընէր, իսկ Կոստանդինի ուրախութիւնը անպատմելի էր։

Աս մարդը շարունակ իր մեծին Հայաստանի ճամբորդութիւնները կը պատմէր, վասն զի հայաբնակ երկիր մը չկար որ հինգ տարի շարունակ պտըտած չըլլար, Վրաստանէ մինչեւ Միջագետք, Սպիրէ մինչեւ Ատրպատական տեղ չէր ձգած որ խուզարկած չըլլար, վասն զի կենաց յոյս մը կը փնտռէր Կիլիկիայէ դուրս և չէր գտներ, հայ թագերու պաշտպանութեան համար շինուած բերդեր, բերդաքաղաքներ օտարին իշխանութեան և բռնութեան գործիք ու ամրութիւն եղած էին։ Անի նաեւ, մեծ Անին, հա-

զար ու մէկ եկեղեցւոյ Անին, ան ալ կենդանութեան յոյս չէր տար, և ժողովուրդը որ անգամ մը գացեր իր թագաւորաց գերեզմաններուն վրայ ողբալով լացեր էր, ալ չէր հաւատար թէ անոնց ստուերները դարձեալ պիտի ելնեն կանգնին, փրկել Հայաստան։

Քրիստոնեայ դրացի և ազգակից ժողովուրդ Վիրք, տեւ Հայ զօրավարաց ձեռքով վարուած Հայ ազգըն հալածելու և հարստահարելու կը նկրտէին, Վասպուրականի դասալիք Արծրունեաց յիշատակը անհետացեալ էր գրեթէ և յիմար ժողովուրդ մը կործանեալ դահին պատուանդաններուն վրայ կաթողիկոսական բաժանման աթոռ մը հաստատելով կը մխիթարուէր։

Այս երկար պատմութեան ամէնքը կը մրափէին, Թորոս միայն այս [կենդանի աշխարհագրութեան և վիճակագրութեան մէկ բառը չէր կորսնցներ և մութ մնացած խնդիրները կը պրպտէր, կը լուսաբանէր. Կոստանդին կը զարմանար, կը շփոթէր իր իմաստալից հարցաքննութեան առջեւ, որ ամէն բան կը ճըշդէր, տեղերը, վիճակները, հեռաւորութիւնները։

Երբ ամէնքը իրենց տեղերը գացին ննջելու, դեռ այս երկու անձերը նստած՝ կը խօսէին Կիլիկիոյ վրայ. Հայ և օտար ժողովրդոց թիւին, վիճակին, յոյսերուն, իշխանաց, կառավարութեան ձեւին, զօրաւոր դիրքերուն և ամրութեանց վրայ, մինչեւ որ նաեւ աքաղաղներն սկսան խօսիլ և Կոստանդին ինքն պարտաւորեցաւ յորդորել Թորոսը որ երթայ քունի հանգիստը առնէ։ Երբ Թորոս գնաց, տեսաւ որ իր սենեակին դրան առջեւ Բարկէն մէկ աչքը քուն, միւսը արթուն կը պատէ և երբ զինքը տեսաւ, գնաց իր հին զինուորակիցը գտնելու։ Մտաւ սենեակը ուր Կոստանդինի հետ պիտի պառկէին, առջի խօսքը՝ որ ըսաւ Կոստանդին՝ աս եղաւ.

— Բարկէ՛ն, Աստուած վկայ, որ աս իրիկուն համոզուեցայ թէ Կիլիկիա իր փրկիչը գտաւ. աս երիտասարդը թէ՝ որչափ խելք ունի, այնչափ ալ քաջու-

թիւն ունի՝ հօրմէն ալ վեր, հօրեղբօրէն ալ վեր պիտի ըլլայ։

— Դո՛ւն ինչ կըսես, եղբայր, անցեալ օր վեց եօթը հոգի իրարու վրայ անշունչ գետինը ձգեց, տասն երեք հոգի էին մեր վրայ յարձակողները։

— Այդ հոռոմ ծերը և իր աղջիկը ի՞նչ բան ունին ձեզ հետ։

— Աղջիկը հոռոմ չէ, իշխանին պսակեալ կինն է. մեր Արծրունի Թագաւորաց ցեղէն է։

— Իշխանը պսակուեցա՞ւ... Արծրունի կի՞ն առաւ... Լա՛ւ հա, քիչ մըն ալ աս ծերը հայ մկրտէ, Բարկէն։

— Ծերը Հայ չէ, բայց հոռոմ ալ չէ, վասն զի շատ լաւ է և հայու բարութիւն կ՚ուզէ։

— Բարկէ՛ն, դուն ցնդեր ես, խելքդ կորուսեր ես, այս մարդը հոռոմ է, ուրեմն լաւ մարդ չկրնար ըլլալ, հայու ալ բարութիւն չկրնար ուզել։

— Տէ՛ ինչ կ՚ըսես, նայէ՛ սա իմ գլուխս հայու գլուխ է, խօթէ սա մատդ ոսկորին մէջ, աս գլուխս հոռոմները կոտրեցին, այդ մարդը աղէկցուց. հիմա հաւտացի՞ր... մենք բանտէն ո՞ւրկէց պիտի ելնէինք, թէ որ աս մարդը չըլլար, եթէ այդ աղջիկը չըլլար։ Ատոնք մեզ ազատեցին. մենք նորէն բանտ մտած էինք քու պատճառաւդ՝ թէ որ աս ծերը մեզ չփախցընէր... թէ որ աս ծերը մեզ հետ չըլլար, մենք հոռոմի նաւերուն մէջ ինկած և բռնուած էինք, ծոցը պզտիկ հաստ գաւազան ունի ծակած, մէջը փայլուն, կը դնէ աչքին, կը նայի աշխարհքին ծայրը ի՛նչ կ՚ընեն մարդիկ՝ կը տեսնէ, կ՚իմանայ։

— Հիմա հաւատացի թէ լաւ մարդ է այդ ծերը և հոռոմ չէ, ըսաւ Կոստանդին և կօշիկները հանելով վերարկուն գլուխը քաշեց ու երկնցաւ պառկելու։

Նոյնը ըրաւ Բարկէն, բազմոցին միւս կողմը և սկսաւ քնանալ։

Վանահայրը իր հիւրերուն քունը չխանգարելու համար, առանց զանգակի իջեր էր միաբաններուն հետ վանքին անշուք և փոքրիկ եկեղեցին՝ ժամերգութիւն կատարելու. պատարագին ամենը ներկայ էին, և երբ սարկաւագը «Ազատութիւն եղբարց մերոց գերելոց» կ՚երգէր՝ Բարկէն մեծաձայն,

— Ամէ՛ն, պոռաց։

Ու ամէն գլուխ երբ իրեն կը դառնային, ինք անխռով և մեծ հաւատքով իր աղօթքը կը շարունակէր։

Երբ եկեղեցիէն ելան, Վանահայրը լաւ ճաշ մը պատրաստել տուեր էր իր հիւրերուն, և վերջը անոնց փափաքը կատարելու համար ինքն ալ իրենց հետ որսի ընկերացաւ։

Կոստանդին ուրախ աչքերով կը տեսնէր և կը համոզուէր Թորոսի թեւին զօրութեան և աչքին ճշդութեան՝ նետաձգութեան մէջ, անոր սրընթաց կորովին որ այծեամի պէս վախերու և գահավէժներու եզերքը կը վազէր, և այնչափ տարուան անշարժութիւնը՝ որ իր միտքը սրացուցեր և բարձրացուցեր էր, ջիղերուն ուժը չէր թմրեցուցեր։

— Ահա՛ երիտասարդը որ մէկ հատիկ մարդ է մեր փրկութեան համար, ես յիմար՝ որ Հալէպի Ամիրային պալատը կ՚երթայի մարդ փնտռելու ու երկու թեթեւամիտ տղաքներ կը գտնէի որոնց մէկուն սիրտը այնչափ չար էր որչափ գլուխը թեթեւ. իրա՛ւ Աստուած մեր խեղճ լեռները կը սիրէ եղեր։

Ետքը կը դիտէր Եւփիմէն որ ծերին հետ կը քալէր միշտ, աչքը Թորոսէն չզատելով։

— Հա՛, մեր Լեւոնին տղան բարեբաղդ ալ է, այդ կինը գեղեցիկ և ազնուական է և մեր Իշխանը սըրտանց կը սիրէ. բայց այդ ծերը ի՛նչ է իր սուր և արհամարհոտ աչքերով, հազիւ թէ աղջկան ըսածներուն պատասխան կուտայ, միտքն ալ գիտես թէ ուրիշ տեղուանք կը պտտի...։

Եւ այս խորհրդածութեան մէջ յանկարծ՝ երբ որսը միտքը գար երկու նետ կը նետէր, որոնք երբէք պարապը չէին ըլլար: Երբ Թորոս բաւական զուարճացաւ և որսն ալ առատ դիզուեցաւ, վանքին վերի գըլուխը ուր վանահայրը եղեւնի ծառերուն շուքին տակ սեղանը պատրաստել տուած էր կանաչ խոտին վըրայ, ծովը առջեւնին և անդին ամպերու պէս դիզուած Տորոսի լեռները, բաժակներ քամուեցան Կիլիկիոյ ազատութեան և անոնց կենդանութեան համար որ կեանքերնին այդ սուրբ նպատակին համար պիտի վատնէին:

Երկրորդ օրը, Թորոս՝ Վանահօր և Կոստանդնի ընկերութեամբ՝ ծպտեալ, սրընթաց կենդանիներով կերթար Լեֆքօսիա քաղաքը տեսնելու, և անկից վերջը ութ օր շարունակ բոլոր շրջակայքը կը պտըտէր, կը քննէր բնակիչներուն կեանքը, իրենց զուարճութեանց զեղծումները, կղզիին պաշտպանութեան զօրութիւնը, բերդերուն վիճակը կ'ուսումնասիրէր: Իր սուր դիտողութենէն բան մը չէր ազատեր: Իր բոլոր աս արշաւանքներուն ընկեր էր նաեւ Եւփիմէ, որ թէպէտ ի բնութենէ հետաքրքիր՝ տեղեակ ըլլալ կուզէր այն ամենուն՝ որ Թորոսի խուզարկութեանց պատճառն էին:

Բայց ամենքը, որ կը պտըտէին Թորոսի հետ, մէկը չկար որ հասկնար իր միտքը, բաց ի Դիոնիսէն որ հեռուէն կը դիտէր և կ'իմանար այդ լուռ և անխոնջ բնութեան նպատակը, ուր կը նշմարէր հայրենասիրութեան հետ նաեւ վրէժխնդրութեան ոգին:

Ուստի ինք բնութեան ուսմունքով պարապուած՝ չէր ուզեր տեսնել քաղաքական կիրքերը՝ որ իր շուրջը կը յուզէին, և կը վերադառնար բոյսի մը, քարի մը, խոտի մը կտորին վրայ յառիլ՝ պշնուլ քան թէ ուրիշ բանով մը զբաղիլ:

Այսպէս լեռները կը պտըտէր, Դիոնիս երբ երեկոյ մը Թորոս արշաւանքէ դարձած և տեսնելով ծերը

լերան բարձր գագաթին վրայ մուրճը ձեռքը՝ ժայռի կտոր մը զննելով, ելաւ քովը գնաց·

— Հայրի՛կ Դիոնիս, ըսաւ, մենք ասդին անդին կը վազվռտենք, դուն ուրիշ աշխատութեամբ կը տաժանիս· ինչո՞ւ այս ժայռերը կոտըրտես:

— Տե՛ս, ըսաւ ծերը, տես, այս կոտրած ժայռերու կոտրուանքին մէջ ծովային խեցիները, որ կը վըկայեն թէ անյիշատակ ժամանակաց մէջ ծովը կը ծածկէր այս լեռներուն գլուխները:

Եւ իրօք կը տեսնէր Թորոս ծովային խեցին ժայռին ծոցը փակուած· երկայն լռութիւն մը յաջորդեց նստաւ ծերը և Թորոսին ակնարկ մը ըրաւ քովը նըստելու, սուր աչքերը երիտասարդին յառելով ծանր ծանր այս խօսքերը սկսաւ շարայարել:

— Ո՜վ երիտասարդ, կը տեսնեմ թէ որչափ հեռու ենք մենք իրարմէ, դուն երիտասարդ, կորովի, եռանդուն, վաղը միայն կը նշմարես և ապագային կը դիմես, ես ծեր, տկար, դանդաղ, երէկուան և հազարաւոր տարուան անցեալին կը նայիմ: Բայց օր մը կար որ ես ալ ներկան և ապագան կը դիտէի, և իմ շրջանիս մէջ՝ հայրենիք, փառք, մեծութիւն, թագաւորութիւն կուզէի, բարեբաղդաբար երկար չքշեցին ան փափաքները, և ուսմունք բնութեան, մարդկային սրտին ու մարդկութեան անցեալին զիս բժշկեցին այն անձուկէն՝ որ քեզ կը տոչորէ, անոր համար է որ դուն կը տեսնես զիս անցեալին խորը իջած և ես քեզ կը նշմարեմ՝ որ ապագային բարձունքը կը մագլցիս: Չեմ զարմանար, դուն երիտասարդ ես, և անուն մը ունիս ազգիդ մէջ, հայրենիք մը ունիս կորած և ինկած, անձնական ու ընտանեկան նախատինք, բանտ ու քուկիններուդ մահուան յիշատակը մտքիդ մէջ կը յածին, և շարունակ կը մտածես վերականգնել՝ սրբել և վրէժ առնել: Քեզի հետ խօսողը պէտք է համոզուիս որ ազգի մը չվերաբերիր· մարդկութեան զաւակն է, և ամէնէն աւելի մարդիկ իրեն՝ աշխարհա-

ներն են, ուստի, քեզի՝ գինուորի խրատս այս կուզեմ ըլլայ որ անիրաւ և անգութ չըլլաս վրէժխնդրութեան հոգւով. իրաւի, անիրաւ աշխարհիս մէջ չանիրաւել դժուար է, բայց դուն մեծ հոգի ունիս և ես կը ճանչնամ մարդկային բնութիւնը, անոր համար այս խօսքերը քեզի կ'ընեմ: Ես չեմ այն անմիտ փիլիսոփայական կարծուած դպրոցէն որ հայրենասիրութեան գաղափարը կը փարէ մարդասիրութեան գաղափար մը յառաջ քշելով. անոնք որ այդ վարդապետութեանց քարոզողներ են, իրենց սրտին անարդ անտարբերութիւնը և վատ անձնասիրութիւնը սուտ և սխալ տրամաբանութեամբ վարագուրել կուզեն: Թէ որ այս օր ազգութեան և հայրենեաց գաղափարը վերցնենք, վաղը դերդաստանի և ընտանեաց գաղափարը ո՞ւր դնենք: Ուրեմն լաւ իմացիր իմ միտքս, Իշխան, ինձ փափաքելի էր որ Հայերդ նեցուկ ըլլայիք Յունաց կայսրութեան Ասիոյ մէջ, բայց որովհետև ատելութիւն և արիւնի հեղեղներ ձեզ կը բաժնեն, և ինչ որ անոնցմէ առնուած քաղաքականութիւն և ուսմունք կայ՝ եղած վնասներուն չեն փոխարիներ, դուք յաւիտեան պիտի չմոռնաք ձեր Անիի հոգեւարք թագաւորութեան ընդունած վերջին դաւաճան հարուածը յունական ձեռքերէ, և մեր յունական ամբարտաւանութիւնն ալ երբէք պիտի չմոռնայ ձեր Կիլիկիոյ յափշտակութիւնը և անկախ Եկեղեցին: Որովհետև մարդիկ երբ զօրաւոր են կ'ուզեն իշխել, երբ տկար են՝ կ'ուզեն ազատ ըլլալ: Ուստի, դուն ալ քու իրաւունքդ պիտի ձեռք բերես այսօր, վաղն ալ վրէժ խնդրելու պիտի ելնես, բայց քու անձիդ և քու ազգիդ օգտին համար՝ միշտ յիշէ ծերի մը վերջին խօսքեր, միշտ չափաւոր եղիր, և չըլլայ թէ յաջողութիւն քեզ կուրցնէ, վասն զի մարդկային կեանքին մէջ յաջողութիւն և անյաջողութիւն իրարու կը յաջորդեն: Ես կտակ մը կընեմ, աւելորդ կը համարեմ քու սրտիդ յանձնարարել Եւփիմէն, գիտեմ որ

ան զքեզ ինչպէս կը սիրէ, դուն ալ զայն նոյնպէս կը սիրես…

Աս խօսքերուն ծերին ձայնը փոխուեցաւ և աչքերը լեցուեցան:

— Դուն որ խելք ունիս սիրտ ալ ունիս, կ'իմանաս ծերին փափաքները՛ երբ ձայնը իրեն կը պակսի. գնա՛, Աստուած հետդ ըլլայ, գնա՛, չէնքդ որ պիտի չինես՝ երկարատև ըլլայ…

— Եւ ինչ պէտք է ընել, ըսաւ Թորոս, որ երկարատև կարենայ ըլլալ…

— Թէ որ Աստուած լաւ յաջողութիւն մը տայ, և քեզի պէս չորս հինգ յաջորդ ունենաս, կրնաս տեւողական Հայաստան աս լեռներուն վրայ փոխադրել, թէ ոչ՝ առօրեայ ստուեր մը և քանի մը աւերակ աւելի կը ձգես այդ աւերակներու երկիրը Սարդարանալին(1) գերեզմանին քով: Նայէ՛ որ զաւակներդ քաջ, գործունեայ և օգտակար գիտցող ըլլան: Թէ որ դուն բանտիդ մէջ վանքին դրատան գիրքերը կարդալու փափաք չունենայիր՝ ոչ քու գեղեցկութիւնդ, ոչ սրբամտութիւնդ և ոչ բազուկներուդ կորովը չէին կըրնար քեզ բարձրացնել, այլ դարձեալ բնութեան ամէն ձիրքերովդ ալ պակասաւոր էակ մը կըլլայիր. փոխանակ այդ խոհեմութեան՝ յանձնապաստանութիւն, փոխանակ համբերող գիտողութեան հապճեպ դատաստան բաժինդ պիտի ըլլայ: Տամ նաեւ քեզի օրինակն ալ, տխուր օրինակ, եղերական օրինակ, բայց դուն չատ զօրաւոր սիրտ ունիս և կրնաս մտիկ ընել: Քու եղբայրդ Ռուբէն, թէպէտ սրամիտ, գեղեցիկ և կորովի, բայց չունէր ոչ քու համբերութիւնդ, ոչ գիտութեանց սէրդ, ոչ քու խոհեմութիւնդ, և անոր համար ամէն բան և կեանքն ալ կորսնցուց. գիտեմ, նախանձը կ'ըսէ աշխարհք, բայց նախանձ չգրգռելն ալ իմաստութեան մասն է. ի՛նչ որ դուն համբերու-

1 Ցարօն, Սարդարանալի գերեզմանի մը աւերակներ դեռ մինչեւ հիմա ցոյց կուտան:

թիւն ցոյց տուիր տարիներով, ան օր մը չցուցուց. Թշնամի արքունեաց մէջ նուիրական բան մը չկար իրեն համար, երբ բարկութիւնը սիրտը լեցնէր, և հագիւ թէ Գառագեղէն դուրս մէկ ոտք դրած սարսափելի մռնչիւններ կը ձգէր: Ես պարապ տեղ զինքը կը խրատէի և կը զգուշացնէի: Քեզի հիմա այս խօսքերս միայն անոր համար է որ վրէժխնդրութեանդ մէջ չափաւոր ըլլաս. միշտ ջանաս թշնամութիւնը անհաշտ վիճակի մէջ չմտցնել:

Ծերին այս խօսքերը անօգուտ չէին այնպիսի երիտասարդի մը համար, որ ծանր միտ կը դնէր խածներուն և կը խորհրդածէր տխուր լռութեամբ:

Եւ ահա՛, Եւփիմէ լեռն իվեր կ'ելնէր կուգար, երկուքն իրեն նայելով կը սպասէին, երբ անոնց մէջ եկաւ նստաւ և քիչ մը շունչ առաւ.

— Մինչև ե՛րբ աս կղզին պիտի նստինք, ըսաւ, ա՛լ ձանձրացայ, ես չեմ կրնար քեզի պէս Թորոս, լեռներու, գիւղերու, բերդերու ծակն ու ծուկը խառնել և զուարճանալ, և ոչ քեզի պէս Հայրիկ, մուրճ մը ձեռքս քարեր կոտրտել, բոյսի մը երակներուն վրայ ժամերով յափշտակութեամբ սքանչանալ. չէ՛, այդ իմ կարողութենէս վեր է. ժամ մը առաջ ջանանք մեր տեղը հասնիլ և գործի սկսինք:

— Ո՛հ, ըսաւ Դիոնիս փոքր հեգնութեան ժպիտով, Եւփիմէ ալ գործի պիտի սկսի, պէտք չէ ժամանակ կորսնցնել, երբ որ լեռներուն վրայ փողերը գոչեն, զէնքերուն շռինդը սկսի, քաղաքներու, գիւղերու մուխն ու մոխիրը երկինք բարձրանայ, վիրաւորները հառաչեն, տղաքներ և կիներ անտէր, անբնակարան, որբ և այրի լան ու կսկծան ան ատեն գործի պիտի սկսիս:

— Այո՛, ճիշդ ան ատենն է իմ գործիս ժամանակը, պատասխանեց Եւփիմէ ձայնը բարձրացնելով, իմ պարտքս է վիրաւորները դարմանել, որբերու և այրիներու հաց, բնակարան ու մխիթարութիւն ճարել,

յուսահատները քաջալերել, այո՛, գիտեմ, իմ պարտքս ասոնք են, և թէ որ ասոնք ես չկատարեմ արժանի չեմ իշխանի մը ոչ թէ կին՝ այլ և ոչ իսկ աղախին ըլլալու:

— Եւփիմէ՛, ես քու սկզբունքներդ գիտեմ, գիտեմ նաև թէ ինչ առնացի սիրտ ունիս, բայց, այսպիսի յանդուգն և մեծ զոհողութեան մէջ գիտեմ նոյնպէս թէ ի՛նչ վտանգներ կան ծածկուած՝ որոնք նախատեսել անկարելի է շատ անգամ, ուստի հեգնութիւն մի իմանար իմ խօսքերս, այլ խոհեմութիւն. եթէ ուզես ծերերու վատ խոհեմութիւն համարէ. բայց միտքդ դիր որ դուն հիմա Թորոսի անբաժանելի ուղեկից ըլլալովդ աւելի իրեն արգելք մը, հոգ մըն ես քան թէ օգնութիւն:

— Նայէ՛, Հայրիկ, աս քարոզները որքան որ կը նորոգուին, ինձ ո՛չ թէ յուսահատութիւն՝ այլ կիրք կը բերեն, և գլխ ի խոր կը վիրաւորեն, թէ որ...

— Ո՛չ, ո՛չ, ըսաւ Դիոնիս տեսնելով որ խօսակցութիւնը անախորժ ձև մը կառնէր, դուն կիրք մի ելլեր, մենք ինչպէս ճամբայ ելանք՝ նոյնպէս կը կատարենք:

— Հա՛, այս է իմ փնտռածս, հիմա, ահա գոհ եմ և ձեզի խօսք կուտամ որ իմ բերնէս ամենևին չպիտի լսէք ոչ յոգնութիւն, ոչ երկիւղ, ոչ յուսահատութիւն և ոչ հառաչանք անգամ, այլ եթէ պէտք ըլլայ անշշունչ յանձն պիտի առնեմ իյնալ մեռնիլ քան թէ գանգատիլ:

— Ծանր պարագաներու մէջ խոհեմութեամբ տեղի տալ հարկին առջև՝ սկզբունք մեզի դնելով, իմ սիրելի Եւփիմէս, ըսաւ Թորոս ոտքի ելլելով և ծանրութեամբ, միշտ կը ջանանք իրարմէ վայրկեան մը չզատուիլ:

Եւ երեքը միատեղ սկսան լեռնէն ծանր ծանր վար իջնել:

ԳԼՈՒԽ Ժ

ԲԱՐԱՑԻՆ ԿԻԼԻԿԻԱ

Նոյն միջոցին վանահայրը վանքին դրան դրսիդին կեցած թիկնաւէտ՝ հաստաբազուկ և արեւէն սեւցած երիտասարդի մը հետ կը խօսէր կամաց ձայնով և շարունակ հարցումներ կ'ընէր իրեն և թէպէտ յայտնի էր թէ ախորժելի չէին իրեն առած պատասխանները, բայց դարձեալ երբ իր հիւրերը տեսաւ, զուարթ ընդունելութեամբ հրամցուց զիրենք, և ինք ամէնէն վերջը դռները գոցել հրամայեց, վասնզի արդէն ժամանակը ուշ էր։

Ընթրիքը ընելէ վերջ, Թորոսի ակնարկ մը ընելով և առանձին սենեակ մը հրաւիրելով ու երիտասարդը ցուցնելով։

— Ահա՛, Իշխանդ, ըսաւ, սա երիտասարդը հիմա նոր կը հասնի Կիլիկիայէ, ես չեմ կարծեր թէ գտնըւի մէկը որ ասոր չափ լաւ ճանչնայ այդ երկրին զանազան կողմերը և վիճակը. թէ որ ընդունելիք տեղեկութեանց վրայ ուզէք դարձեալ ամէն վտանգաց դիմագրաւել և երթալ, չեմ կարծեր թէ ասկից քաջ ասկից լաւ և ասկից հաւատարիմ առաջնորդ մը կարենաք գտնել։

Թորոս այս խօսքերը լսելուն, ուշի ուշով տղան կը դիտէր, որուն բաց ճակտին վրայ անվեհերութիւն դրոշմուած էր և իր նայուածքը կը խոստանար թէ մարդիկ, տարերք և մահ գիտէր արհամարհել։

— Անունդ ի՛նչ է, բարեկամ, հարցուց Թորոս։

— Սարգիս ծառայ, ըսաւ տղան ձեռքը իր լայն կուրծքին վրայ դնելով.

— Ո՞րքան ատեն է որ Կիլիկիոյ ափունքը թողուցիր։

— Այս առաւօտ։

— Ի՞նչ նաւով էիր։

— Մեր նաւով։

— Դուն նա՞ւ ունիս։

— Պզտիկ նաւ մը, ըսաւ երիտասարդը ժպիտով մը վանահօր նայելով։

— Դո՞ւն կը կառավարես նաւը։

— Այո՛։

— Ուրեմն ի՞նչ կարօտութիւն ունինք ուրիշի դիմելու երբ հայր սուրբը քեզի կը ճանչնայ և քու քաջութիւնդ և տեղեկութիւնդ կը գովէ։

— Բայց իմ նաւիս թշնամին շատ է, իշխան, և բոլոր յունաց նաւերը զիս խեղդելու կ'աշխատին, բոլոր ծովեզերքը զիս կը փնտռեն. ես ալ ծածկուելու համար հոս անցայ քանի մը օր։

— Զըսե՞ս որ ընկեր ենք. ինձ ալ կը հաւտացնեն թէ զիս կը փնտռեն։

Այո՛, քեզ ալ կը փնտռեն։

-- Ի՞նչ գիտես. զիս ուսկի՞ց կը ճանչնաս. խօսէ՛ ինչ որ գիտես։

— Նախ ես քեզ կը ճանչնամ, տղայութեանս ամէն օր մէկտեղ էի Վահկայ բերդը, Թաթուլին Սարգիսն եմ. այս իրիկուն երբ վանքին դուռը տեսայ, հայր սուրբը բան մը չըսած, գուշակեցի թէ Թորոս իշխանն է (մեծաւորը գլխովը նշանացի կը հաստատէր) Ես քանի տարի է ծովու վրայ ասպատակութիւն կ'ընեմ. հոռոմները իմ երեք նաւս այրեցին, ես անոնց քանը կողոպտեցի այրեցի. ես նաւի սակ չեմ տար, բայց տասնըհինգ օր մը կայ որ պահպանութիւնը սաստկացուցին. մեծ ծովերուն ամէն ժայռերը, ծակ ու ծուկը կը քննեն, կը նային, ցամաքն ալ Մամեստիոյ իշխանին զօրքերը աւելցուցին, անզգամութիւնը շատցուցին. Հայը ամէն տեղ կը հալածեն և կ'ըսեն թէ

ձեր իշխանը փախեր է բանտէն արքայական քաղաքը, ան կը փնտռեն: Ձեզ ամէնքդ ալ պիտի ջարդենք: Մեր ծերերը կ'ըսեն թէ այսպիսի հալածանք չենք տեսեր: Ուր որ երկայն հասակ, սեւ աչքերով, սեւ յօնքերով երիտասարդ կը տեսնեն՝ կը կապեն Մամեստիա կը տանին, մեր լեռներն ալ այդպիսի մարդեր չա՛տ· մինչեւ հիմա քան երեսուն մը տարին: Թէ որ անգամ մը ոտք կոխես, Աստուած վկայ ամէնքը ոտք պիտի ելնեն: Բայց ծովեզերքի պահպանութիւնը խիստ է:

— Ըսել է որ դուն ալ կը վախնա՛ս, Սարգի՛ս:

— Աստուած չընէ, հիմա՛ հրաման ըրէ, Տարսոնի գետն ի վեր շտկեմ պզտիկ նաւս· աս մարմինը (կուրծքին մեծաձայն հարուած մը տալով) մէկ անգամ միայն պիտի մեռնի:

— Լա՛ւ, ըսաւ Թորոս գոհութեան ժպիտով եւ ուսին պզտիկ հարուած մը տալով, կը տեսնեմ թէ քաջ ես, քու նաւդ գիս պիտի տանի Կիլիկիա:

— Հէ՜... հիմա ահա սկսայ վախնալ, ըսաւ երիտասարդը քայլ մը ետ առնելով եւ մտածելով: Գիշերները՝ մթնելէ երեք ժամ ետքը արեւմտեան հով մը կը փչէ, կրնանք Ամանուրի եւ Կորիկոսի մէջ հազար ծոցերուն մէկը խոյանալ եւ մտնել, անգամ մը որ ցամաք ելնենք, ո՞վ կարող է մեզ ժայռերուն եւ անտառներուն մէջ համարձակիլ հալածել: Ես հինգ տղայ ունիմ, մէկը տասը մարդ կ'արժէ, Բաբկէնը տեսայ, տասը մարդ ալ ան կ'արժէ· ծերացեր է՝ բայց ամուր շինուած է· մենք եօթն հոգի կրնանք այդ լերան ժայռերու ճամբորդութիւնն ընել, եւ Աստուծով կը հասնինք: Այն օր Սեւ լեռները հարսնիք կ'ըլլայ:

Սարգիս իր անվեհեր արիութիւնը գտաւ սա վերջի խօսքերուն հետ, եւ աջ թեւը գօտիին վրայ դրած կը սպասէր, բայց Թորոս էր հիմա որ կը մտածէր: Յայտնի է թէ իրեն համար չէր մտածութիւնը· Եւփիմէ էր որ իր միտքը կը տանջէր: Վանքի ինք լաւ կը յիշէր եւ կը ճանչնար Տորոսի ափափայքն ու գահավէժները եւ կ'երեւակայէր թէ ինչչա՛փ տաժանելի պիտի ըլլար այս ըսած ուղեգնացութիւնը քաջակորով մարդկանց համար, ուր կը մնար բիւզանդական պալատներու մէջ քնքուշ սնած աղջկան մը համար զայն դիմագրաւել:

— Ե՞րբ կրնանք ուրեմն ըսաւ իշխանը, այս կղզին թողուլ:

— Չորս օրէն: Հիմա ես՝ վաղը պէտք է դառնամ եւ հոն իմ պատրաստութիւններս տեսնեմ, թէ որ անկարծելի արգելքի մը չհանդիպիմ՝ չորրորդ գիշերը հոս եմ, եւ նոյն իրիկուն ճամբայ կ'ելնենք:

— Ինչո՞ւ համար հիմա ճամբայ չելնենք մենք ալ միատեղ:

— Պատրաստութիւնը՝ իշխան, ոչ քեզի եւ ոչ ալ ինծի համար է, ըսաւ Սարգիս դանդաղելով ես այնպէս կը կարծեմ թէ դու չես ուզեր այդ ծերը եւ այդ՝ ... պատանին՝ որ քեզ հետ այս իրիկուն լեռնէն իջաւ՝ հոս թողուլ, ուստի անոնց համար գոնէ երկու ջորի պէտք է ճարել· քիչ մը ճամբու պաշար՝ ժայռերու մէջ տեղ-տեղ ծածկել, եւ մէկ քանի տղայ հոն ձգել, որպէսզի որոշեալ գիշերին ու ժամուն կրակ վառելով մեզի ուղեցոյց ըլլան:

— Ապրի՛ս, Սարգիս, գնա ուրեմն եւ պատրաստութիւններդ տես: Կարելի է սակի պէտք ունենաս· առ ըսաւ՝ ու քսակ մը իրեն երկնցուց:

Սարգիս ետ քաշուելով ըսաւ·

— Ներէ՛ իշխան, ես փառք Աստուծոյ հարուստ եմ քանի որ ծովուն վրայ հոռոմի նաւ կը պտտի եւ ես ալ կը պտտիմ, սակի նեղութիւն չեմ գիտեր ինչ է: Ուրիշ ազգի՝ Աստուած վկայ՝ դպած չունիմ, անոնք մեզի ինչ ըրին եւ ինչեր կ'ընեն: Մնաս բարով ուրեմն, ըսաւ եւ անհետ եղաւ:

Երբ վարդապետը ու Թորոս մնացին·

— Չորս օր դեռ ձեզի հետ պիտի ըլլանք, ըսաւ Թորոս:

— Երանի՜ թէ աւելի երկայն ժամանակ ձեզ հիւր ունենայի, պատասխանեց վանահայրը, բայց կ'երեւայ թէ այս օրերս հոս ալ նաեւ իրենց չարութիւնը աւելցուցեր են հռոմք, վասնզի սկսեր են թշնամական հոգի ցուցնել, և նեղութիւն տալ Լէֆքօշեա մեր ազգայնոց. ամէն կողմ հալածանք մեր անտէրունջ ազգին վրայ կը տեղայ. Աստուած մեր աղաչանքները լսէր և փրկութեան դրօշակը տար ան ձեռքին որ իր ընտրեալն է արդէն, տար իրեն զօրութիւն և յաջողութիւն իր գործը ի գլուխ հանելու: Այս է ահա մեր ցերեկուան ու գիշերուան աղօթքը. երանի թէ մեր ձայնը ընդունելի ըլլար:

— Հայր սուրբ, թէ որ ձեր ցուցուցած նաւավարին և ձեր հիւրընկալութեան հաւասար է աղօթքը՝ մեր ամէն գործը պէտք է յաջող երթայ: Աս երիտասարդը որ յիշեցի՝ իմ տղայութեանս ընկեր՝ երբ անունը տուաւ, շատ քաջ և սրամիտ տղայ կ'երեւայ, ես շատ շնորհակալ եմ ձեզի:

— Մենք ձեզի շնորհակալ պէտք է ըլլանք ազգ և եկեղեցի, երբ յաջողիք մեծ գործը ի գլուխ հանել. քանի որ ձեր հայրը Լեւոն և դուք գերի եղաք, ալ յունաց լրբութեան չափը անցաւ ամէն տեղ, ամէն հարստահարութեանց, ամէն բռնութեանց, ամէն նախատանաց ենթակայ եղաւ մեր ազգը, մեր խաչն ու աւետարանը կը հայհոյեն, չկրցանք հասկցնել այս ամբարտաւան ազգին թէ խաչ և աւետարան միեւնոյնն է ամէն քրիստոնեայի համար, Տէրն ինք այց ընէ մեր տառապեալ ազգին. քանի անգամ աղերսագիր տուինք կաթողիկոսին որ գոնէ Լամբրոնի իշխանաց ձեռքով կայսեր խնդիր ընէ որ զմեզ չի չարչարեն. բայց Կիպրոս ո՛ւր, կայսրը ուր. Լամբրոնի իշխաններն ալ կէս հռոմցած, թէ որ կաթողիկոսն իրենց ազգակից չըլլար մինչեւ հիմա բոլորովին հռոմ եղած էին: Դարձեալ կ'ըսեմ, Աստուած քու սուրդ հաստ ընէ, իշխան:

Աս խօսքերուն վրայ ելան, Թորոս ամէն բան Նեփիմէի հաղորդեց, ամէն վտանգ աչքին առջեւ դրաւ, որ հանդարտ մտիկ ընելէն վերջ.

— Քու այդ Սարգիսդ շատ լաւ տղայ մըն է, ըսաւ ծիծաղելով, թէ որ Աստուած յաջողէ մեր ձեռնարկութիւնը գերագոյն ծովապետ մը ունինք: Հիմա ես օրերը պիտի համրեմ, ուրբաթ առտու հոս է, նոյն իրիկուն ճամբայ կ'ելնենք:

Եւ այսպէս պատրաստ ամէն վտանգի այս դիւցազնկինը անհամբեր կը սպասէր ուրբաթին և ամէն երեկոյ կ'առնէր իր ծեր Բաբկէնը կ'իջնէր ծովեզրը տեսնելու թէ՝ նաւը եկա՞ծ էր, և սրտնեղած վանք կը դառնար մութին անօգուտ սպասելէն վերջ:

Երկրորդ ուրբաթ մը եկաւ որ Թորոս անգամ կ'այլայլէր թէպէտ երեւէն բան մը չէր իմացներ. Նեփիմէ՝ այդ ջղային կազմուածքը, գաղտուկ արցունք կը թափէր, այնչափ իրեն նեղ կուգար կղզին, և Թորոսի անտարբերութեան դէմ կը գանգատէր, որ զինք հանդարտեցնելու կը նայէր, և համբերութիւն սորվիլ կը յորդորէր: Ուրիշ ճար մը կը մտածէր այս երկրորդ բանտէն ազատելու և Կոստանդին՝ նաւու մը խօսք կը ընէր որ Անտիոք պիտի երթար, և կը համոզէր թէ ապահով միմիայն ճամբան այն էր Սեւ լեռն երթալու և երբ աս խորհրդին վրայ էին՝ Բաբկէն ներս մտաւ շունչը հատած.

— Աւետի՜ս, իշխանիկս, Սարգիսն եկաւ, հիմա հոս կը հասնի:

— Ի՞նչ վիճակի մէջ, հարցուց Նեփիմէ:

— Լա՛ւ, շատ լաւ վիճակի մէջ, տիրուհիս, պատասխանեց Բաբկէն:

Եւ իրօք, Սարգսին սեւ երեսը երեւցաւ, բայց աչքերն ուրախութեան հուր կը ցոլացնէին. դեռ մութը չէր կոխած:

— Կը ներես, իշխան, ըսաւ, բայց կիսկատար գործ չեմ սիրեր, ամէն բան պատրաստ ընելու համար

պէտք էր անձամբ Վահկայ մօտերը երթալ և ձեր ապահովութեան համար օգնական խումբ մը բերել: Բոլոր լեռը կրնայի ոտք հանել թէ որ անունդ տայի, բայց խոհեմութիւն չսեպեցի. տասներկու տղայ առի ընտրուած, ո՛վ Լուսաւորիչ կը սիրէ՝ չհարցնէ թո՛ղ հետս գայ ըսելով. ամէնքը լեռներուն վրայ ցրուեցի, իրենց սպասելու տեղերը ցուցուցի, պաշար, դրամ, ամէն բան զետեղեցի, դուք միայն պակաս էք, թէ որ կ'ուզէք աս գիշեր կ'երթանք, օդն ալ յաջող է, փա՛ռք Աստուծոյ:

— Ո՛ւր, ըսաւ վանահայրը, այսպէս անօթի ծարաւ, անկարելի է: Անմիջապէս սեղան դնել տուաւ, ընթրիքը շուտ մը պատրաստեցին, բարի յաջողութեան համար գաւաթներ պարպեցին, ետքը եկեղեցի իջան, «Տէր Ողորմեա»ն ըսին և մութը կոխեր էր երբ Եփիմէ ջորին հեծած՝ Բաբկէն քովէն անբաժանելի, ելան և ծովեզրը իջան. նաւը արդէն պատրաստ էր՝ և երբ ամէնքը մտան՝ բոլոր առագաստները պարզեցին և յաջող հովմով նաւը սկսաւ սուրալ ծովուն վրայ, ձայն չկար ամենեւին, բացի Սարգսի ձայնէն որ երբեմն համառօտ հրամաններ կուտար ղեկին գլուխը նստած:

Այս լռութիւնը շատերուն քունը բերաւ, արդէն Եփիմէ հանգիստ և ուրախ՝ գլուխը Թորոսի կուրծքին վրայ դրած շատոնց քնացած էր. և Կիպրոսի եզերքէն կ'անհետանային, երբ Սարգիս քովինին՝ որ անշշունչ նստած էր, ըսաւ.

— Հա՛յր սուրբ, դուն աս ղեկը գործածէ, ես պէտք է նաւուն ծայրը երթամ և զինեմ:

Եւ իրօք, իր սուր աչքերով, որ մութին ալ ամէն բան կը տեսնէին, իր բոլոր նաւաստիներուն և Կոստանդնի օգնութեամբ անցուց նաւուն քիթը տասպարաձեւ երկաթ մը ու եկաւ իր տեղը նստաւ:

— Հիմա թող թշնամի նաւն ալ գայ, ըսաւ ղեկավարին, որ «Հայր սուրբ» կ'անուանէր, մէկ հարուածով ծովուն տակ կ'իջեցնեմ:

— Զգայ թող, որդեակ Սարգիս, պատասխանեց ան, և խաղաղութեամբ ցամաքը գտնէինք անգամ մը:

Թորոս որ այս խօսքերը կը լսէր և անշարժութեան դատապարտուած էր Եփիմէի պատճառաւ.

— Սարգի՛ս, ո՞վ է հայր սուրբը:

— Վանահայրը, իշխան:

— Մեր հե՞տն է:

— Այո՛, իշխան, պատասխանեց վարդապետը, ես ալ ծովու լեզուէն կը հասկնամ քիչ մը, քսանըհինգ տարի է նաւավար էի, և ձեզի օգտակար ըլլալու յոյսով մէկտեղ եկայ:

— Շնորհակալ եմ: Բայց ի՞նչ է գործիքդ, Սարգիս, որ թշնամի նաւը մէկ հարուածով ծովուն տակ կ'իջեցնէ:

— Նորաձեւ ցռուկ մըն է, իշխան, Անտաքցի Աւետիք վարպետի շինածը, մինչեւ հիմա տասը հոռմի նաւ իջեցուցի անով: Քամին լաւ է, արդէն կէս ճամբան ենք, քիչ մըն ալ տանկ երթանք կ'իջեցնեմ այս առագաստները, սեւ առագաստ կը թողում:

— Լա՛ւ, չտեսնուելու համար թշնամիէն. լա՛ւ խելք է:

Դարձեալ լուռ և յաջող գնացին. ձայն չկար նաւուն մէջ, Թորոս լռութեամբ կը դիտէր, երբ յանկարծ Սարգիս տեղէն ցատկեց.

— Տղա՛ք ըսաւ. պատրաստ կեցէք, նաւ մը կը տեսնեմ մեր ճամբուն վրայ, իջեցուցէք հիմա առագաստները:

Վայրկեանին առագաստները իջան, հազիւ թէ ճախարակաց ձայները կը լռէին, այնչափ խնամքով եղոտած էին: Թորոս կը նայէր, բայց բան մը չէր տեսներ ինքնիրեն կըսէր թէ պէտք է գիշերային թռչնի աչքերը ունենալ Սարգսին պէս մութին տեսնելու համար: Անցաւ նաւը հեռուէն և չարունակեցին իրենց ճամբան անվտանգ: Կէս գիշերը անցեր էր, առաւօտեան երկու ժամ հազիւ կար, և ահա Սարգիս՝

— Փա՛ռք Աստուծոյ, գոչեց, և երբ Թորոս պատճառը իմանալ ուզեց։

— Կը տեսնե՞ս սա դիմացի լոյսը, որ մերթ կը տատանի՝ խաչաձեւ կը շինէ. ահա մեր նշանն է. Թըշնամի չկայ և մենք ալ մօտ ենք ցամաքին ըսաւ։ Հա՛ տղաք, Թիերը օգնութեան, բացէք բոլոր առագաստները, ալ ով կ'ուզէ թող գայ։ Ամէնքը արթնցան, լուսնոյ վերջին ճառագայթը աղօտ լոյս մը ձգեց ծովուն վրայ, հազիւ թէ կէս ժամ վերջը նաւը կը խըրէր աւազին վրայ և վեց կորովի տղաք զայն կը շըրջապատէին ջահեր ձեռքերնին. Սարգիս նաւուն ծայրը կեցած՝ «սանդուղը դրէք» ըսաւ, ու անմիջապէս սանդուղ մը դրուեցաւ նաւուն վրայ։

— Իշխա՛ն, ըսաւ Սարգիս, ահա հայրերուդ երկիրը, քեզի կը վայլէ նախ ոտք դնել հոս։

— Յանո՛ւն Աստուծոյ Ամենակարողի, ըսաւ Թորոս և ցատկեց դուրս, ու Եփիմէի՝ որ սանդուղին գլուխն էր, ձեռքը տուաւ և վար առաւ։

Հոն, ան փոքրիկ խմբակը Կոստանդնի առաջնորդութեամբ աւազին վրայ ձեռքերնին երկինք տարածելով հաւատարմութեան երդում ըրին, յանուն Աստուծոյ մեռնիլ հայութեան և Թորոսի համար։

Նաւը քանի մը վայրկեանի մէջ իր ամէն կարասիներէն մերկացաւ, առագաստ, ղեկ, զէնք, պաշար վերի անելանելի մացառներուն և ժայռերուն մէջ ծածկուեցան, և երբ ամէն բան անհետացաւ, Սարգիս հրամցուց լերան ստորոտը, ջուրին գլուխը իր հիւրերը նախաճաշիկ ընելու։ Պայծառ և աննման աղբիւր մըն էր որ գետնէն կը բղխէր, ամէն դար՝ ամէն լեզու գեղեցիկ աչքի մը կը նմանցնէին զայն, որ հանդարտ և լայնաբերան՝ վճիտ ջուր մը կը պոռթկար։

— Բայց նախ, Բաբկէն հայրիկ, ըսաւ Սարգիս, քու տղաքդ ահա հոս են։ Երկու կորովի տղաք Բաբկէնի ձեռքերուն պլլուեցան, և Բաբկէն հաւատարիմ Ասիական սովորութեան՝ հայրական սէրը խեղ-

դել կը ջանար սրտին մէջ, թէպէտ ապստամբ աչքերը ուրախութեան արցունք կը թափէին։

Նահապետական էր սեղանը. ահագին ոչխար մը խորոված իր մորթին մէջ՝ փոսի մը խորշէն դուրս ելաւ, Կիպրոսի գինին կուժերով առատապէս գաւաթներու մէջ կը փրփրար, երբ ամէնքը կերան և յագեցան, Եփիմէ ուրախ և զուարթ նաւապետին՝ Սարգսի կենաց խմել առաջարկեց գինին, որ զիրենք անվտանգ անցուց և բերաւ։

Երբ ելան կերակուրէն, երեք հատ չոր՝ ջղուտ ջորիներ մօտեցուցին հայ տղայքը, ուր Եփիմէ և վերջը Դիոնիս նստան, երրորդը Թորոսի համար էր, բայց նա մերժեց և հրամայեց ջուրի տիկեր բեռցնել և ինք սկսաւ Սարգսի առաջնորդութեամբ լեռն ի վեր շահատակել։ Ետեւէն կուգար Բաբկէն, շատ անգամ ձեռքը Եփիմէի ջորիին գլուխը բռնած, վերջը Դիոնիս, ետքը մեր բոլոր զինուոր և նաւաստի տղոց խումբը, և ամէնէն վերջը Կոստանդին իր հասակովը և ալեւոր վարդապետին հետ։

Սելեւկիոյ և Կորիկոսի մէջտեղ հրուանդանի մը քով կ'իյնար այս կէտը ուր մեր կարաւանը կապուեցաւ, և իրաւունք ունէին հիները անուանելու զայն Κωρύκιον φεγγόεν վասն զի ժայռն ու անտառ՝ ծովն ու վտակ՝ երկինքն ու երկիր հոս գեղեցկութեամբ զարդարած էին. կէտ մը՝ ուր ժայռ ու մացառ իրարու հետ կը կռուէին՝ ուր ոտքերու կռուան մը գտնել միշտ դժուարին և երբեմն գրեթէ անհնար կըլլար, մանաւանդ մեր ճամբորդներուն համար որ ժայռերու ընկերութիւնը աւելի կը վերադասէին քան մարդկանց թշնամութիւնը։

Այդ Տորոսի գօտիները երբեմն յանկարծ կը պատռէին տեղի տալու համար հեղեղատի մը. երբեմն բոլորակ թատրոն մը կը ձեւանային ծոց մը շինելու համար ծովուն, և երբեմն ճանապարհորդներ լերան գագաթը ելլել կը պարտաւորէին՝ երբեմն ծովեզրը իջ-

նել, եւ էջը միշտ վտանգաւոր՝ միշտ տաժանելի սոսկում կը բերէր նայողին. բայց մեր կարաւանը անխօս անշշուկ կը շարունակէր իր ճամբան սպառնալից, վասն զի նիզակներուն շողիւնը, վահաններու, սուրերու և սաղաւարտներու շառաչը, և այդ հաստատ երիտասարդներուն քայլերը այդ փոքրիկ և ընտրեալ խումբին անընկճելի ըլլալուն վկաներն էին:

Երեք ժամու չափ ճամբայ հազիւ առած էին և Սարգիս իր սուր աչքերը կը նետէր քննելու համար լեռներուն գագաթները, երբ տեսաւ որ ճերմակ դրօշակ մը կը ծածանէր, մատնանիշ ընելով զայն Թորոսի՝

— Յաջող և բաց է ճամբանիս, Իշխան, ըսաւ, ահա՝ նշանը: Քիչ մը վերջը սպառազէն երիտասարդ մը խառնուեցաւ խումբին, իմացնելով թէ վտանգ չկար, և ոչ ոք տեսած էր:

— Կորիկոսի պահապանները ի՞նչ կ'ընէին, հարցուց Սարգիս:

— Մեռելի պէս դռները գոցեր նստեր էին, բերդին շուրջը բնակող գիւղացիներն ալ չեն գիտեր թէ բերդապահնե՞րն աւելի վնասակար են իրենց թէ աւազակները:

Եւ իրօք քիչ մը առաջ երբ եկան մերինները՝ Կորիկոսի կրկին բերդերն՝ ցամաքային ու ծովային երեւցան. ցամաքի բերդը իր բարձր քառակուսի և բոլորշի աշտարակներով՝ երկաթապատ դռներով պզտիկ քաղաքի մը երեւոյթն ունէր. անոր դիմացը՝ մօտը ծովուն մէջ բերդապատ կղզի մը արհեստական լեզուով մը միւսին հետ իբրեւ կամուրջով միացած կ'երեւար, հոս Սարգիս կեցաւ և սկսաւ մտածել:

— Ի՞նչ կը մտածես, ըսաւ Թորոս:

— Կը տեսնես, Իշխան ճամբան երկուք է, մէկը կարճ՝ որ բերդին ստորոտէն կ'անցնի, միւսը երկայն՝ և ուր լերան վրայէն պէտք է պտըտիլ:

— Երկայն ճամբէն երթանք. քար մը նետ մը

կրնայ մեր մէջէն մէկուն կեանքը վտանգի դնել, անօգուտ քաջութիւնը մեղք է:

Երկայն ճամբան բռնեցին և գերեզմաններու մէջէ կ'անցնէին, ինչ անհատնում և քարակոփ գերեզմաններ և ինչ բարբարոս ու սեղանակապուտ ժողովուրդներ անցեր էին հոնկից. գերեզման մը չկար որու կափարիչը խախտած չըլլար, կային գերեզմաններ չորս բարձր սիւներու վրայ հաստատուած բայց ամբարիշտ և գերեզմանակրկիտ ձեռքը հոն ալ հասեր էր և ահագին միակտուր երեք կանգուն և աւելի մեծ կափարիչը խախտեր էր, աճիւնն ու ոսկորը ցըրուեր էր: Երկայն մղոններ այս տեսարանը կը շարունակուէր և մեր ճամբորդները իրենց ճամբան կ'երթային, երբ յանկարծ վարէն վայերու ձայն լսուեցաւ և ամէնքը կանգ առին բերդապահ մը Կորիկոսէն ելած արտորնօք կը դիմէր խումբէն առաջ անցնելու վարի ճամբով՝ երբ նետի հարուած մը Կոստանդնին աղեղէն եկած՝ խեղճ մարդը յերկիր կործանեց, երկրորդ նետ մը անշուշտ մահացու հարուածով մարդուն հոգին պիտի հանէր, երբ Թորոս բարձր ձայնով.

— Մի՛, բաւ է, կանչեց:

Կեցաւ Կոստանդին ու կ'ըսէր ինքնիրեն մրմռալով.

— Թէ որ, մենք այսպէս պիտի պատերազմինք սա անիծած ազգին հետ, վերջը շատ կը զղջանք, և անոնք կ'ուտեն կը հատցնեն մեզ:

Շարունակեցին իրենց ճամբան: Կէս օրուան արեւը իր կրակը կը թափէր. Թորոս ետ դարձաւ Եւփիմէի երեսները տեսաւ կարմրած տաքէն և յոգնութենէն. վար նայեցաւ տեսաւ գեղեցիկ դղեակ մը որուն պարիսպները դէպի ծով կը խոնարհէին, փորձութիւն մը եկաւ հիւրընկալութիւն խնդրելու հոն, բայց միշտ շրջահայեաց և խոհեմ.

— Սարգիս, ըսաւ, մենք ո՞ւր դադար պիտի առնենք:

— Հո՛ս, սա դղեակին մէջ որ առջեւնիս է, տե՛ս, ահա մեր ճերմակ դրօշակը կը ծածանի։

Եւ իրօք, զարմանքով տեսաւ Թորոս որ դրօշակ մը կը ծածանէր։

— Մարդ չկա՞յ ուրեմն հոդ։

— Ո՛չ, Տէր իմ, լքուած դղեակ մըն է, Այաշ կ'անուանեն Տաճիկները, իսկ մենք՝ Ճերմակ Բերդ կըսենք, և երբ ծովեզրը ապահով է մեզի համար, հոս կուգանք և հոռոմները կատղեցնելու համար քանի մը ժամ կ'անցնենք, քանի մը նետ կ'ուղարկենք իրարու ի նշան սիրոյ և բարեկամութեան՝ որ մեր երկու ազգերուն մէջ միշտ յարատև եղած է և պիտի ըլլայ, յետոյ կը մտնենք նաւ և կը հեռանանք։

Եւ աս ըսելով կը մտնէին դղեակէն ներս, որուն մուտքը միայն կար և դուռը արդէն յարութիւն առեր էր։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Տ Ո Ր Ո Ս

Սոսկալի եղեւէջները՝ արեւուն կիզիչ ճառագայթները ամէնքը վաստակաբեկ ըրած էին, ուստի ամէնը շատ գոհունակութեամբ ընդունեցին այս դադարը՝ զոր պատրաստած էր իրենց համար Սարգիս, մսին խորովածը ախորժակով կերան, և զարմանքով կը նայէին Նեփիմէի որ հազիւ թէ պզտիկ յոգնութիւն մը առած Թորոսին հետ դղեակը կը պտըտէր, որ իրօք այն ժամանակի շէնքերուն փայլուններէն մէկը կրնար համարուիլ, ընդարձակ սենեակներով, գեղեցիկ մատուռով, ջուրի կապարեայ ագուգաններովն և ընդարձակ պարտէզներովը՝ ուր խառն ի խուռն անտառացեր և վայրենացեր էին կիտրոնիներ, ձիթենիներ, թթենիներ, բրաբեաններ և դափնիներ։

Սարգիս, որ կիսկատար գործ չէր ըներ, ճամբուն վրայ երկու պահապան դրած՝ կէս ժամը անգամ մը զանոնք կը փոխէր և հրամայած էր ոչ ոք չանցընել, իսկ եթէ մէկը համարձակէր հրամանը ոտնակոխել, առանց սպասելու փողոտել, և այս զինուորական ճըշդութիւնը տեսնելով Թորոս գոհ կըլլար՝ խորհրդածելով թէ Լեռնցի ազատ ժողովրդեան այդ կամաւոր հնազանդութիւնը զինուորական կանոններուն հայրենի ազատութեան երաշխաւոր էր։

Դիոնիս, նոյն միջոցին իր անցեալին դիտողութիւնները կ'ընէր. ուսման նիւթ էր իրեն համար թէ՝ նոյն շէնքը ո՞ր դարուն, ո՞ր ժամանակին կը վերաբերէր, թէ մատուռը երբեմն թերափներու տաճար եղած և ետքը քրիստոնեայ կրօնքին պատկանած էր։

Բաբկէն իր տղոց հետ նստած՝ կնոջը, աղջիկներուն և պզտիկ մանչուն վրայ տեղեկութիւն կը ստանար, իր գերութենէն վերջը անոնց քաշած նեղութիւններուն և հալածանքներուն պատմութիւնը մըտիկ կընէր, վասն զի Հոռոմները՝ որ Ռուբինեանց իշխանութիւնը կործանել յաջողած էին, երբէք Տաճիկներուն, Լատիններուն և Փրղերուն բռնութիւններէն չէին կրցեր պահպանել երկիրը որ կատարեալ անիշխանութեան մէջ՝ կը հեծէր աւուր առաջին բըռնաւորին:

Անդին խումբ մը հինգ վեց երիտասարդներու, Թորոսի և հետեւաբար Եւփիմէի վրայ կը խօսէին շատ կամաց և գաղտագողի· մէկ երկուքը կը կարծէին թէ յոյն պատանի մըն էր որ ընկերացեր էր Իշխանին, իսկ աւելի խորագէտները կը պնդէին թէ կին էր· իսկ ուրիշներ թէ՝ Թորոսի կինն էր, և իրենց անժխտելի փաստ կը ցուցնէին Բաբկէնի պէս խիստ մարդու մը անոր ըրած պատիւն ու պատկառանքը, և թէ ի՞նչպէս անոր կապոցը Բաբկէն զգուշութեամբ իր ուսէն չէր բաժներ:

Կային նաեւ քանի մը երիտասարդներ նաւաստիներէն որ բոլոր գիշերը անքուն՝ ծառերու շուքին տակ դալարի վրայ ահագնաձայն կը խորդային՝ ծովուն վրայէն փչած կենդանացուցիչ հովին տուած քթերնին:

Իսկ Թորոս՝ Սարգսին Կոստանդնին և Վարդապետին հետ կը խորհրդակցէր իրենց հետեւելիք ճամբուն վրայ· և որոշեցին Սարգսի խորհուրդին հետեւիլ, գիշերով՝ մութին ճամբայ չընել, այլ ցերեկուան և արեւի լոյսով շարունակել ընթացքը· ուստի առանց ուշանալու ճամբայ ելան, երբ արեւը սկսած էր դեռ նոր խոնարհիլ, ձայն տուին տղաքներուն, խումբը կազմեցին կանոնով՝ կազդուրուած և ոգեւորուած ճամբայ ինկան:

Թէպէտ ժայռ և անտառ պակաս չէր, բայց ոչ եր-

բէք անցեալին կրնար համեմատիլ, առուակներ՝ որ երբեմն դէպի ծով կ'երկննային· գեղեցիկ ծովափէ աւազուտ մը իրենց ճամբան կը կազմէին:

Լամոսի բերդին հեռուէն շրջան մը տուին, որուն սակաւաթիւ բերդապահները ոչ թշնամութեան ցոյց և ոչ կեանքի նշան տուին, և մեր խումբը մտաւ թաւ անտառի մը մէջ ուր դարաւոր ծառեր իրենց հովանին խաղաղ լռութեան մը վրայ կը տարածէին:

Սրընթաց վտակ մը անտառը կը կտրէր և երբ ջուրին ընթացքին հետեւելով կարաւանը վեր ելաւ բլուրին գլուխը՝ նռնենեաց անտառ մը զայն կը պատէր և Սարգսին պահապանը իր ճերմակ դրօշակը ձեռքը զիրենք դիմաւորեց:

Ան գիշերը ճամբաներուն պահապաններ դրուելէն վերջ հանգիստ քնացան պայծառ երկնքի տակ և առաւօտուն կանուխ կ'ելնէին ճամբայ, և դեռ արեւը չելած Պոմպէուպոլսոյ աւերակներն և ծովը աջ կողմը ձգելով Տորոսի գօտիներէն անբաժան կը ջանային անցնիլ անծանօթ Լամբրոնի բերդին քովէն ուր գիտէին թէ լաւ հսկողութիւն և պահպանութիւն կար ճանապարհներուն:

Ուստի մեր Սարգիսը շատ անհանգիստ էր, և իր սուր աչքերը լերանց գագաթները կը քննէին թէ պիտի տեսնէ՞ր իր ճերմակ դրօշակին ծածանումը, բայց ժամը երեկոյ կ'ըլլար և նշան չի կար, հոն ժամադրութեան տեղը իր պահապանը չէր երեւար, ուստի կեցուց կարաւանը՝ վազեց դէպի քարակերտի մը, և քանի մը քար խախտելէն վերջ գտաւ իր ծածուկ պաշարները, պաքսիմաթ, պանիր, կարագ, ձիթապըտուղ, վասն զի թշնամիին մօտութիւնը չէր ներեր կրակ վառել, բայց դարձեալ առանց յայտնի ընելու իր մեծ անհանգստութիւնը ամէնուն յորդորեց ուտել և կշտանալ, վասն զի կ'ըսէր տաժանելի է ճամբանիս· և Թորոսի ու Կոստանդնի միայն յայտնեց թէ իր

պահապանին անյայտանալը վտանգաւոր գուշակու-թիւն մըն էր նոյն գիշերուան համար:

Այս յայտնութեան վրայ, Թորոս առանց Կոստանդ-նի ժամանակ տալու, որու յախուռն և յանդուգն քա-ջութիւնը լաւ կշռեր էր, երկայն հարցաքննութեան մը սկսաւ:

— Լամբրոնի բերդը հոսկից ի՞նչչափ կը տեւէ:

— Ժամ մը:

— Ի՞նչչափ զինուոր կարծես թէ ունին:

— Քառասուն յիսուն, բայց ընտրանօք մարդիկ:

— Հոսկից մինչեւ Կիլիկիոյ կիրճերը ի՞նչչափ կը տեւէ:

— Չորս ժամ:

— Հոն դարձեալ բերդեր և պահակազօրք միշտ կը գտնուի՞ն:

— Մի՛շտ:

— Յո՞յն են զօրքերը թէ Հայ:

— Խառնակ, կէս կէս:

— Հոսկից Տորոսն ի՞նչչափ կը քշէ:

— Մեր ընթացքով չորս ժամ:

— Ատանա՞:

— Գրեթէ նոյնչափ:

— Ատանայէ Միսի՞ս:

— Նոյնչափ:

— Բաւական է, ըսաւ Թորոս, շարունակենք մեր ճամբան: Թշնամին թէ որ գայ թող այս լեռներուն վրայ մեզ գտնէ: Դուն Սարգիս նայէ որ միշտ ճամ-բուն բարձրերը բռնես՝ միշտ ապառաժուտը, նայէ որ անցնինք մէյ մը սա Լամբրոնի բերդը հեռուէն:

— Կայ մէկ ճամբայ մը բայց երեք ժամ ճամբա-նիս կը հեռացնէ:

— Ջի զուրցե՞ս, այն ճամբէն գնա ուրեմն:

— Բայց երեք ժամ, ըսաւ Կոստանդին:

— Այո երեք ժամ, բայց Լամբրոնի բնիկ և ընդո-ծին Հայոց հետ կռուիլ իրենց լեռներուն մէջ յիմա-

րութիւն է, պատասխանեց Թորոս, այնպիսի ձեւով մը որ պատասխան չէր վերցներ:

Ուստի մեր խումբը բռնեց ափափայից ճամբան և մութ տեղ մը կը մագլցէին. Սարգիս առջեւէն, Թո-րոս ետեւէն, և Վարդապետը վեղարը գլուխը Թորո-սի անմիջապէս քովէն. սուրերը կարճ բռնուած էին որպէս զի ձայն չհանեն ժայռերուն զարնուելով. զէնքերը չփայլելու համար լաթերով ծածկուած էին, և այսպէս ժամ մը շարունակեցին իրենց ընթացքը, և սա միջոցիս Թորոս վարդապետը կը կարդացնէր:

Սարգիս որ առջեւէն կը քալէր՝ ետ դարձաւ և Թորոսի կամաց ձայնով մը ըսաւ.

— Իշխա՛նդ, հոս թշնամին հեռու չէ, վանգի ահա ճամբուն վրայ պատնիշապէս քարեր դիզեր են. կարելի է կռնակը քանի մը հոգի պահապան կան. ի՞նչ ընենք, յարձակի՞նք:

— Կա՛ց, ըսաւ Թորոս, լռութիւն. չորս հատ նի-զակաւոր կորովիներէն բեր պատնէշին տակ կենան, ով որ գայ անխնայ զարնեն. առ Կոստանդինն ալ և մենք երեքնիս բաւական ենք սա ժայռերէն շրջան մը ընե-լով անոնց կռնակը անցնելու և վրանին իյնալու. բայց անշշուկ, առանց ձայնի: Եւ ինք մօտենալով Բաբկէնի, Եփիմէն դարձեալ իրեն յանձնեց պատսպարել վա-հանով, որ նետ մը, քար մը, վտանգ չհանէ: Եւ սկը-սաւ իր երկու ընկերներով աղեղնաձեւ շրջան մը ընել անելանելի ժայռերուն վրայէն, որոնց անդունդներուն վտանգը չէր երեւար գիշեր ատեն, բայց կրնար երե-ւակայուիլ շատ ծանր կը շարժէին մեր երեք անձերը, վասնզի երբեմն պէտք կ՚ըլլար ոտք մը՝ ձեռք մը փո-խելու համար հինգ տասը վայրկեան կենալ և խարխա-փել, վերջապէս ճամբուն վրայ ելան. հոն թէպէտ Կոստանդին կ՚ուզէր առաջ անցնիլ. Բայց Թորոս անոր յանդգնութենէն կասկածելով ինք առաջ անցաւ, և երբ մօտեցաւ՝ նշմարեց չորս հոգի որ պատնէշէն քիչ

մը անդին պառկեր էին և անոր վստահացած հանդիստ քուն կ'ըլլային։

Մերկ սուրը ձեռքը՝ Թորոս կանչեց։

— Պահապաննե՛ր, թէ որ շարժիք կը մեռնիք։ Ու երբ մարդիկը քունէ արթնցած ելլելու փորձ մը կ'ընէին․

— Մի՛ շարժիք, ապա թէ ոչ կը մեռնիք որոտաց։

Մարդիկը անշարժ մնացին այս սպառնալիքներուն առջև, և նոյն միջոցին Սարգիս ու Կոստանդին զինաթափ ընելով զիրենք պատնէշը հարթ յատակ կ'ընէին․ և այս գործողութիւնը այնպիսի արագութեամբ կը կատարուէր որ քանի մը վայրկեանի մէջ մարդիկը անզէն և թևերնին կապուած մեր կարաւանին հետ խաղաղ հանդարտ կը քալէին։

Լամբրոնի դղեակը հեռացեր և անհետացեր էր, կարաւանը հասաւ լեռներու գլուխը ծառազարդ խոտաւէտ բարձրավանդակի մը վրայ, հոն Թորոս Սարգիսի հաւանութիւնն առնելով յոգնութիւն մը տուաւ իր խումբին և հրամայեց իր չորս կալանաւորները բերել, և ինչ որ կ'երևակայէր՝ իմացաւ, այսինքն թէ Լամբրոնի իշխանները Սարգսին դրած պահապանները բռնած էին, և իմանալով թէ այնտեղէն պիտի անցնէր Սև լեռնցիներու խումբ մը, վարի ճամբան 45 հոգիով պահպանել որոշած էին, իսկ վերէն, ուսկից չէին յուսար որ համարձակի մարդ հասնիլ, ճամբան խցել և չորս պահապան դնել հրամայած էին։ Պահապաններն ալ անկարելի համարելով այս օդագնաց շրջանը, հանգիստ և ապահով քուն եղած էին։

Ժամու մը չափ յոգնութիւն առնելէ վերջ՝ դարձեալ տաժանելի ուղեգնացութեան ինկան մեր ճամբորդները․ և մէկը չէր համարձակէր գանգատ մը մտքէն անցնել երբ կը տեսնէին Ռուբէնի պայազատը՝ որ անխօս հետևակ առջևէն կ'երթար ու ոչ թէ վըտանգներու մասնակից՝ այլ դիմագրաւ կ'ըլլար։

Այսպէս շարունակելով վերջապէս մօտեցան Կիլիկ-

եան համբաւաւոր կիրճերուն՝ ուր գօրքերու խումբ մը և կիսակործան բերդ մը կար, որ թշնամիներուն յարձակումն արգիլելէ աւելի անցորդներու նեղութիւն տալու պաշտօն կը վարէր։

Թորոս որ իր ճամբան կ'ուզէր վարել խաղաղութեամբ՝ եթէ կարելի է՝ քան թէ անօգուտ կռուելով, Սարգիսը ուղարկեց բերդապահ աւագակին, որ քանի մը ոսկիով իրեն ճամբայ տուաւ առանց նեղելու, ի մեծ դայթակղութիւն Կոստանդնի որ կը զարմանար թէ Թորոս քաջութենէ զուրկ չըլլալով ի՛նչպէս յանձն կ'առնէր այսպիսի բանակցութիւններու մտնել։ Բայց Կոստանդին Փիլիպոսի պատմութիւնը չէր կարդացեր՝ և Թորոս կարդացեր էր։

Վերջապէս լեռներու մէջ հայոց գեղեր սկսան երևիլ, Սարոս գետին վտակներուն վրայ․ խստութեամբ արգիլուեցաւ մեր խմբին Թորոսի ով ըլլալն յայտնել․ մինչև Վահկայ բերդն՝ արծուի բոյն՝ լեռներու մէջ երևցաւ․ Բարկէն արտասուքով կը նայէր այն բարձունքներուն, որոնց պաշտպանութեանը համար այնչափ արեան թափուիլը տեսած էր, քանի անգամ կեանքը վտանգի դրած, և հիմա օտարներու բնակարան եղած էր․․․

Անմիջական վտանգը կարաւանին համար թէպէտ հեռացած կը կարծուէր, բայց պէտք էր որ Թորոս յենակէտ մը ունենար հրատարակուելէն առաջ, ուստի, Կոստանդին, Բարկէն, Սարգիս և վարդապետը խորհուրդի նստան․ Եփրեմէ նաև ներկայ էր։

Նախ որոշուեցաւ որ Բարկէն՝ Եփրեմէն և Դիոնիսը առած՝ անցնէր Ամանոսի հիւսիսային ծայրը ուր էր իր բնակութիւնը, Սարգիս պիտի առնէր իր երիտասարդները՝ որոնք իրենց տունը միշտ պատրաստ պիտի գտնուէին առաջին ձայնին ժողվուելու համար հոն՝ ուր հրաման գայ յանուն Թորոսի։

Կոստանդին պիտի երթար իր քանի մը քաջակո-

ռմիկները ժողվելու և պատրաստ պիտի կենար առաջին փողի ձայնին՝ հոն՝ ուր պիտի գտնուէր Թորոս։

Այս խորհուրդին վրայ Թորոս բերել տուաւ չորս կալանաւորները և հրաման տուաւ իրենց կապերը արձակել և ազատութիւն շնորհել, դարձեալ ի մեծ գայթակղութիւն Կոստանդնի. ու երբ երթալու վրայ էին դարձաւ իրենց՝ ծանր ծանր և որոշ ձայնով աս խօսքերը ուղղեց.

— Դուք որ հայ ազգի զաւակներ էք, մտիկ ըրէք իմ խօսքերս. մտածեցէք որ ձեր եղբայրներուն արիւնը պիտի մտնէիք և անոր համար մահապարտ էիք, և մեղի շատ դիւրին էր ձեզ հաւու պէս մորթել, ձեր հայութիւնն ալ միմիայն պատճառ որ մենք ձեր ազատութեան, ձեր կեանքին խնայեցինք. գացէք ձեր Լամբրոնի տէրերուն բարեւ խօսեցէք, և ըսէք թէ Լեւոնի տղան Թորոսը տեսանք, և ան երդում կ'ընէ յանուն Աստուծոյ ամենակարող և սրտագէտի թէ՝ երբէք մեծութիւն, փառք և իշխանութիւն չպիտի ըլլայ իր գործերուն նպատակը, այլ իր ազգին օգուտն ու երջանկութիւնը, և թէ հայր, եղբայր, զաւակ պիտի համարէ ամէն հայ որ նոյն հոգիով չարժի. իմացա՞ք, հասկցա՞ք ըսածներս, պիտի կարենա՞ք կրկնել։

Իսկ մարդիկը աս խօսքերուն վրայ ապուշ դարձած ելան և իրենց ճամբան գացին, վասնզի ժամանակին սովորութեան համեմատ նոր էր այս վարմունքը, և այս խօսակցութիւնը ո՛չ միայն այս խեղճ զինուորներուն համար՝ այլ թերեւս վարդապետին համար նաև որ Թորոսի քով նստած էր։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՍԵՒ ԼԵՌ

Այս տեսարանը կ'անցնէր Վահկայ բերդին շրջակաները մացառուտ բլուրի մը վրայ. առաւօտը շատ չէր։

— Հապա՛, ամէն մարդ իր ճամբան, ըսաւ Թորոս իր խումբին. ասկից տասն օր չեղած, Աստուծով կը լսենք փողերուն ձայնը, և ամէնքս ալ կը ժողվուինք։

Այս անգամ Եւփիմէ դուհ, յանձն առած էր բաժնուիլ իր ամուսինէն, ուստի, համբուրուելէն վերջ իրեն հետ. դարձեալ անոր օգնութեամբ հեծաւ ջորիին վրայ Դիոնիսի ընկերութեամբ շրջապատեալ Բաբկէնէն և անոր տղաքներէն, չոկուեցաւ դէպի Սեւ Լեռը՝ ուր առջեւնէն քիչ մը հեռուէն կ'երթային Սարգսի խումբը. քանի մը ժամուան ճամբայ հազիւ կը բաժնէր զիրենք իրենց գիւղէն։

Թորոս քիչ մը աչքերով ընկերանալէն վերջը իր հարսին որ գիշերուան ստուերներուն և ծառերուն մէջ ծածկուեցաւ, չուրջը նայեցաւ որ Կոստանդին և Վարդապետը միայն մնացեր էին։

Ուստի Կոստանդնին ալ բարի յաջողում մաղթեց, որ իր քաջերը առաջին ձայնին բերել խոստանալով՝ Վահկայ արեւելեան կողմի ժայռերուն մէջ անհետացաւ։ Երբ երկու հոգի մնացին դարձաւ վարդապետին ու ըսաւ.

— Հիմա, Հայր սուրբ, մեր երկուքին կը մնայ խնդիրը, դուն քու Ասորի Մետրապոլիտդ աւելի ապահով կը համարես և անոր վրայ աւելի վստահութիւն ունիս քան թէ մեր Հայ եկեղեցականներուն վրայ։

— Ո՛վ Իշխան, ըսաւ Վանահայրը, իմ միտքս սըխալ հասկցեր ես. ես մեր եկեղեցականներուն վրայ վստահութիւն չունիմ չըսի, այլ թէ՝ հիմա Հոռոմները մեր վրայ կասկած ունենալով՝ շարունակ խուզարկութեան վրայ են և մեր վանքերն ու անապատները տակն ու վրայ կ՚ընեն, երբ ընդհակառակն Ասորիներուն վանքը օտարին վերաբերելուն համար ամենևին իրենց կասկածի տեղի չտար. դուն՝ քու դիտողութիւններդ ընելու համար հոն հանգիստ առանձնարան մը ունիս, հիմա ծածուկ ճամբաներէ քեզի հոն կ՚առաջնորդեմ և կը տեսնես թէ Ասորի եպիսկոպոսը ինչպէս գոհ պիտի ըլլայ Լևոնի տղան տեսնելուն, վասն զի քու հօրդ և հօրեղբօրդ պաշտպանութեամբ կրցեր է իր վանքը շինել, և ձեր իյնալէն վերջը շատ զրկումներ քաշեր է Հոռոմներէն։

— Երթա՛նք ուրեմն։

Մեր երկու ճամբորդներն սկսան իրենց շահատակութեան ժայռերուն և մացառներուն մէջէն. լուռ ու մունջ կ՚երթային գետ և վտակ երբեմն. զիրենք կը զովացնէր և վերջապէս Ամանոսի ամէնէն բարձր գըլուխները գտան՝ երկու ժամ շարունակ երթալէն վերջ. հոնկից շրջակայ վանքեր, գիւղեր, անառիկ բերդեր իրենց ոտքերուն առջև կ՚երևային՝ իբրև ողորմելի ոչնչութիւններ։

Այսպէս երկու ժամ ալ քալելէն ու քիչ մը իջնելէն վերջ դէպի հարաւ՝ հասան ժայռերու մէջ բերդանման վանք մը, որուն դռները չէին բացուեր վասն զի մեծ խստութեամբ արգիլուած էր առանց մեծաւորին հրամանի դուռը բանալ. ուստի երկայն բանակցութենէ վերջ՝ նախ վարդապետը վեր առին, և քառորդէ մը վերջ դռները բացուեցան նաև Թորոսի։

Տէր Մետրապօլիտը երբ Թորոսը տեսաւ, աչքերը արցունքով լեցուեցան և ձեռքերը երկինք տարածելով փառք կուտար Աստուծոյ՝ որ Թորոսի ամենանման

եղբօրորդի մը յարուցեր էր. փրկութիւն Հայ և Ասորի եկեղեցիներուն, որոնք միայն խաղաղութեամբ կ՚ապրէին և յանուն Քրիստոսի զիրար չէին բզքտեր։

Եւ ինչպէս ծերերու սովորութիւնն է միշտ անցեալին վրայ անսպառ խօսիլ և պատմել, նոյնպէս Մետրապօլիտն Աթանաս՝ կը պատմէր թէ՝ քանի՛ անգամ Վահկայ բերդը գացեր էր Լևոնը և Թորոսը տեսնելու, և թէ անոնք ի՛նչպէս զինքը սիրով ընդունած էին և իր խնդրանքներ կատարած, թէ՛ դրամական օգնութեամբ և թէ պաշտպանութեամբ անհաւատներուն դէմ, Յոյներուն և Լատիններուն։

Բայց վերջապէս մտածելով թէ՝ մեր ճամբորդները տաժանելի ճամբէ մը կուգան, հրամայեց իրենց կերակուր և սենեակ տալ, և այսպէս Թորոս քիչ մը հանգստանալէն վերջ, երբ ծեր եպիսկոպոսին ներկայացաւ՝ ան սկսաւ իրեն հարցնել թէ՝ ի՛նչ էր իր դիտաւորութիւնը և գործերու յատակագիծը։ Թորոս հասկցուց թէ իր յատակագիծը պատրաստելու համար իրեն հիւր եղած էր, և թէ կ՚ուզէր բոլոր շրջակաները պտըտիլ, ամէն տեղ ճանչնալ ու սորվիլ և անկից վերջը գործի սկսիլ։

— Ուստի, ըսաւ Թորոս, ես ձեզմէ քանի մը այծ և հովիւի մը զգեստ կ՚ուզեմ, որ առանց թշնամիին կասկած յարուցանելու կարենամ իմ դիտողութիւններս ընել։

Եպիսկոպոսն ալ այսպէս աժան ազատելուն վրայ ուրախ անմիջապէս ուզածն իրեն շնորհեց, և ահա մեր Թորոսը՝ գլուխը հովիւի գտակ և վերարկու մը վրան ձգած՝ մինակուկ լեռներն ու հովիտները կը պտըտէր, և թէ որ իր այծերը բերդերուն շրջակայ խոտերը և թուփերը կը սիրէին՝ զարմանալի չէր։

Կը մտնէր երբեմն գիւղեր, կը տեսնէր հայ ժողովըրդեան մռնչիւնը՝ ընդդէմ նախատող և հարստահարող յոյն վարձկաններուն, կը լսէր անոնց հայհոյութիւնները ընդդէմ հայ հաւատներուն. կը տեսնէ ի-

րեն ծանօթ հայրենի կալուածները յափշտակող յոյն իշխաններուն գոռոզ ամբարտաւանութիւնը, և այսպէս ութ օր դիտելով, զննելով, Ալեքսանդրիոյ ծոցէն մինչև Ամանոսի հիւսիսային ծայրերը շրջագայեցաւ՝ քայլ առ քայլ գրեթէ նշանելով մտքին մէջ ծառ, թուփ, ժայռ, բլուր, լեռ, բերդ, աւան, գիւղ և աւերակ։

Ամէն տեսակ մարդ, ճամբորդ և աւազակ, կողոպտող և կողոպտուած իր առջևէն կ'անցնէին, ամէն ազգ, հայ, ասորի, յոյն, արաբ և թիւրքմէն իր շուրջը կը պտտէին։ Իսկ անտարբեր հովիւը անխօս և անշշունչ Մաթիանու հովիւին պէս՝ որ իր ժողովրդեան փրկութիւնն կ'երկնէր՝ կը շարունակէր իր ճամբան խորհրդածելով, և այսպէս հասաւ Ամուտա բերդին ստորոտը, իր այծերուն ընթացքը ուղղելով դէպի վեր, դրան հակառակ կողմէն տեսաւ պատուհանի նըման ծակ մը պարիսպին վրայ, որ ժայռին վրայ հաստատուած էր։ Այդ անառիկ բերդին ջուրի ճամբայ մը ըլլալը մակաբերեց յորդ անձրևներու ժամանակ, կամաց մը փորձեց և տեսաւ թէ հանդիստ կրցաւ անցնիլ· թուփերը՝ որ ծակին երկու կողմերը ծածկեր էին, զգուշութեամբ իր գաւազանով բաժնեց և բերդին մէջ շարունակեց իր ելքը, ու երբ երեք չորս մարդաչափ բարձրութեամբ վեր ելաւ՝ հասաւ ծառազարդ գեղեցիկ հողաբլուր մը, և քիչ մը անդին վայելուչ պալատանման բնակարան մը բերդին իշխանին· ծառերու մէջ ծածկուած կը դիտէր տղոց խաղալը, կը լսէր կիներուն և ծառաներուն ձայները, և եթէ խոհեմութիւնն իր բնական առաքինութիւններէն մէկը չըլլար և չգիտնար սանձել իր քաջութիւնը, կրնար միայնակ ամրոցին տիրանալ, բայց անխոհեմ բան մը չընելու համար, նոյն զգուշութեամբ որով մտեր էր ներս, իջաւ փոքրիկ հեղեղատը և առանց թուփերուն վնասելու ելաւ դուրս և շուտ մը իր այծերն ալ հեռացուց հոնկից, ինչպէս ագահ մը իր գանձը թաղած տեղէն ամէն ոտքերու հետքերը կը ջանայ հեռացնել։

Կը մնար իրեն իմանալ թէ՝ ի՞նչ էր անունը, և որո՞ւ կը վերաբերէր այդ բերդը։ Ուստի, աչքը սկսաւ պտտցնել և տեսաւ շրջակայ բլուրի մը ստորոտը քանի մը ցանուցիր տներ և հատ մը՝ ամէնէն հեռաւոր հոն իր փոքրիկ հօտին հետ չոկուեցաւ և զանոնք թուփերուն մէջ ցրուելէն վերջ՝ վայելուչ տղայ մը տեսաւ տասը-տասներկու տարեկան, որ կասկածոտ աչքերով իրեն կը նայէր և պատրաստ էր անհետանալու· պէտք էր տղուն բան մը զրուցել, և Թորոս տղուն անուշ ձայնով մը·

— Ջո՛ւր մը տուր ինծի, տղաս, ըսաւ,

— Հիմա՛, պատասխանեց տղան և ներս վազեց։

Իսկ Թորոս, իբր յոգնած, նստաւ տունէն քիչ մը հեռու, և երբ տղան երևցաւ իր փայտափոր ջուրի ամանով՝ լաւ մը խմելէն վերջը·

— Սիրո՛ւն տղեկ, ըսաւ, Աստուած քեզ օրհնէ, դուն որո՞ւ տղան ես։

— Վարոսենց Բաբկէնին։

— Քու հայրդ նոր հասաւ, այնպէս չէ՞։

— Այո՛, դուն կը ճանչնա՞ս զինքը։

— Իմ շատ բարեկամս է, հիմա ո՞ւր է, նե՞րսն է։

— Այո՛, եթէ կ'ուզես կանչեմ։

— Լա՛ւ, կանչէ որդեակ։

Տղան ներս գնաց· և քիչ մը ետքը Բաբկէնին խիստ դէմքը երևցաւ, որ երբ Թորոսը տեսաւ այդ հովուական հագուստով՝ իր ահագին գաւազանին վրայ կըռթնած՝ ըսաւ·

— Աստուած քեզ օգնական ըլլայ, իշ...

— Բաբկէն հայրիկ, վրայ բերաւ Թորոս, քեզ հետ առանձին խօսիլ կ'ուզէի։

Լա՛ւ, շատ լաւ· Գրիգո՛ր, ըսաւ տղուն՝ որ դրան քով կեցեր կը նայէր, դուն ներս գնա· և երբ տղան հեռացաւ·

— Ի՛նչպէս հոս եկար, իշխանիկս, ըսաւ, ի՞նչպէս իմ տունս գտար։

— Դիպուածով. միայն ինծ զրուցէ, ի՞նչպէս է Եւփիմէ, ի՞նչպէս էք դուք:

— Փառք Աստուծոյ, արժանի չէի, տիրուհին հանգիստ է և ուրախ, ամէնքը ողջ առողջ գտայ, իրա՛ւ, շատ նեղութիւն քաշեր են իմ երթալէս վերջը, իմ Շուշիկս որբերը մեծցուցեր է տառապանքով. բայց տղաքը քանի մեծցեր են՝ հանգստութիւնը եկեր է. գերութեան հանգստութիւն. ինծմէ ալ բոլորովին յոյսերնին կտրեր են, ննջեցեալներուն կարգը անցուցեր են: Բայց դուն, իշխանիկս, ի՞նչ կ'ընես աս հովիւի զգեստներով. չե՞ս մտներ ներս, իմ տունս չե՞ս պատուեր:

— Բարկէն, չեմ ուզեր ճանչցուիլ, դուն ինծ կըրնաս ըսել թէ՝ ի՞նչ է աս բերդը:

— Որո՞ւն է, ո՞վ է հիմակուան տէրը:

— Ամուտայ բերդն է,

— Այս Ամուտա բերդը քու հօրեղբայրդ Թորոս իշխանը Ապլղարիպ Պիրի իշխանին պարգեւ տուաւ, երբ Փռանգները զինքը իր երկրէն զրկեցին յափշտակութիամբ և երբ փախստական՝ անոր ապաւինեցաւ: Հիմա մեր գերութենէն վերջը հռոմ իշխան մը տէր եղեր է բերդին և կը բնակի իր ընտանիքով:

— Ո՞րքան բերդապահ կայ, կրցա՞ր իմանալ:

— Ո՛չ, իշխանս, այդ չհարցուցի: Ե՛կ աս գիշեր մեզ մնացիր, մեր տղաքը կուգան տեղն ի տեղ կ'իմանանք: Թէ որ Տիրուհին իմանայ որ՝ օր մը մինչեւ այս դուռը եկար, երբ ինք ալ այս մեր տնակը կը բնակէր և ներս չմտար, շատ կը տխրի:

— Բարկէն, տղու պէս կը խօսիս, դուն գիտես որ ես նախ մեծ գործը՝ յետոյ ուրիշ ամէն բան դրած եմ. շաբաթ մըն է ճիշդ այսօր՝ որ ես յարկի տակ չեմ պառկեր վախէս, որ հըլլայ թէ յանկարծ ժամանակէն առաջ մատնուիմ...

— Բարկէնի խօսքը վկա՛յ թէ մարդ չիմանար, թէ դուն աս գիշեր հոս անցուցեր ես, տղաքներս մէ-

կու մը խօսք չըրին, քու անունդ անգամ չտուին ան օրէն՝ ուր իրարմէ բաժնուեցանք: Ես եկայ, քանի օր է անէն դուրս չեմ ելած որ յանկարծ համբաւ չտարածուի և հռոմները չարթննան քու գալուդ համար: Գրիգոր միայն առաջին անգամ քեզ ի տուեր է իմ անունս: Տիկին ու Դիոնիս գիշերները միայն դուրս կ'ելնեն օդ շնչելու համար: Ե՛կ իշխանիկս, ուրախացուր Բարկէնի տնակը:

— Լա՛ւ, Բարկէն, քու կամքդ թող կատարուի:

Եւ դռնէն ներս մտաւ. Բարկէնի ցուցուց ձեռքով իր հինգ վեց այծերը որ կ'արածէին. և ան կանչեց Գրիգորը՝ որ քշեց բերաւ այծերը՝ գոմը փակեց:

Բարկէնի տունը թէեւ պալատ մը չէր, բայց բընական դիրքովն ու օդով ախորժելի բնակարան մըն էր բլրակի մը ստորոտը շինուած, մէկ կողմը ահագին խորաձորի մը վրայ կը նայէր՝ ուր կենդանի ջուր մը ժայռերու վրայէն շառաչմամբ կ'իջնէր, բըլրակը և տնակը ծածկուած էին զանազան պտղատու ծառերու ճիւղերուն և տերևներուն մէջ, և որոնց շուքին տակ գետնէն ութը տասը կանգուն բարձրութեամբ տախտակամած մը կար ընդարձակ, պարզ փայտէ նստարաններէ շրջապատուած և վանդակապատ, որ ամառ գիշերներ ննջարանի համար նաև կը ծառայէր այդ տաք երկիրներու մէջ:

Ճիշդ նոյն ժամուն ալ Շուշիկ իր երկու աղջկանց և Եւփիմէի հետ տախտին վրայ ելած նստած էին: Եւփիմէ իր առնացի զգեստները թողած իր սեռինները հագած իրօք թագուհի մը կ'երեւէր, և թագուհիի մը պատիւ կ'ընդունէր այդ լերան բնակիչներէն, որոնց սիրտը իրենց հօրը անկարծելի դարձին համար անպատմելի ուրախութեամբ և շնորհակալութեամբ զեղուն էր, և այդ տիկնոջ համար Թորոսի և իրենց հօրը ազատարարը ըլլալը գիտնալով՝ երախտագէտ ակնածութեամբ և յարգանքով կը մօտենային իրեն իբրեւ գերագոյն էակի մը:

Իսկ Եւփիմէ անոնց գեղեցիկ պարզութեան վրայ կը զարմանար, այդ սեւ՝ լայն՝ նշաձեւ աչքերուն կրակը կը դիտէր, որոնց մէջ թէպէտ լեռնային ազատութեան հոգին կը փայլէր, բայց սքանչելի հլութիւն մը ունէին ծնողական հրամաններուն՝ սեւ ոպնիազէ մազերնուն բարակ և խիտ հիւսքերը ուսերնին բոլոր կը պատէր, և պարզ դունաւոր կտաւէ հագուստ մը անոնց երկայն և ճոխ հասակին միակ զարդարանքն էր։

Երբ Բաբկէն իր հովիւ ընկերը առած տախտին մօտեցաւ, արդէն արեւը քաշուած և մութը սկսած ըլլալով հազիւ թէ կերպարանքները կորոշուէին. ուստի աղջիկները իրենց հայրը տեսնելով ոտք ելան. Եւփիմէ տեսնելով Բաբկէնը որ անծանօթի մը հետ վեր կ'ելլէր անտարբեր նայուածք մը ձգեց և դարձեալ աչքերը ջուրին սահանքին վրայ դարձուց երբ միտքը իր Թորոսին վրայ կը պտըտէր։

Իսկ երբ անծանօթը ձեռքը իր լայն կուրծքին վըրայ դնելով անձայն ողջունեց և եկաւ Եւփիմէի մօտ նստաւ ան ատեն Եւփիմէ զայրագին և դիտող աչքեր դարձնելով այս համարձակութեան վրայ անոր երեսը նայեցաւ և Թորոսը ճանչցաւ. փոխուեցաւ բոլորովին և ուրախութեամբ ցատկեց ու վիզը փաթտուելով։

— Այս ի՞նչ կերպարանք է. կըսէր, այս ինչ փոփոխութիւն։

Իսկ Թորոս կատակելով իրեն կ'ըսէր.

— Պէտք էր մոռնալ ազնուապետական գաղափարները որ Տորոսի ռամկական և ազատ լեռներուն վրայ ազդեցութիւն չունէին և թէ երբ Եւփիմէ անգործնստած էր ինք Թորոս այծ արածելով գիշերները բացօդեայ կ'անցնէր։

— Կատակը մէկդի՛, ինչչափ ժամանակ դեռ աս կեանքը պիտի տեւէ։

— Դեռ մինչեւ վաղն իրիկուն։

— Անկի՛ց վերջը։

— Անկից վերջն զքեզ այս վայրենի լեռներուն Իշխանուհի պիտի հրատարակեմ։

— Իսկ հիմա.

— Կերակուրը պիտի ուտեմ քեզի հետ և պիտի երթամ։

— Գիշերո՞վ։

— Գործի մարդուն համար գիշեր և ցորեկ զանազանութիւն չունին։ Բայց ո՞ւր է Դիոնիս։

— Հոն վարը՝ սա ժայռին վրայ նստած կը խորհըրդածէ ջուրին սահանքը դիտելով։ Հայրի՛կ, հայրի՛կ, եկո՛ւր։

Սեւ շուքը շարժեցաւ, ելաւ և սկսաւ դէպ ի տախտը գալ, և տեսնելով Թորոսը իր ուրախութիւնը յայտնեց ու նստաւ։ Ընտանիքը մէկ կողմէն կ'ամբողջանային, մեծ տղաքն ալ եկան և յարգանօք ողջունեցին Թորոսը և իրենց ծնողքը։

Բաբկէնի ուրախութիւնը մեծ էր. պատուական մարդը չէր կրնար նստիլ վասն զի իր Իշխանիկը իրեն հիւր էր, և որ իրեն ծանր կը թուէր՝ կը տեսնէր թէ ամբողջ գիշեր մը նաեւ իր տունը պիտի չկենար, բայց տղայ տարիքէն սովրած էր իշխաններուն չընդդիմանալ ուստի ալ չի համարձակեցան բառ մը աւելցնել, իսկ Թորոս.

— Բաբկէն հայրիկ, ըսաւ, այս տղաքը Սարգսին տունը գիտե՞ն, կարելի է գինքը հոս բերել տալ հիմայ։

— Հիմա՛, Իշխան, տղա՛ք, մէկերնիդ շուտ մը գացէք ըսէք Սարգսին իմ կողմէս որ հոս գայ։

Տղուն մէկը թռա՛ւ, շուտ մը անհետացաւ, երբ աղջիկները տախտին մէջտեղի կախուած կանթեղը վառեցին և սեղանը կը պատրաստէին՝ կերակուրը չեկած Սարգիս եկաւ, և ամէնքը նստան կերակուրի։ Սեղանին վրայ Թորոսի անսովոր զուարթութիւնը ամէնուն սիրտը ուրախութեամբ լեցուց, և Եւփիմէ քանի մը անգամ կրկնեց թէ անտարակոյս առանց պատճառի չէր իր փեսային այս զուարթութիւնը.

Երբ սեղանէն ելան՝ Բաբկէն ամէնը հեռացուց տախտէն Թորոսի ակնարկութեամբ. Նեփիմէ, Դիւնիս, Բաբկէն և Սարգիս միայն մնացին. հոն Թորոս դարձեալ կրկնեց այն հարցումները:

— Ամուտայ բերդին տէրը ո՞վ է:

— Զենոն անունով յոյն իշխան մըն է, քեռայրը Մամեստիոյ յոյն իշխանին:

— Ինչչա՞փ բերդապահ զինուոր ունի ներսը այդ իշխանը:

— Բսան՝ քսան և հինգ հոգի մը կ՚ըլլնեն ընդամէնը, նոյնչափ մըն ալ ծառաներ կան. թէ որ պէտք ըլլայ կրնա՞ն զինուիլ, և բերդին անառիկ դռները և պատերու ամրութեանը նայելով, բաւական՝ մանաւանդ թէ շատ ալ են:

— Լա՛ւ, ըսաւ Թորոս, վաղը մեր հայու տղաքներէն պատրաստ զինուած քսան հոգի կրնա՞ն ժողվըուիլ անձայն անշշունչ:

— Ես քսան հոգի կրնամ ժողվել:

— Բայց լա՞ւ, ընտրուած և կորովի՞:

— Կոստանդինէն լուր ունի՞ք:

— Կոստանդին այս առաւօտ տղայ մը ղրկեր էր ինծի, քու վրադ լուր կը հարցնէր, և ինծի կ՚իմացընէր թէ յիսունի չափ մարդիկներով պատրաստ էր երեւալու, ե՛րբ և ո՛ր ժամուն իրեն լուր ղրկուէր, կարմիր վանքերուն աւերակները՝ որուն շրջակայքը կը գտնուէր:

— Վաղը ճիշդ կէս օրին դուն հոս գտնուէ քու քսան մարդիկներովդ, բայց ոչ ժամ մը առաջ ոչ ժամ մը ետքը. նոյնպէս Կոստանդնին ալ լուր ղրկէ նոյն ճշդութեամբ Ամուտա բերդին մեծ դրան առջև ճիշդ կէսօրին գտնուիլ, բայց ճիշդ:

— Լա՛ւ,

— Քեզ տեսնեմ Սարգիս, պէտք է ճիշդ ըլլալ:

— Իմ ճշդութեանս վրայ մի կասկածիր, Իշխան, բայց...

— Ի՞նչ,

— Այսինքն, եթէ համարձակութիւն տայիք, այն պիտի ըսէի թէ Ամուտա բերդը վերջի ձգելու բան մըն է:

— Դուն պիտի չերթաս Ամուտա բերդին վրայ և Կոստանդին յարձակում պիտի չընէ. այլ կէս օրին ճիշդ կէսօրին հեռուէն իր խումբով մեծ դրան առջեւ պիտի կանգնի:

Սարգիս այլեւս պատասխան չտուաւ, և Թորոս աւելցուց

— Ուրեմն, քաջդ իմ Սարգիս, գնա՛ և պատրաստուէ՛:

Երբ Սարգիս գնաց, Բաբկէնին դառնալով Թորոս ըսաւ.

— Աւելորդ է քեզի ալ զուրցել թէ՝ պատրաստ ինծի պիտի սպասես հոս՝ քուկիններովդ:

— Յայտնի բան է, պատասխանեց Բաբկէն:

Այն ատեն Թորոս՝

— Մնա՛ք բարեաւ, ըսելով Նեփիմէի և ամէնուն, իր հովիւի գլխարկը և ցուպը առաւ, իր այծերը առջեւ ձգեց և Ասորիներու վանքին ճամբան բռնեց, ուր Հայ Վարդապետը և Ասորի Մետրապոլիտը սկսեր էին կասկածիլ իր ուշանալուն վրայ:

Եւ երբ կէս գիշերը անցած հասաւ, դուռը զարկաւ, երկայն արարողութիւնները կատարելով դուռը բացին և ներս առին զինքն ու այծերը:

ԳԼՈՒԽ ԺԳ,

ԽԱՉԻ ԴՐՕՇԸ

Առաւօտուն, Ասորիներուն վանքին դռները երբ բացուեցան, տասն երկու զինուած մարդիկներ դուրս ելան, և առջևնէն բոլորովին սպառազէն՝ արաբ ձիու մը վրայ հեծած ասպետ մը անոնց կ՚առաջնորդէր. իր երկայն հասակը, իր անվեհեր և խոր նայուածքը մեզի յայտնի կ՚ընեն թէ ո՞վ էր այդ անձը, որուն խաղալիք մըն էր ձիուն իւրաքանչիւր ծածանմունքը, և որ արդէն լեռներուն իբրև իշխան և տէր կը թուէր իր ընթացքին մէջ։

Լուռ և մունջ կ՚ընթանային ետևէն տասն եւ երկու երիտասարդները, այն Սև Լերան խորտուբորտ ճամբաներուն վրայէն, երիտասարդը գրեթէ մոռցած էր թէ իրեն հետևող մարդիկ կային, որոնց ճակտէն քրտինք կը վազէր, բայց ոչ յոգնած կերևէին և ոչ լքուած։

Սակայն երբեմն իրենց քաջալերիչ աչք մը կը նետէր առանց երբէք ընթացքը ընդհատելու, երբեմն նաև առանց արհամարհանքի և մանաւանդ թէ բարեգութ կերպով մը։

— Ո՛վ որ յոգնած է ձեզմէ, տղաք թող տուն դառնայ, կ՚ըսէր։

Բայց ոչ ոք այս յորդորանաց հնազանդելու պատրաստութիւն կը ցուցնէր, և ամէն ոք հաստատ և կորովի իր ճամբան կը շարունակէր։

Երեք ժամ միակերպ այս ընթացքը շարունակելէն վերջ, մեր Ասպետը՝ որ Թորոս ինքն էր, ժայռե-

րու և թուփերու մէջ կեցաւ, ձիէն վար ցատկեց, և յանձնելով զայն տղաքներէն մէկուն,

— Դուք հոս, սա տեղ պէտք է սպասէք, ըսաւ, մինչեւ որ փոքրիկ տասը տասներկու տարեկան տղայ մը ձեզի գայ, և ճերմակ դրօշակ մը ցոյց տայ, հետևեցէք անոր անկասկած։

Այս խօսքերն ընելով սրացաւ և մեծաքայլ իջաւ լեռնէն վար, շտկուեցաւ Բաբկէնին տունը՝ ուր առջի իրիկուն զինք տեսած էինք։ Երբ դռնէն ներս մտաւ ծառերուն տակ 3—3՝ չորս չորս զինուած երիտասարդներ ցրուած էին. ոմանք նստած ոմանք ընկողմանած և երբ զինքը տեսան, ամէնքը ցատկեցին ոտքի ելան, իբրև թէ աներևոյթ զօրութենէ մը ցնցուած։ Ամենևին իր պարզ ձևը առանց փոխելու, մէջերնին կեցաւ, իր կենդանի աչքերը ամէն աչքերու մէյ մը պտըտցուց, Սարգիսը. Բաբկէնը, և Տորոսի ճամբորդութեան ընկերները ամենքը տեսաւ, նաև անոնք որ առաջին անգամ կը նշմարէր։

— Հայու տղա՛ք, Թորոսն եմ ես, Լևոնի որդի, ես բանտէ, շղթաներէ ազատած եկայ ձեր մէջ, բայց ձեզ ալ կը տեսնեմ որ գերութեան մէջ կը հեծէք. մեր հայրերը այդ գերութենէն ազատելու համար իրենց Հայաստանի դաշտերն ու քաղաքները թողուցին եւ այս լեռները եկան, թէ որ գերութիւնը նախատինք էր, օտարութեան մէջ նոյն վիճակին մատնըլուիլ, այդ նախատինքներուն անտանելին է. ես ուրեմն եկայ որ ձեզի հետ այս գերութեան ամօթի և նախատինքի շղթաները կոտրեմ, ո՛վ որ ինծի պէս սրտին մէջ այդ փափաքը կը զգայ և մահուընէ չը վախնար, թո՛ղ ետևէս գայ, լուռ ու մունջ ինծի հետևի և ես ի՛նչ որ ընեմ, նոյնը ընէ։

Ամէնքը կարգաւ շարուեցան և լռութեամբ իրեն կը նայէին։ Բաբկէնին ակնարկ մը ըրաւ Թորոս և կամաց ձայնով քանի մը հրամաններ տալէն վերջը, տեսաւ Եւփիմէն որ տանիքին վրայ կեցած իրեն կը նա-

յէր, գլխով զայն բարեւեց, երբ սկսան սրանալ ամէնքը՝ քսան և հինգի չափ երիտասարդներ իր ետեւէն գացին, ու ինք Ամուսայ ամրոցին անմատչելի կողմը վերելակեց։

Ամառուան տաք օրերն էին և կէս օրուան ժամանակը շատ մօտ էր․ մարդ չի կար դուրսը ամենեւին, ուստի մեր զինուորները մէկուն չի հանդիպեցան, բայց արդէն շատերը գայթակղած էին իրենց զօրավարին յանդուգն ձեռնարկութեան, և տղայական խաղու մը տեղ կը դնէին․ այս ընթացքը գիտէին որ շատ երկայն չի կրնար քշել, բայց տեսնելով Սարգիսը որ անմռունչ և լուրջ հաւատքով Իշխանին կը հետեւէր՝ նոյնը ամէնը միամտաբար կատարեցին, մինչեւ Թորոս իր թուփերուն առջեւ հասաւ, հոն առանց խօսելու սուրին օգնութեամբ թուփերը մէկդի ընելով երբ գետին պառկեցաւ և քիչ քիչ զգուշութեամբ ծակէն ներս մտաւ և անհետացաւ՝ ամէնքը զարմացան մնացին, ահա Սարգիս ալ նոյնպէս և անոր ետեւէն ութը՝ տասը՝ քսան և բոլոր խումբը ներս մտան։

Վերջի մտնողները երբ հասան, ծառաստանին մէջտեղ կեցած էր Թորոս, և անխռով իրեններուն կը սպասէր․ դարձաւ և ըսաւ․

— Տղաք անօգուտ արիւն եղեռն է, ով որ անզէն և անդիմադիր մէկուն զէնք վերցնէ մարդասպան է և վատ, եկէք ուրեմն։

Կէս օրը արդէն քիչ մըն ալ անցեր էր, ուստի երբ յարձակեցաւ Թորոս սպառազէն և իր զինուած մարդիկներով ընթացքը բնակարանին դրան առջեւ լսուեցան, իրենց զէնքերուն փայլը տեսնուեցաւ, վայնասուն և աղաղակ մըն է փրթաւ, պահապաններ և զօրականները զէնքի կը դիմէին․ կիները և տղաքները կուլային, կ՚ողբային և կը ճչեն, դռներ՝ վանդակներ՝ փեղկեր շառաչմամբ կը գոցուէին․ վերջապէս սոսկալի շփոթութիւն մը տիրեց բնակարանին մէջ։

Իսկ Թորոս անխռով, Սարգսին հրաման տուաւ բերդին մեծ դրան վրայ վազել քանի մը ընկերով բանալ և Կոստանդնի զօրքը թէ որ հասած էին՝ ներս առնել, ու բերդէն ողջ մարդ ամենեւին դուրս չը թողուլ։

Իրօք, Սարգիս յաջողեցաւ դուռը գտնել և քանի մը պահապաններն որ հոն կեցեր էին սպաննել և զինաթափ ընել, բայց Կոստանդին չկար, ուստի ինք հոն սպասելու հետ եղաւ, իսկ Թորոս առանց ժամանակ կորսնցնելու յարձակեցաւ բնակարանին դրանը, մէկ երկու զինուոր որ իրեն դէմ կը խիզախէին, իր սոսկալի սուրին հարուածներով գետինը փռեց և շարունակ ահագին ձայնով կը գոչէր թէ՝

— Ո՛վ որ անձնատուր ըլլայ, անոր մահ չկայ․ վա՛յ դէմ դնողին։

Բայց ներսի աղաղակները աւելի կը բարձրանային, ամէն դուռ, ամէն սրահ, ամէն սանդուխ, ամէն պատուհան կռուի տեղ եղած էր, վահան, նիզակ, սուր, կացին ամէն տեղ կը շողար․ հերարձակ և կիսազգեստ կատաղի կիներ՝ պատուհաններէ ձեռուընուն եկածը կը նետէին․ հռոմ իշխանը յանկարծակի վախէն և ընտանիքին վախէն խենթեցած՝ ներքնաբերդին դըրանը նեղ սրահին առջև կանգնած՝ սուր մը և վահան մը ձեռքը յուսահատաբար կը կռուէր, և արդէն քանի մը հոգի Թորոսիններէն՝ այս կատաղութեան զոհ ինկած էին, երբ Թորոս ինք վրայ եկաւ և հրաւիրեց թողուլ զէնքը ու անձնատուր ըլլալ․ ասոր պատասխան՝ Իշխանին սուրը շողաց, որուն ընդդէմ՝ կայծակի պէս Թորոսի սուրը՝ որ թշնամի սուրը թռուց և անզէն հռոմը Թորոսի զինուորները բռնեցին ու կապեցին։

Այս միջոցին ամրոցը կը խուժէին Կոստանդին իրեններով և Բարկէն Ասորիններով, պարտէզը լեցուեցաւ պատերազմողներու բազմութեամբ, զոր երբ տեսան յոյներուն մնացած պահապանները՝ զէնքերը ձը-

գելով անձնատուր կ'ըլլային, կիներուն յուսահատ կատաղութեան լքում յաջորդեց, և Թորոս Բաբկէնի հրամայեց կիներն ու տղաքները սենեակ մը փակել, և զինուորներուն հրամայեց բոլոր ամրութիւնները դըրաւել, դիակները վերցնել, արեան նշանները մաքրել, երբ ամէն բան կարգի մտաւ, Բաբկէնը տեսնըուեցաւ որ իր տղոց մէկուն օգնութեամբ ելած ներքնաբերդին տանիքին վրայ, յունական արծուեկիր դըրօշը վար ձգեր և տեղը Ռուբինեան խաչակիր դրօշը կը հաստատէր։

Բոլոր բազմութիւնը աս տեսնելուն ուրախութեան աղաղակներով օդը կը լեցնէր, որոնց արձագանգը լեռնէ լեռ տարածուելով՝ շրջակայ բնակիչները որոնք կիները և տղաքները այս խաչակիր դրօշակին փոխարէն ուրախութեան աղաղակներով կը խաչակնքէին ու երկինք նայելով Աստուծոյ շնորհակալութեամբ ողջոյն կուտային, ծերերն ու պառաւները կուլային։

Եւ ահա գեղեցիկ տիկին մը բեհեզեայ ոսկեթել զգեստներ հագուած՝ արաբական ձիուն վրայ հեծած Բաբկէնին կինն ու աղջիկները ետեւէն, կը մտնէր բերդին դռնէն ներս․ ամէնքը յարգանօք կը շարուէին իր առջեւ, զէնքերը կը խոնարհէին, և զինք ճանչցող չի ճանցող, երեւակայելով թէ Թորոսին էր ան՝ համակիր աղաղակները կը կրկնէին, երբ ան՝ իբր թագուհի մը իր ժողովուրդը սիրալիր կը բարեւէր, Թորոս զինքը դիմաւորելով ձիէն վար առաւ և հոն ներքնաբերդին դրանը առջեւ ամէնուն՝ որ դիմած էին ամրոցն ի վեր խուժելով՝ նշան ըրաւ թէ խօսիլ կուզէր․

— Ով հայեր, ո՜վ իմ ազգս, Լեւոնի որդին Թորոսն է որ ձեզի կը խօսի, Աստուած ինք բանտին դըռները բացաւ և զիս հոս բերաւ, որպէս զի ձեզի ալ օգնեմ հայկական գերութիւնը և նախատինքը մէկտեղ ջնջեմ, և այդ ազատ լեռներուն վրայ ազատ մարդիկ միայն երեւանք։

Աստուած որ ամէն ձեռնարկութիւն մինչեւ այսօր ինձ յաջողեց, անտարակոյս իմ բոլոր փափաքնե,ս պիտի լեցնէ և այս լեռներուն գլխէն մինչեւ ծով մեզի նոր Հայաստան մը պիտի շնորհէ․ միայն թէ գիտնանք սիրով և միաբան ըլլալ իրարու օգնել, անարգ նախանձ և պզտիկ սիրտ չունենալ․ մեր անձնական շահուն հասարակաց օգուտը նախադասել։

Կինը, որ հոս քովս կը տեսնէք, որ իմ ազատութեանս առաջին գործիքն եղաւ․ այս՝ իմ հօրս սուրը՝ ձեռքս տուաւ, մինչեւ այսօր իմ փախստեանս բոլոր վտանգներուն անբաժան մասնակից եղաւ, ահա ձեզի կը ներկայացնեմ, անոր պատիւը իմ և ձեր պատիւն է, ինչպէս ձեր մայրերուն՝ կիներուն և զաւակներուն պատիւը իմս է․․․

Ուրախութեան և «ապրի»ներու աղաղակներ ու երգումներ իր ձայնը ծածկեցին և բոլոր ժողովուրդը Թորոսը՝ իր քաջութիւնը և իր իմաստութիւնը կը պատմէին և ինչպէս սովորութիւն է շատ մը չափազանցական վրադիրներ դնողներ ալ կը գտնուէին․ իւրաքանչիւրն իր տեղն սկսաւ ցրուիլ, և փողահարները ամէն լերան և բլուրներու գլուխներ կ'ընթանային զէնքի կոչելու Հայ ժողովուրդը, որովհետեւ Թորոս՝ Լեւոնի որդին՝ զիրենք կը հրաւիրէր Ամուտայ բերդին ստորոտը որուն վրայ Հայկական խաչադրօշը կը ծածանէր։

Իսկ երբ ժողովուրդը ցրուեցան գացին, Թորոս զուարթ կերպարանքով՝ պարզ ճակատով բոլոր զօրքերուն առջեւ․

— Բաբկէ՛ն հայրիկ, ըսաւ, այս բերդը՝ որ տէր չունի հիմա, վասն զի Ապլխարիպ չկայ դրացնութեան իրաւունքին համեմատ՝ տէրը դու ես իր բոլոր կալուածներով, մենք որ քու հիւրդ ենք ամէննիս ալ, շատերնիս հեռու տեղերէ եկած, կէս օր անցած ըլլալուն անօթի ծարաւ կը ջարդուինք, մեր այս վիճակին ճար և ճարակ քեզմէ կը սպասենք։

— Տէր և Իշխան մեր, ըսաւ Բարկէն աչքերը լեցունելով և Թորոսի խօսքին մէջ տեսնելով իր այնչափ տարուան հաւատարմութեան վարձատրութիւնը, ինչ որ կայ՝ ամէնն ալ ձերն է, ինչպէս որ գիտէք թէ ես ալ ձերն եմ, եղած եմ և պիտի ըլլամ միշտ, տեսնենք ուրեմն թէ սա Հռոմները մեզի համար ինչ պատրաստեր են և վայելենք:

Մէկէն Բարկէն հրամայեց յոյն իշխանին տնտեսը առջևը բերել և կապանքը քակել, վարձատրութիւն և ազատութիւն խոստացաւ իրեն թէ որ հաւատարմութեամբ ծառայէ և թէ որ իր հիւրերը գոհ ընէ:

Նոյնպէս Շուշիկ տիկին՝ շուտ մը իր տանտիկին սովորութեամբ և աղջիկներուն հետ թևերը սոթտեց և գործին գլուխը անցաւ: Հորթ՝ ոչխար՝ այծ և հաւ կը մորթուէին, կը խորովուէին՝ կրակներու մուխը երկինք կը բարձրանար՝ գինիի կարասներ կը պարպըուէին դաս դաս Հայ զինուորը բերդին գլխէն Կիլիկիոյ դաշտին ընդարձակութեան հանդիսատես այսօր և վաղը տէր, կ'ուտէր կը խմէր՝ կ'երգէր՝ կը զուարճանար:

Իսկ Թորոս միշտ արթուն՝ միշտ անկարելին նաև մտածող, իբրև թէ զուարճութեան համար, բայց գիտելու համար, զինուորին բարոյական և նիւթական վիճակը՝ պահպանութեան կէտերը կ'ելլէր պտըտելու հետն առած Կոստանդին՝ Սարգիս և քանի մը գիւղապետներ, որ կամաւ եկեր խառնուեր էին զօրքերու խումբին հետ և առանց պատերազմի յաղթութեան մասնակից էին, բայց որոնց համար երկրորդ օրը խիստ և յարատև աշխատութիւն կար, երկրին կատարեալ ազատութեան համար, հոն, Թորոս որ իր սրամտութեան և քաջութեան փորձը անոնց քանի մը հատին ցուցուցեր էր քանի մը շաբթուան մէջ՝ միշտ՝ Կոստանդնին հետ խօսելով.

— Լաւ, կ'ըսէր, պէտք է զինուորը ուրախ ըլլայ բայց հոս պէտք էր պահապան դնել, հոս պէտք էր

դէտ մը ունենալ, հոս այս դուռն ամրացնել և այսպէս կը շարունակէր իր այցելութիւնը:

Իրարու երես կը նայէին, և Կոստանդին՝ որ անոր հօրն ու հօրեղբօրը ծառայած և քանի մը օր առաջ ինքնիրեն կը մրմռար երբեմն Թորոսի արարքներուն՝ հիմա ամէն ըսածներուն գլխով և աչքով իրաւացի ըլլալը կը հաստատէր, և այս այցելութենէն վերջը Թորոս դարձաւ հոն ուր իրենց կը սպասէր սեղանը:

— Ո՛վ մեր Իշխան, ըսաւ Կոստանդին, ներէ որ երթամ ձեր արդար դիտողութիւնները գործադրեմ, և ներէ մեր պակասութեանց որ անկարծելի յաղթութեան ուրախ հետևանքն եղան, յաղթութեան որուն բոլոր արժանիքը ձերն է միայն:

— Ոչ ոք միայնակ յաղթութիւն չկրնար տանիլ, պատասխանեց Թորոս, յետին հիւանդապահ զինուորը մասնակից է մեր յաղթութեանց, և մենք եղածը գործողութեանց սկիզբն պիտի համարինք, իշխան Կոստանդին, գնա և շուտով դարձիր, որպէս զի անօթի չմնան:

Սեղանին գլուխը նստած է, Նուփիմէ Թորոսի քով Շուշիկ իր կերակուրի հանդերձանքներուն զբաղած չէր երևար, բայց Բարկէնին աղջիկները իրենց տիրուհիին ետևը նստած անոր կը ծառայէին, նոյն միջոցին և հազիւ թէ նստեր էին՝ մեր Կիպրոսի վանքին վանահայր Վարդապետը ջորիի մը վրայ հեծած՝ կէսօրուան արևի բոլոր ճառագայթներէն այրած և մըրկած կը հասնէր և ուրախութիւնը աւելցաւ երբ տեսաւ թէ ճիշդ ժամանակին և սեղանի մը սկիզբը կը հասնէր:

— Բարի եկա՛ր, Հայր սուրբ, մեր սեղանը օրհնելու, կանչեց Թորոս:

— Ի՛նչ երանելի վիճակ վարդապետի մը համար, կ'ըսէր բազմական մը ծիծաղելով:

— Այո՛, մանաւանդ ան վարդապետին համար՝ որ մեզ արքայաբար հիւրընկալելէն վերջը մեր փախըս-

տական և Թաքթաքուն վիճակին մէջ, մեր նաւուն ղեկավարը նաեւ գիտէր ըլլալ։ Նեղ ժամանակին և իր կեանքը վտանգի մէջ դնել նաեւ Կիլիկիոյ ափափայից վրայ տաժանելի ուղեգնացութեանց մէջ։ Պէտք չէ մոռնալ թէ որովայնապարար և խաբեբայ եկեղեցականներուն քով կան գործունեայ և աշխատասէր եկեղեցականներ ալ որ իրենց ազգը և ժողովուրդը կը սիրեն և գիտեն նաեւ զիրենք անոնց համար զոհել, անոնց սեղանն ալ, պատիւն ալ, աստիճանն ալ...

Դեռ խօսքը չէր լմնցուցեր զինուորներուն խումբը միաձայն Ռուբէնի երգը կ'երգէր. Ռուբէնի անուան տեղը Թորոսինը դնելով։

ԵՐԳ ՌՈՒԲԷՆԻ

Ի դառն հողմոց արտասահման հայրենական մեր երկրէն,
Օտար դաշտեր՝ սև լեռներու պանդուխտ եղանք տարադէմ.
Ջի կար Մովսէս՝ ոչ զօրաւոր և սիւն լուսոյ ուղղեցոյց,
Մեզ զօրավար և սիւն լուսոյ արքայական արմատէն՝
Ընձիւղ պատուոյ՝ յոյս ծագեցաւ քաջն ու արին մեզ Ռուբէն։

Հայկայ տղոց աղեղանց լարք թուլցեր էին և թեւեր,
Վահան՝ սուսէր՝ նիզակ և տէգ անկեալ կային ժանգոտեր.
Հայուն անուն վատթարացեալ՝ էրմէն[1] ոչ ոք կ'անուանէր,
Մինչ մեր անշուք անկեալ փառաց արքայական արմատէն
Ընձիւղ փառաց՝ լոյս ծագեցաւ քաջն և արին մեզ Ռուբէն։

[1] Էրմէն, կը թարգմանուի այր մարդ, արի մարդ։

Մեր այգիներն փուշ բուսուցին, դարձաւ քացախ մեր գինին,
Ուրախութիւն հալածեցաւ, և սուգ տիրեց սրտերին.
Հարսի երգին՝ փեսի ձայնին փոխան բուէր ողբացին,
Մինչ կործանեալ աւերակաց արքունական արմատէն՝
Ընձիւղ դալար՝ յոյս ծագեցաւ քաջն և արին մեզ Ռուբէն։

Մեր այգիներն ոսկի ողկոյզ անուշ գինի կը հոսեն,
Մեր աղջիկներն քաղցր ձայնիւ և քնարիւ գեղգեղեն.
Մեր կտրիճներ ազատութեան զէն և սուսեր ըշկահեն,
Ջի կործանեալ մեր գահոյից արքայական արմատէն՝
Ընձիւղ դալար՝ յոյս ծագեցաւ քաջակորովն մեզ Ռուբէն։

ԳԼՈՒԽ ԺԴ,

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԸ ՍԿՍԻ ԿԱԶՄՈՒԻԼ ԹՈՐՈՍԻ ԵՐԿԻՐԸ

Դեռ արեւը չէր ծագած, Թորոս Ամուտա բերդին իշխանական սենեակները կը հանգչէր իր այնչափ օրուան յոգնութենէն, դեռ ամրոցին դռները չէին բացուած, երբ բիւրաւորներու բազմութիւն մը ծածկեր էր լեռ, բլուր, դաշտ. զէնքերը կը փայլէին, ցիցակիր դրօշներ կը պարզէին եւ մարդկային ձայներ ծովու հեռաւոր ձայնի պէս կը բարձրանար դէպի Ամուտա դղեակը:

Անհամբեր երիտասարդութիւնը «ապրի»ներու, «կեցցէ»ներու աղաղակներով երբեմն կ'որոտար, եւ ժողովուրդը խումբ խումբ նստած ազատութեան եւ ուրախութեան անցեալ օրերուն յիշատակները կը նորոգէր, մինչեւ որ ամրոցին դռները բացուեցան, եւ Թորոս շրջապատեալ իր քաջերէն իջաւ ժողովրդեան քով. հոն քանի մը խօսք ըսելէն վերջը ծեր եւ փորձ զինուորներու եւ գիւղապետներու, հրամայեց որ գիւղ գիւղ իրենց հարիւրապետներն ընտրեն եւ իրեն ներկայացնեն:

Շուտ մը ընտրութիւններն եղան եւ առանց վայրկեան մը կորսնցնելու, այն բոլոր բազմութեամբ յարձակեցան Վահկա հայրենական բերդին վրայ՝ ուր յոյներու փոքրիկ խումբ մը աւազակարար կ'ապրէր Լեւոնի անկումէն ի վեր. որոնք տեսան այն ահագին բազմութիւնը, շփոթած կը նայէին թէ՝ ե՞րբ եւ ի՞նչպէս այն ամքած հայերը կրցեր էին գլուխ վերցնել: Իսկ Թորոս իր դեսպանը արդէն իր հետ բերած էր:

Ամուտա բերդին բերդապահներէն՝ խարդախ, շահասէր, ճոռոմաբան մարդ մը ընտրած էր, որու ոչ

թէ միայն ազատութիւն՝ այլ նաեւ հարստութիւն եւ գանձ խոստացեր էր թէ որ կարենար համոզել բերդակալը՝ բերդը տալու առանց պատերազմի, եւ գաղտնի վարձք ալ խոստանալով կ'աւելցնէր որ եթէ դիմադրութեամբ եւ արիւնահեղութեամբ առնուէր բերդը՝ երդում կ'ընէր իր նախահարց վրայ թէ իրմէ գթութեան պէտք չէր որ սպասէր:

Ուստի յոյն պատգամաւորը երբ գնաց եւ յայտնի ու գաղտնի պատգամները կատարեց, բերդակալը ժողով մը ըրաւ. Ամուտա բերդին սքանչելեօք առումը, վախն ու վարձքը, պաշարի պակասութիւնը, ռամիկներու չհանիլը, պահապանաց թուոյն սակաւութիւնը բաւական պատճառ եղան բերդը յանձնելու Թորոսին: Նոյն իրիկուն բերդին դռները բացուեցան ու բանալիները տրուեցան Թորոսի, որ յաղթանակաւ իր հարցը բուն ժառանգութեան բնակարանը կը մտնէր եւ կը տիրանար. մէկէն պէտք եղած հրամանները տրուեցան նորոգութեան համար որ հոն հաստատուի ինք, եւ ան գիշեր իր բոլոր խումբերը կը բաժնէր ընդ ձեռամբ Բարկէնի, Կոստանդնի եւ Սարգսի զանազան բերդերու վրայ. իսկ ինք ընտրուած երեք հազար մարդ հետը առած, ճամբայ կ'ելլէր ուղղակի Մամեստիոյ վրայ, ուր կայսեր կուսակալը կը նստէր. առաւօտ չեղած իր զօրքերը հոն հասան, ուր իր անուան երկիւղը իրմէ առաջ հասեր է:

Հետն էր նաեւ կալանօք Ամուտա բերդակալ իշխանը՝ փեսայ Մամեստիոյ կուսակալին, զոր կանչեց Թորոս իր առջեւ եւ խոստացաւ իրեն Ամուտա բերդին իր բոլոր ստացուածքը, զաւակները, կինը, ծառաները ամէնն ալ ողջ՝ ամբողջն ալ դարձնել, թէ որ կարենայ համոզել իր խնամին, նոյնպէս կը խոստանար Մամեստիոյ իշխանին ամէն դիւրութիւն, ազատ երթալու իր բոլոր ընտանիքով, միայն թէ խաղաղութեամբ իր ձեռքն յանձնէր քաղաքը:

Իսկ ընդհակառակն եթէ պարտաւորէր պատերազ-

մի սկսիլ, հռոմները պէտք էր որոշ գիտնային թէ առջի թափուած արեան կաթիլին՝ հրաման պիտի ղըրկէր տանել ծախելու Հալէպի Ամիրային՝ կինն ալ, զաւակներն ալ և բոլոր ծառաները՝ որ բերդին կալանաւոր էին: Նա ալ անկից վերջ դաշինքի ու գթութեան չսպասէին իրմէ ու երեք ժամ միջոց տուաւ և ուղարկեց:

Բայց Թորոս ան մարդիկներէն էր՝ որ պարապ ժամանակ անցնել չեն գիտեր. ուստի զօրքերուն երրորդ մասը զէնքի վրայ պատրաստ՝ քաղաքին դրան առջեւ ճակատեցնելով, միւս երկու մասին հրամայեց գոց խրամը փորել. ինք գլուխնուն վերեւ կեցած կը ցուցընէր, և աս գործողութեան հանդիսատես ու մասնակից կ'ընէր բոլոր հռոմ գերիները՝ որ բռնուած՝ բանակը բերուած էին, գաղտնի ապսպրելով իր զօրքերուն, որ եթէ ոմանք մէջերնին քաղաք փախչելու փորձ ընեն՝ թող տան և աչք գոցեն:

Թորոսի բոլոր փափաքը այն էր որ առանց արեան ճապաղիքի և արագութեամբ գործը լմնցնէ, ժամանակ չտայ թշնամին ուշաբերելու, վասնզի գիտէր թէ առաջին արհաւիրքը մարդկանց սրտին վրայ որչափ զօրաւոր է. ուստի իր զօրաց մէջ վերջին աստիճանի գործունէութիւն մը կը տիրէր: Հիւսները բոլոր սանդուխ շինելու զբաղած էին, խումբ մը զինուոր դէտեր՝ Տարսոնի ճամբուն վրայ կը սպասէին թէ որ օգնութիւն գար քաղաքին՝ ժամանակին դիմաւորէին. բոլոր Սեւ լեռը հրաման գացած էր քանի մը օրուան պաշար հասցնելու բանակին. ուստի ժողովուրդը՝ այրերը և կիները՝ ծերերը և տղաքները որ պատերազմի չէին եկած՝ գունդագունդ ունեցածնին կը բերէին, և երեկոյ չեղած բանակը առատութեամբ լեցուեցաւ:

Մամեստիոյ իշխանը ձայն չէր տար, Ամուտա իշխանը չէր երեւար, ուստի Թորոս քաղաքին դիրքը լաւ մը քննելէն վերջ անձամբ՝ բոլոր փախստեան ճամբաները գոցեց, լաստափայտ մը Բիրամոս գետին վրայ

իջեցուց՝ որպէս զի քաղաքին ամէն հաղորդակցութիւն կտրէ: Երբ իրեն լուր տուին թէ գերի հռոմներէն մէկ քանի հատը քաղաք փախչիլ յաջողեր էին, սպասեց և իր յոյսը պարապ չելաւ, վասն զի քաղաքին դռները բացուեցան, և պատգամաւոր մը երեւցաւ որ դաշնադրութեան կ'ուզէր մտնել. Կայսեր կողմէն Թորոսի ներումը Ամուտա բերդը իրեն թողուլ՝ Սեւ լերան բնակիչներուն տարուան մը հարկերուն թողութիւն կը խոստանար, միայն թէ բանը վերցնէր ու երթար, և Իշխանին կինն ու զաւակները դարձնէր: Թորոս այս պատգամները հանդարտութեամբ մտիկ ընելէն վերջ՝ ըսաւ.

— Ամուտա բերդը առնողին շատ աւելի դիւրին է Մամեստիան առնել, միայն կը ցաւիմ, ըսաւ, որ պարապ տեղ արիւն պիտի թափի, բայց արիւնը ձեր իշխանին գլուխը ըլլայ, ես անպարտ եմ, ես իմ հայրենի ժառանգութիւնս եկեր եմ առնելու, իմ իրաւունքս պահանջելու. վայ անոնց որ իրենց վիճակին անգէտ՝ դաշնադրութեան ելած են ինծի հետ. Թէ որ Մամեստիան ալ՝ ինչպէս տարակոյս չունիմ՝ Ամուտա բերդին պէս առնուի. ես չեմ կրնար արգիլել զօրքերուն որ անգթութիւններ չկատարուին: Վասն զի երկայն տարիներու վրէժխնդրութիւնները դիզուած են սրտերու մէջ և կը վախնամ թէ զեղանին: Վաղը արեւուն հետ պատերազմը կը սկսի. գացէք այսպէս ըսէք ձեր տիրոջ:

Ինք մեծ յոյս ունէր թէ երկրորդ առաւօտուն քաղաքը անձնատուր պիտի ըլլայ, վասն զի ժամանակ չէր տուած պաշար ունենալու, վասն զի միայն Յոյներէն բնակուած չէր, այլ բաւական Հայ ժողովուրդ ալ կար որ կրնար խռովութիւն մը հանել, և մէկ մըն ալ որ Ամուտա իշխանը իր դժբաղդութեամբ կրնար մեծ ազդեցութիւն գործադրել Մամեստիոյ կուսակալին վրայ:

Դուրսի հետ ամէն հաղորդակցութիւն արգիլելով

կը յուսար որ վախը աւելի սաստկացնէ։ Պաշարեալները գիշերուան վրայ յոյս ունէին որ կարենան սուրհանդակ մը թռցնել դէպի Տարօն, բայց թէ գետին վրայէն և թէ ցամաքէն թղթատար մը հանելու փորձը անկարելի եղաւ, վասն զի արթուն պահապանները խստիւ ամէն ճամբաները բռնած էին։

Երբ առտու եղաւ, արշալոյսին հետ Թորոս կը սպասէր պատգամաւորի մը որ չէր երեւար, ուստի աղեղնաւորներու և պարսաւորներու ընտիր խումբ մը շարեց պարիսպին ան կողմերը որ յարմար էին սանդուղներ կռթնցնելու, որպէս զի պարիսպին վրայ գտնուողները մէկդի վարեն՝ որ արգելք չըլլան անոնց որ վերելակել պիտի փորձէին, և որոնց գլուխ կանգնիլ որոշած էր մտքէն. իսկ խրամին համար ալ խումբ մը գործաւորներ անխոնջ կ'աշխատէին, երբ քաղաքին դռները բացուեցան և պատգամաւորները երեւցան։

Այս անգամ յունական գոռոզութիւնները եթէ խոնարհած ալ չէր՝ գոնէ տեղի կուտար, Ամուտա իշխանն էր պատգամաւորներու գլուխ, որ կ'իմացնէր թէ Մամեստիոյ կուսակալը յանձն կ'առնէր քաղաքը տալ այն դաշինքները ընդունելով՝ զորս առաջարկած էր Թորոս։

Ուստի, շուտ մը հրաման ղրկեց Թորոս՝ Ամուտա ամրոցը բերելու իշխանին ընտանիքը և ամէն ստացուածքը, նոյնպէս ամէն թոյլտուութիւն ըրաւ կուսակալին որ ահագին կարաւանով մը քիչ ատենէն երեւցաւ իր պահապաններով, իր ընտանիքով և ամէն ինչքերով որ կրնար տանիլ։

Լաւ ընդունելութիւն ըրաւ Թորոս և ամենայն դիւրութիւն տուաւ իրեն, ու մէկէն տիրացաւ քաղաքին, վասն զի ինչպէս իրաւամբ կը կասկածէր իրեն ղրկած լրտեսները քիչ մը վերջը լուր բերին թէ Տարօնի կուսակալը արդէն ճամբայ ելած էր իր բոլոր զօրութեամբ Մամեստիոյ օգնութեան հասնելու

և ամէն տեղ Յոյն և Կայսեր հնազանդ Հայ իշխաններուն հրաման ղրկած էր որ գան Ատանա և գան ժողվուին իրեն քով, ամենեւին չկրնալով երեւակայել թէ գողի պէս մտած կէս ապուշ երիտասարդ մը ինչպէս իրեն կը նկարագրէին Կոստանդնուպոլսէն եկած թուղթերը, բաւական զօրութիւն ժողված ըլլար իրեն դիմադրելու համար։

Կային շատեր նաեւ իր բանակին մէջ որ տեսնելով Մամեստիոյ կուսակալին իր բոլոր հարստութեամբ ազատ երթալը, կը մրմռային, կը հառաչէին և կը մեղադրէին Թորոսը, որ չէր դրժեր խոստմունքին այնպիսի մարդիկներուն, որ դրժանքը և խաբէութիւնը՝ պատիւ և յաջողութիւն կը համարէին։

Բայց Թորոս հաստատ իր խոստման, գուշակելով նաեւ իր շուրջը եղած լռելեայն խորհրդածութիւնները, վասնզի ժամանակին ոգին լաւ կը ճանչնար, կը քարոզէր թէ ինչ վստահութիւն որ ուրիշներուն վրայ կը քամահրեն, պէտք չէր երբէք ի գործ դնեն։

Եւ Մամեստիա մտնելով շուտ մը պէտք եղած ամրութիւնները հրամայեց աւելցնել, և ինչպէս լաւ երեւակայեր էր՝ իմացաւ թէ քաղաքին անձնատուր ըլլալուն գլխաւոր պատճառներուն մէկն ալ քաղաքին մէջի Հայերու խլրտումը եղած էր։ Ուստի, նոյն օրը զօրքերու լաւ հանգիստ մը տալէն՝ երեք օրուան պաշար իւրաքանչիւրին բաժնել տալէն՝ և քաղաքին պաշտպանութիւնը Մամեստիոյ Հայերուն յանձնելէն վերջ, մութն ի լուսուն ճամբայ ելաւ դէպի Ատանա իր երեք հազար հոգիով, որ ամէնէն ընտիրներն էին բոլոր Տորոսի լեռներուն, կը յուսար յանկարծակի հասնելով Տարօնի կուսակալին վրայ, քանի որ նիզակակիցներու օգնութեամբ չէր զօրացած, յաղթութիւն մը կանգնել և իր համբաւը բարձրացնել։

Իր բանակին մէջ հազիւ թէ ձիաւորներու փոքրիկ խումբ մը կար, միացեալ բոլորն ալ հետեւակ էին, բայց այս հետեւակները լեռներու բնակիչ, պը-

զինձէ սրունգներ ունէին, և որ մեծն է՝ կը տեսնէին Ռուբէնի ժառանգը՝ արտաքոյ կարգի էակ մը իրենց աչքերուն, որ սպառազէն վահան ու բոլոր զէնքերը առանձնած ամէնուն առջեւէն կը քալէր հսկայաբար, իբրեւ թէ իրեն համար խաղալիք ըլլային տարաժամ, վտանգ, արեւ, փոշի, ծարաւ եւ անօթութիւն։

Իրօք այդ զարմանալի և զօրաւոր կազմուածքը այդ վսեմ նայուածքը, այդ համառօտ և ազդու խօսքերը, այդ կերուխումի ժուժկալ չափաւորութիւն, ամէնուն պատկառանք, վստահութիւն և հպատակութիւն կ'ազդէին, որ օրէ օր պաշտօնի պիտի դառնար։

Երբ այսպէս լռիկ կ'արշաւէր բանակը և միայն երեք հազար մարդերու ոտքերու տրոփէն զատ ձայն չէր լսուէր, և ծարաւի զինուորները Տարուս գետին հասնելու և իր ծարաւը զովացնելու յոյսով կ'արտօրար, յառաջապահ գունդը՝ որոնց գլուխն էր Թորոս, կանգ առաւ, վասնզի դժբաղդ տեսարան մը զիրենք արգիլեց։

Հայ ջորեպաններու խումբ մը ութ տասը հոգի, մեռեալ և վիրաւոր, ճամբուն վրայ արիւնլուայ ինկած մնացեր էին, հազիւ թէ մէկ երկուքը կեանքի նշաններ ցոյց կուտային. պէտք եղած դարմաններ քիչ մը գինեխառն ջուր տրուելով, քիչ մը զօրացան։

Այն ատեն իմացան թէ Մամեստիոյ իշխանին գունդը այս խեղճերուն հանդիպելով ճամբան վրէժխնդրութեան ոգիով զիրենք զարկեր սպաններ և վիրաւորեր էին և իրենց ցորենաբարձ գրաստներն յափշտակեր էին։

Քանի մը ձիաւոր իջեցնել տուաւ Թորոս, իր և անոնց ձիերը տուաւ թէ՛ վիրաւորները և թէ մեռեալները բեռնաւորելու համար, մինչեւ որ Հայու գիւղ մը հասան, հոն զանոնք յանձնեց գիւղացիներուն որ թաղելիքը թաղեն ու դարմանելիքը դարմանեն, մինչեւ որ Ատանա քաղաքը երեւցաւ ծառաս-

տաններով, այն ատեն ձիաւորներուն խումբին հրամայեց զգուշութեամբ առաջ անցնիլ և քննել թէ՝ արդեօք ո՞ւր էր թշնամին, և ինք գետին եզերքը նստաւ իր բնակարանը, զօրքերը իրենց աղքատիկ պաշարը հանեցին ու կերան, և ինք Թորոս քանի մը ձիթունով ու կտոր մը պանիրով անոնց պէս կը շատանար, և միայն իր ղրկած տեղեկաբեր խումբին կը սպասէր որ որոշ լուր մը առնէ։

Մեծ եղաւ իր ուրախութիւնը՝ երբ լուր բերին իր թեթեւ ձիաւորները թէ Յունաց բանակը Տարսոնի ճամբուն վրայ Ատանայի երկու ժամ մնացած ծառաստաններու տակ կը հանգչէին կէսօրուան արեւուն տաքութեան չենթարկուելու համար։

Անպարիսպ Ատանա մտնել և տիրանալ բան մը չէր, և զարմանալի օգուտ չունէր, բայց Տարսոնցի զօրքին վրայ յանկարծակի հասնիլ ջարդուբուրդ ցիրուցան ընել՝ գեղեցիկ և շահաւէտ գործողութիւն մըն էր. այս էր զինք կը դրդէր, բայց կը մտածէր որ զօրքերը դեռ երկու ժամ պիտի քալէին և հանգչած ու դադրած զօրքերուն հետ պիտի կռուէին, կը վարանէր, ուստի փորձ մը փորձել մտածեց, և զօրքը ժողվելով իրենց հետ այս կերպով սկսաւ խօսիլ.

— Ո՛վ իմ Հայերս, մէկ քանի օրուան մէջ ես ձեր քաջութեան փորձը առի, կը տեսնեմ թէ տոկուն էք աշխատութեան և ձեր զօրավարներուն գիտէք հընազանդիլ որ զինուորի մը ամէնէն մեծ կատարելութիւնն է. բայց այսօր շատ յոգնեցաք և ես հարկաւոր կը տեսնեմ երթալ գտնել մեր թշնամիները և յունաց զօրքին վրայ քալել, ուզողը թող ետեւէս գայ, մնացեալներդ հանգչեցէք և վերջը մեզի հասէք։

Այս կարճ բայց որոշ խօսքերուն վրայ, աղաղակ մը փրթաւ, ամէն ձեռքեր երկնցան և ամէն ոք իրեն հետ մահուան նաեւ երթալ յանձն կ'առնէր։ Ուստի, առանց ժամանակ կորսնցնելու հրամայեց ճամբայ ել-

նել, և ինք կ՚առաջնորդէր տեղեկաբեր հեծելազունդը առջեւէն ձգած։

Այն եռանդով չուտ մը հասան Թշնամիին բանակը որ հազիւ դեռ քունը կը թօթափէր և կը խլրտէր. երբ երեք հազար հոգիի ալալակը օդը թնդացուց և սուրերը ձեռուընին՝ կատաղի խումբ մը այրած՝ մրրկած՝ արեւէն սեւցած՝ սատանաներու պէս անոնց մէջն ինկան և սկսան կոտորել, սոսկալի վայրկեան մը եղաւ ուր անոնց համար վերջին դրեթէ հասած կարծեցին։

Բայց անոնք թիւով կրկինն էին քան Հայերը, ուստի վերջապահ խումբը կրցաւ փաղանգ մը կազմել և փախչողներուն պատսպարան ըլլալ և ժամանակ տալ որ ինքզինքնին գտնեն և խմբուին պատերազմի, այս որ տեսաւ Թորոս քաջակորով խումբ մը իրեն միացուցած ինկաւ սաստկութեամբ աս փաղանգին վրայ որպէս զի կանոնաւորուած նահանջի մը տեղի չտայ։

Երկու կողմէն ալ արիւնը գետի պէս սկսաւ վազել, նիզակներ կը կոտրուէին, վահաններ կը ջախջախուէին, սուրերու բեկորներ կը թռչտէին, մինչեւ որ դեռակազմ փաղանգը ցրուեցաւ և յոյներուն խումբերը ցան ու ցիր սկսան փախչիլ, իրենց կոտորածը շատ աւելի պիտի ըլլար եթէ Հայոց խումբը յոգնած չըլլար, բայց Թորոս դարձեալ չկեցաւ, այլ հեծնելով իր արաբ ձիուն վրայ, իր ան փոքրիկ հեծելազունդը առած, երկու երեք ժամու միջոցին կը ջարդէր՝ կը հալածէր փախստականները։ Եւ թերեւս չէր դադրեր զինք հալածելէն մինչեւ Տարսոնի դռները, եթէ յանկարծ ամպի պէս փոշի մը երկինք բարձրանալով հեռուէն չիմացնէր իրեն թէ հեծելազունդ մեծ խումբ մը օգնութեան կը հասնէր Թշնամիին. աս խումբը որ Լամբրոնի կողմէն կուգար, կ՚իմացնէր Թորոսի թէ որո՞նք էին եկողները, ուստի խոհեմութիւն սեպեց ետ դառնալ, բաւական համարելով եղածը։

Երկու հազարի չափ մարդ կորուսած էր Թշնամին. իրեն կորուստն ալ հինգ հարիւրէն աւելի էր, մեռած և վիրաւոր. մեռելները պատուով թաղել, վիրաւորները այն գիշեր ճամբայ հանել որպէս զի իրենց ընտանեաց քով դարմանուին և ցերեկուան արեւու ճառագայթներէն չնեղուին, իր առաջին գործն եղաւ, նոյնպէս մեռածներու ընտանիքին և վիրաւորներուն աւարին ընտիր մասը նախ բաժին հանեց անոնց՝ որ իրենց արիւնը թափած էին քաջութեամբ պատերազմելով։

Անկից վերջը արդարութեամբ բաժնեց աւարը պատերազմողներուն, իսկ իրեն ամենեւին բան մը չպահելով զարմացուց ամէնքը։ Այն գիշերը Թշնամիին բնակած տեղը անցուցին զինուորները։

Երկրորդ առաւօտուն կանուխ Ատանա քաղաքը պաշարել տուաւ Թորոս և հազար ոսկիի տուրք մը ձգեց քաղաքին վրայ ժամուան մը միջոց թողլով, և երբ պահանջածն առաւ, վերցուց բանակը ու եկաւ Մամեստիա, ուր տեսաւ թէ իրեն կը սպասէին Բաբկէնի հետ Եւփիմէ և Դիանիա։ Ուր փառաւոր յաղթանակի մուտք մը իրեն պատրաստեր էին։

Արդէն իր անունը քանի մը օրուան մէջ բոլոր Կիլիկիա և աւելի հեռու տեղուանք սկսեր էր տարածուիլ ու Լեւոնի որդիին դարձը՝ Հայերուն ուրախութիւն և օտարներուն երկիւղ դառնալ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԱՆԱՐԶԱԲԱՅԻ ԿՈՒՍԱԿԱԼԸ

Սրտաքոյ կարգի վիճակ մըն էր այն ատեն Կիլիկիոյ վիճակը, հայ ժողովուրդ մը Տորոսի լեռներուն մէջ օր ըստ օրէ կ'աւելնար, վասնզի Հայաստան և Փոքր Ասիա այլակրօնները տիրանալով անտանելի կ'ընէին հայուն՝ հայրենական, անձնական և կրօնական ազատութիւնը, հալածանք և գերութիւն իր անմեկին բաժինն էր։

Ժողովուրդը, ինչպէս ասիական ամէն ժողովուրդներ, երբէք չէր երեւակայած այնպիսի ազատ կառավարութիւն մը, ինչպէս որ յոյները և Հռովմայեցիները իրենց պատմութեան մէջ ժամանակին կրցեր էին ունենալ և գործադրել և զոր Հանրապետութիւն անուանած էին ի փառս և ի պատիւ հայրենիքի և մարդկային ազգին։

Մեր եկեղեցական նախնի հայրապետներ հազիւ թէ քրիստոնէական կրօնքի գրքեր ու գաղափարներ թարգմանելու և տարածելու ժամանակ ունեցեր էին, և ազգային պատմութեան մշուշ համառօտութիւնը Մովսէս Խորենացիի շնորհիւ այնքան տկար էր ժողովրդեան մտքին մէջ որ հայ զօրավարներ իրենց զօրքերով քաջալերութեան օրինակի համար, Հրէից պատմութեան դիմելու պարտաւորած էին։

Եւ ի՛նչ զարմանք։ Թէ որ եւրոպական ժողովուրդները ասկից հարիւր յիսուն տարի առաջ հայրենիքի և ազգութեան գաղափար հազիւ թէ ունէին, ասիական ժողովուրդներու համար նոյնը երեւակայել ասկից եօթը հարիւր տարի առաջ, բոլորովին տղայամտութիւն

կրնայ համարուիլ։ Ուստի, Տորոսի վրայ ժողվուած հայուն բազմութիւնը, ինչպէս նաեւ ժամանակակից օտարազգիներն ալ կը վկայեն, երկու կատարելութիւն ունէր. պատերազմական քաջութիւն, քրիստոնէական հաւատք. ամէն մարդ իր հայրենի կրօնին գերին էր։

Իրեն համար ազգային դրօշակ՝ խաչն էր, և իր բոլոր աստուածաբանութիւնը Լուսաւորչի կրօնքը անփոփոխ պահպանելը, ուրիշ նրբամիտ ժողովուրդներու բաժինն էր իրեն համար կրօնական դաւանութիւններու՝ արարողութիւններու և վարդապետութիւններու համար փոփոխութիւններ մտցնել, ինք որ Պարսից, յոյներուն և արաբացիներուն դէմ իր բոլոր զօրութեամբ այն իր կրօնքին պաշտպանութեան համար ամէն բան զոհած էր, աս մասին անդրդուելի էր։

Ուստի հալածանք սելճուքեան՝ հալածանք ամիրապետներուն՝ հալածանք բիւզանդական կայսրերէն, հալածանք նաեւ վրացիներէն, զինք քշեր բերեր էին Տորոսի բարձունքը և հոն կը դիզուէր կը լեցուէր ամպի պէս ժողովուրդը, որ կարելի չէր թէ քիչ քիչ իբրեւ վտակ՝ վերջը իբրեւ գետ և ամէնէն վերջը իբրև հեղեղ չիջնէր և դաշտը չողողէր։

Բայց ժողովուրդը միշտ առաջնորդի պէտք ունէր, ինչպէս ամէն ժողովուրդներ ունեցեր են և պիտի ունենան. հաւասարութիւն՝ որ Սպարտիոյ օրէնսդիրն անգամ չէր երեւակայած՝ անկարելի է, քանի որ բընութիւնը մարդը հաւասար չէ ստեղծած նիւթական և մտաւորական կատարելութիւններով, ուրեմն մեր հայ ժողովուրդը միշտ կը նկատէր երկու տեսակ մարդիկ, որ կրօնական գլուխները, որ զինք միշտ կը յորդորէին Պօղոսի հետ «հնազանդ ըլլալ մարմնաւոր տէրանց» և նախարարական հին սերունդներուն պայազատներուն որ իբրեւ թէ փառքերու ճաճանչ մը գըլխընուն վրայ կը կրէին, յարգանք՝ պատիւ և իշխանութիւնը անձերու աննախանձ և անուրանալի սեպհականութիւնը համարելով։

Ամէն ամրոց՝ բերդ՝ դղեակ, իշխանի մը ստացուածքն էր որ միշտ Արծրունի՝ Բագրատունի՝ Կամսարական՝ Սիւնի՝ Պահլաւունի՝ Մամիկոնեան և ուրիշ ասոնց նման սերունդներու կը վերաբերէին, որոնք ազնուականներուն բնական առաքինութիւններով և թերութիւններով առաջ կամ ետ կ՚երթային, յօգուտ կամ ի վնաս անձերու և հայութեան:

Ասկից նաեւ Ռուբինեաց ժողովրդականութիւնը՝ որոնք հայութեան բուն ներկայացուցիչներն էին իր աչքին, մինչ իբրեւ օտարական կ՚արհամարհէր յունացածներն և լատինացածները, որք սեբաստոսութեան, տուքութեան և այլ ուրիշ տիտղոսներով բիւզանդական կայսրերէն մեծապատիւ կը վարձատրուէին:

Կային նաեւ անոնց մէջ այնպիսիներ՝ որ ոչ միայն իրենց ազգին պաշտպանութիւնը կ՚արհամարհէին, այլ օտարներուն հաճոյ ըլլալու համար իրենց ազգը արհամարհել, և անկից օտարանալն ու զայն հարստահարելը իրենց սովորութիւն ըրած էին:

Երբ Թորոս, յաղթանակով և աւարով, ժողովրդեան ծափահարութեամբ և գովասանական երգերով կը մտնէր Մամեստիա, իր ամուսինը քովն ունենալով, որուն ազնուական գեղեցկութիւնը ժողովրդեան աշխոյժը կ՚ոգեւորէր, հոն իրարու վրայ կը հասնէին իր տեղակալները. Կոստանդին որ Բարձրբերդի տիրեր էր, և Սարգիս որ Առիւծ բերդը առեր էր, և այսպէս իրարու վրայ յաջողութիւններն կրնային ս՚եկցէ գլուխ մը գինեհարել, բայց Թորոսի ուշիմ լրջութիւնը շատ հեռու էր ինքզինքը կորսնցնելէ:

Անոր համար միշտ կը հարցնէր և կը տեղեկանար թէ ո՞ւր էր թշնամիին զօրութիւնը. ի՞նչ դիրք կար՝ ի՞նչ զօրութիւն կար իրեն վնասակար ըլլալու: Քաղաքի մը անուն կար մաքին մէջ, ժառանգութիւն հայրենական՝ ուր իր տղայութեան մէկ մասը ուրախ զըւարթ անցուցեր, բայց կը սպասէր որ ուրիշները ըսեն և յիշեն: Վերջապէս Կոստանդին ըսաւ.

— Թէ որ կ՚ուզէք աս հողը անպիտան և վնասակար խոտերէ մաքրել, պէտք է բոլոր զօրութեամբ Անարզաբայի տիրենք:

— Ո՞վ է անոր կուսակալը:

— Մանաւանդ թէ ըսէք՝ ո՞վ է անոր տէրը, ո՞վ է անոր բռնաւորը:

— Ինքնիշխան ուրեմն հոն կը տիրէ:

— Պապեռոնի տէրը որ յոյներուն հաւատարիմ էր, հօրդ գերութենէն վերջը Անարզաբայի կուսակալ եղաւ, ես Անարզաբացի հայերէն քանի մը հոգի՝ որ ինծի եկեր էին գողալով՝ հոս մէկտեղ բերի, և իրենց վիճակէն ինչ որ պատմեցին, ինծի զզուանք բերաւ. լսեցէք և դատեցէք:

Այս խօսքերն ըսելով, Կոստանդին հրամայեց իր մարդիկներուն որ ներս բերեն Անարզաբացիները: Ցնցոտիներով ծածկուած երեք չորս հոգի մտան չարուեցան սրահին մէջ, անոնց խոնարհ կերպարանքը՝ վիզերնուն կորութիւնը՝ յուսահատ նայուածքը՝ որ շատ հեռի էին իրենց լեռնաբնակ ազգայիններուն խրոխտութենէն՝ յայտնի կը քարոզէին իրենց վիճակին թշուառութիւնը:

— Ի՞նչ կ՚ուզէք, ինչո՞ւ եկեր էք մեզի, հարցուց Թորոս:

— Ո՛վ որդի մեր իշխանին, ըսաւ ծեր քահանայ մը մէջերնէն, տասը տարի է, քանի որ դուք մեզ թողուցիք գացիք, տասը անհատնում տարի եղան որ մենք Անարզաբացիներս խիստ կը չարչարուինք: Թէ որ բռնաւորը պարսիկ ըլլար՝ արաբ ըլլար՝ Յոյն ըլլար, խաչ չունի՝ հաւատք չունի՝ լուսաւորիչ չճանչնար կը ըսէինք կը համբերէինք, բայց այդպէս չէ, այս անիծից ծնունդը ազգով հայ է, անունով Սմբատ է, ցեղով Մամիկոնեան է կ՚ըսէ կը պարծի, Վասակի գործ կը կատարէ, հարկ՝ տուրք կառնէ, մեզ ու մեր տըղաքը անօթի կը մեռցնէ, ինք չկշտանար, մարդ մը ունի որ արդարութեան համար դատաւոր դրած է,

դատաստան ուղղ չի կայ՝ դատ կը հնարէ, սուտ վըկայ կը ստեղծէ որ բանի պատիժի՝ տուգանքի ճար գտնէ, կաշառք առնէ, արիւն թափէ, չար սիրտը զովացնէ, ուրիշ մարդ մըն ալ ունի որ Աստուծոյ պաշտօնեայ, քահանայ, վարդապետ, եպիսկոպոս է կըսեն, բայց մենք պճնասէր՝ արծաթասէր և հեշտասէր տեսանք զինք, այր է կ'ըսեն, կնկան բեհեզներ կը հագնի, սնգուրով ներկուած կը տեսնենք։ Պատուհաս քահանաներուն՝ պատիժ ժողովրդեան բարեկամ օտարներուն և անհաւատներուն։ Մեր գիւղերը քանդուեցան, մեր տուներն աւերակ դարձան ինք պալատներ կը շինէ, պարտէզներ կը շինէ մեր աւերակներուն վրայ, իր ամէն աղաները մէյ մէկ աւազակ՝ մէյ մէկ պատուհաս են գլխունուս վերեւ, մեր տղաքները մեր աղջիկները իրենց ծառայութեան և զուարճութեան համար են ստեղծուած, մեր լեզուն՝ մեր հաւատքը հռոմէն աւելի կը նախատեն, օտարին նախատել կուտան, քաղաքը գիւղ դարձաւ, Միջնաբերդ ապարանքը Բաբելոն՝ Սոդոմ Գոմոր եղաւ։ Ես ալ չեմ խօսիր, մնացածը դուն գնա հասկցիր։ Մենք հօս եկանք թէ որ դուն ճար ճարակ չընես, մենք մեր տուները չենք կրնար դառնալ, մեր զաւակներուն կեանքը ո՛վ գիտէ, հիմա ի՞նչ վտանգի մէջ է, վասն զի երկիրը լրտեսներով լեցուն է։ Մենք անգամ մը Տարսոնի կուսակալին բողոքեցինք. անոնք որ Տարսոն գացին՝ չգիտենք թէ ո՞ղջ են թէ մեռած, բանտ մտան մէկ մըն ալ չելան, կիներնին, զաւակներնին Հալէպի մէջ ծախուեցան, ա՛յն գիտենք։

Քահանան լռեց, տխուր լռութիւն մը տիրեց ամէնուն. ամէն աչք Թորոսին կը նայէր, և ոչ ոք հարցումներ ընել չէր համարձակեր, մինչեւ որ Թորոս.

— Տէ՛ր հայր, ըսաւ, թէ որ տխուր մտածութիւն մը եկաւ մեզ ամէնուս՝ սա ձեր պատմածներուն վրայ, մի՛ կարծէք թէ դժկամակութիւն մը ունինք ձեզի օգնելու, կամ աշխատութենէ կը փախ-

չինք անոր համար, ո՛չ երբէք, մենք ըսածներուդ վրայ տխրեցանք, որովհետեւ սա ձեր իշխանը Հայ է, որովհետեւ դուք ալ իրեն կրօնակից և ազգակից եղբայրներն էք, և մենք ձեր փրկութեան համար պիտի պարտաւորինք Հայերու հետ պատերազմիլ՝ Հայու արիւն թափել, զոր մեծ մեղք կը համարենք։ Բայց քեզի բան մը պիտի հարցնեմ. չէ՞ք ճանչնար մէկը՝ որու խօսքը անցնի այդ ձեր իշխանին առջեւ։

— Մարդու խօսք ազդեցութիւն ընէ՛, հրեշտակ ամենակալին գալ մտիկ չըներ։ Այդ իր եպիսկոպոսին անարգանքներուն և վատութեան վարմունքը կաթողիկոսին ականջը գացեր հասեր էր, չենք գիտեր ինչ կերպով, ան ալ իշխանին օրհնութեան թուղթ գրած, Եպիսկոպոսը ուղուած էր Ծովք կաթողիկոսարանէն որ խրատէ. քաղաքն ու գղեակ տակն ու վրայ ելան, կաթողիկոսի յիշատակութիւնն արգիլուեցաւ պատարագի մէջ, և քահանայ մը՝ որ կամ անգիտութեամբ հրամանին կամ գիտութեամբ յիշած էր Սրբազանին անունը՝ այնչափ ծեծ կերաւ և այնչափ ամիս բանտը կեցաւ, որ ելնելէն վերջը հազիւ երեք ամիս ապրեցաւ։

— Լա՛ւ, ըսաւ Թորոս, մենք իրեն քաղցրութեամբ արդարութիւն կ'ուղարկենք, և թէ որ իր ընթացքը չփոխէ այն ատեն միայն խօսքով չենք շատանար, և պէտք եղածը կը գործադրենք։

Մարդիկը դուրս ելան, բայց հօն վարը դրան քով մնացին, և յայտնի կը զրուցէին թէ իրենց իշխանին խրատ, ազդարարութիւն ոչինչ օգուտ չէր ըներ, սուրը միմիայն մէկ հատիկ դարման էր։

— Բայց ան ալ, կ'ըսէին ի՞նչ օգուտ ունի Անարզաբայի պարիսպներուն. իշխանը լսելուն Մամեստիոյ առնուիլը, թող հօս մեր վրայ գային տեսնէինք ո՛վ որի անձնատուր կ'ըլլար, կը կանչուըռտէր, Աստուած ինք մեզի ողորմի։

Նոյն միջոցին երիտասարդ մը ելաւ պատգամա-

ւոր, որ մէկէն ձի հեծաւ և Անարզաբայի ճամբան բռնեց սրընթաց. հրաման ունէր նոյն իրիկունը դառնալու։

Ուստի, տղան կ'երթար անդադար կրակի պէս, ոչ աջ և ոչ ահեակ նայելով, և երեք ժամ հազիւ թէ եղած կ'իջնէր Անարզաբա միջնաբերդին դրան առջեւ, իմացնելով թէ պատգամաւոր էր Ռուբինեանց Թորոսի Լեւոնի որդին, իշխանին Վահկայ, Մամեստիոյ, Առիւծու, Ամուտայի, Բարձր բերդի, Սիմակլայի։

Թէպէտ երիտասարդը անհամբեր կը սպասէր, բայց Սմբատ իշխանը կամաւ քամահրելու համար Թորոսը՝ անոր սպասել կուտար։ Բայց Թորոս գուշակութեան ոգին ունէր, ուստի թէպէտ երիտասարդ մը ընտրած էր իրեն պատգամաւոր. բայց լաւ քններ էր զայն, և առանձին խրատեր էր, թէ ինչպէ՞ս պիտի վարուի։

Ուստի տղան թէպէտ անհամբեր՝ բայց նոյն միջոցին իր Իշխանին պատմութիւնը կ'ընէր բերդապահներուն թէ ինչպէս հինգ վեց օրուան մէջ անառիկ բերդերը առիկ ընելու սքանչելի զօրութիւն մը կար իր քով, թէ ինչպէ՛ս անշահասէր և առատաձեռն էր, և թէ ինչչափ որ խիստ էր պատերազմի մէջ՝ նոյնչափ ալ գթած էր խաղաղութեան մէջ, և նայելով Անարզաբայի միջնաբերդին ամրութիւններուն՝ կը բաղդատէր Ամուտա՝ Վահկա բերդերուն հետ և ոչինչ կը գտնէր անոնց քով զայս. և այնպիսի վստահութիւն և զուարթութիւն կար իր խօսակցութեան մէջ՝ որ պահապաններուն աներկիւղները կասկած մը սկսան յղանալ։

Վերջապէս, ժամէն աւելի սպասցնելէն վերջ՝ հրաման ըրաւ Իշխանը պատգամաւորը բերելու։

Հովանոցի մը մէջ՝ բազմոցներու վրայ ընկողմանած էր Սմբատ. ծաղկազարդ մարմարէ աւազան մը իր ցնցուղով կը զովացնէր օդը, զինուած ծառաներ առջեւը բարեւ կեցած էին անշշունչ, ինք դաժան կերպարանքով երիտասարդին.

— Ո՞վ ես, ո՞ւրկից կուգաս։

— Մամեստիոյ իշխան Թորոս՝ որդի Լեւոնի, գիս ձեզի պատգամաւոր կ'ուղարկէ։

— Ի՞նչ կ'ուզէ ինձմէ, ի՞նչ յարաբերութիւն կայ իմ և ապստամբ փախստականի մը մէջ։

— Ձեր այն փախստական և ապստամբ ըսածը, աս օր, տասներկու հազար պատերազմողի հրամանատար է, և այս օր շաբաթ մը չկայ վեց ամրութիւններու տէր է, դեռ երէկ Տարսոնի կուսակալին բանակը ջարդ ու բուրդ հանեց և ցիրուցան ըրաւ, Ատանա քաղաքը հարկի դրաւ, և վաղը իր ձայնին երեսուն հազար հոգի պատրաստ են դիմելու. կարծեմ թէ շատ հաւատարիմ հպատակներ այս ապստամբին հաւասարիլ երջանկութիւն պիտի համարեն։

Արդէն դաժան իշխանին աչքերը կրակով լեցուեցան և իր դիրքը փոխելով ու շտկուելով.

— Անզգա՛մ, որոտաց, որովհետեւ գիտես թէ պատգամաբեր ես, անոր համար կը համարձակիս իմ առջեւս այդպէս խօսելու, բայց միտքդ դիր թէ ես անոնցմէ եմ ՝ որ ուշ կամ կանուխ գիտեն վրէժ հանել։ Ի՞նչ կուզէ ինձմէ քու տէրդ։

— Իմ տէրս, Թորոս իշխանը, Լեւոնի որդին, Անազարբա քաղաքին օրինաւոր ժառանգը, ըսաւ երիտասարդը, միշտ հանդարտ և անխռով չի կրնար անտարբեր մնալ այս քաղաքիս և իր շրջակայ գիւղերուն բնակչաց աղերսներուն ու պաղատանքներուն, ուստի անոր համար գիս ձեզի կ'ուղարկէ, որ ձեր գործակալներուն խիստ և անլուր վարմունքը՝ որ անշուշտ ձեր անգիտութեամբ կը գործուի՝ չափաւորէք և արգիլէք, բարի դրացիութիւնն՝ որ հայ իշխաններուն կը վայլէ՝ չաւրուի և հայ արիւն պարապ տեղ չվազէ։

— Ի՛նչ, քու Իշխանդ օրինաւոր ժառա՞նգ է այս բերդաքաղաքիս... ի՛նչ, քու փախստական աւազակդ ինձ հետ բարի դրացիութի՞ւն կուզէ պահել... իմ գործակալներուս անգթութիւնը և խստութիւնը կու-

զէ չափաւորել... ո՜հ, յիրաւի աս անտանելի է... կորիր առջեւէս թէ որ չես ուզեր հիմա հոս շան սատակ լինալ և գնա ըսէ տիրոջդ թէ աւազակ մըն է իր հօրը և հօրեղբօրը պէս, և թէ շատ չտեւէր՝ ուսկից որ գողի պէս եկաւ՝ հոն պիտի դառնայ և կախաղանն իրեն կը սպասէ· Դէ՛ ելիր ու կորիր։

Երիտասարդը այս խօսքերը դարձեալ անխռով մըտիկ ընելէն վերջ, առանց պատասխան տալու և առանց երկիւղի նշան մը ցուցնելու իշխանին կատաղի և թունաւոր նայուածքներէն, գլխով բարեւ մը տըւաւ; իջաւ դուռը՝ հեծաւ իր ձիուն վրայ և նոյնպէս սրարշաւ անհետացաւ, ու երբ հասաւ Մամեստիա արդէն մութը տարածուած էր քաղաքին վրայ։

Բայց ամէն Հայու տուն ուրախութեան երգերու և նուագարանաց ձայներ կը լսուէին, զինուորները եկեղեցիներուն բակերն ու գաւիթները և հրապարակները կը լեցնէին· լեռնցի հայ ու դաշտեցին իրարու հետ կը պագտուէին, Աստուծոյ այցելութեան հասնիլը կը պատմէին, երբ անդին Յոյներուն թաղերն ու տուները լռին տխրութիւն կը թագաւորէր, և հազիւ թէ դիպուածական անցորդ մը միայնութիւնը կ'ընդհատէր։

Բայց մենք դառնանք Անարզաբա՝ ուր տեսարանը բոլորովին տարբեր էր, հոն Միջնաբերդին մէջ Սըմբատ իշխանը կատղած կը պտըտէր, մրմռալով և հայհոյելով, բայց ամէն բան վերջ մը ունի, ուստի այս կատաղութիւնն ալ երկար չտեւեց, վասնզի երբ յիսուն տարիքին կը հասնի մարդ և կանցնի կամայ ակամայ խոհեմութիւն մը կը սկսի՝ կատարեալ կամ անկատար· ուստի թէպէտ բնաւորութեամբ դեգ, կամակոր և ժանտ, բայց վերջապէս սկսաւ մտածել լըսածներուն վրայ։

Եւ դժբաղդաբար դիւրագրգիռ ըլլալուն չէր կըրցեր հանդարտիկ մտիկ ընել պատգամաւորին ըսածները, ուստի թէպէտ գիտէր Ամուտայի և Մամեստիոյ

առումը, բայց «Տարսոնի կուսակալին զօրաց ջարդ ու բուդ և ցան ու ցիր» բառերը դեռ իր ականջին կը հնչէին, արդեօք իրա՞ւ էր, թէ զինքը վախցնելու համար շինծու խօսք մը· տե՛ս դժբաղդութիւնն ալ, որ ուրիշներու հարցնել տեղեկանալու համար ալ կ'ամչնար, ուստի, վեր վար պտտելով կ'անցընէր ժամանակը։

Ահա՛ ուրիշ դժբաղդութիւն մըն ալ որ երբ այն յուզուած վիճակին մէջ կը գտնուէր, հազիւ քանի մը հոգի միայն կային որ կարենային համարձակիլ քովը մօտենալ և հետը խօսակցիլ, և անոնց երկուքն ալ նոյն միջոցին ձիերով ժուռ գալու ելած էին միատեղ այսինքն Եպիսկոպոսը և իր կինը՝ որու՝ ամէնքը Սըրբազան անունը կուտային։

Ուստի մեր Սմբատ իշխանը իր բարկութեան և հանդարտութեան սահմանակէտը հասած՝ ուժով ուժով իր պիսակ մօրուքը կը խառնէր· բարեբաղդաբար այս իր տանջանքէն ազատելու համար վրայ հասան Տիկինը և երիտասարդ Եպիսկոպոսը։

Դիտելու արժանի էր այս երկու անձանց մուտքը և այս մուտքը՝ խոստովանութիւն մըն էր դիտող աչքի մը, մանաւանդ թէ ամէն աչքերու՝ որ նայիլ գիտեն, և միայն էրիկներու աչքերը տեսնել չեն գիտեր։ Կինը որ արդէն քառասուն և քիչ մըն ալ աւելի տարիք ունէր, համարձակ և զուարթ կերպ՝ ձայնը ուժով քիչ մը կերկեր՝ նայուածքը հաստատուն՝ քալուածքը վսեմ գրեթէ խրոխտ՝ երեսը սնգուրած՝ արտեւանունքները ներկուած՝ ձեռքը խարազան՝ մատեր մատնի, երբ իր էրկան և տիրոջ մէկ նայուածքով ճակատը տեսաւ, իբր քաջ նաւապետ ճանչցաւ թէ փոթորիկ մը անցեր է հոնկից, բայց խնդիրը պէտք էր իմանալ, ուստի զօրաւոր ձայնով մը՝ որ պարագան աւելի կը զօրացնէր՝ ըսաւ·

— Այս ինչ է, տխուր ենք, տէր իմ, ի՞նչ· մտածելու նի՞ւթ մը· կիրք ելլելու առի՞թ մը ունեցանք դարձեալ։

— Ոչինչ, պատասխանեց Իշխանը իր յօնքերը խոժոռ իջեցնելով։

Այս «ոչինչ»ը, յօնքերու խոժոռ խոնարհումը, մեր երկու ամոլներուն ահ ու դող պատճառեցին, և փայլակի պէս ակնարկ մը իրարու նետելէն վերջ, ակնարկ մը՝ ուր խղճի խայթը՝ ոճիրը յայտնութեան երկիւղը՝ հետեւանքը՝ ամէնքը կը պարունակէր, Տիկինը դարձեալ խօսքը առաւ անհամբեր ձեւով մը.

— Թէ որ մարդ իր կնոջ և բարեկամներուն ալ իր սրտնեղութեան պատճառները ծածկէ, սուտ են ուրեմն ընտանութիւն՝ բարեկամութիւն և վստահութիւն։

— Քիչ մը առաջ հոս ըլլայիք կրնայիք տեսնել ապըստամբին որդիին ինծի ըրած պատգամաւորութիւնը և դուք ալ անձամբ կրնայիք դատել թէ իրաւունք ունի՞մ բարկանալու։

Այս յայտնութիւնը մեր երկու սիրասուն անձանց մեծ շունչ մը առնել տուաւ, և գոհութեան ակնարկ մը այս անգամ յաջորդեց, և ալ խօսելու կարգը Սըրբազանին էր որ մինչեւ հիմա երկիւղալի լռութիւն մը կը պահէր, բայց ալ երկիւղը փարատելով, երեսին վստահութիւն եկաւ, թէպէտ շատ դժուարին ըլլար շպարեալ երեսի մը վրայ բարոյական կիրքերը նշմարել։

Եւ իրօք, այս անձը որ ճանչցանք քիչ մը վերը, երբ Մամեստիայի մէջ մեր խեղճուկ տէրտէրը շատ խիստ կը նկարագրէր Թորոսի և իր խորհրդականներուն առջեւ. գրեթէ երեսուն և հինգ տարեկան երիտասարդ մըն էր, միջահասակ՝ համեմատ և վայելուչ կերպարանքով, որու շնորհիւ, և հետեւաբար շնորհիւը մեր Մամիկոնեան Տիկնոջ (և այս երկու շնորհքներուն մէջ յայտնի է թէ երկնային շնորհք ամենեւին միջամտութիւն չընելով) քիչ ժամանակի մէջ Եպիսկոպոսութեան աստիճանի արժանի եղաւ։

Բնականաբար այսպիսի երկնային սուրբ մը՝ այ-

սինքն դէմք, վայելչութիւն. որ իրեն յառաջդիմութեան այնչափ օգներ էր, մեծ խնամքով կը տածէր և օրուան քանի մը վայրկեանները անոր զոհել իրաւունք կը համարէր։ Ինչ գործիք որ մարդկութիւնը գտեր էր գեղեցկացնելու, ածելի՝ խլիչ՝ վրձին՝ զանազան հեղուկներ և փոշիներ Բիւզանդիոն իրեն կը մատակարարէր։

Աւելցնենք ասոնց վրայ քնքուշ և չինծու ձայն, նազելի՝ գրեթէ իգական քալուածք մը, մատնիներով զարդարուած ձեռքեր՝ որոնց ճերմակութիւնը պահելու համար՝ Սրբազանը փոքրիկ բազկատարածութիւն մը հնարած էր որ արմուկներէն կը սկսէր. մարդը կատարեալ կունենանք, եթէ յիշենք որ իր հասարակ սերունդէն դժգոհ՝ նախարարական տոհմերու կը դիմէր ազնուական ճիւղագրութիւններ հնարելով։ Ուստի, տղու ձայնով և գլխու կոտրտուող շարժմունքով սկսաւ խօսիլ.

— Մեծազօր Իշխան, Ձեր տէրութիւնը այս ամուր բերդաքաղաքին մէջ ոչ միայն ապստամբի որդի մը արհամարհելու, այլ նաեւ զօրաւոր ինքնակալութեան մը զօրութեան դէմ խիզախելու իրաւունք ունի։

— Այո՛, Սրբազան, պատասխանեց Իշխանը, բայց թէ որ իրաւ է պատգամաւորին մեծաբանութիւնը, այս տղան շաբթուան մը մէջ այնչափ առաջ անցեր դացեր է՝ որ իր հայրն ու հօրեղբայրը տարիներու մէջ մտքերնէն չանցուցին երթալ. Տասը տասներկու հազար հոգիի բանակ կազմել... Տարսոնի դուքսին բանակը խորտակել ցիր ու ցան ընել... և մեզի ալ ազդարարական պատգամ ղրկել որ մեր ժողովուրդը քաղցրութեամբ կառավարենք...

— Ի՞նչ, ըսաւ Տիկինը վեր ցատկելով վիրաւորուած վագրի մը պէս. այս միայն կը պակսէր, այս երէկուան սրիկան մեզի հրաման ղրկելու ելեր է, շատ բան, իրե՞ն էր մնացեր։

— Բայց հոս խնդիրը, ըսաւ Սրբազանը խորհրդա-

ծելով, երկու կէտ ունի ստուգութեան արժանի. ճշմարի՞տ է որ կրցեր է տասներկու հազար հոգի ժողվել, ճշմարի՞տ է որ խորտակեր է Տարսոնի դուքսին բանակը։

— Տեսնենք մեր տղաքը բանի մը տեղեկութիւն ունի՞ն, ըսաւ Իշխանը՝ որ կուզէր անհոգ և արհամարհոտ ձեւին տակ իր սրտին մեծ տանջանքը հանդարտեցնել։ Տղա՛ք, Վասիլին ձայն տուէ՛ք։

Լռութիւն մը յաջորդեց այս մեր երեք ժողովըրդականներուն մէջ. ուր Տիկինը շատ յուզուած ինքզինքն կը ցուցնէր քան թէ ինչ որ էր և ուր Սրբազանը իր իգական փափուկ շարժմունքներուն մէջ գոհութեան ժպիտներ կ'արձակէր ներս, վասն զի ներկայ վտանգը անցեր և հեռաւոր ու կասկածելի ապագայի մը վրայ էր խնդիրը։

Երբոր Վասիլ երեւցաւ իր տխուր և կատուի աչքերով (այս անարգ անձը Իշխանին երեւելի լրտեսն էր, իր տանը ընդհանուր գործակալն էր, և առաջին գողը ու մեր երկու հրեշտակային անձերուն կցորդակից միանգամայն), Իշխանը ըսաւ.

— Վասիլ, դու ի՞նչ կը լսես ապստամբին համար, իրա՞ւ է որ Մամեստիայէ զատ քանի մը բերդերու ալ տիրեր է։

— Տէր իմ, լսածիս թէ որ հաւատալ պէտք ըլլայ, այս հրջականները Անարզաբայէ զատ ամէն տեղի տէր եղեր է, բոլոր Տորոսի ժողովուրդը զէնք առած գունդագունդ կը վազեն իր դրօշակին տակ մտնելու համար, կը պատմեն նաեւ թէ Տարսոնի Դուքսը արտորնօք զօրքը առած Մամեստիոյ վրայ գալու ատեն, ապստամբը զինքը դիմաւորեր մեծ յաղթութիւն մը ըրեր է, այս վերջինը ստուգութեան արժանի։

— Լաւ իմացայ, Վասիլ, ըսաւ Իշխանը, և գործակալը կրցածին չափ պզտիկնալով և ետ ետ քաշուելով անհետ եղաւ։

— Ի՞նչպէս, Սրբազան, լսեցի՞ք հիմա։

— Զարմանք։ Բայց Վասիլ ալ կ'ըսէր թէ ստուգութեան կարօտ է այս վերջի լուրը։

— Պարապ տեղ կ'այլայլիք, ըսաւ Տիկինը քաջասրտութեամբ, անոր հօրն համար ալ կ'ըսէին՝ մեծ մեծ կը ջարդէին՝ երբ ես նոր հարս էի, դեռ տղայ էի, ետքը Կայսրը եկաւ, հայրն ալ՝ մայրն ալ՝ տղաքն ալ ամէնն ալ կապեց առաւ Պօլիս տարաւ, երկիրն ալ խաղաղեցաւ։

Տիկնոջ ամէն ըսածը չիտակ էր, բացի իր տարիքէն վասն զի այն ժամանակներն ալ երեսուն տարու և աւելի կար և արդէն տասներկու տարեկան տղու մը տէր էր։

Իսկ Սմբատ, որ թէպէտ Մամիկոնեան ալ ըլլար, փոքրոգի մէկն էր, յաջողութեան մէջ մեծամիտ. հիմա աւելի կը մտածէր մերձակայ վտանգին վրայ՝ քան թէ իր Տիկնոջ տարիքին սխալը շտկելու, կերակուրի նստեցաւ՝ ախորժակ չունէր, անկողին մտաւ՝ քուն չունէր, և երբ վերջապէս շատ դժուարաւ քունը տարաւ անհանգիստ երազներ որոնց մէջ Թորոս մեծ դեր կը խաղար զինքը անհանգիստ ըրին։

ԳԼՈՒԽ ԺԶ

ՄԱՐԳՐԻՏ

Երբ միջնաբերդին վերնագաւառները զանազան կիրքեր կը յուզուէին, վարը՝ պահապան խումբը նըստած կը խորհրդածէին պատգամաւոր երիտասարդին տուած լուրերուն վրայ:

— Տղա՛յ, կըսէր տարեց կորովի քառակուսի մարդ մը՝ որուն աչքերը կը փայլէին իր արեւէն թխացած դէմքին վրայ, ի՞նչ, խելառ ես, ի՞նչ ես, թող գայ ըսելը դիւրին բան է . . . «Ապստամբ, ապստամբ» կ'ըսեն կ'երթան, անոր հայրն ալ ապստամբ էր, բայց Տաճիկն ալ, Փռանգն ալ, Հոռոմն ալ անոնց անունէն կը դողային:

«Այս մեր բոլոր իշխաններն անոնց առջեւ բարեւ կը կենային, երբ հրամայէր՝ կը նստէին, նեղը որ մտնէին՝ անոնց ծոցը կ'իյնային, մէկը որ անիրաւութիւն ընէր՝ անոնցմէ կ'ակնածէր: Հոռոմը՝ որ կայսր ունինք մեծ քաղաքը, կ'ուէր, կը պարծէր, տարին տասն անգամ ալ անոնց ճամբան կը չափէր, կը շողոքորթէր, վասն զի գիտէր որ այն կայսրը շատ հեռու էր թէ որ քուն չէր:

«Փռանգը, որ մեծ թագաւորներ ունինք արեւմուտք կ'ըսէր, գիտէր որ եթէ գան, ճամբան անօթի չմեռնին, ողջ հասնին այս տեղ, շատ բաներ կրնան ընել· բայց ծովն ու ցամաքը անոնց ոսկորներով լեցուեցան ամէն անգամ որ եկան· անոր համար էր որ երկուքն ալ անոնց հետ լաւ կը վարուէին, մինչեւ որ մէկ անգամ կայսրը եկաւ, այն աղուէսները քովը եկան ժողվուեցան, և ապստամբներուն վրայ ինկան, տունը քանդեցին:

«Ես այս մեր իշխանին հետ միատեղ էի, երբ Լեւոնը բռնեցին կայսեր բերին Աստուած վկայ ես ամըչցայ երբ ան Հայ իշխաններուն ու զօրքերուն վրայ աչքը դարձուց, չգիտեմ ինչ կար այն աչքերուն, այն նայուածքին մէջ: Այն Լամբրոնի Սեբաստոսները, այն մեծ Հայ իշխանները մինչեւ ականջ կարմրեցան, երբ այն մարդուն ձեռքերը շղթաներ անցուցին, ես չկըրցայ դիմանալ, ու լացի…:

— Դո՞ւն լացիր, ըսաւ անդիէն զուարթ ու սկըրդած երիտասարդ մը: Տէ՛ տղաք, Աւագ աղբարը լացեր է, կը լսէ՞ք· գետնաշա՞րժ եղաւ այն օրը թէ փոթորիկ:

— Հա՛, ըսաւ Աւագ, անանկ փոթորիկ մը եղաւ որ Հայուն անունն՝ ինչ պատիւ ունէր տարաւ, այն օր որ այս օր, Հոռոմն ու Փռանգը, Տաճիկն ու Թուրքը մեր վրայ քամահրանքով կը նային· մեր Իշխանը Պապեռոնի տէրն է, Անարզաբայի կուսակալն է կ'ըսենք, քանի մը մուրիկ հռոմ որ կան քաղաքին մէջ, անկից աւելի մեծ ձայնով կը խօսին· ամէն օր՝ մենք ենք քաղաքին տէր, կ'ըսեն, և մեր Իշխանը անոնց ձայնը չլսեր, ու մնացեալ ո՛վ որ մնայ կը դողացնէ…:

— Ինքն ալ մինակ Տիկինէն կը դողայ, ըսաւ ձայն մը քրքիջով:

— Ինչպէս Տիկինն ալ Սրբազանէն կը դողայ, ըսաւ ուրիշ մը, և ծիծաղը ընդհանուր եղաւ:

Միայն Աւագ՝ խոժոռ՝ չէր խնդար, և դաժան կերպով մը ըսաւ·

Իրա՛ւ որ ես չեմ կրնար խնդալ այդ ըսածնուդ վրայ, վախնամ որ այդ եպիսկոպոսին պատիժը՝ մենք ամէնքս պիտի քաշենք· Կաթողիկոսին հրամանին չը հնազանդեցաւ մեր Իշխանը, այն ալ նզովեց· մեր բանը բուսած է· մարդ սխալական է, այսօր կը սպանէ, վաղը կ'աւազակէ, կը յափշտակէ· անգթութիւն կ'ընէ, Աստուած կը բարկանայ· Տէրտէրը «Ողորմեա» կ'ըսէ, թողութիւն կուտայ· բայց երբ Կաթողիկոսի

հրամանը որ Լուսաւորչի փոխանորդն է, եպիսկոպոս կարհամարհէ, Աստուած Տէրտէրին ողորմիսին չլսեր, մեղքերն ալ չեն արձակուիր, Աստուած ալ թողութիւն չի տար․ մենք՝ փառք Աստուծոյ, մեղաւոր ենք ամէնքս, հոս, վարը, ժողովուրդն արիւն արցունք կուլայ մեր ձեռքէն, թէ որ երբեմն երբեմն մեր մեղքերը չքաւուին Անարզաբայի վրայ երկինքէն կրակ կը թափի, ամէնքս ալ կը լափէ, և մենք ոչինչ կ'ըլլանք։

— Ի՞նչ կ'ըսես, մարդ, ըսաւ ուրիշ մը եթէ կրակ կայ երկինք, թափելու, թող Եպիսկոպոսին վրայ թափի, ան է չարիքներուն պատճառը։

— Փա՛ռք տուէք Աստուծոյ որ Մարգրիտ օրիորդը կայ, ըսաւ անդիէն ուրիշ մըն ալ, մէկ հոգի մը թէ որ կայ որ մաքուր է Աստուծոյ առջեւ, այդ աղջիկն է այս միջնաբերդին մէջ․ եթէ ոչ՝ Աստուած իրաւ կը կործանէր՝ և ամէնքիս քարին ու հողին տակ կը ծածկէր։

— Թէ որ պատգամաւորին պատմածն իրաւ է Թորոսի համար, քարն ու հողը ան պիտի ծածկէ մեր գլխուն, ձայնեց թեթեւսոլիկ տղայ։

— Դէ՛, մանուկ, դուն ուսկից գիտես անոր պատմածը, ըսաւ խստութեամբ Աւագ։

— Ես հոս էի, երբ խօսեցաւ ձեր հետ, ետքը երբ Իշխանին քովը ելաւ, ես ալ ետեւէն ելայ... Իշխանին ըսաւ որ քու̀ մարդիկդ գող են․ ժողովուրդը մի՛ չարչարէք, քու մարդիկդ զայն կը չարչարեն․ ետքը Իշխանը բարկացաւ տեղէն ցատկեց, փրփրած աչքերը սանկ սանկ շարժեց, ես փախայ, ետքը մարդն ալ, ելաւ, ձին հեծաւ, հա՛ կը վազէր, կը վազէր..։

— Դէ, լռէ, ըսաւ Աւագ, հիմա ծեծը կուտես․ տղան այս խօսքը լսածին պէս՝ հեռացաւ զգուշութեամբ միջոց ձգելով իր և Աւագին։

— Կատակը մէկդի, Աւագ եղբայր հարցուց Երիտասարդ մը, թէ որ մեր այս Անարզաբան պաշարեն, դուն ի՞նչ կը կարծես, վտանգ կայ առնուելու։

— Պաշարումնքը գիտէ․ Անարզաբան կայսրը պաշարեց՝ առաւ Լեւոնէն, թէ որ տկար մէկը պաշարէր՝ Լեւոնին ճանկէն ի՞նչ կառնէր։

— Ամուտայ բերդապահ զինուոր մը տեսայ այսօր վարը՝ քաղաքը․ դուք պատրաստ եղէք կ'ըսէ, ձեր բերդը մերինէն շատ տկար է։ Ապստամբին համար կը պատմէ թէ մէկ հարուածը չկրկներ․ աչքերէն կրակ կը թափի, ինք մինակ ութը տասը հոգի գետին փռեց, անոր ձեռքէն զարնուողը ողջ չելաւ։

— Չըսե՞ս, այդ նզովից արմատ՝ հօրը զաւակն է, ըսաւ Աւագ ճակատը թթուեցնելով։

— Երբ ես լսեցի, վախը գլխ առաւ, թէ որ հոս մէկ մը երեւայ՝ վարի քաղաքացիները դռները մէկէն իրեն կը բանան, մենք Միջնաբերդին հետ կը մնանք։

— Ես ալ քաղաքացի որ ըլլամ, դռները կը բանամ, դուք ծեծ ու փայտ՝ հայհոյութիւն միայն գիտէք, թէ որ ապստամբը ձենէ աղէկ է...

— Դէ՛, պոռաց Աւագ, դուն դեռ հոս ես և կը խօսի՛ս, ես այդ լեզուդ չկտրեմ, մարդ չեմ, և դեռ ան ոտք չելած մանուկը աներեւոյթ եղաւ։

Ամէնքը սկսան ծիծաղիլ, և Աւագ որ ծիծաղելու արհեստը չէր գիտեր՝ գլուխը շարժելով ըսաւ․

— Հիմակուան խենթերը ամէնէն խելօք կը խօսին․ քաղաքացին մենէ ինչ աղէկութիւն տեսած է որ հաւատարիմ մնայ։

Այն միջոցին Վասիլի սուր քիթը երեւցաւ գաւիթին ծայրէն, և լռութիւն մէկէն յաջորդեց, վասն զի գիտէին թէ իշխանին Լրտեսն է։ Երբ աներեւոյթ եղաւ։

— Դժոխքի պատուհա՛ս, սատանայի գիրկն իյնաս ըսաւ մրմռալով երիտասարդ մը՝ մուր տալով ետեւէն․ ես քեզի Լրտեսութիւն կը սորվեցնեմ, վաթսուն գաւազան, ութ օր բանտ, չոր հաց, հէ՞։

— Թէ որ Իշխանին Օրիորդը, քու ձայնդ չիմանար չաղաչէր, հարիւր յիսունը պիտի ուտէիր, բաղդ ունիս եղեր։

— Ինչ որ կերայ խմեցի, բա՞ղդ է ատիկա, բայց հոգ չէ. Վասիլին չմնար, օր մը ես զայն կը հոգամ։

— Այդ շանը հետ մի՛ լինար, տղայ, կ'ըսեմ քեզի, ըսաւ Աւագ, եաքը հանգիստ կ'ուրես, տեղէդ՝ հացէդ կ'ըլլաս, ես փորձով քեզի հետ կը խօսիմ։

— Երբ քսան տարու էի, Լամբրոնի իշխանին քովն էի, հոն վերակացու մը կար, իրաւ՝ ասոր պէս անպիտան չէր, բայց խիստ մարդ էր, պզտիկ բաներու համար խարազանի հարուած կը բաժնէր, օր մըն ալ աղջիկ մը փախուցեր էի լեռը, հայրն ու մայրը եկան գանգատեցան... ի՞նչ կը զարմանաք, հոն Լամբրոն ասանկ բանի համար կատակ չեն ըներ, Անարզաբա չէ։

Վերակացուն զիս բռնեց, իշխանին պիտի տանէր, շատ աղաչեցի որ թող տայ. բերդին դրան առջև էինք, ազատելու ճար չկար, դանակը մէյ մը որ կողը մշտեցի, այն ելլելն էր, մէյ մըն ալ այն տեղուանքը չտեսանք, բայց լաւ դուռ էր, հոն մնացողը մարդ կ'ըլլայ, սրիկայ չըլլար։

— Հոս այդպէս բանի նեղութիւն չկայ։ Ահա իշխանիկը կուգայ։ Եւ ամէնքը ոտք ելան շարուեցան։

Քսանը հինգ տարու երիտասարդ մը ներս կը մըտնէր նոյն միջոցին, երեք զինուած ծառաներով, բարակներով և բազէներով որսէ կը դառնար։ Գեղեցիկ և գոռոզ երիտասարդ մըն էր, հազիւ թէ աչք մը ձգեց պահապաններու խումբին վրայ, առանց բարևելու իջաւ ձիէն և իր սենեակները գնաց։

Յայտնի է թէ մօրը ամենասիրելի տղան էր այս. ինչ հաճոյք որ կարելի էր հոգալ իր անդրանիկին՝ հօրը կամքը կ'ընէր և կը ճարէր, և որպէսզի աչքին առջևէն չկորսնցնէ, դեռ տասն և ութը տարեկան կարգած էր վայելուչ՝ թարմ և միամիտ աղջկան մը հետ, որ այս շփացած՝ տղուն հաճոյքներուն համար ստեղծուած ըլլալուն հաւատալով, անոր բռնաւորութեան և ամէն կոպիտ վարմունքներուն աղախինի պէս կը համբերէր։

Խեղճ կինը որ արդէն երկու զաւակի ալ տէր էր, միմիայն մխիթարութիւն մը որ ունէր իր տալը՝ Օրիորդն էր, որուն սուր միտքը՝ առաքինի ծանրութիւնը՝ ամէնուն ակնածութիւն կը բերէին, մանաւանդ որ հօրը ամենասիրելին էր։

Սև աչք՝ սև ընքուի՝ սև մազերէ պսակուած բարձր ճակատ մը՝ վայելուչ հասակ մը՝ նայուած մը որ դիմացինին սրտին գաղտնիքներուն կը թափանցէր՝ տարիքէն առաջ անսովոր ուշիմութիւն իր բնաւորութիւնն էին. իր հօրը տան ներքին և արտաքին ամէն իշխանութեան անկարգութիւններուն տեղեակ և վերահաս, և դարմաններու անհնարութեան նախատես՝ շատ անգամ ուզեր էր կուսանաց վանք մը քաշուիլ, և միայն հօրը աղաչանքներուն զիջեր էր, և ոչ թէ մօրը հրամաններուն՝ որ շարունակ զինք կարգելու կ'ելլէր, միշտ մերժուելով և աղջիկը տեսակ մը անըզգայ կը համարէր։

Իր կեանքը կ'անցընէր աղօթքի՝ բարեգործութիւններու, իր հարսին մխիթարութեան և անոր տղաքներուն խնամքով, թէ որ բարի նախախնամութեան մէկ նշոյլը Անարզաբայի պարիսպներէն կրցեր էր սպրդիլ, անշուշտ այդ աղջիկն էր, և տառապեալներուն միակ յոյսը իր վրայ էր, թէ որ կարենային յաջողիլ իմացընելու անոր իրենց վիճակը՝ անյողդողդ պաշտպան մը կը գտնէին. բայց շատ անգամ, նաև այն պաշտպանութիւնը վերջը սոսկալի վտանգներ և վրէժխնդրութիւն կրնային պատճառել, որով շատերը իրենց վիշտերը անկից նաև կը ծածկէին։

Այսպիսի էր Մարգրիտ այս պալատին մէջ՝ փըշոտ մացառներու և տատասկներու մէջ աննման ծաղիկ մը, որ ամէնէն դժպհները և անզգամները կը յարգէին ու կը պատուէին, բաց ի մէկ անձէ՝ որու անարդ բզէզի սիրտը և վատ զգացումները՝ այդ աղաւնիին մաքուր սրտին բարձրութիւնը չէին կրնար հասկնալ։

Մինչև անգամ յարմար առիթը գտնելով համարձակեր աղտեղի սրտին դարշութիւնները իբրև փափուկ զգացումներ օրիորդին առջև տարածել, իսկ նա այնպիսի արհամարհոտ ծիծաղով մը պատասխանեց Սրբազանին, և իր պզտըտիկ ոտուըներով այնպիսի անխնայ սաստկութեամբ կոխկռտեց այդ դարշութեամբ լեցուն փամփուշտը՝ զոր ան սիրտ կ'անուանէր, որ ալ պայթելով՝ զեղանելով՝ համարձակեցաւ օրիորդին թևը բռնել, իբրև թէ բռնութեամբ առ ինքն ձգելու համար, բայց չէր գիտեր ան ի՞նչ անընկճելի բնաւորութիւններ կան. մէկէն սոսկալով ետ քաշուեցաւ, վասն զի օրիորդին աջ ձեռքին մէջ փոքրիկ սայրասուր դաշոյն մը այնպիսի արագութեամբ իր աչքերուն փայլեցաւ, որ նուիրական անձը բոլոր իր սրբութեան վերարկուն հագնելով, ինչպէս օձն իր շապիկը, խոստովանեցաւ թէ փորձելու համար էին ամէն խօսքերն ու շարժումները, և թէ շատ գոհ էր օրիորդին առաքինութենէն, որ նոյնպէս պարզութեամբ խնդրեց իրմէ իր միամտութիւնը ուրիշ անգամ չը չփորձել, վասն զի այդ տեսակ փորձութիւններու և կատակներու փոխարէն, կրնար հարուած մը տալ և ամէն բան հօրը իմացնել. և ոսկեպատեան փոքրիկ դաշոյնը իր զգեստներուն մէջ դարձեալ ամփոփեց և հեռացաւ։

Նոյնպէս Սրբազանը իր ճամբան գնաց՝ ուխտ և դաշինք դնելով մտքէն ուրիշ անգամ այսպիսի վայրենի և անամօթ սրտերու փորձութեան խաղ ամենևին չի խաղալ։

Գիտեն մեր ընթերցողներ թէ ի՞նչ տաժանելի գիշեր մը անցուց Սմբատ իշխանը. ուստի առտուն կանուխ ելաւ ծաղիկներու պարտէզը պտոյտ մը ընելու համար, և զարմացաւ այն ժամանակ հոն գտնելով իր աղջիկը՝ որ վարդի կոկոն մը ձեռքը կը պըտըտէր։

— Այս առտուն դու ելեր ես, աղջիկս, ի՛նչ զարմանք։

— Զարմանք թէ որ կայ՝ քեզի համար է, հայրիկ որ միշտ ուշ կ'ելնես, իմ սովորութիւնս միշտ այս ատեն հոս գտնուիլն է։ Ուրեմն արտաքոյ կարգի վիճակի մը մէջ ես։

— Այո՛, արտաքոյ կարգի երազներ զիս անհանգիստ ըրին։ Չես հարցներ թէ ինչ երազներ էին։

— Գիտեմ. ըսաւ օրիորդը։

— Ի՞նչ, իմ երազներս գիտե՞ս, հարցուց իշխանը աչքերը մեծ մեծ բանալով։

— Գիտեմ թէ Թորոսի հետ էիր բոլոր գիշերը։

— Ինչէ՞ն գիտես։

— Անկից գիտեմ որ մենք տասը տարիէ ի վեր, քանի որ ես ինքզինքս կը ճանչնամ, այսպիսի վտանգի մէջ չէինք գտնուեր. և կարելի է որ քանի մը օր վերջը թէ որ չիյնանք իր ձեռքը փախստական և թափառական՝ օտարներու դուռը պիտի զարնենք, ասպընջականութիւն փնտռելու համար։

Այս ինչ յուսահատ և թշուառ գուշակութիւններ են, քու աչքերդ կ'երևայ թէ ամէն բան սև ու տըխուր կը տեսնեն։

— Թէ որ ես սև ու տխուր կը տեսնեմ, միթէ իմս է յանցանքը։ Հինգ տարի է, հայր իմ, որ ամէնուն և քեզի շատ անգամ աղաչեցի որ քիչ մը գութ ունենաք խեղճերուն վրայ, որոնց բաղդը ձեր ձեռքն է յանձներ Աստուած. և ինծի մտիկ չըրիք։ Այնչափ աղաչեցի որ սա անպիտան՝ անգութ և սրիկայ զինուորներուն տեղ պարկեշտ, համեստ և ուղիղ մարդիկներէ խումբ մը կազմել, և թէ որ աւելի քիչ ալ ըլլային կարելի էր վստահութիւն ունենալ, մտիկ չըրիք։

— Թէ որ աւելի քիչուոր ըլլային. ինչպէ՞ս աւելի վստահութեան արժանի կ'ըլլային։ Չեմ հասկնար։

— Շատ պարզ էր. քաղաքին բոլոր ժողովուրդը մեզի հետ կ'ըլլար երբ հիմա սա աւազակներուն պատճառով՝ նաև մեր հարստահարութեանց պատճառով՝

ամէնքը մեզի հետ թշնամի են. և վաղը առաջին վտանգին մեզի դէմ պիտի միաբանին։ Եւ որ աւելի մեծն է, այս անպիտան աւազակներուն վստահիլ կարելի չէ, և մեծ անխոհեմութիւն։

Այս խօսքերուն Իշխանը տխուր՝ աչքերը գետինը սեւեռած կը մտածէր, և լռութիւնը երկար քշելէն վերջ. ըսաւ.

— Ուրեմն ես դէշ ըրի՝ երբ երէկ բարկութեամբ և նախատանքով մերժեցի Թորոսի պատգամաւորը։

— Անտարակոյս, դժբաղդաբար ես երբ իմացայ՝ շատ ուշ էր, և պատգամաւորը արդէն ձի կը հեծնէր։

— Բայց դու իմացա՞ր թէ ի՞նչ ամբարտաւան պատգամ ինձ յուղարկել յանդգնէր էր այդ ապըստամբը։

— Ամէնն ալ իմացայ տեղն ի տեղ։

— Էյ...։

— Կեցի, սիրելի հայրիկս, արդար ըլլալու համար դուն ինքզինքդ Թորոսի տեղ դիր, Թորոս եղիր վայրկեան մը, բանտէն փախած՝ ութը տասը օրուան մէջ հինգ վեց բերդի տէր եղիր. տասը քսան հազար զօրքերու հրամայէ, եղիր քաջ՝ եղիր խելօք, Տարսոնի կուսակալը խորտակէ...։

— Բայց դուն այս առասպելներուն կը հաւատա՞ս, աղջիկ։

— Բայց ասոնք առասպել չեն, ստուգութիւն են։

— Դուն ո՞ւսկից գիտես։

— Ես այս քաղաքին մէջ քու լրտեսներէդ ամէնէն և Վասիլէն ալ շատ աւելի աղէկ գիտեմ ինչ որ կ'անցնի։

— Ի՞նչ կ'ըսէս։

— Այո՛, ես երբ առտուները իմ ծերուկ Մարտիրոսը հետս առած, իմ դեղերու տուփս մէկտեղ կ'իջնեմ քաղաք, ամէն տուն կը մտնեմ, հայ, յոյն, տաճիկ իրենց հիւանդութիւնները և վէրքերը՝ ինչպէս տուները ինծի կը բանան, ամէն բան կ'իմանամ. գի-

տեմ որ բոլոր քաղաքը այր և կին, ծեր և տղայ, քահանայ և աշխարհական մեզի թշնամի են, գիտեմ այս երբ թշնամին գայ ու բանակը զարնէ, առանց նետ մը՝ քար մը նետելու դռները պիտի բացուին. յետոյ որ Միջնաբերդը իր բերդապահները պիտի մատնեն։ Եւ գիտեմ թէ թշնամին՝ որ մենք ապստամբ կ'անուանենք, մեր կարծածէն և լսածէն շատ աւելի զօրաւոր է։

— Բայց դու ինչէ՞ն իմացար այս ամէն բան։

— Ես քանի մը օր է յոյն այրի կնկան մը աղջիկը կը նայիմ որ ծանր ջերմով կը պառկի, և որուն եղբայրը Մամեստիոյ իշխանին ծառայութեան մէջ ըլլալը գիտէի. երէկ՝ կէս օրէն վերջը՝ երիտասարդ մը տեսայ հիւանդին սենեակը պառկած՝ վիրաւոր, որ էշ մը հեծցուցած բերեր էին Ատանայի պատերազմէն իր մօրը տունը. տղուն վէրքը նայեցայ, որ ծանր չէր, այլ անխնամ մնալէն ծանրացեր էր. ետքը իրեն պատմել տուի ամէն բան. իմացայ թէ այդ ապստամբը սովորական մարդ մը չէր և ինքնիրեն ամբողջ բանակ մը կ'արժէր իր քաջութեամբ, խոհեմութեամբ և առաքինութեամբ։

— Թողունք հիմա այդ մարդը իր կատարելութիւններով։ Բայց դու ըսիր թէ քահանաներն ալ մեզի թըշնամի են հոս այս քաղաքիս մէջ։ Ես անոնց ամենուն փիլոնն առնել կուտամ։ Հիմա սրբազանին հրաման կուղարկեմ։

— Ինչ օգուտ անոնց փիլոնը առնելէն. անով մեզի աւելի բարեկա՞մ կ'ըլլենք զիրենք։ Արդէն այդ սըրբազանն ալ միթէ մեր վէրքերէն մէկը չէ՞... Ի՛նչ պարապ տեղ կը խօսիմ այս նիւթերուս վրայ, տեսնենք դիպուածները մեզի ինչ կը պատրաստեն։

Երկար լռութիւն մը յաջորդեց։ Իշխանը իր պըտոյտը սկսաւ շարունակել պարտէզին մէջ վայրկեան մը, և վերջը անհետացաւ գնաց իր սենեակը իր լըրտեսներուն հետ խորհրդակցելու համար։

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՍՏԵՓԱՆԷ ԵՒ ՄԼԵՀ

Անարգաբայի իշխանը անձամբ իր համբարանոցները աչքէ կ'անցնէր, տարիէն աւելի ժամանակի պաշար գտնելով կը հանդարտէր․ նոյնպէս ամէն տեսակ զէնք քննութեան կ'առնուէին, զօրքերու կրթութեան հանդէսներ կ'ըլլային, բոլոր ճամբաները ասդին անդին կ'ուղարկուէին, և ամէն օր նոր նոր լուրեր կ'առնէր ան շրջականերէն՝ նաեւ հեռուներէն, և ոչ մէկը գոհացուցիչ չէին։

Հինգ օր վերջը Տարսոնի իշխանէն նամակ մը առաւ որ իրեն կ'իմացնէր թէ, թէպէտ անկարող էր առժամայն իրեն հասնելու, բայց թէ որ յոյս ունէր քիչ ատենէն մեծ և զօրաւոր օգնութիւն գտնելու Կոստանդնուպոլսէն, վասնզի գրած և իմացուցած էր թէ հայերը բոլոր ապստամբին հետ միանալով, ինք պաշտպանողական դիրք մը բռնելու պարտաւորուած էր։

Ամէն օր՝ քանի մը կասկածելի անձեր ոչինչ պատճառներու համար, նաեւ մէկ թշնամական գրգռութեան համար՝ Միջնաբերդը կը բերուէին, կը տանջուէին, կը բանտարկուէին, բայց ապսպրուած էր ամէնուն որ այս տեսակ գործեր գաղտնի և լռելեայն ըլլան ըստ կարելւոյն, որ «մարդ չիմանայ» այսինքն օրէօրը չիմանայ։ Վասնզի իշխանը որ իր աղջիկը կը սիրէր առաջ՝ քանի կ'երթար կը յարգէր նաեւ զայն, և քիչ քիչ կը սկսէր ակնածիլ անկէ։

Այս ակնածութիւնը բոլոր ընտանիքին իւրաքանչիւրը մէկ մէկ կերպով ունէին իրենց համար։ Տիկինը առանց սիրելու այս զաւակը՝ կը դողար որ յան-

կարծ իր անկարգութիւնները չնշմարէ աղջիկը, ինչպէս ամէն յանցաւոր մարդ, նաեւ ան՝ բարոյականը մեծ նուաստութեան մէջ կը գտնուի, կ'ուզէ անվրդովանդ երեւալ իր զաւկին․ անդրանիկը իր կնոջը թափած արցունքներուն մխիթարութիւն՝ ան կը գտնէր։

Սրբազանը, որովհետեւ ան ալ կերպով մը ընտանիքի մաս կը համարուէր, որ գինք կ'ատէր հիմա սրտին բոլոր զօրութեամբ, բոլորովին իր ձայնին անուշութիւնը, բառերու և իմաստներու վայելչութիւնը ու ձեւերու քաղաքավարութիւնը պատրաստի ունէր անոր համար։

Թորոսի դէմ եղած պատրաստութիւններուն մէջ կար նաեւ քաղաքին պարիսպներէն հեռանալու արգելքը, որով մեր որսորդ իշխանիկը Բակուրան կը պարտաւորէր ակամայ բանտարկուիլ, ինչպէս տիկինը և սրբազանը՝ որ իրենց ձիարշաւները դադրեցնելու պարտաւորուած էին․

Այս արգելքները բոլորովին անհիմն չէին, վասնզի ասպատակ ձիաւորներու խումբեր երբեմն քաղաքին պատերէն կ'երեւային ու անհետ կ'ըլլային, իսկ քաղաքին մէջ բոլոր դէմքերը թէպէտ տխուր կը տեսնուէին, բայց մեծին ու պզտիկին սիրտը ուրախութեամբ կը տրոփէր, և անհամբեր կը սպասէին թէ՝ ե՞րբ պիտի երեւայ ազատարար դրօշը։

Այս սպասողներուն յոյսը պարապը չելաւ, վերջապէս պատգամաւորին եկած օրէն ութ օր վերջը, առաւօտուն մեծ ամպ մը փոշիի՝ քաղաքը պատեց, և երբ փոշին անհետացաւ՝ տեսնուեցաւ Թորոսի բանակը՝ ուր քսան հազարի մօտ մարդ վարժ աչք մը կրնար դատել․ և ուր զարմանալի բարեկարգութիւն մը կը տիրէր անծանօթ բոլորովին երկրին բնակիչներուն․ վրանները կանոնաւոր կարգի շարուած էին․ բանակին չորս կողմը խրամներ կը փորուէին և անոնցմէ պեղած հողը պարիսպի պէս ամուր պատնէշ մը կը կազմէր բանակին չորս կողմ։

Մեքենաներ կը բերուէին կարգաւ կը շարուէին յարմար դիրքերու դէմ, ուր պիտի գործադրուէին, և որ դիտելու արժանի էր գեղեցիկ և բազմաթիւ հեծելազօրքերուն խումբ մը կ'երեւար որոնց կէս մասը արաբացի ձիերէ կազմուած էր։ Եւ երբ Թորոս տեսնուեցաւ բարձր և ահիպարանոց ձիու մը վրայ՝ զինուորներուն ուրախութեան աղաղակը բոլոր Անարզաբան կը թնդացնէր։

Իր աջ կողմէն բեհեզներով և ծիրանիներով զարդարուած, իշխանական պսակ ի գլուխ, ճերմակ ձիու մը վրայ առնաբար հեծած կուգար Նափիմէ, և երկուքին քովէն երկու երիտասարդներ ոսկեփայլ սաղաւարտներով և արծաթապատ վահաններով ճոխացած նժոյգներու վրայ կը չահատակէին, Ասոնք էին Մլեհ և Ստեփանէ, որ իրենց եղբօր յաջող գալուստը լսելով, Հալէպի Ամիրային ընծաներով և հինգ հարիւրի չափ հեծելազօրքերով կուգային ուրախութեամբ իրենց եղբօրը դարձը վայելելու, որ Կիլիկիոյ գահերը կը բանար յաղթապէս, այնչափ տարուան օտարին ծառայութենէն վերջ։ Այս երկու երիտասարդներն ալ իրենց եղբօրը կը նմանէին կերպարանքով և քաջութեամբ, և իրօք առիւծի կորիւններ էին. ամէն աչք զիրենք տեսնելուն միայն կրնար վկայել թէ մեծ պատերազմական զօրութիւն մը կը հասնէր Թորոսի։

Թէպէտ Թորոսի հեռատես աչքերը մէկէն կշռեցին զիրենք, օգուտի և վնասի բաժինը նշմարեցին վայրկենին, բայց դարձեալ միշտ անթափանցելի՝ եղբայրական սրտով և սիրով գրկեց՝ ընդունեցաւ զիրենք բոլոր բանակին առջեւ, ներկայացուց իր սիրասուն կնոջ՝ որ անկեղծ սրտով իբր եղբայր ընդունեց զիրենք, ամէն սիրտ ուրախութեամբ լեցուեցան և անոնց գալուստը տօնեցին։ Եւ որովհետեւ ժամանակ էր ելլելու Մամեստիայէն Անարզաբա, բանակը արդէն ելած էր և հարազատները քիչ մը հանգչելէն վերջ՝ ելան նոյնպէս բանակին ետեւէն։

Երկար տարիներու պարագաները այս ճամբորդութեան մէջ կը պատմուէին, ծնողքներու կորուստ՝ դժբաղդ և ուրախ օրեր՝ արկածներ կը յիշատակուէին։ Նոյն միջոցին Կոստանդին և Բաբկէն զրահաւորներ որ քովէ քով կը ձիավարէին, իրարու աչք մը նետեցին, Բաբկէնի սպարտական բնութիւնը գոհ եղաւ ակնարկէն, բայց Կոստանդին ըսաւ.

— Կը յիշե՞ս, Բաբկէն, Կոստանդնուպօլսոյ մեր տեսութիւնը և քեզի ինչ որ պատմեցի, տղաքներուն համար, ըսաւ. հիմա ես կը վախնամ թէ Իշխանին գլխուն ասոնք մէյմէկ փուշէ պսակ ըլլան... Ստեփանէ անփնաս թերեւս՝ բայց պզտիկը Աստուած հեռու ընէ։ Իրաւ Բաբկէն, առջի նայելուդ ասոնք եղբայրէն կերպարանքով, բայց նայէ դիտէ Մլեհին աչքերուն մէջ բան մը կայ՝ որ մարդուս սիրտը կը ճմլէ և կը քամնեցնէ։ Պատասխան չե՛ս տար։

— Եղբայր, ինչ ըսեմ, քիչ մը կամաց խօսէ։

— Դուն ալ լաւ մարդ ես, եղբայր, բերանդ չբացուիր՝ բացուի ալ խրատ տալու համար միայն կը բացուի։

— Դու ալ լաւ մարդ ես, քաջ մարդ ես, ինծի պէս վաթսունը կը գտնես քանի մը տարիէն, բայց բերանդ չարունակ կը բացուի՝ միշտ գանգատի համար կը բացուի։

— Հա՛ խօ՞սք էր ըսածդ, թէ որ միշտ գանգատի համար կը բացուի իմ բերանը, քանի ամիս է մէկտեղ ենք, ո՞վ օր մը Թորոսի համար բան մը խօսք մը լսեց բերնէս։

— Ես։

— Դէ՛ ե՞րբ, ըսէ նայիմ։

— Թէ որ կամաց խօսիս, չպոռաս, կիրք չելլես, կը զրուցեմ, ըսաւ Բաբկէն ծիծաղելով՝ և ձայնը աւելի ցածցնելով.

— Լա՛ւ, մտիկ ըրէ։ Լամբրոնի առջեւ՝ այն գիշերը մի՞տքդ է, երբ Իշխանիկը մարդիկը կապեց, դու կ'ուզէիր մեռցնել...

— Ես ի՛նչ ըսի…

— Է՛հ, թէ որ իմ ըսածս աստնկ արգիլես, ես խօսք մը չունիմ։

— Կը լսեմ, ըսէ՛,

— Անկից առաջ երկայն լերան ճամբան բռնել տուաւ Իշխանը, դուն ալ գանգատողներուն առաջինն էիր… Է՛հ, համբերէ լմնցուցի։ Ամուտայ բերդին առջեւ հասար չի հասար՝ «այս բերդը կ'առնուի» ձայնը ձգողը տղոց առջեւ՝ դու էիր, միտքդ կուգա՞յ։ Իշխանը աստնք գիտէ, բայց ես լաւ զինքը կը ճանչնամ չխօսիր, չմոռնար, և մարդկանց գործը միշտ բարի կուզէ մեկնիլ։

— Քեզի բան մը ըսա՞ւ… Մարդ գտանք հարցընելու, այդչափ որ խօսեցար շնորհակալ պէտք է ըլլալ։

— Կոստանդին եղբայր, Իշխանը չխօսիր, ես քեզի ըսի, բայց ամէն բան կը տեսնէ ու կը լսէ։ Քու քաջութիւնդ կը գովէ, միայն մէկ բանի մը սիրտը նեղացաւ և ինծի յատկապէս ապսպրեց քեզի ըսել թէ՝ Սարգիսին հետ լաւ վարուիս։

— Ես Սարգիսին ի՛նչ ըրի։

— Կամա՛ց, եղբա՛յր, հիմա կը ձգեմ կերթամ, ըսաւ Բաբկէն, ձին մէկդի քշելով։

— Մի՛ նեղանար, Բաբկէն, ինծի անհամբեր կ'ըսեն, դուն ինձմէ անհամբեր ես։ Ես Սարգսին ի՛նչ եմ ըրեր որ Իշխանին սիրտը նեղացեր է։

— Ես գիտե՞մ, դուն մտածէ, անշուշտ կը գտնես։

— Երբ Իշխանը անոր տասը բերդ ալ տայ՝ իմ ինչ հոգս. միայն այսչափ ըսի, չեմ ուրանար, թէ մենք բոլոր Կիլիկիոյ ալ տիրենք, արժողին չարժողին պարգեւելով քաղաք ու բերդ, Իշխանի բնակութեան տեղ չպիտի մնայ։ Ինծի Բարձր բերդը տուաւ, քեզի Ամուտան, Սարգսին՝ Առիւծը, խեղճուկ գիւղացիի տղուն բերդ մը տալ, ինծի առատաձեռնութիւն չերեւար, այլ շռայլութիւն։ Այս ըսեր եմ, յանցա՞նք եմ ըրեր։ Եղ-

բայրները եկան, անոնց ի՞նչ պիտի տայ. թէ որ Վահկան մէկուն տայ, Մամեստիան ալ միւսին, ինք գետի՞նը պիտի նստի։

— Այս խօսքերը Իշխանին՝ իրեն կրնաս զրուցել։

— Ինչո՞ւ պիտի զրուցեմ։

— Երբ դուն այս խօսքերը կը կրկնես, ալ մի զրուցեր թէ Սարգսին ի՞նչ ըրի. երբ ան արժողին չարժողին կարգը կը դնես, երբ գիւղացիի տղայ ըլլալուն բերդ մը իրեն շատ կը տեսնես, Իշխանին առատաձեռնութեան վրայ չէ քու կիրքդ, ուրիշ տեղ փնտռէ դուն անոր պատճառը։

«Աստուած վկայ, ես Սարգսի Իշխանին ըրած ծառայութիւնը չեմ կրնար մոռնալ. ինչ որ տրուի իրեն՝ արժանաւոր է։ Մեր պարտքն ի՞նչ է, Թորոս մենէ ինչ կուզէ. սիրով վարուիլ իրարու հետ, ազգին ազատութեան և լաւութեան համար աշխատիլ. գոհ ըլլանք, եղբայր, մեր ազգին վիճակէն, փառք տանք Աստուծոյ. պարապ խօսքերով ինչո՞ւ զիրար թունաւորենք. ես ծերացայ, դուն ալ ծերանալու վրայ ես, քիչ մը հանդարտէ, խելօք եղիր. տղաքը որ կը հասնին շահելու նայէ. չտեսա՞ր քանի անգամ Իշխանը մեր երկուքը ցուցնելով՝ տղոցը ըսաւ.

«—Ասոնք մեր հայրերն են, ասոնք մեր խելօքներն են, մենք ասոնց խօսքը մտիկ ընելու ենք։

Հիմա կ'ըլլայ որ մենք կը չարանանք և կը նախանձինք։

Բաբկէնի այս ճառին վրայ Կոստանդին տխրեցաւ, ձայնը քաշեց։ Եւ, ինչպէս որ ըսինք, զօրքերուն աղաղակը, իրենց զօրավարին ընդունելութեան համար, մեր երկու ընկերները իբրեւ քունէ մը արթնցուցին իմացընելով թէ Անարզաբայի առջեւ հասեր էին։

Սարգիս, սրամիտ և արթուն, ինչպէս որ հասկըցուցեր էր Թորոս իրեն նոյն կերպով ճիշդ բանակը ճակատեցուցեր էր բերդաքաղաքին պարիսպներուն դէմ երեքի բաժնելով, իւրաքանչիւրին իրեն խրամները և

պատնէշները որոշելով ու ցուցնելով, վրանները կանոնաւորուած շարել տալով, վրան չեղածներուն՝ ծառերու ճիւղեր բերել տալու հրաման ընելով, որպէսզի տաղաւարներ չլինուին, և ամէնքը կանոնաւոր միակարգ և ոչ խառնիխուռն անկարգ։

Երբ Մլեհ և Ստեփանէ՝ որ տաճիկներուն զինուորական ծառայութեան մէջ անցուցեր էին իրենց օրերը այս կանոնաւորութիւնը տեսան, զարմանքով Սարգսի մօտենալով, սկսան հարցնել թէ ո՞ւսկից ուսեր էր այսպէս բանակ զարնել տալ. իսկ ան Թորոսը ցուցնելով ըսաւ.

— Իշխանին հրամանովը և կարգադրութեամբը ամէն բան ընել կուտամ, ըսաւ։

Իսկ Թորոս այն միջոցին հրաւիրելով Նափիմէն և Դիոնիսը հանգչելու՝ իրեն պատրաստուած վրանին տակ քաղաքին չուրջը պտոյտ մը կ՚ընէր, թէ քաղաքը դիտելու և թէ բանակը զննելու համար, ամէն տեղ ինչ պակասութիւն որ կար Բաբկէնի՝ Կոստանդնի և ուրիշ զօրավարներուն կը ցուցնէր, համառօտ և ճիշդ խօսքերով։

Երբ իր քննութիւնը լրացուց, եկաւ հանգչելու վրանին տակ։ Խօսեցաւ եղբայրներուն հետ դարձեալ, շատ մը հարցումներ ըրաւ Հալէպի ամիրային՝ Նուրէտտինին վրայ, անոր բնաւորութեան՝ վարմունքին՝ զօրութեան՝ տաճիկներուն պատերազմելու ընդհանուր կերպին վրայ։

Վերջը սեղանը պատրաստել հրամայեց, հրաւիրեց ամէնքը որ նստին կերակուրի, յանձնարարելով Նափիմէի պատուել իր նորեկ եղբայրները՝ որ դեռ հիւր էին քանի մը ժամուան համար, և որ քիչ մը վերջը տնեցի պիտի ըլլային բոլորովին. զինուորներուն հետ պատառ մը հաց կերաւ, և յետոյ ելաւ դարձեալ պտոյտ մը ընելու. ամէնուն տեղեկութիւն հարցնելով Անարզաբայի վրայ, մանաւանդ անոնց որ նոյն քաղաքացին էին. տեսաւ նաև մէկ քանի երիտասարդներ, որ Սմբատի

ծառայութեան մէջ գտնուած էին. անոնք առանձին հարց ու փորձ ըրաւ, և ինչ տեղեկութիւն որ կ՚առնէր՝ ամէնքը օգտակար համարելով, բան մը չէր արհամարհեր։

Երբ նորէն իր վրանը եկաւ, տեսաւ որ անոնք իրենց կերակուրը կերած էին, սկսաւ Բաբկէնի հարցումներ ընել Վահկայ բերդին նորոգութիւններուն վրայ որուն համար ապսպրեր էր բոլորովին նոյնպէս ընել, ինչպէս իրեն հօրեղբօրը և հօրը ժամանակ, ու երբ իմացաւ թէ նոյնպէս կատարուեր է գոհ եղաւ և ամէնքը արձակելով հանգչեցաւ քունի։

Թէպէտ հազիւ թէ ամիս մը եղած էր, բայց զինուոր և զօրավար ամէնքը գիտէին իրենց Իշխանին արթուն սովորութիւնը, ուստի ամէն ոք գիշերապահ և գիշերայած իր պաշտօնը ճշդիւ կը կատարէր, վասնզի որոշ գիտէր թէ չի կարծած և չսպասած վայրկենին՝ զօրապետը ներկայ էր խիստ և ներողամիտ միանգամայն որ գիտէր թէ երբ գործադրելու է պատիժ և վարձատրութիւն. ուստի ամէնքը թէ կը վախնային և թէ կը սիրէին զինքը։

Երբ առաւօտ եղաւ, ամէնքը տեսան Թորոսը որ ոտքի վրայ էր, և Սարգիսի միջոցով աղեղնաւորներու խումբի մը կը հրամայէր նետաձիգ ընել քաղաքը։ Նետերուն վրայ թուղթեր կապել տուաւ որոնց վրայ գրուած էր.

— Թէ որ կ՚ուզէք պաշարման նեղութենէ և ձեր Իշխանին բռնութենէն ժամ առաջ փրկուիլ, միացէք և բացէք դռները, մենք ձեզ ազատելու համար եկեր ենք, գիտցէք որ թշնամի չենք՝ այլ բարեկամ։

Այսպէս հարիւրաւոր նետեր նետուեցան քաղաքին մէջ. Սմբատ իմանալով խստիւ հրաման ըրաւ որ ժողվուին և իրեն բերուին։

Երբ խուրձեր այս նետերէն կը բերէին և Իշխանին առջև կը լեցնէին, ինք կատաղութեամբ ակռաները կը կռճտէր ու կը հայհոյէր. «վատ, դաւաճան, մատ-

նիչ,» բառերը բերնէն դուրս կը թափէին շարունակ· և իր բորբոքած՝ փրփրած ժամանակը կը սպառնար՝ կը հրամայէր կրակի տալ քաղաքը, Թորոսէն ալ՝ բնակիչներէն ալ վրէժ առնելու համար:

Այսպիսի ժամանակ ոչ կինը, ոչ տղան, ոչ Սրբազանը և ոչ ոք չէր համարձակեր իրեն մօտենալու· ուստի ամէնքը հեռու կը պտըտէին: Նոյն միջոցին էր որ Մարգրիտ իր ծերուկ Մարտիրոս ծառային հետ քաղաքին հիւանդներուն այցելութենէն ետ կը դառնար, ձեռքը առած այն նետերէն մէկ հատ մը:

Իր ծանր և լուրջ դէմքը, որ ամէն ժպիրհ նայուածք կը խոնարհեցնէր, հրեշտակի կերպարանք մը ունէր երբ իր հօրը կատաղութեան վայրկեանները կ'արթննային· ուստի երբ Միջնաբերդը մտաւ և իր սենեակները երթալու ատեն իր հօրը գոռալուն ձայնը լսեց, ճամբան շեղեց և հօրը հովանոցն ուղղուեցաւ, ու ձեռքի նետը դէպի հօրը գնաց, որ զինքը տեսածին պէս, սկսաւ դառն գանգատներու. Թորոսի դէմ՝ քաղաքացիներուն դէմ, բերդապահ զօրականներուն դէմ՝ իր ծառաներուն և նաեւ ընտանիքին դէմ:

Մարգրիտ արձանի մը պէս մտիկ կ'ընէր այս խօսքերը· և երբ հայրը իր բոլոր կատաղութեան ճարտասանութիւնը և շունչը հատցուց ու լռեց, այն ատեն քովը մօտենալով ու կարեկից աչքով սկսաւ նայիլ դարձեալ առանց խօսելու: Սմբատ վերջապէս կանչեց:

— Ըսէ, Մարգրիտ, դու ըսէ, միթէ ես իրաւունք չունի՞մ այս անիծեալ քաղաքը այրելու·

Երկայն լռութիւն մը այս խօսքերուն յաջորդեց, և Իշխանը տեսնելով իր զաւակին ձեռքը այն նետերէն՝ որ իր բարկութիւնը գրգռեր էին:

— Դուն ալ այդ նետերը ձեռքդ կը պտտցնես·

— Քաղաքը կ'երեւայ թէ ողողուած էր ասոնցմով որովհետեւ ես ալ հատ մը գտայ:

— Անիծեա՛լ քաղաք, հիմն ի վեր տապալելու արժանի· անիծեալ բնակիչները:

Այս խօսքերը դեռ բերանն էին, երբ աղմուկ և աղաղակ լսուեցաւ· ձայները վեր Միջնաբերդը կը բարձրանային, և պարիսպներուն միայն մօտենալով կը տեսնուէր որ ժողովուրդը և պահապանները իրարու հետ կը կռուէին, անոնք ուզելով դռները բանալ և ասոնք արգիլել: Ալ կատարեալ մոլեգնելով Սըմբատ զէնքերը առաւ· և առանց աղջկան ձայնին ուշ դնելու՝ դիմեց օգնելու իր զօրականներուն որ ժողովրդեան բազմութեան դէմ կը մաքառէին:

Իշխանին տեսութիւնը փոխանակ հանդարտեցնելու ալ աւելի զայրացուց ամբոխը· քարեր անձրեւի պէս կը տեղային, և Միջնաբերդին դռնէն մինչև պարիսպները տուն տանիք չկար որ զօրքերուն վրայ ունեցածը չի պարպէր, Իշխանը տեսնելով վտանգը ետ դառնալ կ'ուզէր, բայց անկարելի էր, շուարեալ մընացեր էր· իրաւ իր զօրքերը անգործ չէին կենար, արիւնը կը վազէր, բայց ի՜նչ օգուտ որ մէկ ինկողին տեղ տասը քսան կը բուսնէր, վերջապէս ձայն մը եղաւ թէ ժողովուրդը կրցաւ դռներէն մէկուն տիրանալ՝ բանալ և թշնամին ներս խուժել:

Ուստի Սմբատ նոյն միջոցին գոնէ Միջնաբերդը կ'ուզէր ինքզինքը նետել՝ բայց կարելի չէր· այս յուսահատ վայրկենին ձայն մը փրթաւ ժողովրդեան և զօրքերուն մէջ:

— Օրիորդը, օրիորդը պոռացին երկու կողմէն և լռութիւն մը տիրեց· քարի և նետի կարկուտը դադրեցաւ· Մարգրիտ երեւցաւ գլուխը բաց, անպատըպար, վազելով գնաց եւ ինքը հօր ձեռքէն բռնած իբրեւ վահան զինքը ծածկելով զօրքերն ալ ետեւէն՝ բերաւ մտցուց Միջնաբերդը և դռները գոցուեցան:

Ժամանակն էր վանքի միւս դռնէն Թորոսի զօրքերը գունդագունդ ներս կը խուժէին և քաղաքացիներուն հետ եղբայրաբար կը գրկուէին, և Միջնաբերդին վրայէն տեսնողներու յայտնի էր որ եթէ Մարգրիտ քանի մը վայրկեան ալ ուշանար՝ հայրը ողջ կամ մեռած թշնամիներուն ձեռքն ինկած էր:

ԳԼՈՒԽ ԺԸ.

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Այս առաքինութեան յաղթանակէն վերջը, ուր անզէն աղջկան մը երեւոյթը զինաթափ ըրաւ պատերազմող ձեռքերը և իր հայրը կորուստէ ազատեց։ Սմբատ փոխուեցաւ բոլորովին։ Իր խոհանոցին մէջ նստած ոչ կը խօսէր՝ ոչ կ՚ուտէր՝ ոչ կը խմէր· տիկինը և սրբազանը մէկ քանի անգամ ջանացին իր յամառ և անտարբեր լռութիւնը ընդմիջել, բայց ճար չեղաւ, ուստի օրիորդին դիմեցին, որ հօրը հետ խօսի, բայց ի՞նչ խօսէր, այն չէին կրնար որոշել։

Իսկ Թշնամին քաղաքին ամէն կողմին տիրելէն վերջ, պատրաստութիւններ կը տեսնէր՝ հողապատնէշներ կը շինէր՝ ճամբաներ՝ տունէր՝ հաղորդակցութեան միջոցներ կ՚ապահովէր, բերդականներուն ձգողական զէնքերէն պաշտպանուելու համար, ինչ որ պէտք էր կ՚ընէր և կը զարմանար թէ անոնք կեանքի նշան ամենեւին չէին տար։

Եւ իրօք, իշխանին այն վիճակը ամէնը լքեց, պատճառը ոչ ոք չէր հասկնար, վարձկան զօրականները սկսած էին քրթմնջել, և վերը արդէն տիկինն, նամանաւանդ սրբազանը, իշխանին խելքին վրայ ցնորք մը նշմարելով լռութենէն, սկսած էին դաւադիր ըլլալ՝ կերպով մը տղան Բակուրա տեղը նստեցնել խորհելով, երբ նա որ մինչեւ այն օրը վտանգ մը տեսած չունէր, և իր հաճոյքներէն ու զուարճութիւններէն զատ բան մը չէր երեւակայեր՝ այս Միջնաբերդին մէջ բանտարկուած վիճակէն ազատելէ ուրիշ բան չէր մըտածեր, ուստի իր այս թեթեւութիւնն ալ աւելի խայթմըն էր տիկին մօրը, տղուն անունով կառավարել։

Երբ Մարգրիտ այս վիճակը տեսաւ և գուշակեց, երբ կիսակտուր բառեր ամէն բան յայտնեցին և երեւակայեց թէ չարեաց չարագոյն վիճակ մը պիտի ծագի· որոշեց հօրը մօտենալ և իր պարզութեամբ քովը նստելով սկսաւ հարցումներ ընել· թէ ինչո՞ւ տխուր էր, թէ ինչո՞ւ չէր խօսեր, թէ ինչո՞ւ չէր ուտեր խըմեր... և առանց ձանձրացնելու այնչափ անուշ և այնչափ երկար խօսեցաւ և կրկնեց հարցումները, որ Սըմբատ սկսաւ փափուկիլ, իր գետին սեւեռող նայուածքն ու լռութիւնը անհետացաւ, սկսաւ իր աղջկան խօսքերուն ուշադրութիւն ընելն յայտնել, և վերջապէս իբրեւ քունէ մը ցնցուելով և արթննալով, պատասխանեց·

— Դու, Մարգրիտ, դու չէ՞իր որ ըսիր թէ քաղաքացիները պիտի ապստամբին։

— Այո՛, հայր իմ, ըսաւ աղջիկը, հօրը աջը իր ձեռքերուն մէջ ամփոփելով փաղաքշանքով։

— Ապստամբեցան և քաղաքը մատնեցին։

— Այո՛, հայր իմ։

— Ուրեմն ճար չկայ, պէտք է սպասել այս վիճակիս, պէտք է սպասել գերութեան, պէտք է սպասել աստանդական շրջելու ապաստանարան մը փնտռելու համար· դուն ըսիր՝ ուրեմն ասոնք պիտի ըլլան· դուն գուշակեցիր՝ ուրեմն վերահաս է և պիտի հանդիպի· լա՛ւ է ուրեմն մեռնիլ։

— Ինչո՞ւ համար դուն այդպէս կը յուսահատիս, հայր իմ, ըսաւ Մարգրիտ՝ տեսնելով թէ իր նախատեսութիւնները ո՛րքան վնասակար եղած էին հօրը· ես մարգարէութեան հոգիով չզրուցեցի բան մը, այլ բոլոր իմ խօսքերս՝ ըրած դիտողութիւններուս վրայ երեւակայական գիւտեր էին· դուն թէ որ ուզես, ես տկար աղջիկ մը՝ ամէ բան կարգի կը դընեմ, միայն հրաման տուր։

— Ի՞նչպէս կարգի կը դնես դուն այս վիճակը՝ որ արդէն իր վախճանը գտած է։

— Հիմա Թորոսին քու կողմանէդ...

— Թորոսին իմ կողմանէս պատգամաւոր կամ նամակ չի՛ կրնար երթալ և պէտք չէ՛ երթայ։

— Բայց, հայր իմ...

— Հայր-մայր չկայ, պարապ տեղ ինծի հետ մի՛ խօսակցիր, զիս մի՛ նեղեր. ամէն մարդ իր բաղդին պէտք է հետեւի. ինչ որ մինչեւ հիմա հօրդ համար ըրիր՝ բաւական է, Աստուած քեզ օրհնէ ու վարձատրէ. որչափ որ դէշ, անպիտան և չարագործ ալ ըլլայ մէկը, իր զաւակին համար՝ մանաւանդ երբ զաւակը այնչափ առաքինի է քեզի պէս, մէկ անգամուան համար երբ աղօթէ՝ Աստուած անոր ձայնը կը լսէ. ուստի նորէն կ'ըսեմ, ես ա՛լ բան մը չունիմ, ամէն բան լմնցեր է ինծի համար, ոչ իշխանութիւն, ոչ կարողութիւն, ամէն բան կորսուած է և անոնց հետքն անգամ չէ մնացած. հոս անզգամութեան չափը լեցուեցաւ, դուն միայն մնացիր անարատ այս գարշութիւններուն մէջ, Աստուած քեզ վարձատրէ, Աստուած քու վերջդ բարին ընէ։

Ու այս խօսքերը ըսելուն՝ իշխանը ձեռքը զաւկին գլխուն դրած՝ աչքերը արտասուալից երկինք վերցուցած էր։

Տխուր և դառն սրտով մտիկ կ'ընէր այս խօսքերը օրիորդը, երբ հայրը ոտքի վրայ ելաւ, հանդարտ էր բոլորովին և սկսաւ վեր վար շրջագայիլ, ու յանկարծ կենալով հրամայեց որ Վասիլը կանչեն, և երբ ան սոսկումով ներս մտաւ.

— Գնա, ըսաւ, բոլոր բանտարկեալները հոս բեր հիմա։

— Քանի վայրկեան յետոյ քառասունի չափ անձեր իր առջեւ շարուեցան շղթայակապ։

— Ամէնքն ասոնք ամբողջ ներկա՞յ են, հարցուց իշխանը՝ պակաս մէկը չկա՞յ։

— Ո՛չ, Տէր, պատասխանեց Վասիլի ռնգային ձայնը։

— Շո՛ւտ ասոնց շղթաները քակեցէ՛ք։

Ու երբ հրամանը կատարուեցաւ։

— Գացէք ձեր տուները, ազատ էք ասկից վերջը զիս և իմ յիշատակս նզովելու՝ անիծելու և հայհոյելու, միայն շնորհակալ եղէք և օրհնեցէք այս աղջիկը ինչ որ մինչեւ հիմա ապրեցաք և պիտի ապրիք՝ գիտցէք որ նէրա շնորհիւն է։ Տէ՛, աչքիս մի՛ երեւաք, գացէ՛ք։

Այնպիսի դառնութեամբ զրուցուեցան այս խօսքերը որ իբրեւ թէ ինքնիրեն կը վախնար, որ կրնար զղջալ և հրամանը ետ առնել։ Ուստի մարդիկն ալ զարմանքով և ահ ու դողով երբ՝ Միջնաբերդին դըռնէն դուրս ելան, մեծ ծանրութիւն մը գնաց իրենց վրայէն։

Բայց այս ամէն եղելութիւններուն առեն Մարգըրիտ նստած կը մտածէր թէ ի՞նչպէս կարելի էր այս քարսիրտ մարդուն սիրտը կակղեցնել, ուստի ելաւ վերջին ճիգ մըն ալ ընելու, վասն զի այս մարդը ի՞նչ աստիճանի անզգամ ալ որ ըլլար, իր հայրն էր, քովը մօտեցաւ։

— Սիրելի հայր իմ, ըսաւ, կը տեսնեմ թէ սոսկալի որոշում մը ունիս, բայց դուն չես մտածեր թէ ես քեզմէ զատ մէկը չունիմ աշխարհիս վրայ, դուն միայն իմ յոյսս և իմ պաշտպանս ես. ես առանց քեզի ի՞նչ պիտի ըլլամ։

Այս խօսքերով կու յուսար որ յուսահատ որոշումէ մը զինքը ետ կեցնէ. բայց Իշխանը այնչափ միամիտ չէր։

— Դուն պարապ տեղ կը վախնաս. աղջիկս, ըսաւ, ես դեռ իմ վերջին որոշումս չեմ ըրած, և զքեզ ալ պաշտպանութեան կարօտ չեմ գտներ, վասն զի երէկ դուն զիս պաշտպանեցիր, արդէն քու փափաքդ յայտնի է ինծի. դուն միշտ մենաստան մը քաշուիլ կ'ուզէիր, մենք զքեզ արգիլեցինք մինչեւ այս օրս, ուստի դուն հանգիստ եղիր. բոլոր քաղաքը դեռ կը պաշտպանէ և դու ուր որ ուզես կրնաս քաշուիլ։

Այս խօսքերը խստութեամբ ըսուեցան. ուստի հասկնալով Օրիորդը որ ճար չկար, տխուր իր սենեակը քաշուեցաւ՝ Աստուծոյ յանձնելով ինքզինքը և երեք անմեղները, հայրը և իր պզտիկ տղաքները, որ ուրիշներուն յանցանքը կը տուժէին:

Նոյն միջոցին որ ինք հօրը հետ վերոյիշեալ խօսակցութիւնը կ՚ընէր Տիկինը, տղան Բակուրա և Սրբազանը մէջտեղ կ՚իջնէին վարի մեծ գաւիթը՝ ուր զինուորներու խումբը կը կենար: Քանի մը կանթեղ տըկար և տխուր լոյս մը կը ձգէին. ուստի երբ այս մեր երեք անձերը սանդուխին վարը կեցան. բոլոր խումբը հոն ժողվուեցան իմանալու համար թէ ինչ կը նըշանակէր այս անսովոր այցելութիւնը:

Սրբազանը տխուր ձայնով մը սկսաւ վիճակին ծանրութիւնը նկարագրել, վերջը հոն բերաւ խօսքը թէ ինչպէս Իշխանը յուսահատ՝ բոլորովին հակառակ հրամաններ կուտար. երէկուան դատապարտածները այս օր կ՚արձակէր, թէ ինչպէս փոխանակ պատերազմի պատրաստութեան կամ բանակցութեան՝ մունջ և համր եղած՝ հարցումներուն նաև պատասխան չէր տար, և թէ ի՞նչպէս Օրիորդն անգամ իրմէ գոհացուցիչ պատասխան մը չէր կրցած առնել... Ուստի, աւելցուց Սրբազանը, թէ այսպիսի պարագայի մէջ Տիկինը և ինք Օրիորդը աղաչեր էին Բակուրա իշխանազունին՝ որ յանձն առնէ կառավարութիւնը այսպիսի ծանր պարագայի մէջ, որպէս զի քաղաքն անիշխանութեան չմատնուի:

— Մենք իշխանը միայն ձեզի տէր կը ճանչնանք, ո՞ւր է, թող գայ, ըսաւ ձայն մը:

— Մենք ձեզի հաւատարմութիւն չունինք աղաղակեց ուրիշ մը:

— Օրիորդը թող գայ, ան խօսի, սկսան գոչել խառն ձայներու բազմութիւն մը:

— Դուք մեզի պէս անպիտան էք. անպիտաննե՛ր, անզգամներ: Եւ ձայները կը բարձրանային ու գաւիթը

կը թնդար, մեր երեք անձերուն վիճակը վտանգաւոր էր. ետ դառնալ և սանդուխներէն վեր փախչիլ՝ անկարելի էր, գազանի մը կռնակ դարձնելը յայտնի է թէ յիմարութիւն է: Երեք անձեր, որ ինքզինքնին ծուղակի մէջ ձգեցին, բոլորովին չփութեցան. և իրօք ամէնէն քաջ մարդիկը նաև այդ արիւնալի և գազանային աչքերը տեսնէին, կարելի չէր սոսկում զիրենք չպատէր: Տիկինը իր բոլոր հնարիմացութիւնը ժողվելով նշան ըրաւ որ կ՚ուզէր խօսիլ. բայց հազիւ թէ փոքրիկ լռութիւն մը կը սկսէր, աղաղակները դարձեալ կը բարձրանային և անհնար կ՚ըլլար խօսք լսեցընել. այս տագնապին մէջ էին, երբ յանկարծ ճերմակ գիշերազգեստ մը հագած՝ մազերը ուսերէն վար թափած երեւցաւ Մարգրիտ, որ խառնակ աղաղակներէն կարծելով թէ Միջնաբերդն ալ առնուեր էր, մէկ ձեռքը ճրագ՝ միւսով եղբօրը փոքրիկ տղան գրկած դէպի սանդուխը կը վազէր, հայրն ալ՝ միւս տղան գիրկը՝ իրեն կը հետեւէր, երբ զինքը տեսան այս կէտին գազան զինուորները, պատկառանքի լռութիւն մը տիրեց, և տիկինը սիրտ առնելով.

— Ե՛կ, աղջիկս, ե՛կ, մեր զինուորները քեզ կ՚ուզեն որ խօսիս և հանդարտին, ըսաւ:

Եւ երեքն ալ մէկէն դէպի անոր կ՚ելնէին՝ սանդուխներէն ապահովուելու համար:

— Ապրի՛ օրիորդը, կեցցէ՛ օրիորդը, կը կանչէին զինուորները մէկ բերան:

Այս խառնակութեան և աղաղակներուն մէջ մայրը աղջկանը իմացուց քանի մը խօսքով թէ ինչէ՞ն էր այս դրդռութիւնը և թէ ինք միայն կրնար այս մոլեգին զօրականը հանդարտեցնել: Ուստի Մարգրիտ առաջ անցնելով սանդուխներէն քանի մը ոտք իջաւ՝ միշտ տղան գիրկը, ձեռքով նշան ըրաւ որ լռեն:

Գեղեցկութեան, երիտասարդութեան և առաքինութեան դրոշմ կնկան ճակատի վրայ՝ այնպիսի ազդեցութիւն ունի մարդիկներուն, որ անոնց գազան-

ները նաեւ անկից ազատ չեն. ուստի շուտ մը լռութիւնը տիրեց և Օրիորդը այսպէս խօսեցաւ.

— «Ձեզմէ շատերը իմ տղայութիւնս գիտեն. կան մէջերնէդ մարդիկ որ ես իբրեւ հայր ճանչցեր եմ, և որոնց պաշտպանութիւնը վայելեր եմ զանազան ուխտագնացութիւններու մէջ. մէկ յարկի տակ բնակած ամէնքնիդ իբրեւ եղբայր ճանչցեր էի մինչեւ այսօր և այնպէս կը յուսայի թէ մեր այս թշուառ վայրկեաններուն, մէկ սիրտ մէկ հոգի, մեր ցաւերը պիտի չաւելցնէք և այս վիճակէն ելնելու համար ինչ կերպով որ կարելի է ճարը միայն պիտի հոգանք։

Այս բարկացայտ աղաղակները՝ որ զիս այս վիճակին մէջ դուրս ձգեցին սենեակէս, այս անմեղ տղաքներուն արցունքները՝ որ զիս չփոթեցին, ինձ այնպէս կարծել տուին թէ թշնամին առեր է մեր այս վերջին ապաստանն ալ ու մեզ գերութենէ զատ ուրիշ բան չէ մնացեր։

«Այժմ կը տեսնեմ թէ մենք մեր տանը մէջ խըռովութիւն կը հանենք, զիրար կ'ուզենք հարուածել. մի կարծէք թէ այսպէս մէջերնէս մէկը օգուտ կըրնայ քաղել, պէտք է ամէնքս լաւ ըմբռնենք թէ մեր մէջէն ան որ հիմա վազէ այս դուռը բանալու և ներս հրաւիրէ թշնամին, էն արհամարհը ինքն է անոր աչքին, մատնութեան պէս ի՜նչ կայ աշխարհիս վրայ, ո՜վ մէջերնէս Յուդայի անունը և բաժինը կուզէ ժառանգել։ Ո՛չ ոք։ Այս աղաղակները, այս կիրքը նաեւ ի՜նչ գէշ հետեւանքներ պիտի բերեն։

«Հանդարտի՛նք, եղբայրներ, ձեր մէջէն կը տեսնեմ ես քանի մը խոհեմ ծերեր, անոնց խորհուրդ հարցուցէք, անոնք իբրեւ հայր յարգեցէք, անոնց խօսքերը մտիկ ըրէք, բանի մը եթէ կը փափաքիք՝ անոնցմով մեզի իմացուցէք, Իշխանը՝ իմ հայրս, գիտէք որ քիչ մը հիւանդ է, այսպիսի աղաղակներով իր վիճակը կը ծանրանայ և դուք տիրասպան ըլլալու նախատինքն ու աղտը ձեր անուան վրայ կը դրոշմէք. զգուշացէք։»

Այս խօսքերը լուրջ և տխուր դառնութեամբ մը խօսուած, բեմի վրայէ տրուած քարոզէ մը աւելի ազդեցութիւն ըրին այս աւազակներուն վրայ, և այս մաքուր շրթունքներէն ելած խօսքերը իբրեւ թէ զանոնք մկրտեցին, հազիւ թէ մէկ քանի խնդուկներ.

— Կեցցէ՛ Օրիորդը, պոռացին։

Ամէն բերնէ «Լռութիւն» բառը զանոնք պապանձեցուց. և մեր իշխանական ընտանիքը խաղաղութեամբ ելան իրենց սենեակները։ Մարգրիտ տղեկը յանձնեց հարսին և ինք առանց ուշադրութիւն ընելու մօրը, եղբօրը, և Սրբազանին գովասանական անհամ խօսքերուն, որ վտանգէ ազատելնուն ինչ ըսածնին չէին գիտեր, լի դառն գուշակութեամբ հօրը հովանոցը ուղղուեցաւ, հազիւ թէ դրանը մօտեցաւ, իր ծեր և մունջ Մարտիրոսը տեսաւ որ անսովոր համարձակութեամբ՝

— Օրի՛որդ, մի մտներ, հոս ի՞նչ բան ունիս։

Այս արգելքը զինք իր համոզման մէջ հաստատելով՝ արգելքը վանեց և տախտին մօտեցաւ՝ ուր սովորաբար իր հայրը կը հանգչէր, և տեսաւ հոն տարածուած՝ սուր մը սրտին գամուած՝ արիւնը որ առուակի պէս կը վազէր, հասկցաւ որ ամէն բան լըմնցեր էր. չոքեցաւ հոն բազմոցին եզերքը, նայեցաւ այն աստեղազարդ երկինքին, իր մտքին աչքերը դեռ անդին՝ աւելի բարձր ողորմութեան Աստուածը տեսան, որուն գթութիւնը անսահման է և անչափ, անոր աղօթեց, իր թշուառ հօրը ձեռքերուն վրայ դըրաւ իր շրթունքները իր մաքուր և որդիական արցունքները որ արիւնը կը լուային, ինք կը հաւատար թէ ոճիրները նաեւ կը լուային երկինքը. և երբ աղօթքը լմնցուց և հովանոցին դռնէն դուրս ելաւ, տեսաւ զինուորներուն ութ տասը հատ ծերերը շարուած որ իրեն կը սպասէին և ամենայն յարգանօք իրեն ըսին.

— Ո՛ ազնիւ օրիորդ, Աստուած քեզ մխիթարու.

թիւն տայ. ինք Տէրն ողորմի մեր իշխանին հոգւոյն, մեր բոլոր զինուորականները իրենց ցաւակցութիւնը քեզ կը յայտնեն զմեզ պատգամաւոր ուղարկելով և կը խնդրեն որ իրենց աղաչանաց մտիկ ընես և յանձն առնես յաջորդ ըլլալ հօրդ, քուկին իմաստութեամբ և առաքինութեամբ անօրինես: Իրենք յայտնի կ'իմացնեն թէ ոչ Տիկինը՝ ոչ Սրբազանը և ոչ քու եղբայրդ Բակուրա իշխանը, իսկ եթէ դու յանձն չես առներ, այն ատեն իրենք գիտեն իրենց ընելիքը և անոր համար ալ առաջուց թողութիւն կուզեն:

— Ասանկ վայրկենի մը մէջ, գոնէ մինչեւ վաղն առաւօտ ինծի ժամանակ պէտք է տաք խորհրդածելու ձեր այս առաջարկութիւնը գիտէ՞ք որչափ ծանր է, ամէն կարգ կանոն տակն ու վրայ կընէ, և աշխարհք ինչ կը զրուցէ երբ ես իմ մէկ հատիկ եղբայրս զրկեմ ժառանգութենէ՝ հօրս դիակը դեռ հող չմտած: Խնդրեմ. այսպիսի բռնաւորական գործ մի՛ ընէք, և նայինք թէ ո՛չ վերը, ո՛չ վարը բաժանում չըլլայ մէջերնիս, ձեզ իբրեւ հօր անոնց իբրեւ եղբօր կաղաչեմ իմ այս խօսքերուս վրայ մտածել:

Առանց պատասխանելու ծերերը ելան գնացին, և Օրիորդը հազիւ թէ իր սենեակը մտաւ, զարմացաւ տեսնելով հոն մայրը, եղբայրը և անբաժանելի Սրբազանը, որոնք սոսկումով պատած սկսան աղաչել իրեն որ յանձն առնէ ամէն առաջարկութիւն, ամէն իշխանութիւն, միայն թէ զիրենք և իրենցկեանքը ազատէ այս կատաղի աւազակներու գնդին ձեռքէն, որ իրմէ զատ բանէ մը չէին ակնածեր, և որ վարը արդէն Վասիլը յօշոտելով պատառելով սպաննած էին, իբրեւ լրտես և բանսարկու: Իսկ երբ Օրիորդը իրենց պատմեց թէ ինք ինչպէս պայման դրած էր մինչեւ առաւօտ սպասելու, սկսան երեքը միաբերան լալ, ողբալ և կոծուիլ, մանաւանդ Սրբազանը, թէ շատ գէշ բան եղած էր, և թէ շատ կարելի էր «Այդ անզգամ չարագործները՝ որ ոչ Աստուծմէ կը վախնային և ոչ

մարդոցմէ կ'ամաչէին, դառնային գային և անկարծելի ոճրագործութեանց ձեռք զարնէին:»

Սենեակին դուռը բաց էր երբ այս խօսքերը ըսուեցան, Աւագին գլուխը ներս երկնցաւ նոյն վայրկեանին և իր երկու բոցի պէս աչքերը իր սեւացեալ երեսին վրայ փայլեցան նստողներուն աչքին. դաժան երեսներով և սպառնալից ձայնով այս խօսքերը արտասանեց.

— Օրիո՛րդ, մեր գունդին կամքն այս է որ կամ հիմա յանձն առնէք ամէն իշխանութիւն, կամ թէ ոչ որոշ յայտնէք և մենք գիտենք ընելիքնիս:

— Թէ որ միաբան այդ որոշումը ունիք մէջերնիդ, թէ որ միաբան իմ ամէն հրամաններուս պիտի հնազանդիք, ինչպէս հօրս միշտ կը հնազանդէիք, լա՛ւ, կ'ընդունիմ, բայց թէ որ իմ անուանս քօղին տակ ամէն անկարգութիւն պիտի տիրէ, ես գիտեմ հօրս ետեւէն երթալու ճամբան:

— Մի՛ վախնար, մենք ամէնքս կեցեր ենք, քու խօսքերդ Աստուածամօր խօսքի պէս պիտի ընդունուին, հոգ մի՛ ըներ, օրիորդ:

— Մենք կեցեր ենք հոս ամէնքս, ըսին տասը ձայներ որ դուրսը կեցեր էին և որոնցմէ ոմանց գլուխները կ'երեւար, ոչինչ պակաս ահարկու քան Աւագինը:

— Հրամայէ՛, ուրեմն, իշխանուհիդ, ըսաւ Աւագ, որ երեւաս մեր զօրականին:

— Վայրկեան մը ինծի ժամանակ տուէք, ըսաւ խեղճ աղջիկը արցունքը սրբելով, և վրան սեւ հագուստ մը ձգեց, ու ետքը միայն իր Մարախրոսը առած իջաւ վարի գաւիթը՝ ուր բոլոր զինուորները ժողվըուած իրեն կը սպասէին:

Հոն, Աւագ՝ օրիորդին կողմանէ եղած պատասխանը հաղորդեց, այն ատեն գաւիթը թնդաց, վասն զի «Կեցցէ՛ մեր իշխանուհին» բառերը երեք հարիւր բերան որոտացին:

Օրիորդն ալ քանի մը բառերով յորդորեց զիրենք

որ երթան հանդչին և իրեն ալ ժամանակ տան որ կարենայ հանդարտիլ և գիտնայ թէ ի՛նչ պիտի ընէ։

Զինուորները իրենց խշտիները քաշուեցան։ Օրիորդը ծանր ծանր և մտախոհ կ'երթար իր սենեակը պարագաներուն դառնութեանը վրայ խորհրդածելով և առաջադրելով որ այս վիճակէն ազատած օրը՝ իր փափաքած կուսանաց վանքը քաշուի անդանդաղ։

Միւս կողմէն կը կշռէր վիճակը, կը տեսնէր թէ անկարելի էր դէմ դնել այսպիսի անկարգ աւազակներով Թորոսի պէս թշնամիի մը առջեւ, ուստի կը մըտածէր թէ՝ ի՞նչ դաշինքներով կարելի էր պատուով ազատել ընտանիքը, և այս խորհրդածութեամբ յուզուած, հազիւ թէ առաւօտեան դէմ մրափ մը առաւ իր անկողնին վրայ նստած և արշալոյսին հետ արթընցաւ։

Առաւօտուն Սմբատի մարմինը դիապատուեցաւ, սենեակի մը մէջ դրուեցաւ օրիորդին հրամանով։ Ընտանիքը ժողովի կանչեց և անոնց միտքը հարցուց, բայց տեսաւ թէ անոնք ահաբեկած՝ այն վիճակէն ազատիլ միայն կը փափաքէին և ամէն բան իրեն կը թողուին։

Ուստի, առանց ժամանակ կորսնցնելու, ձի մը պատրաստել՝ քանի մը ծեր զօրագլուխներուն իրեն հետեւիլ և Միջնաբերդին դուռը բանալ հրամայելով՝ ուղեց որ իմացնեն Թորոսի թէ պատգամաւոր պիտի գար խաղաղութիւն խօսելու.

Բոլորովին սեւեր հագած, սեւ ձիու մը վրայ հեծած, տխուր և գլխացը նայելով՝ մազերնին ճերմկած՝ արեւէն սեւցած զինուորներէ շրջապատուած կ'երթար իշխանուհին, և բոլոր քաղաքը՝ որ արդէն զինքը կը ճանչնային և կը յարգէին, գիտնալով թէ հօրը ազաւորն էր՝ աւելի ակնածութիւն կը ցուցնէին. կիները դռները և տանիքները կը լեցուէին տեսնելու համար զինքը։

— Աստուած զքեզ մխիթարէ, Աստուած զքեզ

օրհնէ, Աստուած քեզի երկայն օրեր տայ, ձայները ետեւէն կը հասնէին։

Ոչ միայն զարմանալի էր Սմբատին մահուան լուրին տարածուիլը բոլոր քաղաքին մէջ, այլ նաեւ ժողովրդեան կիրքերուն ներողամիտ լռութիւնը որ թէպէտ լի էր ատելութեամբ անոր յիշատակին դէմ՝ այլ թշուառ և առաքինի աղջկան մը ականջին ծանր և նախատինքի բառ մը չլսեցուց։

Երբ քաղաքին դռնէն ելաւ օրիորդը և բանակին մօտեցաւ, տեսաւ խումբ մը հետեւակ մարդիկ որ իրեն կուգային, առաջնորդները իմացուցին թէ իշխանը անձամբ կուգար զինքը դիմաւորելու. մէկէն Մարգրիտ իջաւ ձիէն։ Թորոս մօտենալով և ողջունելով, կրկին կրկին հրաւիրեց դարձեալ ձի հեծնել մինչեւ վրանները. իսկ օրիորդը հրաժարելով հետիոտն կը քալէր լռութեամբ, մինչեւ որ հասան իշխանական վրանը ուր Եփիմէ եւս պատուով ընդունեց պատգամաբերը։

Մարգրիտ այն ընտրեալ և արտաքոյ կարգի բնաւորութիւններէն էր՝ որոնց լռութիւնը, նայուածքը, շարժմունքը նաեւ՝ կը խօսի և կ'արտայայտէ հոգւոյն կատարելութիւնը, և նոյն բնութեան վիճակուած անձերը իրար շուտ կը հասկնան։ Այնպէս ալ հոս հիմա Թորոս և Եփիմէ վայրկենին ճանչցան հանդիպեցաւ. օրիորդին բարձր բնութիւնը՝ ինչպէս նա ալ զանոնք ճանչցաւ և դատեց։

Քանի մը վայրկեան լուռ կենալէն վերջ, Թորոս հարկ համարեց խօսքը բանալու.

— Ազնիւ իշխանուհի, ձեր այսպիսի պատգամաւորութիւնը պատիւ կը համարիմ, և կը փափաքիմ որ այնպիսի առաջարկութիւններ ընէք՝ որ առանց արեան կաթիլ մը թափելու կարենանք խաղաղութիւնը կընքել, և այս կռիւը՝ որ եղբայրասպան կրնայ համարուիլ՝ վերջացնենք։

— Ո՛վ մեծ իշխան, պատասխանեց Մարգրիտ, ես

պայման չեմ բերած․ հոն՝ ներսը՝ ընտանիք մը կայ, որ
իրեն սուգին մէջ՝ դաշնագրի պայմաններու մտածե-
լու վիճակի մէջ չէ․ ձեր իմաստութիւնը կրնայ երե-
ւակայել՝ ես չեմ երկայնաբաներ․ ձեր վեհանձնութիւ-
նը ինչ որ կամի՝ պատրաստ եմ ստորագրել, միայն թէ
ձեր սրտէն և ոչ մեր վարմունքէն՝ կը խնդրեմ որ թե-
լադրուի։

— Ես ներսի Միջնաբերդին ընտանիքին վիճակէն
և սրտիս վեհանձնական թելադրութենէն աւելի առա-
քինութեան տիպար մը ունիմ առջեւս, ուրեմն նա
հիմա թող հրամայէ և երաշխաւորէ որ ասկից վերջը
մարդասիրութեան օրէնքներ պիտի կառավարեն Ա-
նարզաբան, ես իմ ժառանգական բոլոր իրաւունքնե-
րէս կը հրաժարիմ, և բանակիս կը հրամայեմ հիմա
այս վայրկեանիս ասկից հեռանալ։

— Այսչափ վեհանձնութեան և այսչափ մարդա-
սէր առաջարկութեան պէտք էր որ ես ուրախու-
թեամբ յանձնառութիւն ցուցնէի, և դժբաղդաբար
պիտի չկարենամ, ո՛վ եմ ես՝ որ երաշխաւորութիւնս
այնչափ արժէք ունենայ․ թշուառ աղջիկ մը պատ-
րաստ է սիրով և սրտանց աշխարհէս հրաժարելու և
այս պաշտօնը միայն քանի մը անմեղ անձերու ապա-
գային համար յանձն առած է։

— Բայց ես իմացայ թէ բոլոր զօրականներու և
ընտանիքին միաբան ընկերութեամբ ձեզի կատարեալ
յաջորդական իշխանութիւն տրուեր է և դուք ընդու-
ներ էք։

— Այո՛, ընդուներ եմ, որպէս զի ինչչափ որ կա-
րելի է մարդկային արեան հեղեղները կարենամ ար-
գիլել և անկարգութիւնները սանձահարել, մի միայն
ասոնց համար։

— Լա՛ւ, իշխանազուն Օրիորդ, ես իմ պայման-
ներս ըսի, ձեզ կը մնայ ձերիններն ինձ հաղորդել։

— Իմինները չափաւոր են և գոհացուցիչ մեր վի-
ճակին և մեր անցեալին համար․ Անարզաբայի փոխա-

րէն մեր հայրենի Պապեռոնի դղեակը շնորհուի, ուր
եղբայրս իր ընտանիքով և մայրս բնակին ու ապրին,
իրենց ամէն ստացուածքը հոն փոխադրելու իրաւունք
ունենալով։

Բ․ մինչեւ այսօր հօրս ծառայող զինուորները իւ-
րաքանչիւրը իրենց աստիճանով ընդունուին ձեր բա-
նակին մէջ ծառայելու պայմանով։

— Միայն բան մը մոռցաք․ Ձեր անձին համար
բան մը չորոշեցինք։

— Շատոնց որոշուած էր վիճակս՝ թէ որ թշուառ
հօրս կամքը արգելք չըլլար, ուրեմն, հիմա Աստուած
ինչ տնօրինած է՝ թող կատարուի։

Այս խօսակցութեան երկու հոգի միայն ներկայ
էին Եւփիմէ և Ստեփանէ։ Ամէնն ալ այս ազնուական
աղջկան պարզ համարձակութեան վրայ կը զարմանա-
յին վասն զի իւր որոշումները յայտնի կ'երեւար․ և
այդ չնաշխարհիկ ծաղիկին թառամիլը տխրութեամբ
կը լեցնէր զիրենք։

— Ճշդենք ամէն պայմանները, ըսաւ Թորոս։
Ա․ Անարզաբայ Միջնաբերդը ինծի պիտի յանձնուի։
Բ․ Ես ձերայնից՝ հոս մօտիկ՝ Պապեռոնի ամուր բեր-
դը պիտի տամ, որու հիմա բանալիները ինծի բերուե-
ցան։ Գ․ Ձերայինք՝ իրաւունք ունիք ամէն ինչք և
ստացուածք առնել և ելլել։ Դ․ Ով որ ձեր հայրենի
զինուորներէն յանձն առնէ իմ ծառայութեանս մտնել
իւրաքանչիւրը իր աստիճանով ընդունելի ըլլայ։

— Ե․․․ ըսաւ և կեցաւ Թորոս առանց շարունա-
կելու։ Օրիորդը ուշադրութեամբ սպասեց և երբ տե-
սաւ որ չէր խօսեր՝ ըսաւ․

— Խիստ դաշինք մը կ'երեւայ թէ ձեր վեհանձ-
նութիւնը կարգիլէ։

— Դուք դատեցէք։ Ե․ Անարզաբա քաղաքին կա-
ռավարութիւնը և եկամուտը Մարգրիտ Իշխանուհիին
կը վերաբերի յաջորդաբար։

Այս խօսքերը լսելուն, կարմրութիւն մը պատեց Օրիորդին երեսը և պատասխանեց,

— Ո՛վ մեծ Իշխան, ձեր հինգերորդ դաշինքը ձեր սրտին վեհանձնութեան արդիւնքն է, ես իբրև կատակ մը կը լսեմ· արդէն նա որ աշխարհք կը ձգէ առանձնութեան և Աստուծոյ համար՝ ոչ ժառանգութեան պէտք ունի և ոչ յաջորդութեան։

«Դարձեալ ձեր մեծութիւնը պէտք է գիտնայ թէ ես շատ ուշացայ հոս և սիրտս հանգիստ չէ, վասն զի հոս ինչ որ կը խոստանամ՝ չգիտեմ թէ ազատ պիտի ըլլա՞մ հոն բերդին մէջ գործադրելու։

— Առջի ըսածնուդ վրայ իբրև հին և բազմամեայ բարեկամ մը՝ կը խնդրեմ և կը պահանջեմ որ արտորնօք որոշում մը չընէք, ես թէ որ անհոգանամ՝ ապահով եմ որ հոս ուրիշ մը կայ որուն ձեռքէն չէք կրնար ազատիլ, ըսաւ Թորոս Նեփիմէի նայելով՝ որ գլխով ըսածը կը հաստատէր, իսկ վերջի ըսածնիդ կը խնդրեմ մեկնել վասն զի չեմ հասկնալ։

Այն ատեն Մարգրիտ վրանին դրանը աչք մը ձըգեց· Թորոս զինքը ապահովցուց թէ մէկը չկար իրենց խօսքը մտիկ ընելու համար, ուստի Օրիորդը բերդապահ զօրականին նկարագիրը ըրաւ համառօտիւ և պատմեց թէ ինչպէս իր ներկայութիւնը միայն բոլոր գիշեր կրցեր էր զիրենք հանդարտեցնել։

Թէպէտ այս պատմութիւնը՝ իր գովասանութեան մասին շատ համառօտ էր, բայց իրերը և վիճակը այնչափ յայտնի էին որ ամէնքը զարմանքով լեցուեցան և Թորոս որ բաւական սրամիտ էր մասէն ամբողջը գտնելու համար, ոտքի վրայ ելաւ և ձեռքը տալով Օրիորդին ըսաւ·

— Ինչ պարագայի և ինչ վիճակի մէջ որ գտնուիք հիմա, վաղը, ապագային, կը խնդրեմ և պարտաւորութիւն կը ձգեմ ձեզ ինծի դիմել, և ես ձեռքէս եկածը թէ որ չընեմ յանցաւոր եմ առջի Աստուծոյ։ Ահա եղբայրս Ստեփաննէ և կինս Նեփիմէ վկայ ըլլան իմ

երդման։ Արդէն ես հիմա քաղաքապահ զօրքերուն հրաման կուղարկեմ որ ձեր ամէն ակնարկութիւններուն հնազանդին իբրև ինծի։

— Թէ որ հրաման ընէք, ըսաւ եղբայրը Ստեփաննէ՝ որ մինչև այն վայրկեանը բերանը չէր բացեր, այլ խորին ուշադրութեամբ մտիկ կ'ընէր եղբօրը և Օրիորդին խօսակցութիւնը՝ ես ալ կ'ընկերանամ Իշխանուհիին և ինչ որ հարկ տեսնէ կը գործադրեմ։

— Շատ լաւ կ'ըլլայ, եղբայր իմ, միայն թէ ինք ինչ որ հրամայէ՝ այն մինակ գործադրէ։

— Այս այդպէս։

Եւ ահա պատգամաւոր խումբը ճամբայ ելաւ, և Թորոս մէկ երկու անգամ յանձնարարելով Ստեփաննէի զգո՜յշ ըլլալ, և ընկերանալով անոնց մինչև բանակին մուտքը ետ դարձաւ։

— Ի՞նչ կը մտածես, Նեփիմէ, ըսաւ Թորոս, Սըմբատի պէս գազանի մը այս հրեշտակ զաւակին· թէ բոլոր Անարզաբայի բնակիչները, գործերը չվկայէին թէ իմաստութիւն և առաքինութիւն անձնաւորուած է անոր մէջ՝ չէի հաւատար։

— Շատ լաւ եղաւ որ Ստեփաննէ ներկայ էր այս խօսակցութեան, ըսաւ Նեփիմէ, ուրախ ժպիտով մը, թէ որ մեր երկուքին վրայ այնչափ ազդեցութիւն ըրաւ օրիորդին հոգւոյն և դէմքին գեղեցկութիւնը, ինչ կը յուսաս Ստեփաննէի վրայ։

— Թէ որ Ստեփաննէ ուզէ, և Մարգրիտ յանձն առնէ, ասկից յարմար և օգտակար բան մը չեմ կրնար երևակայել ու փափաքիլ· Ստեփաննէ այն ատեն ապահով մերն է։

— Ի՞նչ ըսել կ'ուզես, չեմ հասկնար։

— Այն կ'ուզեմ ըսել որ իմ այս երկու եղբայրներս որոնց քաջութեան և կորովին համար կասկած ունենալ կարելի չէ, դժբաղդաբար մեզի հետ գերի չէին եկած Պոլիս, այլ աստանդական բարբարոսներուն մէջ, զուրկ ամէն բարոյականէ՝ ամէն կրօնական սկզբունքէ՝

ամէն ուսմունքէ՝ ամէն բարի օրինակէ, իրենց փափուկ տարիները անցուցեր են սուր և նիզակ շարժելով՝ աջ ու ձախ շահատակելով և ամէն անգթութիւններու՝ ոճիրներու մասնակցելով։

Մլեհի համար ես յոյս չունիմ, վստահութիւն չունիմ, ինք կորսուած երիտասարդ մըն է։ Ստեփանէի համար կը մտածէի, հիմա թէ որ այս դիտողութիւնդ ստուգուի, այսպիսի կին մը ինչ որ իրեն կը պակսի՝ կը լեցնէ և ես այս ծանր գործիս մէջ, որուն դեռ ըսկիզբն ենք, աջ բազուկս գտած կ'ըլլամ և դժուարութեան մը տեղ օգնութիւն մը կ'ունենամ։

— Դու անհոգ եղիր, այս գործը իմս է, և ես կը խոստանամ ի գլուխ հանել։

— Ինչ դիւրութիւն որ ուզես իմ կողմէս ամէնն ալ քեզի կ'ուտամ· Անարզաբան արդէն ես օրիորդին ժառանգութիւն համարեցի· դու կ'ուզես օժիտ համարէ, կ'ուզես սեփականութիւն· Ստեփանէ իրմով գերագոյն կին մը և դաստիարակ կ'ունենայ, և իր զաւակներուն ալ սքանչելի մայր մը։

— Ուրեմն անոնց ետևէն ես ալ քաղաք կ'երթամ։

Եւփիմէ ելաւ Բարկէնին հետ Անարզաբա երթալու երբ Թորոս իր անբաւ զբաղումներուն հետ սկսաւ պարապիլ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ

Յարմար և ճիշդ ժամանակին հասաւ Մարգրիտ Անարզաբայի Միջնաբերդը և իրեն կասկածները արդէն այդ սրիկայ և անզգամ զինուորներուն համար շատ իրաւացի էին, վասն զի ոմանք մէջերնէն սկսած էին մտածել թէ կարելի չէ՞ր արդեօք իշխանուհիին ընտանիքը պատանդ ունենալով ձեռուընին, Սմբատին բոլոր ստացուածքը իրենց գրաւել և այսպէս իրենց օգտակար դաշինք մը գնելով յանձնել Միջնաբերդը թշնամիին։

Սակայն իր ներկայութիւնն ամէն այդ խորհուրդները հալածեց և ամէն գրգռութիւն հանդարտեցուց· առանց ժամանակ տալու Միջնաբերդին դրանը տիրեց Ստեփանէ, և Ռուբինեան Խաչի Դրօշը սկսաւ ծածանիլ փոխանակ յունական դրօշին, որ բոլոր քաղաքին և բանակին ուրախութեան աղաղակը իմացուց Թորոսի։

Նոյն միջոցին էր որ Մարգրիտ կ'իմացնէր մօրը և եղբօրը թէ իրենց համար շնորհուած կար Պապեռոն, և անոնք մեծ ուրախութեամբ ընդունեցին այս պայմանը և սկսան իրենց փոխադրութեան պատրաստութեան։ Միայն թէ երբ որբազանը Միջնաբերդէն դուրս ելաւ, քահանայ և ժողովուրդ միաբան դատախազ կայնեցան, և խնդրեցին որ օրինաւորապէս դատուի և մինչև նոյն ժամանակ եպիսկոպոսարանը արգիլուի, և Թորոս հաւանեցաւ կաթողիկոսին գրել Ծովքի դղեակը՝ որպէս զի ժողովրդեան արդար պահանջքը կատարուի։

Մենք աւելորդ կը համարենք անարժան և գայթակղեցուցիչ եպիսկոպոսի մը վրայ դառնալ՝ որ ըստ

իր անառակութեան արժանիքին՝ վանքի մը մէջ ապաշխարելու դատապարտուեցաւ. երանի թէ իր զղջումն ալ սրտանց ըլլար՝ որպէսզի հանդերձեալ կենաց մէջ երկրորդ և մեծ դատապարտութենէ մը ազատ ըլլար։

Իսկ Մարգրիտ որ որոշած էր՝ ոչ թէ ուրիշներուն բռնադատութիւնովը այլ իր կամքով և փափաքով հեռանալ աշխարհէ, և չգործած մեղքերուն համար ապաշխարել, Եւփիմէի ու Ստեփաննէի աղաչանքներուն զիջանիլ, և քանի մը ամիս վերջը Անարզաբայի իշխանական պալատին մէջ իր պսակի հանդէսը կը կատարուէր լռելեայն, ուրախութեամբ բոլոր քաղաքին բնակիչներուն, որ տղայութենէն իր առաքինութեան և իմաստութեան վրայ մեծ համարմունք ունէին և զինք կը սիրէին։

Աւելորդ է ըսել թէ Թորոսի գուշակութիւնը իր եղբօրը վրայ բաւական կատարուեցաւ. Ստեփանէ իր կնոջ ազդեցութեամբ սիրելի եղաւ ժողովրդեան և եղբօրը՝ ու շատ անգամ օգտակար գործիք անոր դիտաւորութիւններուն գործադրութեան։ Ընդհակառակն Մլեհի խստերախ և վայրենի բնաւորութիւնը վտանգ մըն է նորածին իշխանութեան։

Ինչչափ որ Թորոս արդարութեան և քաղցրութեան վրայ հիմնել կը ջանար իր տիրապետութիւնը, նոյնչափ Մլեհ ամբարեհաճութեամբ և անխորհուրդ խըստութեամբ կ'օտարացնէր սրտերը իրմէ, և եղբօրը բոլոր արթնութիւնը պէտք էր անոր զառանցանքը ուղղելու համար։

Անարզաբայի առումը երկրին ամբողջութիւնը մասամբ կ'ապահովէր. Թորոս հայրենի իշխանութեան կատարեալ տէր ըլլալով, սկսաւ ներքին բարեկարգութեան. զինուորական կրթութիւնը ընդհանուր ըրաւ, այնպէս որ Տորոսաբնակ ամէն Հայ զինուոր էր տղայութենէ մինչեւ ի ծերութիւն, դատաւորական իշխանութեան և իրաւունքներուն վրայ խստիւ կը հսկէր, ոչ միայն որ բնականէն անիրաւութեան թշնամի էր,

այլ նաեւ անոր համար որ լաւ համոզուած էր թէ առանց արդարութեան ո՛և իցէ իշխանութիւն մեծ ու փոքր կը կործանի։

Ելեւմտական մատակարարութիւնը լաւ և բնայուն վիճակին մէջ դնելով, չափազանց ծախքերէ և չափազանց տուրքերէ կզգուշանար և կը զգուշացնէր։ Կրօնասէր էր առանց կրօնամոլութեան, գիտէր յարգել Կրօնքն ու Եկեղեցին, չշփոթելով անոնց հետ եկեղեցականնին անկարգութիւնը ու տգիտութիւնը։

Այնպիսի խառնաշփոթ և անիշխանութեան ժամանակի մէջ, ուր անկարելի էր ապահովութիւն, ամէն շրջակայ իշխանութիւններուն քով լրտեսներ կը հաստատէր, գիտնալու համար թէ ուսկից իրեն վտանգ կրնար հասնիլ կամ օգուտ, վասն զի ոչ խոստումները ոչ դաշնագրութիւն, ոչ երդումներ նշանակութիւն չունէին ամենեւին։ Քրիստոնեայ և Մահմետական իրենց օրինաց գրքերը խաբէութեան գործիք ըրած էին, դիւրութեամբ խարդաւանելու համար այլակրօն ու կրօնակիցը. ընտանիքին և բարեկամներուն մէջ դաւաճանութիւն՝ օրէնք դարձած էր, անգթութիւն և մատնութիւն բնութիւն էր եղած։

Յոյն և Փռանգ, Հայ և Ասորի, Պարսիկ և Արաբ, Թուրք և Թաթար, կատաղի պատերազմներ կը մղէին, երէկ զօրաւոր թագաւոր մը՝ վաղը մուրացկան մը, գերի մը կրնար դառնալ. երէկ տկար կին մը՝ վաղը բերդերու, գիւղերու և քաղաքներու տիրուհի մը ըլլար, և այսպէս անհաստատ և անկայուն վիճակի մը դատապարտուած էր ամէն ոք, հոս գերի ժողովուրդ մը՝ անդին ազատ էր և տէր. ճիշդ այս ժամանակին համար էր գուշակութիւնը՝ «Յարիցէ ազգ ազգի վերայ և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ.»

Եւրոպա իր հրոսը Փոքր Ասիոյ և Պաղեստինու վրայ կը պարպէր, և Թաթարներու խուժանը կը յորդէր Կասպիականին ետեւէն, հին ազգութիւններու

արմատներ կը ցնցուէին, նոր ազգութիւններ կ՚ընձիւղէին, քաղաքներ և ամրութիւններ կը տապալէին, նորեր անոնց տեղ կը բուսնէին: Այս վիճակը կը տեսնէր Թորոս և կը մտածէր իր շինութեան հաստատ հիմ մը ձգել:

Ինք կը տեսնէր Կիլիկիա ուր ամէն ազգերու խառնուրդ մը կը բնակէր, Յոյն՝ Արաբ՝ Թուրք՝ Հայ՝ Ասորի ցիրուցան իրենց որջերը շինած էին, Բիւզանդական կայսրութիւնը ինքզինքը տէր կ՚անուանէր երկրին, թէպէտ շատ տարիներէ իվեր իր իշխանութեան ոչ միայն հիմերը խախտուած էին՝ այլ երեւոյթն անգամ կ՚անհետանար:

Արաբները առջի հարուածը տուած էին նոյն իշխանութեան, և անոնց ակարանալէն վերջը շարունակ պատերազմի դաշտ մը եղած էր երկիրը այս զանազան ժողովուրդներուն մէջ: Իր ջանքն եղաւ՝ իր ազգը որ ցրուած էր Փոքր Ասիա, Ասորեստան՝ Միջագետք և մինչեւ Եգիպտոս, գաղտնի հրաւիրակներով ժողվել ի Կիլիկիա և զօրացնել, մանաւանդ որ կը տեսնէր վտանգը, որ ամէն կողմէն իրեն կը սպառնար, իր դիտող՝ հեռատես և խոհուն սրամտութիւնը շատ հեռու էր այն անհոգութենէն՝ որ եղած յաջողութիւններուն վրայ կը քնանայ և զուարճութեան ու թուլութեան կը մատնէ ինքզինքը:

Ուստի քանի մը ամսուան մէջ ոչ միայն իր հայրենական երկրին մէջ էր Թորոս՝ այլ երջանիկ՝ գոհ և զուարթ ժողովուրդի մը հայրն էր, ան որ երբեմն մինակ իբրեւ հովիւ Սեւ լերան խորաբիտները այծերու հետ չափեր էր հետիոտն, հիմա շատ անգամ փոքրիկ բայց ընտիր գունդ մը առնելով բոլոր Տորոսի բերդերուն, աւաններուն, գիւղերուն անխոնջ այցելութիւն կ՚ընէր, ամէն տեղ յանկարծական զինքի հանդէսներ կ՚ընէր, դատաւորներու և իրաւարարներու վրայ տեղեկութիւն կ՚առնէր, անիրաւները կը պատ-

ժէր, քաջերն ու առաքինիները կը վարձատրէր, աւերակները կը շինէր՝ կը բնակեցնէր:

Ամէն տեղ ժողովուրդներուն ապաստանները կը պատրաստէր, և միանգամայն խստիւ կը պատուիրէր թշնամին չգրգռել, չարթնցնել այնպիսի ժամանակ և այնպիսի դրացնութիւններով ուր բարեկամ գտնել անհնարին էր, իսկ թշնամին միշտ ինքնայորդոր պատրաստուած:

Երբ իր անհամբեր եղբայրները և զօրավարները կը ցուցնէին իրեն, ամէն յարձակումներու անպատսպարան որս, Կիլիկիոյ լայնարձակ դաշտերը լի հարստութեամբ, երբ Մլեհ իրմէ կը խնդրէր Տարսոնի և մինչեւ ծով տիրելու համար՝ միայն ութը հազար զինուոր, Թորոս անուշ ժպիտով մը կը պատասխանէր:

— Ես քու քաջութեանդ վրայ վստահ եմ Մլեհ, և կը հաւատամ որ դու աւելի պակաս զօրքով կրնաս յաղթել ոչ թէ միայն Տարսոնի՝ այլ մինչեւ Սելեւկիոյ ալ տիրելու, և թէ որ չեմ ուզեր միմիայն պատճառը այն է որ, հոս այս փոքրիկ զօրութեամբ յունական թէեւ վատթարացած՝ մեծատարած կայսրութեան դէմ պատերազմիլ եթէ անկարելի ալ չէ շատ դժուարին է:

«Ասոր փորձը մեր հայրը ունեցաւ երբեմն և մենք ալ իրեն հետ շղթաներու՝ գերութեան և օտարին ծառայութեան մատնուեցանք տարիներով: Հիմա որ Աստուած մեզի ողորմեցաւ՝ մեր պարտքը մեր ժողովուրդը զօրացնել և աղէկ կառավարելն է:

«Օգնենք իրարու, սիրենք մէկզմէկ, ըլլանք մէկ սիրտ մէկ հոգի, զօրացնենք, շատցնենք մեր ժողովուրդը, բնակինք լեռները, ուր մեր ցուրտ երկրի բնիկ Հայը կորովի և քաջ կ՚ըլլայ, օրը հեռու չէ որ դաշտը մերինն է, գիտնանք համբերել և մեր փառասիրութիւնը չափաւորել:

Այս խօսքերուն պատասխան չէին տար Մլեհ և իր նմանները, այլ առանձին գանգատներ և լուտանքներ

կը թափէին անոր դէմ՝ որ իբր թէ կորովի բազուկնե-
րը կը ջլատէր և եռանդուն սրտերը կը սառեցնէր իր
խոհեմութեան քարոզներովը:

Շատ անգամ կը տեսնուէր Մլեհ Վահկայ բերդին
մօտ փոքրիկ հովանոցի մը մէջ իր մտերիմներէն շըր-
ջապատուած. խնձոյքներու և գինարբուքներու տուած
ինքզինքը՝ որ եղբօրը դէմ կ'որոտար, մանաւանդ այն
միջոցներուն երբ Թորոս օրերով իր քննութիւններուն
կը պտտէր:

— Տեսէք այս իշխաններուն իշխանը որ սուրհան-
դակի պէս լեռնէ լեռ կը վազվռտէ. ի՞նչ ընելու հա-
մար. հոս տասը քսան տուն գիւղացիներու հետ խօ-
սելու՝ համոզելու համար ճղճիմութեամբ. անդին դա-
տաւորի մը վճիռը անիրաւ գտնելու համար. քիչ մը
հեռուն եկեղեցի մը շինել տալու համար, և ասոնք
ընողը այն մարդն է՝ որուն խիստ կերպարանքը, կա-
մաց ձայնը և ծանր ծանր խօսակցութիւնը և ձեւը,
իշխաններուն՝ ազատներուն՝ ազնուականներուն և ին-
ծի՝ իր հարազատ եղբօրն անգամ՝ սանձ մըն է ոչ թէ
վիճելու, այլ խօսելու նաեւ: Ստեփանէին համար ի՞նչ
ըսեմ, տղուն գլխուն այնպէս կախարդ կին մը հանեց,
որ ոտքով ձեռքով կաշկանդուեցաւ և եղբօր կապիկը
դարձաւ. ի՛նչ որ զրուցես, ինչ որ առաջարկես, «Մեր
եղբօրը պէտք է հարցնել, անոր հաւանութիւնը պէտք
է առնել» կ'ըսէ, և կնկանը երեսը կը նայի, երես մը՝
ուր օր մը ժպիտ չէ ծագած. լուրջ կերպարանք մը՝
որ իբրեւ թէ միշտ Աստուծոյ սեղանին առջեւն է: Ես՝
եղբայրը, ես՝ իր այնչափ տարուան ընկերը, խնձոյքի
մը զինքը չկրցայ հրաւիրել, կինը հրաման չտար, ինչ
որ առաջարկես, մէկ մը աչքը կնկանը կը դարձնէ,
բան մը հարցնես՝ կնկանը կը նայի, առանց կնկանը հը-
րամանին ոչ կ'ուտէ, ոչ կը խմէ և ոչ Անարզաբայի
պարիսպներէն դուրս կ'ելլէ...:

«Բայց մի կարծէք թէ կախարդը միայն Անարզա-
բայի մէջ է, կախարդին մեծը այս դիմացը մեր Վահ-

կայ բերդը կը բնակի. այս հայ-հոռոմ կինը տեսա՞ք,
որ միշտ կը ծիծաղի, միշտ անուշ կը խօսի, միշտ
խօսքդ կատակի կը դարձնէ, միշտ հագուած զգուած
ծիրանիներով. բեհեզներով կը պտըտի, ճշմարիտ կա-
խարդը ան է:

«Աստուած վկա՛յ, քանի անգամ ես կռիւ փնտռե-
լու համար գացի, ծանր՝ խիստ խօսեցայ, ան կարծես
թէ ոչ իրեն համար, ոչ էրկանը համար էր խօսքերս՝
ժպտեցաւ, ծիծաղեցաւ, մրմնջեց, երգեց, վերջապէս
յուսահատեցայ՝ առի քալեցի:

«Եղբայրներ, ես այս կեանքը չեմ սորված, նստէ՛
նստէ՛, նստէ, սպասէ՛՝ որ Աստուած պատերազմ մը
ղրկէ որ կռուիս: Եթէ կարող ես գնա գիւղ մը, եկու
բարեկամիդ հետ՝ հաճոյքիդ եկաւ՝ գառնուկ մը մոռ-
թել հրամայէ, երկրորդ օրը կ'իմանաս թէ լուրը և
հաշիւդ ալ մէկտեղ եղբօրդ հասեր է:

«Ինչպէս կախարդ չըսեմ այս մարդիկներուն՝ որ
անուշ անուշ առջի օրէն քեզի հետ կը խօսին, քոյր-
եղբայր կ'ըլլան քեզի, հայրենի ժառանգութեան խօսք
չեն ըներ, հայրենի բերդդ ահա կեցած է, նահապե-
տական կեանքը գեղեցիկ է, Եղբայրներ մէկտեղ բնակին
վայելուչ է՝ սուրբին մէկն է ըսեր:

«Այս կախարդները՝ սատանային ալ, հրեշտակին
ալ կարդալ կը սորվեցնեն. պէտք եղածը առ ինչչափ
ուզես իշխանական գանձէն, մի՛ քաշուիր. նոյն գան-
ձը կը վճարէ հեծելազօրքիդ թոշակն ու ռոճիկը, բայց
զինուորական ատեան մը կայ որ քու մարդիկդ կը դա-
տէ՝ կը դատապարտէ՝ կը պատժէ առանց քեզի հար-
ցընելու, շատ անգամ ոչինչ պատճառներու համար,
ալ անկէ վերջը միտքդ դիր որ քու մարդիկդ քուկդ են:

«Անարզաբան Ստեփանէին որ տուին, այն յիմարն
ալ կարծէ թէ իրենն է, օտարին՝ թշնամին աղջկանը
տուին... ըսէք թէ՝ առ քու բաժինդ, ուզէ. գիւղա-
ցիին տղուն ինչպէս բերդ մը տուին՝ քեզ ալ բան մը

կուտան… ծովապատակին հաւասար եղիր, դու Ռուբէնի շառաւիղը:

«Դուն որ իշխան մըն ես, դուն Ռուբէնի թոռը, պէտք եղաւ՝ հարկ եղաւ գիւղացի մը յանդիմանել, պատժել, ծեծել. երկրորդ օրը՝ իշխան եղբօրդ քիթը կախ, ընքուիները քթին ծայրը իջած կը տեսնես. շաբաթ մը ժանիք կայ, ի՞նչ բանի համար, իմանալու է, ո՞ւսկից, ժանտերես մըն ալ կայ, ծառայ մը որ մեր տղայութեան ատեն, հիմա բերդակալ իշխան դարձած, անոր բերանը փնտռէ, քարէ մարդու բերան, եթէ շնորհ ընէ խօսիլ անգամ մը, այն ատեն կ'իմանաս թէ մեծ յանցանքը ո՛ւր է եղեր:

«Ես Հալէպի ամիրային քով շատ մեծ մարդ էի, երբ ձիս կը հեծնէի կ'ելնէի, ամէնքը կը դողային. հոս արտի մը մէջ կոխես՝ անպիտան քոսոտ գիւղացի մը՝

«— Հոս արտ է իշխանս, անդիէն անցիր, կ'ըսէ:

«Քու պարաքդ այնչափ ցածէն ելած հրամանին չի հնազանդիլն է, խուլ ըլլալ չլսելն է, ակռայ կը կրճտեցնէ ետեւէդ: Ահա այս է վիճակը, Աստուած համբերութիւն տա՛յ… ամէն օր համբերութեան քարոզ մտիկ կ'ընենք… բայց եթէ անոր Թորոս կ'ըսեն՝ ինձ ալ Մլեհ կ'սեն: Օրը եթէ անգամ մը հասնի՛…

Այս ձեւով՝ այս կերպով խօսքեր միշտ անպակաս էին. Նուփիմէ անունք կը լսէր, երբեմն Թորոսի կ'իմացընէր որ իրմէ առաջ իմացած արդէն՝ կը ժպտէր, ան հոգ ըլլալ կը յորդորէր, թէպէտ ինք ամենայն արթնութեամբ կը հսկէր և այս տեսակ սպառնալիքներէն անհոգ ձեւանալով՝ ժողովրդեան հարստահարութեան մասին միայն խիստ կերպարանք մը կ'առնէր:

Իրաւի գոհ էր Ստեփանէէն, մանաւանդ երբ Մարգրիտ անոր գլխուն վերեւն էր՝ կատարեալ իշխան էր ան. Անարզաբայի բնակիչները՝ որ Սմբատին ժամանակ այնչափ հարստահարուած էին՝ Կիլիկիոյ ամենաերջանիկ ժողովուրդը կը համարուէին հիմա, գանգատ մը ամենեւին չէր լսուէր, ոչ իշխանին, ոչ դատաւորնե-

րուն, ոչ հարկահաւաքներուն և ոչ եկեղեցականներուն դէմ, վասնզի ժողովուրդը բողոքելու անձ մը ունէր պատրաստ. ամէն ոք և ամէնէն ողորմելին մատնանիշ Միջնաբերդը կը ցուցնէր և տիկինը հո՛ն է, կ'ըսէր և այս սպառնալիքը ժողովուրդը անխտիր ամէնուն կը գործածէր, բաւական էր թէ իրաւունք ունենալուն վրայ վստահ ըլլար:

Եւ զաւեշտական մասը հոն էր՝ երբ միամիտ ու տգէտ մարդ մը՝ սխալ համոզմամբ առանց իրաւունք ունենալու դիմէր տիկնոջ, և ան երբ դուն իրաւունք չունիս, ըսելով ճամբէր, Մարգրիտի անսխալականութեան վրայ ընդհանուր այնպիսի համոզում կար՝ որ նոյն անձը պարզաբար կը խոստովանէր իր սխալմունքը, վասնզի տիկինն՝ «իրաւունք չունիս» ըսեր էր:

Մարգրիտի սիրտը միշտ կը տրոփէր՝ երբ տագրը իրեն այցելութեան գար, վասնզի Թորոս սովորաբար ամբաստանութիւն մը ունէր՝ գրեթէ միշտ, այն Հալէպէն Ստէփանէի հետ եկած հեծելազօրին անկարգութիւններուն համար: Որ թէպէտ շատ փոխուած էին տիկնոջ հսկողութենէն և Ստեփանէի խստութենէն, բայց գրեթէ կատարեալ աւազակութեան և անառակութեան սովրած մարդիկ նեղ կը գտնէին Կիլիկիան, և Հալէպի յիշատակը Եգիպտոսի սոխն ու սխտորն էր իրենց փափաքներուն:

Թորոսի ընթերցումները նաեւ իր գաղափարները շատ փոխած էին գինուորութեան վրայ, և արեւելքի մէջ ընդհանուր եղած սովորութիւնը՝ որ արեւմուտքի մէջ նաև այն ժամանակը ընդունուած էր բանակի զօրութիւնը հեծելազունդէր համարելու, ինք սկսած էր փոխել. հետեւակ զօրքը կրթութեամբ ու զէնքով, կը կատարելագործէր, որով իշխաններուն զօրութիւնը կը տկարանար և իրենց գոռոզութիւնը կ'ոչնչանար, բայց պատերազմ մը պէտք էր որ Թորոսի այս կարծիքը ապացուցանէր:

Իսկ Թորոս համբերել գիտնալով, ամէնուն հետ

աղէկ վարուելով՝ միշտ աչքն արեւմուտք դարձուցած կը սպասէր, ամիսները կը համրէր և ուրախութեամբ կը տեսնէր որ Կայսրը ձայն ձուն չունէր, և գոհ էր անոր շատ զբաղած ըլլալուն Եւրոպայի կողմերը՝ ընդդէմ Հունգարներուն և Պուլկարներուն:

ԳԼՈՒԽ Ի.

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ ԿԵՍԱՐ

Քանի մը տարիներ անցան· Տորոսի Հայը՝ Թորոսի լաւ խնամատարութեամբ և իմաստուն կառավարութեամբ երջանիկ վիճակի մէջ մտեր էր· քաղաք, գիւղ և խրճիթ ուրախութեան երգերու և նուագարաններու արձագանքներով լեռները կը զուարթացնէին:

Ռուբինեանց տունը գրեթէ միևնոյն ժամանակին մեծ հրճուանք մը կը տօնէր· երկու ծնունդ միասին· Եւփիմէ աղջիկ մը, Մարգրիտ մանչ մը կը ծնէր՝ որ Ռուբէն անուանուեցաւ և ետքը իր նախնիքներուն աթոռը նաև ժառանգեց: Վահկա և Անարզաբա իրենց նորեկ հիւրերը կը տօնէին: Ամուտա բերդը հազիւ թէ լուրը հասաւ՝ Բաբկէնի երեսը խնդաց, որ ինչպէս գիտենք ցանցառ պատահար մըն էր, վասն զի Իշխանիկը աղջիկ մը ունէր և ինք ալ սանուհի մը:

Ուրիշ ծեր մըն ալ՝ որ հազիւ թէ Վահկայ բերդին մէջ լոյս աչքով կը տեսնուէր, վասն զի օրն ի բուն Տորոսի ժայռերուն և բոյսերուն հետ զբաղած էր՝ հիմա օրրանի մը շուրջը զուարթադէմ կը պտըտէր փոքրիկ էակին վերաբերեալ նաժիշտներուն խորհուրդներ տալով Մլեհ միայն կը մրմռար՝ կը գանգատէր Աստուծմէ՝ բաղդէն և կնոջմէն որ իրեն զաւակ չէին տար, և թէ բոլոր բնութիւնը դաւադիր էր իր երջանկութեան:

Նոյն միջոցին յաջող լուրեր նաև ամէն կողմէն կը հասնէին Թորոսի· Մասուտ Սուլթանն Իկոնիոյ և Միջագետքի, Նուրէտտին Ամիրան Հալէպի, Լատին-

ներու Բրէ՛սը Անտիոքի, Տաճարական կրօնաւոր Ասպետները Փռանգներուն, և Հայոց մեծ կաթողիկոսը իր Հայրենի ժառանգութեան մնալուն ուրախութեան դեսպաններ կ'ուղարկէին, և խաղաղութեան դաշինքներ կ'առաջարկէին:

Հայ գաղթականներ խումբ խումբ կուգային կը դիմէին, Տորոս, ոչ միայն Փոքր Ասիայէն և Միջագետէն այլ մինչև Եգիպտոսէն հազարաւորներ կը հասնէին: Զանոնք տեղաւորել, վիճակնին բարուոքել, զինուորական կրթութիւններն կատարելագործել՝ Թորոսի անխոնջ նախատեսութեան զբաղումներն էին, վասն զի իր Կ. Պոլսոյ գործակալները կ'իմացնէին թէ Կայսրը իր աստուածաբանական սիրելի խնդիրներէն և արեւմտեան պատերազմներէն քիչ մը ոգի առնելով ուշադրութիւնը Կիլիկիոյ վրայ կը դարձնէր. մանաւանդ որ ոչ միայն Յոյները այլ նաև եղան Լատիններէն ոմանք որ նախանձոտ աչքերով կը դիտէին Հայկական իշխանութեան վերածնութիւնը, գաղտնի գրգռութեամբ կը հրաւիրէին յունական իշխանութիւնը սանձահարել այս փոքրիկ տէրութիւնը՝ որու ապագան իրենց կասկածի նիւթ մը կ'ըլլար:

Օրինակի համար կային քանի մը ամրոցներ որոնք Լեւոնի գերութեան ժամանակ Պերպերուժէն կայսրը առած էր Փռանգներէն, հիմա երբ Թորոս անոնց տիրացաւ, Լատին իշխանները կը պահանջէին զանոնք յանուն Տաճարականներուն, վասն զի անոնք հաւատքներնուն համար եկած են պատերազմելու, կ'ըսէին, թէպէտ իրենք ամէնքն ալ հաւատքներնուն համար պատերազմելու եկած ալ ըլլալով, և Հայերէն երբեմն օգնութիւն գտած և երբեմն անոնց օգնութիւն մատուցած ժամանակին ամէն հարստահարութիւնները Քրիստոնէից՝ մանաւանդ Հայերուն վրայ ծանրաբեռնել չէին զգուշացած:

Ժամանակակից հեղինակ մը խստիւ կը նկարագրէ

քսանըհինգ երեսուն տարի առաջ անցած դիպուածները:

«Հոն, կը ցուցնէ նա, Փռանգ իշխաններ կը յարձակէին նախանձելով Հայ իշխաններուն վրայ, որոնք փոքր զօրութեամբ Պարսից ձեռքէն առած էին շատ տեղուանք իրենց քաջութեամբ և բնակարան կերտած էին, աւելի քան Թուրքը կը նեղէին զանոնք ու տարիներով պաշարելով իրենց բոլոր գաւառները ձեռքերնէն կ'առնէին, որոնցմէ ոմանք Ապլխարիպ Պիրի իշխանին պէս կը թողէին ամէն կալուածքնին և խեղճուկ կ'երթային Անարզաբայ Հայոց Թորոս Իշխանին (հօրեղբայր մեր Թորոսին). ինչպէս Տղայ Վասիլն Տէր Քեսնոյ որ կ'երթար փախստական ի Կոստանդնուպօլիս ամէն ազատանիներովը, ինչպէս Բագարատ, այր քաջ, Տէր Արեւընդունի՝ որ հազիւ կը ճողոպրէր, ինչպէս Կոստանդին, Տէր Կարկառայ որ Սամուսատա բերդին մէջ կապանքի տակ կը մեռնէր, նաև շատեր կային գեղեցիկ իշխաններ որ բանտի չարչարանքի և կապանքներու մէջ կը մեռնէին, և շատեր ալ կային որոնց աչքերը խաւարեցուցած էին, ձեռքերնին, քիթերնին և այլ անդամները կտրած և կախաղանով ըսպաննած էին անմեղ տղաքներու հետ նաև խստութեամբ և չարչարանքով կը վարուէին:

«Այսպիսի անհամար անզգամութիւններով գանձեր ժողվելու համար, երկիրը բոլոր աւերակ կը դարձնէին. միշտ զբաղած էին, ոչ աշխատութեամբ՝ այլ նստած չարութիւն և նենգութիւն կը խորհէին, և ամէն չարիքներու ճանապարհները կը սիրէին, բարիքներու և երախտիքներու մոռացողներ ըլլալով: Անոնց շատ անիրաւութիւնները կ'ուզէի գրել, բայց չհամարձակեցայ, վասն զի անոնց իշխանութեան ներքև էինք:» Այսպէս կը խօսի Մատթէոս Ուռհայեցի:

Թորոս ասոնք ամէնքը կը ճանչնար, բայց իր դըրութիւնն էր յամառ և անդառնալի՝ խստութիւն չըբանեցնել, գիտնալ ժամանակին տեղի տալ և յարմա-

րիլ և իրեն դէմ թշնամի չյարուցանել․ վասնզի կը տեսնէր թէ ուշ կանուխ՝ օրը հեռու չէր, որ Կոստանդնուպոլսոյ վրայ ժողվուած սպառնալից ամպերը փոթորկալից իրեն պիտի դիմէին։

Եւ իր տեսութիւնը ստուգուեցաւ, իմացաւ թէ այն Անդրոնիկոս Կեսարը՝ որ հայոց ընդհանուր և Ռուբինեանց դէմ մասնաւոր ատելութեամբ լեցուն սիրտ մը ունէր, զօրավար կարգուած Մանուէլէն կը դիմէր բանակով դէպի Կիլիկիա։ Գիտէր նաեւ թէ մեծ բանակի մը օգնականները միշտ անպակաս կը գտնուէին այնպիսի ժամանակի մէջ՝ ուր բարեկամութիւնը հզօրներուն և յաղթողներուն համար էր։

Ուստի իր բոլոր պատրաստութիւնները տեսաւ, իր բերդերը, ամրոցներն ու լեռները զօրացուց, իր ընտանիքը ապահովեց, և զօրքերուն ընտիր խումբերը միայն հետն առած և իր երկու եղբայրները՝ գնաց Մամեստիա սպասել թշնամիին, և հոնկից յագուրդ տալու համար Մլեհ եղբօր անհամբերութեան, որ միշտ անգործութենէն կը գանգատէր, կ'ուղարկէր զայն զօրավար հեծեալներուն՝ յունաց սահմանները ասպատակութիւն ընելու։ Տեսնելու էր այն ատեն Մլեհը, որ քանի մը տարի գրեթէ անգործ մնացած՝ ի՛նչ գործունէութիւն ձեռք կ'առնէր, ի՛նչ կողոպուտ և աւար կը հանէր երկրէն, միայն մէկ յանձնարութիւն եղբօրը յիշելով՝ խնայել մարդկային կեանքին, անօգուտ անգթութեամբ պատերազմի դառն գործը աւելի չը դառնացնելով։

Այսպէս կը հասնէր Մլեհ մինչեւ Տարսոնի պարիսպներուն տակ՝ ազատութիւն գտած բազէի պէս, ուր իր առջեւէն՝ մերկ փախստականներ իր խստութեան համբաւը բերած էին և իր սպառնալիքը՝

— Եթէ չնորհակալ ըլլան հռոմները իր եղբօր հրամաններուն, ապա թէ ոչ՝ ոչ ոք գերութենէ ազատ պիտի մնար իր ձեռքէն։

Եւ թէպէտ Տարսոնի մէջ վեց եօթը հազար հոգի

յառաջապահ խումբ մը ալ պատրաստ Անդրոնիկոսի բանակին սպասող, բայց մէկը չէր համարձակեր դէմ ելնել այս երկու հազար և քիչ մը աւելի հեծեալներուն գունդին, ոչ դրդռութիւն, ոչ նախատինք, ոչ շրջակայ գիւղերուն աւերումները և ծուխ յանդգնութիւն չտուին այս մոլեկան զօրավարին դէմ դնելու։

Ուստի Մլեհ Տարսոնցիներէն յուսահատելով՝ յարձակեցաւ Լամբրոնի վրայ, վասն զի գիտէր թէ անոր իշխանը յոյներուն համամիտ և նիզակակից էր, ինչ որ ամրութիւններէն դուրս գտաւ՝ ապականեց, անբաւ պաշար, արջառ, ոչխար և դրամ բերաւ Մամեստիա, Թորոսի հրամանէն աւելին կատարելով․ որուն փափաքը Անդրոնիկոսը սովով նաեւ նեղել էր։

Անդրոնիկոսի բնական կատաղութիւնը չափ չունեցաւ երբ իմացաւ Մլեհի ըրածները, հազար պատիկ վրէժ հանել կը խոստանար հայերէն, կ'երդնուր և առանց դադրելու բանակը կը քշէր առաջ, երկայն կ'երեւար իրեն ճամբան Տարսոնէ մինչեւ Մամեստիա՝ ուր լսեր էր թէ Թորոս կը բանակէր։

Արդէն իր տասներկու հազար զօրքերուն վրայ նոյնչափ մըն ալ աւելցեր էին նիզակակիցները, որոնց մէջ քանի մը հատ երեւելի Հայկազն իշխաններ ալ կային, ոմանք հաւատարիմները յունական կայսրութեան, ոմանք Թորոսէն և ոմանք իրենց բռնութիւններուն համար ժողովրդեան ապստամբութեամբ զըրկըուած իրենց կալուածներէն։

Իսկ Հայերուն Իշխանը իր զօրքերով Մամեստիա նստած՝ կը սպասէր թշնամիին․ իր հանդարտ և զըւարթ դէմքը մեծ վստահութիւն մըն էր իր զօրքերուն, և իբրեւ աւետիս ընդունուեցաւ թշնամիին հասնելուն լուրը։

Բայց զօրապետներուն և գնդապետներուն զարմանքը դէպի այլայլութեան դարձաւ․ և Մլեհինը կատաղութեան․ երբ նոյն ժամուն ամէնքը խորհուրդի հրաւիրելով, հրամայեց Բաբկէնի առնել իրեն լաւ

թարգման մը և երթալ Յունաց բանակը Անդրոնիկոս կեսարին՝ խաղաղութիւն խնդրելու համար. ըսելով.

— Մենք ալ կայսեր ծառաներն ենք, միայն կը խնդրենք որ ան հաճի մեզի հետ բարեսրտութեամբ վարուիլ. ինչպէս մենք մեր հայրենի ժառանգական երկրին սահմաններէն դուրս չելանք և թէպէտ դիւրին էր նաեւ Տարօնի տիրանալ՝ բայց չուզեցինք, որպէս զի կայսեր իրաւացի բարկութիւնը չշարժենք. ուստի ինչ արդար խաղաղութեան պայմաններ որ ունի՝ առաջարկէ, և անօգուտ արիւն և աւերումներ չը բերենք այս երկրին վրայ:»

Իսկ Բարկէն այս խօսքերը լսելուն՝ թէպէտ սառեցաւ վայրկեան մը, բայց որովհետեւ լաւ կը ճանչնար Թորոսը և գիտէր անոր քաջութեան չափը ու միանգամայն խոհեմութիւնը, դանդաղ քայլ մը առաւ երթալու՝ թէպէտ ակամայ իր երեսին վրայ նըկարուած էր և կը մտածէր թէ արդեօք սխա՞լը հասկըցաւ, երբ տեսաւ թէ Իշխանը խօսք մը չաւելցներ ելաւ հրամայուածը կատարելու:

Բայց ապուշ սառնութիւնը՝ որ ընդհանուր էր՝ անհետացաւ, և ընդհակառակն բորբոք մը սկսեր էր յաջորդել ամէնուն սրտին մէջ. արդէն Մլեհի երեսները կարմրեցան և աչքերը արիւն լեցուեցան, և Թորոս անոր տրոփը գրեթէ քովէն կը լսէր. միայն ինք կեցած էր և սկսաւ անխռով խօսիլ:

— Ո՛վ իմ քաջ նիզակակիցներս, կը զարմանաք իմ այս դեսպանութեանս վրայ, և կարելի է որ ձեր մէջէն ոմանք, և թերեւս ամէնքդ ալ բարկութեամբ և դառնութեամբ կը լեցուիք լսելով այս իմ խոնարհական լեզուս, և ես թէ որ իմ սրտիս ձայնը լսէի ոչ երբէք այդ խօսքերը թշնամիի մը՝ և այսպիսի անըղգամ թշնամիի մը պիտի ընէի, բայց ով որ ժողովուրդի առաջնորդ և իշխան է, պէտք է մարդիկներուն, Աստուծոյ և իր խղճմտանքին առջեւ լաւ քննէ ամէն բան և արդարութիւն գործէ:

«Մենք մարդկային արեան ամէն մէկ կաթիլին համար պատասխան պիտի տանք Աստուծոյ. անոր համար մեր փառասիրութիւնն ու մեր ամբարտաւանութիւնը պէտք չէ որ մեզի առաջնորդ առնենք, այլ մեր ազգին օգուտ: Ես ձեզի յայտնի կը խոստովանիմ թէ Հայ ազգին օգուտը կը պահանջէ որ Յոյներու հետ եղբայրաբար երթանք, անոնց նիզակակից ըլլանք և որ այն թշնամիներուն որ զմեզ կը հրջապատեն և օր աւուր կը զօրանան:

«Յունաց կայսրութիւնը թէ որ ճանչնար իր օգուտը՝ փոխանակ զմեզ նեղելու զմեզ կը զօրացնէր և պատնէշ մը կը կանգնէր մեզի այն ամէն այլակրօններուն դէմ որ մեծ ծովու պէս կը դիզուին՝ կը բարձրանան և զինքն ալ պիտի ողողեն:

«Ես իբր քրիստոնեայ և իբր հեռատես իշխան պարտաւոր էի այս դեսպանութիւնն ընելու, և խաղաղութեան սկիզբ մը ընելով զօրաւոր դաշնակցութիւն մը հաստատելու ջանալ Քրիստոնեայ երեք ազգերու մէջ, որ միաբան կրնային թումբ մը կազմել այլակրօնութեան դէմ մինչդեռ հիմա ընդհակառակն՝ բաժնուած ատելութեամբ պիտի կործանին և անհետ պիտի ըլլան:

«Պէտք էր Քրիստոնեաներու՝ նոյնիսկ Մահմետականներու օրինակին հետեւիլ[1]), որ իրենց մէջ ծագած պատերազմներու մէջ իրենց կրօնապետները ամէն ջանք կ'ընեն խաղաղութիւն հաստատելու և արիւնը դադրեցնելու: Երբ ամօթ և նախատինք եղող Քրիստոնէութեան համար մերինները չնչին և մտքի տհաս խնդիրներու համար արիւններու գետերու պատճառ կ'ըլլան...:

«Բայց դուք ինչո՞ւ գայթակղեցաք, ինչու զայրացաք, դուք թշնամին չէ՞ք ճանչնար, դուք Անդրոնիկոսը չէ՞ք տեսեր, ես տեսեր եմ. ես պատերազմեր

1 «Մի՛ անայր առնել զտուն Մսուրմանց»: Դրէֆուր Նրէս, 520:

եմ իրեն դէմ, և մեր մէջ ամէնէն աղէկ զինքը ճանչցող մէկը թէ որ կայ և սուր սուրի եկած է իր հետ, ան է որ հիմա իբրեւ դեսպան խաղաղութեան· գնաց իրեն հետ խօսելու։

«Անդրոնիկոս ոչ միայն խաղաղութիւն պիտի չընդունի, այլ մեր խոնարհական դեսպանութիւնը մեր տկարութեան նշան պիտի համարէ, և մենք անպարտ կը մնանք Աստուծոյ առջեւ այն արիւնէն որ պիտի թափի։ Բայց թէ որ անհաւատալին հաւատալի ըլլայ և Յոյները շնորհեն մեզի խաղաղութիւնն որ մենք կը խնդրենք, արդար և իրաւացի ասպարէզ մը կայ մեր առջեւ արեւելք ու հարաւ ընդարձակելու և զօրանալու համար և մեր խեղճ, անտէրունչ ազգը ժողովելու և գերութենէ ազատելու համար։

«Ահա պատճառները որ գիս այս պատգամաւորութեան յորդորեցին, ո՛վ որ կամի բացատրութիւն մը ուզել պատրաստ եմ տալու»։

Քանի որ խօսեցաւ Թորոս՝ կիրքերը խաղաղեցան և նոյն ինքն Մլեհ հանդարտեցաւ, մանաւանդ երբ Թորոս Անդրոնիկոսի խաղաղութեան ընդունելութիւնը անկարելիներուն կարգը դրաւ՝ զուարթութիւն մը եկաւ երեսին վրայ և ըսաւ։

— Բացատրութեան պէտք չունինք, երբ կը տեսնենք թէ այս դեսպանութիւնը նախատինք մը չկրնար բերել մեր պատուոյն և մեր քաջութեան։

Ժողովը ցրուեցաւ դարձեալ գումարուելու համար Բաբկէնի վերադարձին· երբ քաղաքին դռները բացուեցան, ու ծեր զինուորը մտաւ ու եկաւ կայնեցաւ ատեանին մէջ, լուռ ամէնքը շլացած իրեն կը նայէին և կը սպասէին։

— Իշխանդ մեծ, ըսաւ Բաբկէն, Հոռոմները մեզի հետ խաղաղութիւն ընել չեն ուզեր։

— Ի՞նչ կ՚ըսեն, այն պատմէ մեզի, Բաբկէն իշխան, ըսաւ Թորոս։

— Որովհետեւ կուզէք որ ձեզի պատմեմ և այն

Անդրոնիկոսին ըսածները կրկնեմ, լա՛ւ լսեցէք։ Նախ մեզ տարին վրան մը գոցեցին· իբր թէ անպիտան գերիներ ըլլայինք, ինչ նախատական խօսքեր որ ամէն ատեն սովորութիւննին է գրուցել Հայուն անձին ու հաւատքին, ականջնուս կը մրմռային վրանին շուրջը· ետքը մեզ առին Անդրոնիկոսի առջեւ հանեցին, որ մեծ վրանի մը մէջ բարձր, ուռած նստած, մեր խո՛նարհ պատգամը մտիկ ըրաւ, և անարգանքով ու քամահրանքով այս խօսքերը գրուցեց·

«— Գնա՛ գրուցէ ապստամբին՝ ապստամբին տղուն թէ՝ շղթաները որով իր հայրը կապեցինք, միատեղ բերած ենք որ զինքն ալ կապենք տանինք։

«Եւ ձեռքով նշան ըրաւ որ դուրս հանեն մեզի։ Մենք ալ բոլոր յունական հայհոյանքներն ու քրքիջները տեւելէս՝ հեծանք մեր ձիերն ու դարձանք։ Ահա մեր դեսպանութեան բոլոր պատմութիւնը։

Եւ այս խօսքերը լսելով զայրագին՝ նստաւ Բաբկէն։

— Լսեցի՞ք իշխաններ, ըսաւ Թորոս, տեսնենք հիմա Աստուած ո՛վ պիտի խնդացնէ։ Ես անոր արդարութեան միշտ հաւատացեր եմ, ինք վկայ է որ ես ջանացի խնայել մարդկային արեան, կայսրը և Անդրոնիկոս չուզեցին, ընենք ուրեմն մեր պարտքը, ցուցընենք թէ մեր հայրերուն որդիներն ենք, և թէ դիւրին չէ ամէն անգամ շղթայ անցնել Ռուբէնի թոռներուն վիզը և Հայերու համբերութեան հետ խաղալ։

Այս խօսքերը ըսաւ և ելաւ, ու ամէնքը ցրուեցան իրենց տեղը, ինք միայն պարիսպին բարձր մէկ կողմը, Դիոնիսին դիտակը ձեռքը կը դիտէր կը նայէր այդ բանակին՝ ուր խառնակութիւն և վստահութիւն կը թագաւորէին· կը տեսնէր երաժիշտներ և գուսաններ, կը տեսնէր զինուորներուն հետ խառնակեաց կիներու խումբեր և ինքնիրեն կ՚ըսէր·

«Այդպիսի անկարգ բանակ մը՝ հիմա զօրաւոր յարձակումով մը անկարելի չէ ցրուել, բայց աւելի

ապահով միջոցներ ինչո՞ւ չգործածենք, խնայենք մեր արեան, սպասենք յարմար առիթին, հեռու չէ անշուշտ»։

Երբ իջաւ պարիսպէն, անմիջապէս կանչել տուաւ Սարգիսը որուն յաջողութեան և արթնութեան վրայ մեծ համարում ունէր։

— Այս գիշեր պէտք է Անարզաբա երթալ։

— Լա՛ւ, Իշխան։

— Ստեփանէի իմացնել թէ պահեստի գտնուած բոլոր զօրքերը գումարելու և թշնամիին ճամբան կտրելու խորհուրդը պէտք չէ ուշացնել, այլ մինչեւ երեք օր պէտք է կատարել. վասն զի այս կնամարդի յանձնապաստան բանակին համար չէ այն զգուշութիւնները, ինչ որ առաջ իրեն հետ որոշեր էինք։ Ուրեմն քեզ տեսնեմ, բարի յաջողում։

Եւ ահա Սարգիս ելաւ Իշխանին քովէն, փոքրիկ դուռը որ պարիսպէն գետը կը հանէր հոն իջաւ, ջուրերը շարժեցան և քիչ յետոյ մութին մէջ կորովի ընթացքով կը հեռանար՝ կերթար Անարզաբայի ճամբան։

ԳԼՈՒԽ ԻԱ.

«ՍԱՀՄԱՆ ԹԱԶԱՑ՝ ԶԷՆՆ ԻՒՐԵԱՆՑ»

Անդրոնիկոս ալ ապահով էր յաղթութեան համար միթէ ապստամբը չէ՞ր որ խոնարհաբար հպատակութիւն խոստանալով խաղաղութիւն կը խնդրէր, ուրեմն մինչեւ որ շղթաները գործածելու ժամանակը հասնէր՝ փախստեան ճամբաները պէտք էր գոցել, խրամներ պեղել և պատնէշներ կանգնել քաղաքին դուռներուն առջեւ բաւական համարեցաւ և տուաւ ինքզինքը զուարճութեան. երկու գիշեր յաջորդաբար գինարբուներուն՝ երգերը և երաժշտութիւնները բանակին զբաղումներն էին։

Իրաւ կային յունական բանակին մէջ անձեր որ ինչպէս Թորոսի խոնարհ պատգամաւորութեան վրայ կասկածանքով գլուխ շարժած էին, հիմա ալ այս անառակութեան վրայ գլուխնին կը շարժէին դարձեալ. բայց ո՛վ կրնար կեսարի մը կայսեր հօրեղբօրորդիի մը՝ ընդհանուր արեւելքի սպարապետի մը համարձակիլ զրուցել թէ՝

«Մի հաւատար այդ խոնարհութեան, վասնզի առիւծը երբեմն աւելի լաւ ծուղակը ձգելու համար իր որսը կրնայ դերը փոխել և աղուէսի մորթը առնել։»

Ով կրնար իրեն զրուցել թէ՝

«Այդ հանդէսները աւելի յարմար էին յաղթութենէն վերջը քան թէ առաջ։»

Ուստի իմաստունները կը լռէին, յիմարները և մեծապարծանքները կը խօսէին։

Իսկ Թորոս, երբ գիշերը հասաւ, յունական բանակին հակառակ կողմէն պարիսպը քանդել հրամայեց

և հազիւ թէ գործը սկսաւ դիւրանալ, սոսկալի փոթորիկ մը ահա փրթաւ, որոտում, կայծակ, անձրեւ, կարկուտ իրար կը խառնուէին, ուժգին հովը ժայռեր կը կործանէր՝ վրաններ փետուրի պէս կը յափշտակէր, յունական բանակը շփոթած՝ անձրեւէն և տիղմէն շաղախեալ՝ շուարած մնացեր էր բոլոր գիշեր, թէպէտ Անդրոնիկոս իր զուարճութիւններն ու գինարբուութիւնները ամենեւին չդադրեցուց գիշերն ի բուն։

Արշալոյսը երեւցաւ և Հայկական գունդերը աշխոյժ և կորովի՝ պարիսպին պատռուածքէն կիսաշրջան մը ընելով գոռհով կը յարձակէին թշնամիին վրայ, որ անպատրաստ երբ թշնամիին դիմացը բանտին մէջ կը կարծէր՝ քովը կը գտնէր զայն սուրը կողը մխելով։

Ա՛լ պատերազմ չէր, այլ փախուստ մէկ կողմէն՝ կոտորած միւս կողմէն. հոն Մլեհ իր մոլեգին հեծելազունդին հետ դաշտին տարածութեան մէջ անխնայ կոտորածը դեռ քիչ գտնելով·

— Զարկէ՛ք տղաք, մի՛ խնայէք, կը գոռար։

Եւ իր օրինակն ալ սոսկալի էր, իսկ Թորոս տեսնելով իր պատրաստածն աւելին ի գլուխ ելած, իր զինուորը գթութիւն կը յորդորէր և հազիւ յոյն և հայ իշխաններէն կրցաւ մաս մը ազատել։

Իսկ թշնամիին այն մասը որ փախստեան յառաջընթացն եղած էր և ազատութիւնն ապահով կը կարծէր· Ատանայի ճամբան բռնելով Ստեփանէի և Սարգսի խումբին հանդիպեցան որոնք առանց փոթորիկին ուշ դնելու չորս հազարի չափ մարդ իրենց կը սպասէին։

Փախստականներու մէջն էր Լամբրոնի իշխանը իր գունդով որ յուսահատ ջանք մը ըրաւ պատռելու Հայոց խումբը և անցնելու իր ճամբան, բայց վրայ հասաւ սաստկութեամբ Ստեփանէ և այնպիսի նիզակի հարուած մը տուաւ որ թաւալգլոր ձիէն կործանելով

Օշին, վայրկեանին զինաթափ և կալանաւոր եղաւ։

Այդ ահագին բանակին հազիւ թէ կէս մասը ազատեցան, և բուն ազատուածները անոնք էին որ իրենց նաւերը կրցին մտնել, մնացեալները ամէնքը կամ ջարդուեցան կամ գերի ինկան։

Իսկ բուն չարիքներուն սկզբնապատճառը և սա խեղճ ու խայտառակ պատերազմին հեղինակ և զօրագլուխ Անդրոնիկոս կեսարն յանկարծ քունէն և գինովութենէն սթափած՝ հազիւ թէ ժամանակ գտած էր ինքզինքը իր ձիուն վրայ նետելու, և Անտիոքի ճամբան բռնելու, բարեբաղդաբար իրեն համար՝ որով անվտանգ ազատեցաւ. Թէպէտ Բաբկէն ամէն բան թողած՝ զանիկա կը փնտռէր կոտորածին մէջ, խոստանալով ինքնիրեն կիսկատար հարուած մը չտալ անօրէնին։

Իսկ Թորոս որ այս անգամ և ոչ սուրը պատեանէն հանած էր, այլ արթուն՝ ամէն ինչ պատրաստած, վասնզի վտանգ չկար և ոչ ծանր պատերազմ, այլ ջարդ, կոտորած և աւար, այդ սպանդանոցին վրայ կեցած կը նայէր, կը խորհրդածէր մարդկային անմըտութեան վրայ, որ խաղալիք քանի մը անպիտան, յիմար և թեթեւ գլուխներու, այդչափ ճապաղիքներու տեղի կուտար։

Այս խորհրդածութիւններով ձգեց պատերազմին՝ մանաւանդ թէ կոտորածին դաշտը, մտաւ թշնամիին բանակը իր անձնապահապետներու խումբովը· գիշերուան փոթորիկը՝ և աւելի սաստիկ առաւօտեան Հայ արշաւանքներուն փոթորիկը՝ ամէն բան խառնափնդոր և ողորմելի վիճակի մէջ կը ցուցնէր այդ բանակը, կիսակործան և կանգուն վրաններ՝ վահաններ, նիզակներ, սուրեր գետին փռուած թամբուած ձիեր ոտնակապ կը խնջէին հեծեալներու սպասելով որոնք չկային։

Այս տեսարանին վրայ ակնարկ մը ձգելով Թորոս, ուր գոհութիւն և արհամարհանք հաւասար էին, մտաւ Անդրոնիկոսի վրանը որ գրեթէ պա-

լատ մըն էր իր ընդարձակութեամբ և բաժանումնե-
րով, իսկ հանդերձներու հարստութեան՝ զեխութեան
և պերճանքներու չափը չկար. գորգեր՝ բեհեզեայ ան-
կողիններ՝ ծիրանի վերմակներ, ոսկիէ և արծաթէ
զէնքեր՝ կիներու զարդարանքներ՝ երաժշտութիւննե-
րու նուագարաններ խառն ի խուռն դրուած էին,
այնպէս որ արդի մեծ թատրոնի մը կը նմանէր քան
թէ սպարապետի վրանի:

Թորոս այս ճոխութիւնները տեսնելով մեծ ու-
րախութիւն մը ունեցաւ, ոչ թէ անոր համար որ իր
գանձին պիտի երթային անոնք՝ ոչ, այլ անոր համար
որ Հայ զինուորը զինուորական կանոններուն ու զօրա-
պետին հրամաններուն հնազանդիլ սովրեր էր. յե-
տադարձի փողը չհնչած մէկը չէր համարձակեր ա-
ւարառութեան ձեռք զարնել, այլ թշնամին հալածե-
լու միայն զբաղած էր:

Ուստի ինքն ալ ցուրտ նայուածք մը ձգելէն վերջ
այս թուլամորթութեան կահերուն վրայ, հետաքննին
աչքով բան մը կը փնտռէր որ վերջապէս գտաւ, այ-
սինքն բանակին դիւանական գրութիւնները որ վայր-
կենին մատանիովը կնքեց և իր ատենադպրին յանձնեց:
Անկից վերջը հրաման տուաւ շուտ մը մեռելները
թաղելու գործողութեան որպէս զի օդը չապականի:

Նոյն միջոցին էր որ Ստեփանէի բանակն ալ գե-
րիներով ծանրաբեռնուած կը հասնէր՝ կը միանար իր
բանակին, իսկ Մլեհի մոլեկան հեծելազունդը անհետ
եղած էր բոլորովին, և իրօք մեծ բարեբաղդութիւն
մըն էր հայ իշխաններուն համար որ Ստեփանէի ձեռք
ինկած էին, վասն զի Մլեհէն գթութիւն յուսալ անօ-
գուտ էր, նա գիշերուան մութին առանց կալանաւո-
րի մը դարձաւ գոհ արիւնաթաթախ:

Նոյն գիշերը զինուորներէն մաս մը Յոյներուն բա-
նակատեղը, մաս մը Մամեստիա անցուցին, թշնամիին
գինիով և կերակուրով զուարճացած և յղփացած,
բայց միշտ գիշերապահ զգուշութեան օրէնքը խըս-

տիւ պահելով վասնզի Թորոս կը տեսնուէր յանկարծ
ամէն բան անձամբ քննելով: Բայց իրեն նոյն գիշեր-
ուան զբաղումը եղաւ բոլոր Անդրոնիկոսի քով գըտ-
նըուած թուղթեր հետախոյզ ընել:

Հոն կը տեսնէր չորս տարուան միջոցի մէջ քանի
անգամ դրացիները որ բարեկամութիւն ձեւացնելով
շնորհաւորութեան դեսպաններ ղրկած էին՝ իրեն դէմ
որոգայթ լարած՝ Յոյներուն գաղտնի դաշինք կը դը-
նէին և կը հրաւիրէին պատերազմի: Հոն կը տեսնուէր
մանաւանդ Անտիոքի իշխան Ռընալտի և Տաճարական-
ներուն շահասիրութիւնը, որ երբէք փուռ չէին տե-
սած՝ այլ օգուտ իր իշխանութենէն:

Զարմանքով կը գտնէր նաեւ Հաշիշենց պետին
մէկ գիրը՝ որ յորդորուած էր Յոյներէն Թորոսը ըս-
պաննել, լի նախատինքով կը պատասխանէր այսպիսի
առաջարկութեան մը՝ յիշեցնելով թէ այդ Հայը եր-
բէք անիրաւութիւն մը ըրած չէր Մահմետականնե-
րուն դէմ:

Հոն կը տեսնէր թէ իր եղբայրը Մլեհ՝ նշանակ-
ուած էր իբրեւ կարելի գործիք մը իր կեանքին և ա-
թոռին դէմ. Հոն կը գտնէր շատ մը գրգռութեան
թղթերու օրինակներ ուղղուած կայսերական կառավա-
րութենէն Մահմետական իշխաններուն Մաղսուտ սուլ-
թան և Նուրէտտին Ամիրային իր նորածին իշխանու-
թիւնը կործանելու համար:

Թէպէտ Թորոսի հանճարը ասոնք ամէնքը կը գու-
շակէր, բայց ուրիշ էր վկաներ և ստուգութիւններ իր
ձեռքը ունենալ, ուստի արշալոյսի մօտ էր երբ պզ-
տիկ քուն մը քաշեց և կանգնեցաւ, առոյգ և զուարթ
որովհետեւ իր կորովի կազմուածքը շատ դիւրու-
թեամբ կը տանէր ամէն տաժանումներու և փոքրիկ
հանգիստով դիւրաւ կը սթափէր:

Նախ ատեան կազմեց իր զօրավարներէն, հոն գե-
րիներուն համար անոնց կարծիքը քննեց, Մլեհ մէկէն
առաջարկեց ամէնքը ուղարկել Հալէպ և վաճառել,

վասնզի կ'ըսէր այդ անպիտան ժողովուրդը Քրիստոնեայ պէտք չէ համարել:

Ամէնքը Թորոսի կը նայէին և մարդ կարծիք չէր տար:

Այն ատեն Թորոսի մարդասիրութեան և Քրիստոնէութեան օրէնքներն ինչչափ օգտակար էին, և թէ բաղդը ինչչափ անհաստատ էր, այսօրուան յաղթողը կրնար վաղը յաղթուիլ, և թէ Հալէպ այդ Քրիստոնեաներուն ծախուելովը ո՛րքան ուրացութեան մեղք պիտի ծանրանար իրենց վրայ, ուստի կողոպտել և ճամբանին թողուլ որոշուեցաւ:

Իսկ Մլեհ իր անհոգ ձեւով կ'ըսէր թէ իր խըղճմտանքը թեթեւ էր, վասնզի ինք գերի մը նաև չէր բերած բանակը, և թէ որ Սանփանէ կ'աւելցնէր ծիծաղելով իրեն պէս չարժած ըլլար թշնամիին հետ՝ այս խնդիրը հիմա չէր կրնար տեղի ունենալ: Ուստի հրաման եղաւ որ հասարակ զինուորը կապտուած և կողոպտուած ազատ երթան ուսկից որ եկած էին:

Խնդիրը կը մնար գլխաւորներուն համար որ բերել տուաւ Թորոս. հոն Հայ և Յոյն իշխանաւորներուն կապանքը արձակել հրամայեց, նստեցնել տուաւ, և զուարթ կերպարանքով սկսաւ իրենց հետ այսպէս խօսիլ:

— Անկից քանի մը օր առաջ գիտէք թէ մենք ձեզի խաղաղութիւն առաջարկեցինք խոնարհաբար և դուք արհամարհանքով մերժեցիք, կ'երեւայ թէ սըխալ իմացեր էիք մեր դիտաւորութիւնը, և կարծեցիք թէ վախն էր որ զմեզ խաղաղութեան կը յորդորէր. կը տեսնէք հիմա փորձով թէ մենք խաղաղութեան սիրով միայն չարժեցանք. վասն զի քանի տարի է որ ձեզի կը սպասէինք և կը պատրաստուէինք, իսկ դուք պատերազմը խաղալիք համարելով, այսպէս խայտառակաբար յաղթուեցաք այսչափ մեծ բանակով:

«Միայն կը ցաւինք որ հոս ձեր սպարապետը՝ փո-

խարքան միատեղ չէ և յաջողեր է փախչիլ, հոգ չէ, թերեւս օր մը նորէն կուգայ և կը տեսնուինք:

«Իսկ դուք որ մեծ իշխաններ էք և բերդերու, պալատներու և հարստութեան տէրեր, և մենք որ աղքատ և միամիտ լեռնականներ ենք, դուք քաղաքակըրթութեան վերջին նրբութեան էք հասած, իսկ մենք ասիական բարբարոսներ ենք ձեր աչքին, դուք քրիստոնէական ուղղափառութիւնը ունիք իսկ մենք հերետիկոսութեան ժառանգորդներ ենք, կ'ուզենք ձեզի ալ ձեր զօրքերուն պէս արձակել որ երթաք ձեր տուները, միայն օրէնք է որ փրկանք մը մեզի վճարէք. և որովհետև ձեր արժէքը մեզ դժուար է գըտնել, և գնահատել, ձեզ իւրաքանչիւրներուդ կը թողունք ըսել թէ ի՞նչ կարժէք, վճարել և երթալ ձեր ճամբան խաղաղութեամբ:

Հռոմ իշխանները որ այսպիսի մեծ առաջարկութեան երբէք չէն սպասեր զարմանքով սկսան իրարու երես նայիլ չփոթած: Լսուած չէր մինչեւ այն օր թէ երբէք կալանաւոր մէկը իր փրկանքին գինը որոշէ. պզտիկ արժէք մը տալ իրենց անձին՝ իրենց մեծամտութեան կը դպչէր, գինը բարձր բռնել՝ յունական ամբաստանութիւնը գոհ կ'ընէր, բայց պէտք էր վըճարել, ուստի դարձեալ փախուստ տալով որոշեցին որ ինք գին կտրէ: Իսկ Թորոս կերպը փոխելով՝ լեցուն արհամարհանքով:

— Եթէ բան մը արժէիք զձեզ չէի թողուր որ երթաք, ըսաւ. և դառնալով իրեններուն՝ տարէք այս իշխանները որ իրենց արժանիքին վրայ մտածեն, մենք բաւական զբաղումներ ունինք հիմա և պէտք չէ ժամանակ կորսնցնել:

Եւ երբ իշխանները դեռ վրանին դռնէն դուրս չէին ելած բոլորովին, լսելի ձայնով աւելցուց.

— Այսօրուընէ տարին չլեցուած, պէտք է որ Հոռոմ մը չմնայ Կիլիկիոյ մէջ: Պատրաստենք եղբայրներ բանակը Տարսոնի վրայ:

Իրօք բանակը սկսաւ շարժիլ, մեծ էր ուրախութիւնը զօրականին և ամէնէն աւելի Մլեհին ուրախութիւնը մեծ էր։

Իսկ մեր կալանաւորները տեսնելով թէ խնդիրը կը ծանրանար, վասն զի եթէ բանակը Տարսոնի վրայ երթար, Թորոսը գանել աւելի դժուարին պիտի ըլլար, և ո՛վ գիտէ յաջողութիւնն ալ աւելի հպարտացնելով վերջը պայմանի գիջուցանել զայն աւելի դժուար, մանաւանդ որ կային այնպիսիներ՝ որոնց իշխանութեան երկիրները Կիլիկիոյ մէջ ըլլալով՝ թերեւս իրենց ունեցածէն ալ պիտի զրկուէին, ուստի խնդրեցին իրաւախոհ ըլլալ և ծանր գիներ որոշելնին իմացուցին։ Եւ շուտ մը իրենց ծառաներէն մարդիկ ղրկեցին, Տարսոն, Լամբրոն, Կոռիկոս, Փայաս, Անտիոք և մինչեւ Կիպրոս, որ փրկանքը շուտով հասցնեն և ժամ առաջ ազատին։

Նոյն միջոցին Ատանա քաղաքը Ստեփանէի մէկ փոքր զօրքին վրայ անձնատուր կ'ըլլար և դռները կը բանար Թորոսի եղբօր։ Իսկ Հայ յաղթութեան լուրը Կիլիկիայէն դուրս առջի տանողը՝ նոյնինքն Անդրոնիկոս եղած էր, երբ իր քանի մը մնացորդներով խայտառակաբար հազիւ կրցեր էր ճողոպրիլ Անտիոք։

Կալանաւորներուն մէջ, ինչպէս գիտենք, գլխաւորն էր Օշին, Լամբրոնի տէրը, զոր ամենեւին ուրիշ Հայ իշխաններուն հետ Թորոս չէր ուզած որոշել Յոյներէն և անոնց կարգը դնելով զանոնք՝ միշտ այնպէս կը վարուէր որ իբրեւ թէ Հոռոմ եղած ըլլային ազգով և կրօնքով։

Օշին հիմա վախէն ծանր փրկանք մը յանձն առած էր, և Լամբրոնէ հասնելուն կը սպասէր, իր անդրանիկին հետ, վասնզի քառասուն հազար ոսկի տուգանքին կէսը միայն առժամայն վճարել կարող էր, և միւս կէսին համար պատանդ պիտի թողուր տղան։

Այս պայմաններուն համար ամէն բանագնացութիւնները Բարկէնի միջնորդութեամբ կ'ըլլային, որուն

յանձնուած էր բոլոր կալանաւորներուն պահպանութիւնը։ Բանակը արդէն կը շարժէր երբ փրկանքներուն մեծագոյն մասը հասաւ, հրամայեց Թորոս բերել բոլոր Յոյն իշխանները, բերել նոյնպէս անոնց ազատութեան գիները, և երբ ամէն դրամները համրուեցան և ճիշդ գտնուեցան։

— Ազատ էք ուրեմն, գացէք ձեր ճամբան։

Եւ դեռ անոնց ներկայութեան՝ հրաման տուաւ բաժնել զօրքերուն բոլոր այն ստակը, որ գանձ մըն էր, և երբ իշխանները զարմանք յայտնեցին այս հարցումով թէ՝

— Այդչափ ստակ ինչպէս կարելի էր այդ սինլիքոր զօրականին բաժնել·

— Որպէս զի դարձեալ ձեզ և ձեր նմանները բռնեն ինծի բերեն, եղաւ Թորոսի պատասխանը։

Ալ սկսաւ Թորոս հայրենական սահմաններէն դուրս ելլել, Տարսոն խիստ պաշարումէ մը վերջը անձնատուր եղաւ՝ իր յաղթող բանակին աջ թեւը մինչեւ Կոռիկոս կը տարածուէր, ձախը մինչեւ Ալէքսանդրիոյ ծոցը, որ անկից ետքը Հայոց ծոց սկսաւ ըսուիլ։ Իր զօրավարներուն ամէնն ալ վարձատրեց, եղբօրը Մլեհին՝ Կոռիկոսի բերդը իր սահմաններով տուաւ յորդորելով որ Յոյներէն զատ՝ լաւ վարուի ամէնուն հետ։

Իսկ Փայասի ծովեզերեայ փոքրիկ բերդը Սարգսի յանձնեց յորդորելով որ երբեմն ծովասպատակութիւնը շարունակէ օգուտ իրեն և ի վնաս թշնամիներուն, և միանգամայն Սարգսի արթնութենէն կը յուսար որ իր խռովայոյզ եղբօրը կերպով մը դէտ կ'ըլլայ դրկից գտնուելով, և անոր անճոռնի շարժումները իրեն կ'իմացնէ։

Բայց միշտ մտքէն չէր կրնար հանել այն գաղտնի նամակներուն ընթերցումները որ բոլոր իր դրացիներուն ոգին իրեն յայտնի կը պարզէր, ուստի պէտք էր զանոնք իրարմէ բաժնել։ Այն նամակները յայտնի իրեն

կ՚իմացնէին թէ Անտիոքի իշխանը խոստացեր էր Յոյներուն օգնել, և կը գուշակէր թէ Անդրոնիկոսի ամբարտաւանութիւնն էր միայն պատճառ որ այս օգնութիւնը տեղի չէր ունեցեր, և իրօք այնպէս էր։

Ուստի Թորոս երբ այս խորհրդածութիւններուն վրայ էր, Տարսոն՝ ուր իր գործողութիւններուն կեդրոն ըրած էր այն ժամանակին, ահա յանկարծ հին բարեկամ մը, ասպնջական մը՝ Բարսեղ վարդապետ, առաջնորդ Կիպրոսի Հայ վանքին՝ ներս կը մտնէ։ Կոստանդնի հետ մէկտեղ։

— Ո՛հ, ըսաւ Թորոս խնդալով, ահա մեր հին երկու սուրբ միանձունները, ուր գտար, Հայր սուրբ. քու հին միաբանդ, թէ ոչ նա զքեզ գտաւ, քանի տարի է որ զմեզ մոռցար, մենք ալ զքեզ չկրցանք յիշել. ներէ, գիտես թէ Նեփիմէ միշտ զքեզ կը զըրուցէ։ Բայց տխուր կ՚երեւիս... խօսէ ինչ ունիս։

— Մեծ իշխան, մենք գիտէինք թէ դուք զմեզ կը յիշէիք, վասն զի քանի մը անգամ Իշխանուհին թէ մեր վանքին և թէ մեր Կիպրոսաբնակ Հայ կարօտեալներուն համար օգնութիւն ղրկեց, իսկ ես քանի անգամ ուզեցի գալ ձեր հզօր պաշտպանութիւնը խընդրելու մեր խեղճ ժողովուրդներուն համար, բայց Յոյներուն չարութենէն արգիլուեցայ, տարի մըն էր որ բանտն էի Նիգօսիա վասն զի զմեզ իբրեւ հերետիկոս չարչարել հալածել սովորութիւն ըրին Կիպրոսի Հոռոմները, և ինչ որ մինչեւ հիմա Արաբացիներէն չը տեսանք ասոնցմէ կը տեսնենք, կրօնք՝ կեանք՝ ստացուածք՝ ամէն բան վտանգի մէջ է։ Որո՞ւ դիմէ, չըփոթած էի, ուխտ ըրի Աստուծոյ որ բանտէն ազատած միջոցիս Կիլիկիա ձեզի դիմեմ, և ոսկի խաչ մը՝ որ միայն մնացեր էր՝ կաշառք տալով բանտապահին, ազատեցայ և վանք եկայ։ Իմ խեղճ վանքս, դռները այրած, միաբաններս՝ ոմանք լեռները ցրուած՝ փախած, ոմանք սպաննուած, եկեղեցին պղծուած, սուրբ սպասները յափշտակուած գտայ։

«Թէ որ արաբական նաւ մը զիս հոս չհանէր, չեմ գիտեր ի՛նչ մահուամբ ալ զիս պիտի սպաննէին այդ նզոված ազգը՝ ահա իմ վիճակս. եթէ Կոստանդին իշխանը ինձ շնորհ չընէր այս հագուստները ճարելու՝ զիս մուրացկանի հագուստներով հիմա պիտի տեսնէիք։

— Ցաւալի և անդարմանելի բան մը թէ կայ, միայն մեռածներն են, Հայր Սուրբ, որոնց ճար չեմ կրնար ընել, իսկ մնացեալ ամէնուն հնարքը դիւրին է, փառք Աստուծոյ. դուն հիմա քիչ մը հանգչէ՛, Հայր սուրբ, քիչ մը հանդարտէ, ես բոլոր քու կորուստներուն փոխարէն տասնապատիկը հատուցանել կուտամ։ Կոստանդի՛ն իշխան, քեզի կ՚իյնայ տանել քու վանահայրդ, շինել տալ անոր ցուցակ մը բոլոր իր կորուստներուն, և տանիլ զինքը ամենայն քաղաքավարութեամբ ու քաղցրութեամբ հոս՝ Տարսոնի Յունաց արքեպիսկոպոսին, և ինձմէ բարեւ ընելով յորդորել զինքը որ անոնց փոխարէնը տայ, վասն զի նոյնինչպէս օրէնք է որ սպասաւորը սեղանէն ուտէ, նոյնպէս արդար է որ հարուստ սեղանը կողոպտուած սեղանին բաժին հանէ։ Մենք Յունաց եկեղեցիներուն ամենեւին չդպանք, բայց անոնց եկեղեցիները պէտք է գոնէ մեր եկեղեցիներուն վնասը տուժեն, երբ իրենց կրօնակիցները զանոնք կը կողոպտեն։ Իսկ քու կիպրոսցիներդ, հոգ մի՛ ըներ, Հայր սուրբ, իրենց պատիժը կը գտնեն։

Վանահայրը և Կոստանդին ելան իրենց պաշտօնը կատարելու։ Կրնան երեւակայել ընթերցողները թէ՝ Կոստանդին և թէ Հայր սուրբը քանիցս բազմապատկեցին իրենց կորուստները, և թէ ինչչափ ճուացուցին խեղճ արքեպիսկոպոսը որ իր վիճակին աղքատութիւնը՝ պատերազմներու պատճառաւ իր եկամուտներուն կորուստը, և թէ Ջրհեղեղէն և Պօղոս առաքեալին Տարսոնի քաղաքացի ըլլալէն ի վեր ինչչափ վնաս կրած էր իր եկեղեցին՝ զանոնք կը համրէր։

Բայց ոչ վեղարաւոր և ոչ անվեղար գլուխը այս իրաւաքանութեան ուշադրութիւն տալու փափկութիւնն ու թափանցկութիւնը չունէին, մէկ կողմէն ապառաժի պէս անզգայ՝ իրենց պահանջումները կը նորոգէին և միւսէն զլանալու ամէն ջանք կ՚ընէին և այս խաչի, սկիհի, աւետարանի, պատկերի, միանձանց ապրուստի և վանքի եկամուտներու առեւտուրին մէջ՝ Կոստանդին զինուոր մարդ՝ անհամբերութեամբ երբեմն կ՚ելնէր, երբ արքեպիսկոպոսը և վանահայրը՝ թէպէտ սուտ կը մխանային զինք նստեցնելու, իմացնելով գոնէ այս հրաւէրով թէ եկեղեցականը գիտէ տեղի տալ միշտ, բայց վերջին կէտին։

Այսպէս նաեւ եղաւ հիմա, Յոյնը՝ որ Կիպրոսի մէջ կողոպտեր էր Հայուն վանքը՝ Կիլիկա կը տուժէր քառապատիկ. ոսկիները համրուեցան, արծաթներու կապոցները չինուեցան։ Հայ կրօնաւորը ամենայն յարգանքով և խոնարհութեամբ իր Յոյն պետէն դասակարգութեան աջն առնելուն և օրհնութիւնը խնդրելուն մօրուքն ի վար կը ծիծաղէր, և փոխարէն անոր բերանը երբ անուշ օրհնութիւն կը բղխէր՝ հազար դառն անէծքներ սրտին խորէն կը տեղացնէր, դժբաղդաբար Աւետարանի բարոյականին համար անշահախնդրութեան քարոզը Քրիստոս հոն չէր որ չուանէ խարազանովը այս իր երկու սիրելի աշակերտները լաւ մը դրոշմէր։

Կողոպուտը բեռնակրի շալակով բեռնաւորուած՝ մեր Հայր սուրբը կը դառնար Թորոսի իր շնորհակալութիւնը ընելու. և երբ իշխանական պալատին դրան մօտեցաւ՝ ոչ սպասաւորներու բազմութիւն, ոչ սպաներու ելեւմուտ, ոչ սուրհանդակներու երթեւեկ՝ ոչինչ չէր երեւար այլ խաղաղ լռութիւն մը կը տիրէր և դրան քով լռիկ երկու զինուորներ սուր ի ձեռին կայնած էին։

— Կ՚երեւայ թէ Իշխանը մեկնած պիտի ըլլայ, ըսաւ Կոստանդին։

— Ու՞ր, պատասխանեց Եկեղեցականը։

— Ո՛վ գիտէ, այնպիսի մարդ մըն է որ դուլ դադար չգիտեր, մենք երբեմն իր հօրեղբօր վրայ կը զարմանայինք, բայց այս անցաւ զայն, լռիկ անխօս կը մտածէ, երբ որոշէ, ալ դանդաղիլ դադրիլ չի գիտեր, իր նպատակին կը վազէ, տեսնենք, իմանանք թէ ո՞ւր է։

Մտան պալատը և տեսան Բարկէն որ ձեռքերը ետին կապած կը շրջագայէր, և երբ այս մեր երկու բարեկամները և բեռնակիրը ետեւէն տեսաւ որ կուգային, աննշմարելի ծիծաղ մը երեսին եկաւ, յիշելով այն Կիպրոսի Ս. Մակարայ Թաքստեան տարտամ վիճակի օրերը, երբ նոր գերութենէ ազատած սիրտը ի դող, դէպքերու ելքին կը սպասէին՝ անփորձ երիտասարդ Իշխան մը գլուխնին ունենալով, որ յոյս կուտար իրեն Բարկէնի, բայց ո՛վ կը կարծէր թէ այնչափ խոհեմութիւն այնչափ քաջութեան և նախատեսութեան հետ պիտի ընկերացնէր և բոլոր իր պապերուն ըրածը քանի մը տարուան մէջ աւելիովը պիտի ընէր և գերազանցէր.

— Ո՛հ, Աստուած օգնական, հայր սուրբ, բարի ես եկեր։

— Ողջոյն, Բարկէն հայրիկ, Աստուած պահապան, պատասխանեց Հայր սուրբը։

— Բայց Իշխանը ո՞ւր է, կը հարցնէր Կոստանդին։

— Իշխանը Փայաս գնաց։

— Փայաս գնա՞ց։ Բայց քու Իշխանիկդ յիրաւի զարմանալի մարդ է Բարկէն, յանկարծ կելլէ...

— Իմ իշխանիկիս ըրածը թագաւորները չեն կրնար ընել, ես կ՚ըսէի երբեմն թէ իր հօրեղբօր պէս թէ ըլլայ շատ է մեզի, բայց հիմա, հէ, ոչ հօրեղբայր, ոչ հայրը, ոչ պապը, Լուսաւորչայ պէս մարդ է պիտի ըսեմ, թէ Աստուած չբարկանայ, քանի տարի է օր մը թեթեւ գործ մը չտեսանք։

«Դու, ես, այս Հայր սուրբը իր կարգովը, Կաթողիկոսը իր սուրբ մեռոնով. Աստուած վկայ թող ըլ-

լայ, եղբայրասպան կ'ըլլար թէ որ Մլեհի խօսքերը օր մը միայն լսէր... բայց իմ Իշխանիկս ամէն բան կը լսէր, գիտէր, ձայն չէր հաներ, սուտ խուլ կըլլար:

«Օր մը՝ խոստովանանք թող մնայ, քանի մը ամիս կայ Իշխանուհին ինչ ըսաւ.

«— Բարկէն հայրիկ, կ'ըսեն թէ Մլեհ իշխանը իր եղբայրը չսիրեր և անոր դէմ երբեմն կիրքով կը խօսի և սպառնալիք ալ կ'ընէ, իրա՞ւ է, պէ՞տք է հաւատալ:

«Հաւատա Կոստանդին, մեր եղբայրութիւնը վկայ, պաղեցայ մնացի: Իշխանուհին տեսնելով իմ շփոթութիւնս մէկէն վրայ բերաւ... շատ խելօք կին է. իրաւ որ մեր լեռներուն մէջ նմանը չկայ:

«— Ես չեմ հաւատար ինչ որ լսեմ, Բարկէն հայրիկ, մարդիկ չարալեզու են, խօսքերը ծուռ կը մեկնեն, վերադիր կը մեկնեն, վերադիր կ'ընեն, դուն որ ամէնուն հօր պէս ես, թէ որ օգտակար գտնես՝ խրատէ զինքը որ խոհեմ ըլլայ. իրաւ, եղբայր են, բայց կրնայ մէջերնին պաղութիւն մտնել:

«Ես ամչցայ այս խօսքերէն, գիտէք թէ ամօթը ինծ համար էր, Մլեհին բան զրուցել պարապ էր, բայց պարտք է ըսի, զրուցեմ խղճմտանքէս ազատիմ, այս մտքին մէջն էի, մէկ մըն ալ Իշխանը ինծ օր մը յանկարծ երբ մինակ էինք.

«— Բարկէն հայրիկ, ըսաւ, քանի օր է դուն միտքդ կը յոգնեցնես, գիտեմ Մլեհին հետ խօսիլ կ'ուզես, կը պատրաստուիս շատ անգամ, կը տեսնեմ երբ Մլեհ իմ քովս գայ, ներս կը մտնես, դուրս կ'ելնես, միշտ հոս կ'ուզես գտնուիլ, հոգ մի ըներ, անոր սիրտը գէշութիւն չկայ, ան որ կը զրուցէ, չը գործադրեր. պարապ տեղ մի յոգնիր, շատ գնաց քիչ մնաց. Մլեհ խենթ խելօք դուրս կուտայ, անոր ամէն պակասութիւնը անգործութենէ է, չափը լեցուեցաւ, քանի մը օրէն Մլեհ գոհ և երջանիկ պիտի ըլլայ, դարձեալ կ'ըսեմ, հոգ մի ըներ և ոչ մէկու բան մը մի ըսեր:

«Իրօք, մէյ մըն ալ լսեցինք թէ մեր վրայ Հոռոմները պատերազմի կուգան. Մլեհ փոխուեցաւ, եղբօրը պէս ոչ մարդ կար՝ ոչ իշխան: Հիմա գնա այս միջոցիս Մլեհը կը գտնես Կոռիկոսի դռներուն առջեւ՝ ծովեզրը նստած, օղին կը նետէ և եղբօրը գովասանութիւն կը կարդայ, ինչպէս ասկից քանի մը ամիս առաջ Վահկայ հովանոցին մէջ նստած օղին կը նետէր՝ նզովք կը կարդար: Մլեհին ինչ զարմանամ, Թորոսի կը զարմանամ, որ եղբօրը ամէն ըսածը գիտէ, իմ մտքէս անցածը գիտէ, Հոռոմի թագաւորին ընելիքը գիտէ... աս մարգարէ՞ է, ի՞նչ է, դուն ըսէ Հայր սուրբ, դուն որ շատ կարդացեր ես. բայց գիտցի՛ր թէ մեր Իշխանիկը քեզմէ շատ կը կարդայ.

— Եղբա՛յր, Հայր սուրբէն ի՞նչ կուզես, կանչեց Կոստանդին, թէ որ Մլեհ՝ որ Կոռիկոսի իշխան եղաւ, օղին կը խմէ և եղբօրը գովասանք կը կարդայ, օղին բերել տուր մեզ ալ, տես թէ Հայր սուրբը ի՛նչ օրհնութիւն պիտի կարդայ մեր Իշխանին. այս բեռը կը տեսնե՞ս բոլոր արծաթ ու ոսկի է, բոլոր եկեղեցական սպաս ու դրամ է, անոր խրատով մէկին տեղ տասը առաւ Հոռոմ Եպիսկոպոսէն, տեսնէիր խեղճ մարդը, մինչեւ մօրուքը քրտնեցաւ: Տէ՛, օղի՛ն, օղի՛ն, օղին բերել տո՛ւր, ըսաւ Կոստանդին և իր ահագին հասակով տարածուեցաւ գետին:

Եւ մեր երեք բարեկամները բոլորեցան սեղանի մը շուրջը, անցեալին, ներկային և ապագային վրայ վրայ խօսելով՝ մինչեւ քունը իրենց աչքերուն վրայ ծանրացաւ: Բայց երբ Կոստանդին և Հայր սուրբը կը խորդային բոլոր գիշեր: Բարկէն՝ որու յանձնուած էր Տարսոնի կառավարութիւնը, երեք չորս պտոյտ ըրաւ նոյն միջոցին, պահապաններուն հսկողութեան ուշադրութիւն ընելով:

ԳԼՈՒԽ ԻԲ,

ԱՆՏԻՈՔԻ ԲՐԷՆՍԸ

Իսկ Թորոս այս միջոցիս կը սուրար՝ կ'երթար տասներկու հեծեալներով միայն, ինչպէս իր սովորութիւնն էր, հասնելու իր բանակին ձախ թեւին, որ արդէն մինչեւ Փայաս տիրած էր, և հասած ասորիներուն դուռը, և հոն իրեն կը սպասէր: Ոչ թէ ինք անցնելու միտք ունէր այն դուռերը, ո՛չ, վասնզի միտքը չէր դրած Անտիոքի սահմանները կոխել՝ այլ միայն այնպէս կարծեցնել տալ Ռընալտի, վասնզի իր քաղաքագիտութիւնը շատ հեռու էր այն յանձնապաստանութենէն որ բոլոր դրացիները իրեն դէմ կրնար հանել. իր միտքը ցոյց մը ընել և մօտէն ճանչնալ էր մարդ մը՝ որու յանդգնութեան և շահասիրութեան համբաւը իրեն ծանօթ էր, և որ յունական կայսրութենէն կ'ուզէր խոտորցնել:

Դեռ քիչ մը հանգիստ չառած՝ պատգամաւոր մը ղրկեց այս Անտիոքի Բրէնսին, իրեն տեսութեան փափաք յայտնելով. ապահով էր որ յաղթող իշխանի մը այնպէս առաջարկը սիրով պիտի ընդունուէր, ինչպէս որ եղաւ. երկու օր վերջը սուրհանդակը կը դառնար, և երկու իշխանները ամէն զգուշութեան պայմանները պահելով, հարիւրական ձիաւոր զինուոր հետերնին առած, կիրճերուն վերեւը բլուր մը կը հասնէին՝ ուր վրան մը պատրաստուած էր:

Հոն երկուքն ալ ձիերնէն իջան մտան պատրաստուած վրանը մէյմէկ թարգման առած, թէպէտ երկուքն ալ բաւական յունարէն գիտէին իրարու միտք հասկնալու համար:

Սովորական քանի մը խօսքերէ վերջը, ուր Ռընալտ Թորոսի շնորհաւորութիւններ կ'ընէր իր յաղթութիւններուն վրայ, և թէ ի՛նչպէս ախորժելի էր իրեն նման դրացի ունենալ քան յունաց կայսրութիւնը, որուն ոչ միայն մեծութիւնները այլ խաբեբայ դրութիւնը, սկզբունքը նաեւ բարեկամութեան ապահովութիւն չէին տար: Թորոս կրճատեց խօսքը ըսելով թէ՝

— Երկուքս ալ կը տեսնեմ թէ գործի մարդ ենք և մեր նպատակին կը դիմենք, այսինքն մեծնալ և ընդարձակուիլ. ուրեմն բարեկամութեան և լաւ դրացնութեան վրայ ձայն չբարձրացնենք, ոչ ես և ոչ դու այդ տեսակ խօսքերու չենք հաւատար (և Ռընալտ սկսաւ ծիծաղիլ), ուրեմն մեր օգտին խորհուրդ հարցընենք, նայինք թէ ի՞նչ պէտք է ընել շահաւոր ըլլալու համար:

«Ջիրա՞ր Ջարդել, ինչ վաստակ կայ մեզի. թէ որ դու իմ լեռներս կոխես՝ աւերես՝ քանի մը բերդ յափշտակես՝ ի՞նչ զարմանալի կարողութիւն պիտի քաղես. ես քու հողերուդ վրայ գամ, թէ որ յաջողիմ, ի՛նչ աւար կը տանիմ: Անոր համար փնտռենք տեղ մը ուր քիչ աշխատութեամբ մեծ օգուտ կրնայ քաղուիլ»:

Հոս Թորոս դադրեցաւ խօսելէ, և Ռընալտի աչքերը սկսան փայլիլ բոլոր իր մթերուած շահասիրութենէն դրդռուած և անհամբեր՝

— Այդ տեղը, այդ տեղը անուանէ, կ'ըսէր:

— Այդ տեղը, ըսաւ Թորոս անհոգ ձեւով մը, այդ տեղը... դու ամէն միջոց ունիս այդ տեղն ելլելու և ես չունիմ... բոլոր օգուտը քեզի պիտի ըլլայ:

— Ընկերաբար ամէն բան կ'ընենք, կը կարգադրենք:

— Լա՛ւ, թէ որ այդպէս յանձն կ'առնես, ահա տեղը, ըսաւ Թորոս, մատնանիշ ընելով ծովուն անհունութիւնը:

— Ո՛ւր, ծովուն վրայ, ի՛նչ...:

— Կիպրոս. ահագին՝ հարուստ՝ անպաշտպան՝ անդուռ կղզի մը, բաց ամէն յարձակումներու: Թէ որ ես նաւ ունենայի, ժամանակ ունենայի...:

— Ես նաւ կը գտնեմ, հոգ մի ըներ։

— Ես՝ շատ շատ՝ խումբ մը զօրք նիզակակից կրնամ տալ քեզ, թէ որ կը հաճիս։

— Ամենայն հաճութեամբ, մանաւանդ որ աւարը գտնողն իրաւունք ունի մասնակցելու։

— Երբ որ պատրաստ ըլլան նաւերդ՝ իմ գունդս ալ պատրաստ է իր զօրավարին հետ։

Երբ Թորոս տեսաւ իր մարդուն յափշտակութիւնը այդ դիւրին և հարուստ աւարին վրայ, և իմացաւ թէ հարուածը տեղը գտաւ, վասն զի մարդը չէր կրնար հանդարտ տեղը նստիլ, ալ ոտք ելաւ և պատշաճ հրաժարական ողջոյնը տալու ժամանակ, մէկ կողմ առնելով զայն.

— Բայց, ըսաւ, պէտք չէ մոռնալ որ զինուորը նաւ մտնելու ժամանակ նաեւ պիտի չգիտնայ թէ ուր կ'երթայ, և դուն հիւր մը ունիս, թերեւս բարեկամ մը որ քու տունդ է և ամէն ըրածներդ կրնայ իմանալ, պէտք է արթուն կենաս իրմէ, որովհետեւ շատ խորամանկ ու վտանգաւոր մարդ է։

— Կ'իմանամ, Անդրոնիկոսի համար կ'ըսես, թէ որ կ'ուզես՝ կապած քեզի ղրկեմ վաղը, իբր նշան դաշնակցութեան։

— Ոչ, անոր պէտք չունիմ, բաւական է թէ հեռացնես զինքը. վտանգաւոր հիւր մըն է, ոչ միայն դրացիներուն, ալ և ասպնջականին համար։

— Հոգ մի ըներ, դիւրին գործ մըն է այդ ինծի համար, ութ օր չեղած իմ նաւերս պատրաստ են արշաւանքի համար։

Եւ ահա մեր իշխանները բաժնուեցան։ Թորոս կ'երթար Տարսոն իր երկիրը բարեկարգելու, իսկ Ռընալտ իր զօրքերը պատրաստելու՝ որ շատ դժուարին չէր այնպիսի մարդերու համար, որ ուրիշ զբաղում մը չունէին պատերազմէ զատ. և իրօք այս գործին մէջ ամենայն զգուշութեամբ և գաղտնապահութեամբ վարուեցաւ։ Մլեհ իր հազար հոգիի գնդովը և Ս. Մակա-

րի հայր սուրբին հետ, Ալեքսանդրիայի նաւը մտաւ և հեռացան Փռանգները իրենց նիզակակից խմբովը։

Ինչ որ պատմութիւնը զրուցած է, աւելորդ է հոս յիշել, վասնզի ամէն ազգի հեղինակները, հռոմեները, փռանգները և հայերը միաբան են պատմելու թէ Կիպրոս ոչ երբէք այնպիսի բարբարոսական հարուած մը ընդունած էր և ոչ իսկ Սարակինոսներէն։

Այս մոլեգին գունդը, որ հազիւ թէ տկար դիմադրութիւն մը գտաւ խեղճ բնակիչներուն կողմէ, հուր՝ սուր ի ձեռին կը վազէր կղզիին ամէն կողմը, ոչ տարիք՝ ոչ սեռ՝ ոչ կրօնք՝ ոչ պատիւ չէր խնայեր. ամէն տուն՝ ամէն պալատ՝ ամէն եկեղեցի աւար և կողոպուտ ընելէն վերջը, մեծ ու պզտիկ՝ աշխարհական ու եկեղեցական կը համրէր կը դիզէր ծովեզրը, և այն ահագին բազմութիւնն որովհետեւ կարելի չէր տանիլ մէկտեղ, պատուաւոր եկեղեցականները և իշխանազունները միայն կ'առնէր կը տանէր Անտիոք որպէսզի ահագին փրկանքներու գինը ամբողջ վճարուի։

Հոն Մլեհ իմացաւ թէ աւազակութեան և անգթութեան արհեստին մէջ իրմէ յառաջադէմն ալ կար, Ռընալտ Անտիոքցին. հոն տեսաւ թէ այն փռանգ զօրքերուն մէջ, եկեղեցական, տաճարական ասպետներ (զորս հայ պատմագիրները Փռերները Դամբլունայ կը անուանեն) շատ յարմար ընկերներ էին իրեն թէ քաջութեան և թէ անգթութեան մասին. և այն ատեն հակամիտեցաւ թէ օր մը անոնց կարգակից պիտի կրնար ըլլալ։

Ի՛նչ մեծ տարբերութիւն կար Մլեհի և Ռընալտի գործողութիւններու և Թորոսի զբաղումներուն մէջ այն քանի մը ամսուան ժամանակին մէջ։ Թորոս կը նորոգէր, կը շինէր, իր տիրած երկիրներուն մէջ ամէն ազգի ամէն կարգի անձերու և կեանքի և ստացուածքի ապահովութիւն կը հայթայթէր, աւարառուն և կաշառակերը խստիւ կը պատժէր, կողմնապահնե-

րով և բերդերով իր երկիրը կը ջանար ամրացնել ամէն յարձակումներու դէմ։

Մենք զրուցեցինք վերը թէ առջի օրէն ինչ փոյթ և ջանք ցուցուց զինուորութեան յառաջդիմութեան համար, և անոր շարունակութիւնն էր՝ որ երբ Ռուբինեանց տէրութիւնը շատ տկարացեր էր նաեւ, ամէն հայ զինուոր ըլլալուն համար դեռ երկրին կերպարանք մը կուտար։

«Հայերը ամէնքը զինուոր էին. գրեթէ նոյնչափ վայրենի՝ որչափ իրենց լեռները, ուր կը բնակէին, կ'ըսէ պատմիչ մը. և գրեթէ միշտ զէնքը ձեռքերնին, և բոլոր պատմիչները զանոնք կը ցուցնեն արագ դաշնակցութիւններ լուծելու ինչպէս կազմելու՝ միշտ իրենց շահուն համար»։

Իսկ ճանապարհորդ մը, որ մեր Թորոսի եղբօրորդիին ժամանակ Հայոց թագաւորութեան երկիրներէն կ'անցնէր, այսպէս կ'ըսէ Կիլիկիոյ բնակիչներուն համար.

«Երկիրը բնակուած է փռանգներէն, յոյներէն, ասորիներէն, թուրքերէն, հայերէն և ուրիշներէն, բայց սակայն հայերն են որ կը տիրեն։ Այս հայերը շատ կրօնասէր են և գերագոյն քրիստոնեաներ»։

Այս զբաղումներուն հետ էր Թորոս. դուլ և դադար չունէր. երկիրը կը պտըտէր անձամբ քննելու ամէն բան։ Այսպէս անգամ մըն ալ երբ Ռապան կ'երթար տասն երկու ձիաւորով և ջոկատ մը հետեւակներով, աւարառու թուրքերու խումբ մը զինք շրջապատեցին յանկարծ, իսկ նա անվեհեր աջ ու ձախ կոտորելով երեք հազար հոգի՝ մնացածը կը հալածէր և չիք կը դարձնէր։

Իսկ յունական կայսրութիւնը երբ իմացաւ իր զօրավարին խայտառակ պարտութիւնը և Կիլիկիոյ ամբողջ կորուստը և Անտիոքի իշխանին հայոց մասնակցութեամբ Կիպրոսի չարաչար անցքը, որովհետեւ կայսրը զբաղած էր պատերազմիլ Եւրոպայի մասին մէջ՝

դեսպան կ'ուղարկէր՝ գանձ կը խոստանար Իկոնիոյ սուլթան Մասուտին որ հայոց վրայ դիմէ և իր վրէժը առնէ։

Մասուտ ալ բարեպատեհ առիթ համարելով այս հրաւէրը, մեծ բանակով յարձակեցաւ Կիլիկիոյ վրայ, կարծելով որ անպատրաստ պիտի գտնէ Թորոսը և զարմացաւ երբ քուն կարծած թշնամին դիմացը պատրաստ գտաւ ամուր դիրք մը բռնած և անխռով։

Մեծ բանակի մը առջեւ պզտիկ բանակ մը զարմացուց սուլթանը, ուստի դեսպան ղրկեց իմացնելու թէ ինք թշնամութեան ոգի չունէր հայոց իշխանին դէմ, այլ կ'ուզէր որ հայերը հնազանդին և յոյներէն առած քաղաքնին ետ դարձնեն։ Իսկ Թորոս քաղաքավար և անուշ լեզուով շահեցաւ դեսպաններուն սիրտը, տարտամ պատասխաններ տուաւ.

— Մեծազօր թագաւորներու հնազանդիլ մեզ նախատինք չէ, կ'ըսէր, բայց յոյներուն քաղաքը դարձընել անհնար է։

Սուլթանը մեծ օգուտ չտեսնելով այս արշաւանքէն, ետ դարձաւ Թորոսին աւելի իրաւունք տալով՝ քան կայսեր։

Բայց տարի մը չեղած դարձեալ յոյներուն գըրգռութեամբ աւելի մեծ պատրաստութեան ձեռք զարկաւ Կիլիկիա մտնելու համար։ Բայց ինք բանակը չը շարժած երբ Կիլիկիոյ դուռները ձեռք կ'առնէր, Թորոս իր լրտեսներէն իմացած, բոլոր իր բնակիչները ապահոված, լեռներու, ամրութիւններու, բերդերու և բերդաքաղաքներու մէջ, և անոնց հսկողութիւնը Ստեփանէի յանձնած՝ բանակին մէկ մասը անոր հաւատալով, ինքը բանակին մեծ մասովը իջաւ լեռներուն դժուարին անցքերէն և ափերէն, Իկոնիոյ երկիրը սկսաւ աւարել, քանդել և կործանել։

Սուլթանը իր երկրին պաշտպանութեան դիմեց և Թորոս իր աւարովը ու գերիներովը քաշուեցաւ իր լեռները։

Մաղսուտ այս վնասակար պատերազմին վերջ տալ կը մտածէր խաղաղութեամբ, երբ Յոյներուն կայսեր դեսպանները հասան յորդորներով և մեծագոյն ընծաներով:

Կայսեր այս վերջին փասը անհերքելի էր, ուստի Մաղսուտ իր բանակը աւելի ստուարացնելով մըտաւ Կիլիկիա ամենայն զօրութեամբ, բայց պարըսպապատ քաղաքներ կը գտնէր և աւերակ գիւղեր, դաշտերը ապականուած էին բոլորովին, ոչ հունձք կար և ոչ արմտիք և ոչ իսկ խոտ, ամառուան արեւը կը տոչորէր, մարդ և կենդանի կարեւորը չէին գըտներ, ո՛ւր մնաց աւարն ու կողոպուտը:

Իսկ Իկոնիոյ և Սեբաստիոյ կողմերէն շարունակ սուրհանդակ սուրհանդակի վրայ կուգար իմացնելու վնասն ու կոտորածը՝ որ կը հասցընէր Թորոս իր երկրին. գիւղեր, աւերակ կը դառնային, երկիրը զուրկ զինուորներէն կը հեծէր այս նոր տեսակ պատերազմին առջեւ: Իսկ Սուլթանը առանց այս լուրերուն միտ դնելու, կը յառաջանար աւերակ երկրին մէջ, կը հասնէր, կ'ողողէր, կ'անցնէր բոլոր դաշտը, կը պաշարէր Մամեստիան ու Անարզաբան:

Մամեստիան՝ յանձնած էր Թորոս երիտասարդի մը, որուն անունը Թոռնիկ էր, և որ լսելով Իշխանին գալուստն ու համբաւը՝ թողած էր իր Սասուն գաւառը, եկեր էր անոր զինուորութեան մտնելու. Թորոս չուտ մը տեսաւ և որոշեց անոր քաջութիւնն ու սրամտութիւնը, հարցուց ով ըլլալը և իմացաւ թէ համբաւաւոր Սասունցի Թոռնիկի թոռնիկ էր:

Ուստի այս քաղաքին պաշտպանութիւնը երթալէն առաջ իրեն յանձնելով ըսաւ.

— Նայէ՛, քաջ տղայ, ես ոչ միայն քեզի, այլ նաև պապուդ համբաւին կը յանձնեմ այս քաղաքս. բայց քաջ ըլլալը բաւական չէ, քաջութեան հետ խոհեմութիւն ալ ունենալու է. մեռնիլ յիմարաբար անօգուտ տեղ քաջութիւն չէ. ես քեզի քաղաք մը կը

յանձնեմ, լաւ միտքդ դիր թէ քու դիակդ չէ որ կը փափաքիմ տեսնել, այլ իմ քաղաքս ողջ առողջ ինծի յանձնելդ կ'ուզեմ:

Թոռնիկ, որ քիչ կը խօսէր պատասխանեց.

— Աստուծով, Իշխան, քաղաքդ քեզ կը դարձնեմ:

Թորոս Անարզաբան կնկան մը յանձնեց, և կինը կը ճանչնանք. Մարգրիտ՝ պարզ խոհեմ և միշտ գեղեցիկ, երբ իմացաւ թէ Թորոս կուգայ, Միջնաբերդէն քաղաքը իջաւ զինքը դիմաւորելու, իսկ Թորոս որ քիչ ժամանակ ունէր, ոտքի վրայ հարսին հարցումները կ'ընէր. թէ բաւական բերդապահ ունէ՞ր, թէ բաւական երկար ժամանակի պաշար ունէ՞ր, և թէ քաղաքացիներուն վրայ վստահ էր, երբ ամէնուն համար ճիշդ ու գոհացուցիչ պատասխան առաւ, երբ իմացաւ ինչպէս կ'երևակայէր թէ այդ իմաստուն կինը կարծածէն ալ աւելի պատրաստ էր և մանաւանդ թէ թեւը մտած կը տանէր կը ցուցնէր ցորենի շտեմարանները, զէնքերու մթերանոցները, զինուորներու և քաղաքացիներու խումբերը իրեն ակնարկութեան միայն կը սպասէին: Թորոս հրաժեշտի համբոյրը տալով իրեն, ըսաւ.

— Գիտե՞ս, Իշխանուհի, որ Ստեփանէ ի՞նչպէս զբաղած է, բոլոր Սեւ լերան բնակիչները ու ամրութիւնները իրեն յանձնուած են, գիտե՞ս դարձեալ որ ես բանակին հետ կ'երթամ, բայց թշնամին կուգայ, և պէտք է գայ վասնզի ճամբաները ազատ ձգուած են, դուն՝ պէտք է որ տարի մը պաշտպանես քաղաքդ ես քու վրադ ապահով եմ, Աստուած հետդ ըլլայ, ան քեզի օգնէ:

— Աստուած որ զքեզ կը պահէ, զմեզ ալ քեզի կը պահէ, խօսքերը եղան Մարգրիտի պատասխանը:

Այս երկու քաղաքներն՝ միանգամայն պաշարեց Սուլթանն, ոչ իր բաբաններն, ոչ սանդուխներն և ոչ նետաձգութիւնները չազդեցին այս քաղաքներուն

վրայ։ Երբ իրեն իմացուցին թէ Անարզաբայի բերդակալը կին մըն էր։

— Թէ որ ատոնց կիները, կ՚ըսէր, այսպէս կը պատերազմին, չըսէ՞ք որ մարդիկն՝ որ մեր երկիրը արշաւած են՝ ոչ թէ աւերակ այլ ուրեմն անապատ դարձուցին։

Եւ կը բուէ, մարդը որ Յունաց կայսեր թելադրութեամբ այս անխոհեմ պատերազմին ձեռք զարկեր էր, բայց ի՞նչ ընէր, գոնէ պատուով պէտք էր ելնէր այդ բաւիղին մէջէն։ Արդէն ձիերու հիւանդութիւն ինկած էր բանակին մէջ, որոնք չարաչար կը սատկէին, զինւորը՝ որ բաւական պաշար չունէր, չէր կրնար բանակին մարմինէն զատուիլ և հեռանալ, վասնզի աներեւոյթ թշնամիներ ամէն ժայռի, ամէն ծառի ետեւէն զինք կը վիրաւորէին ու կը սպաննէին։

Ուստի Մաղուստ յուսահատած այս երկու քաղաքները առնելէն, պաշարեց Համտոնոյ Թիլը որ աւելի անառիկ էր քան նախայիշուածները, և իր մէկ փեսան Եաղուպ Մէլիք անունով երեք հազար զինուորներու գունդով մը ղրկեց Անտիոքի սահմանները արշաւել և աւերել․ այս ժանտ մարդը յանդգնութեամբ երբ Անարզաբայէն անդին՝ լեռներու մէջ մխեցաւ անկասկած՝ յանկարծ զինքը շրջապատուած գտաւ Ստեփանէի և Տաճարական Ասպետներու խումբերէն, ինք և բոլոր իր գունդը ծուղակի բռնուած՝ մինչեւ վերջինը ջարդուեցան, հազիւ թէ մէկ քանի գուժաբերներ ազատեցան։

Նոյն միջոցին անսովոր փոթորիկներ, փայլակներ, կայծակ, կարկուտ և անձրեւի հեղեղներ օրերով բանակը կը նեղէին Թիլն Համտոնոյ առջեւ․ և երբ այս կոտորածին լուրն եկաւ, ալ սոսկումը պատեց բանակը, զինուորին գանգատը ապստամբութիւն կը սպառնար․ Սուլթանը թողուց գնաց, և այն մեծ բանակը ոչ թէ կանոնաւոր՝ այլ խառնաշփոթ փախուստով ցան

ու ցիր եղաւ, թողլով իր կահկարասին ու բոլոր իր ունեցածը։

Իսկ Թորոս, որ մինչեւ Սեբաստիոյ մօտերը քշած էր իր բանակը դիմադիր մէկը չգտնելով համարձակ ոտնակոխ ըրած էր բոլոր երկիրը, կը դառնար աւարով և կը տեսնէր թէ իր բոլոր պատրաստած յատակագիծը լիովին և իր կասկածէն աւելի ի գլուխ ելաւ․ փառք կուտար Աստուծոյ․ վասնզի թշնամիին աւարը ոչ միայն բաւական եղաւ իր ժողովրդեան վնասը հանելու, այլ նաև առատապէս վարձատրելու համար իր զինուորը։ Իսկ որ դիտելու արժանի է պատմութեան մէջ, այն է, թէ իրարու վրայ երկու մեծ թշնամիներու բանակները կը հալէին, կ՚անհետանային առջեւէն, առանց մեծ արիւնհեղութեան իր զօրքերուն և առանց անդարմանելի ժողովրդեան կորուստներուն։

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՄԱՀ ԵՒ ՍՈՒԳ

Ինչպէս տեսանք, բոլոր այս պատերազմներու միջոցին Մլեհի համար խօսք չկար, մարդ մը որ պատերազմ կը փնտռէր, կռիւ կ'երազէր, ի՛նչ եղած էր։ Թէպէտ եղբօրմէն հրաւէր գացեր էր իրեն ամրացնել Կոռիկոս, և բաւական բերդապահ թողլով մնացած զօրքով գալ մեծ բանակը, բայց նա յայտնի քէն ըրած կամ վատ քաղաքականութեան մը հետեւելով տեղէն չարժած չունէր։

Մլեհ Կիպրոսի արշաւանքէն դառնալէ վերջը՝ Լատիններու հետ զարմանալի բարեկամութեամբ մը կապուեցաւ, բայց որ Թորոսի ծանր էր լսել՝ այդ անգութ արշաւանքներուն գովութիւնն էր զոր պարծանքով կը յիշէր Մլեհ, և որու համար Թորոս պարտաւորուեցաւ խստիւ յանդիմանել զանի, իմացնելով թէ թէպէտ ինք թերեւս առաջինը եղած էր այդ արշաւանքը երկնելու Յոյներէն վրէժի համար, բայց շատ զղջացեր էր եղածները լսելով և տեսնելով թէ երբէք չէր կրցեր երեւակայել թէ երկու քրիստոնեայ իշխանները, այդ աստիճանի անգթութիւն գործէին խժաբար, անօգուտ ոճիրներով իրենց և Ռուբինեան անունը աղտեղելով։

Այս յանդիմանական խօսակցութենէն վերջը Մլեհ դադրեցուց եղբօրը հետ տեսութիւնները, և առջինէն աւելի գանգատներ և սպառնալիքներ, և երբ գինին կը զեղանէր և գլուխը կ'ելլէր, այն ատեն համարձակ կը զրուցէր.

— Հայրենի իշխանութիւնը պէտք էր երեքի բաժնել, և թէ Լեւոնի երկու զաւակները չէին ստեղծուած

գերի ըլլալու համար մեծին, և թէ հին և զառամուած աշխարհի սովորութիւնները ներկայ ժամանակին օրէնք չէին կրնար ըլլալ՝ որ մեծը բռնաբար իբրեւ յետին ստրուկ յանդիմանէր իր եղբայրները որ ամենեւին իրմէ պակաս չէին քաջութեան կողմէ։

Այս կերպ դուրս տալէն վերջ, ալ կը սկսէր Կիպրոսի արշաւանքներուն՝ անգթութիւններուն վրայ խօսիլ.

— Թէ յոյները արժանի էին ամէն պատուհասներու, որոնք պատժուեցան փռանգներէն և հայերէն, և թէ անոնք որ խաղաղութեան ատեն հայու վանք մը մտեր ամէն չարագործութիւն և մինչեւ սպանութիւն ըրեր էին խեղճ միաբաններու վրայ, արժանի էր որ իրենց եկեղեցականներն ալ ականջներ և քիթեր տուժէին փոխարէն։

Այս յորդաբանութիւնները թէպէտ Թորոսի ականջը կը հասնէին, ինք բաւական կը համարէր միշտ արթուն հսկել, և խօսքերու համար միշտ սուտ խուլ կ'ըլլար, վասնզի գիտէր զանազանել ճոռոմաբանութիւնն ի գործադրութենէ։ Այս վիճակին մէջ էին երկու եղբայրներուն յարաբերութիւնները՝ երբ յունական դրդռութեամբ և ոսկիով Մաղսուտ սուլթանի հետ պատերազմը տեղի ունեցաւ և որ երկու տարի ամբողջ մտատանջեց ու զբաղեցուց Թորոսը։

Բայց այս պատերազմին յաջող ելքը և Թորոսի փառքը՝ որ հայն ու օտարը զարմացուցին՝ Մլեհի մեծ յուսահատութիւն պատճառեց և ամէնքը զարմանքով տեսան որ օրին մէկը յանկարծ ամէն բան թողլով, իշխանութիւն, կին և երկիր ձգեց ելաւ գնաց տաճարական կրօնաւոր ասպետ եղաւ։

Բայց Թորոսի պատերազմներէ հանդիստ չկար, պէտք եղաւ Հալէպի Նուրէտտին սուլթանին դէմ յարձակիլ, երբ իմացաւ թէ նա իրեն դէմ կը պատրաստուի. ուստի փութաց անոր դէմ յարձակելու, վասնզի իմացեր էր թէ յոյներն ալ իրեն դէմ յար-

ձակելու կը պատրաստուէին: Ուստի առանց ժամանակ կորսնցնելու մտաւ բոցի պէս Հալէպի սահմանները, քանդեց՝ կործանեց ամրութիւնները և մեծ յաղթութեամբ դարձաւ իր երկիրը, և իմանալով թէ յոյներուն նաւատորմը բանակ կը բերէր իրեն դէմ Կիպրոսէն, իջաւ ծովեզրը իր յաղթական զօրքերով. հոն Միքայէլ Պրանաս յունաց զօրավարին հետ զարնուեցաւ, խորտակեց անոր բանակը և հազիւ նա մնացորդովը մտաւ նաւերը և փախաւ:

Յոյները հանդարտ չկեցան: Նոր բանակով մը նոր զօրավար մը՝ Անդրոնիկոս Եւփորպէն՝ Թորոսի վրայ հասաւ, և Տարսոնի մօտ հայերուն զօրքերուն հետ զարնուեցաւ:

Թորոսի նիզակակից էին այս պատերազմին մէջ փռանգներէն գունդ մըն ալ, երեք հազար յունականներ պատերազմի դաշտը ծածկեցին մեռելներով և իրենց զօրավարն չկրնալով հասնիլ իր զօրքերուն հետ նաւերով փախչելու՝ բռնուեցաւ Թորոսէ և Երուսաղէմի լատին Թագաւորին միջնորդութեամբ ազատեցաւ և գնաց Կոստանդնուպոլիս՝ իր պարտութեան լուրերը անձամբ տանելու:

Իսկ Ստեփանէ այն միջոցին իր գովելի վարմունքին համար ի մեծ պատուոյ էր եղբօրը աչքին, և Մարգրիտի առնացի պաշտպանութիւնը՝ Անարզաբայի պաշարման ժամանակ իր անունը փառաւոր ըրեր էր նաև օտարազգիներու աչքին:

Գերագոյն տարիներ էին անոնք, որ Եւփիմէ և Մարգրիտ իբրև քոյր սիրալիր այցելութիւններ կուտային իրարու, միշտ միաբան խնամելով Թշուառութիւնը իր ամէն տեսակին մէջ:

Ով որ իրենց դիմէր՝ ապահով էր պաշտպանութիւն գտնելու, և այս երկու տիկնայք իրենց գթած ձեռքով շատ ցաւեր սփոփեցին, շատ խստութիւններ մեղմացուցին: Իրենց տուները չէն էին յաջողութիւններու պայծառ շուքին տակ. Եւփիմէ իր գեղեցիկ Գո-

հարն ունէր, զարմանալի պատուաստ փափկութեան և արիութեան, Մարգրիտ երկու կորիւններ ունէր Ռուբէն և Լեւոն՝ որ պատերազմներու որսումներու և զէնքերու չկահիններու մէջ ծնած անոնց մէջ պիտի մեծնային Ռուբինեանց աթոռը նստելու համար. վերջինը մանաւանդ աւելի բարձրացնելու համար զայն:

Ի՛նչպիսի խնամքներով այդ իմաստուն մայրը մեծցուց այդ երկու տղաքները, այդ հրաշունչ բնաւորութիւնները չափաւորելու համար՝ անոնց աշխոյժը սանձահարելու համար՝ ի՛նչչափ իր մայրենի սիրտը խըստացաւ, նա՝ որ վերջը ապագային մէջ Ռուբէնի իբր փրկանք իր անձը կուտար և պատանդ երթալ յանձն կ'առնէր օտար իշխաններու արքունիքը:

Եւփիմէի Գոհարին քով ուրիշ տղայ մը կար Հեթում անունով, ինչպէս գիտենք պատանդ Թորոսի արքունիքին մէջ՝ որդի Լամբրոնի իշխանին, իբրև տան զաւակ հոն մկրտուեցաւ, հոն սնաւ, հոն դաստիարակուեցաւ և քանի որ Եւփիմէի մայրենի ձեռքը զինքը խնամեց, տղան որբութիւն չունեցաւ, վասնզի այս կնկան բնաւորութեան մէջ կար գրաւել իրմէ մեծի և փոքրի սիրտը, իր յանդիմանութիւնն նաեւ իր խըստութեան մէջ այնպիսի քաղցրութեան երակ մը ունէր որ դիմացինին սիրտը կը շարժէր և ոչ երբէք կը վիրաւորէր:

Զարմանալի բնութիւն մըն էր, փառք, մեծութիւն, զարդարանք, ուրախութիւն կը սիրէր Եւփիմէ, բայց ամէնքը միայն իր անձին համար չէր սիրեր, այլ ուրիշներուն հաղորդելու համար այնչափ գոհութիւն կը զգար որ եսութիւնը իրեն համար չէր:

Երբ Թորոս իր իշխանութիւնը մէկ կողմէն մինչև Իսաւրիա և Փռիւգիա ու միւսէն մինչեւ Եփրատ գըրեթէ կը տարածէր, և ամէն տեղ իբրև հսկող վերատեսուչ քան թէ իշխան կ'արշաւէր արագ և սըրընթաց՝ շատ պարզ էր վարմունքը. ընդհակառակն երբ Եւփիմէ Վահկայ բերդէն Տարսոն կ'իջնէր կամ Անար-

ղարա այցելութեան կ'երթար, կը սիրէր իր գեղեցկութիւնն զարդարել, ականակուռ և մարգարտայեռ իշխանական պսակը գլուխը՝ ոսկեթել բեհեզներու և ծիրաններու պերճանքով փայլիլ, և նոյնպէս զարդարուն տիկիններէ և արծաթեղէն զօրքերու խումբերէ շրջապատուած իր ուղեգնացութիւնները ընել. և որ քաղաքը որ իջնէր ժողովուրդը կը խռնէին տեսնելու և ողջունելու իր գեղեցիկ կերպարանքը՝ ուր զըուարթութիւն կը փայլէր, և ուրախ կ'ըլլային վասն զի իրենց ալ զուարթութիւն և հանդէսներ կը բերէր։

Ինը տարին կատարուեցաւ, բաղդը ամէն կողմէ Թորոսին կը խնդար, ամէն բան յաջող եղեր էր իրեն. շրջակայ իշխանները մեծ ու փոքր կը յարգէին և կը ակնածէին այս իշխանութենէն որ հազիւ թէ ճանչըցուած միշտ յաղթող և երջանիկ կ'ելնէր ամէն վտանգէ։ Երջանկութիւնը իր տան մէջ դրած էր իր բոյնը. ո՛վ որ իր ծանր զբաղումներուն վերջը տեսնէր զինքը հոն՝ իր կնոջ, իր զաւկին, իր բարեկամներէն և իր պարագաներէն շրջապատուած, այդ լուրջ և առիւծասիրտ մարդը քաղցր ու հանդարտ խօսելով և կատակելով, չափաւոր միշտ իր բոլոր կիրքերուն մէջ, երանի կուտար իրեն։

Բայց ամէնքը գիտեն և հին առակ է թէ բաղդը յողդողդ է, թէ երջանկութիւնը անցաւոր է. այսօրուան ծիծաղին վաղը արցունք կը յաջորդէ, այսօրուան ուրախութեան վաղը տխրութիւն, այսօրուան փայլուն պերճանքներու վաղը սև սուգ։

Գարունն հասեր էր, բնութիւնը կը ծիծաղէր, ծաղիկները կը բանային, թռչունները կաւետէին, Եւփիմէ որ Տորոսի լեռները կը սիրէր ջուրերուն ժայռերն ի վար կարկաջը և ճերմակ զով փրփուրը կ'ախորժէր. Վահկա երթալու միտք կը ցուցնէր և պատրաստութիւն կը տեսնէր։ Ուղեւորութեան նախընթաց գիշերն էր, երբ քիչ մը տկար ըլլալը յայտնեց և իր սենեակները քաշուեցաւ։

Հազիւ թէ քիչ մը ժամանակ անցաւ, եւ երբ Թորոս քովը գնաց, ձայնը և երեսին գոյնը այնչափ փոխուած գտաւ որ սաստիկ այլայլեցաւ և Դիոնիսին իմաց տալ հրամայեց։ Իսկ ծեր բժիշկը երբ եկաւ և հիւանդը տեսաւ՝ պաղեցաւ, արձան կտրեցաւ։ Այս տեսարանը աւելի չփոթեց Թորոսը, մէկ կողմը առաւ քաշեց քովի սենեակը։

— Դիոնիս, ըսաւ, ինչո՞ւ չփոթեցար, մե՞ծ է վտանգը։

— Վտա՛նգ, պատասխանեց ծերը դառնութեամբ ձեռքերը երկինք տարածելով, երանի՛ թէ վտանգ ըլլա՞ր... մա՛հ... ծնկուըները ճկեցան, և հազիւ թէ ժամանակ ունեցաւ Թորոս զինքը բռնելու և նստեցընելու, քանի մը շունչ առաւ, մեծ հառաչանք մը հանեց և ոգին էր որ տուաւ։

Այս տեսարանէն ահաբեկ, ներս վազեց Թորոս, Եւփիմէի ձեռքը բռնեց, պաղ էր սառի պէս։

— Շատ հիւանդ եմ սիրելի Իշխանս, վախնամ այս հիւանդութիւնը զիս պիտի սպաննէ, ըսաւ խեղճ կինը. ո՞ւր է Դիոնիս, ո՞ւր է Գոհարս... ես ձեռքովս կ'ուզէի Հեթումին հետ ամուսնացնել...։

— Հիմա կուգայ, կ'ըսէր Թորոս և կը ջանար զինք քաջալերել. բայց ան հազիւ թէ մէկ երկու խօսք կրցաւ զրուցել և թմրութեան մը մէջ ինկաւ որուն սոսկալի քրտինք մը յաջորդեց. հրաման ըրաւ Իշխանը, որ բժիշկ մը գտնեն, բայց երբ եկաւ բժիշկը, դուրսը ծերի մը դիակ գտաւ և ներսը երիտասարդ կին մը որ վերջին շունչը կուտար։

Մենք չենք կրնար նկարագրել այդ մարդուն ցաւը, որուն երեսը դրսէն տխրութիւն մը միայն կար, միայն թէ այդ տխրութիւնը մինչեւ վերջին օրը նոյն կնիքը անխախտ պահեց նոյն չափով։ Արեւը միշտ արեւ էր, բայց շամանդաղի թեթեւ քօղ մը պատած էր անոր երկինքը, չունէր պայծառութիւնը որ ամէնուն կը ծիծաղի։

Մխիթարութիւն մը կար ազգին բաղդին հետ իրեն համար, տղայ մը՝ գոհար մը որ շատ անգամ երբ հայրը տաժանելի ընթացքը կատարած իր Վահկայ պատշգամը՝ կորովի մարմնոյն և բազմաշխատ գլխուն հանգիստ կուտար, այն ատեն կուգար ցատկռտելով ծնկուըներուն վրայ կը նստէր, իր գանգրահեր գլուխը կը դնէր կուրծքին, իր փափուկ ձեռքերով անոր մօրուքը կը փայփայէր, լուսալիր քաղցր աչքերը անոր խորունկ աչքերուն կը յառէր, իր գողտրիկ ձայն սրտին և տարիքին պարզութենէն բղխած անոր ականջին անուշ խօսքեր կը մրմնջէր, ահա այն ատեն վայրկեանէ վայրկեան զուարթութեան պայծառութիւնը կ'ուգար, բայց ամպը հոն էր:

Մտածութիւնը միայն՝ թէ ուրիշ սիրելի անձի մը հետ երբեմն կը բաժնէր այդ երջանկութիւնը, ուրիշի մը որ չկար, ուրիշի մը որ սրտին կէսն էր, ուրիշի մը՝ որուն ոչ միայն զինքն և իր յաջողութիւնները այլ նաեւ իր ազգը մասամբ պարտաւոր էր, տխուր ամպը այն զուարթութիւնը կը հալածէր, աչքերը ակամայ կը դառնային դէպի Դրազարկ ուր Եւփիմէ իր եղբօրը քով կը ննջէր, և այն լայն կուրծքէն մեծ շունչեր կելնէին փոխանակ հառաչանքներու, և Գոհար այն ալ կորոշէր և կը հարցնէր·

— Ինչո՞ւ, հայրիկ, այսպէս մեծ շունչեր կ'առնես:

Դժուար էր այդ հարցումին պատասխանել, այլ պէտք էր խօյս տալ, բայց ո՞ւր, ամէն օր ամէն վայրկեան երբ զբաղումները զինք կը թողուին, այսպիսի տեսարաններ կը նորոգուէին, մինչեւ որ ժամանակը՝ որ յիշատակ չի մոռցնէր այն մտքերուն՝ որ յիշողութիւն ունին բայց կը տկարացնէ, բթացուց այդ ցաւերը, մանաւանդ որ Եւփիմէի մահը ուրիշ դժբաղդութիւններու նախաշաւիղն էր, ինչպէս պիտի տեսնենք:

ԳԼՈՒԽ ԻԴ.

ԿԻՌ ՄԱՆՈՒԷԼ ԿԱՅՍՐԸ

Թորոս լաւ խելամուտ էր թէ խաղաղութիւնը միայն և երկարատեւ խաղաղութիւն մը կրնար Ռուբինեանց աթոռը ամրացնել և Կիլիկիա ապաստանարան ընել Հայ ազգութեան· ուստի երբ ամէն բան կարգադրեց ջանաց նաեւ ուսումը տարածել իր երկրին մէջ ուստի վանքերը շատցուց, վասն զի անոնք միայն էին այն ժամանակը՝ իբր միջոց գիտութիւններու ծաւալումին· ով որ կ'ուզէր սորվիլ՝ վանք մը կը դիմէր, վասն զի ուսումնարան և վանք այն ատեն միեւնոյն նշանակութիւն ունէին, ոչ միայն արեւելքի մէջ այլ նաեւ արեւմուտքի մէջ:

Թէպէտ սիրտը դառնութեամբ լեցուն կնօջը մահուան՝ Մլեհ եղբօրը յիմար ձեռնարկութիւններու համար, բայց դարձեալ Թորոս անյողդողդ բնաւորութեան տէր՝ բարեկարգութիւններու կ'աշխատէր, ամէն իր այցելութիւնները կ'ընէր երկիրը բարւոք վիճակի մէջ պահելու համար:

Եւ երբ յոգնած՝ փախստեան տեղ մը փնտռէր կ'երթար կը քաշուէր Տարսոն, իր սեւ մաղձին քաղաքը, այն սենեակին մէջ՝ այն անկողնին քով ժամեր օրեր կ'անցնէր, անցեալին վրայ տխուր խորհրդածելով: Ահա ճիշդ նոյն օրերուն մէկն էր, երբ յանկարծ լատին ուխտաւոր մը իրեն ներկայացաւ գոյժ տալով թէ Մանուէլ կայսրը ընտիր զօրքերու խումբով մը իր վրայ կուգար:

Թորոս՝ թէպէտ անվեհեր քաջ մարդ էր և բոլոր իր պատմութիւնն ալ կը վկայէ, բայց անխախտ ըս-

կըզբունքներ ալ ունէր, պատերազմի բաղդը վտանգի չի դնել՝ երբ կարելի էր առանց իր զօրքերուն կորուստին թշնամին վտանգել՝ մաշել՝ տկարացնել և սովամահ ընել կը նախադասէր, և ասոր համար ալ տաք գլուխ երիտասարդ զօրավարներ՝ որոնց առաջինն էին Մլեհ և Ստեփանէ՝ զինքը կը բամբասէին. դարձեալ երբ կարելի էր բանագնացութեամբ և քիչ վընասով և ի հարկին խոնարհական ցոյցերով խաղաղութիւնը ծախու առնուլ և վտանգը հեռացնել աւելի կ'ընտրէր, քան թէ ազգին և իր անձին բաղդը կորուստեան վիհը գահավիժելու վիճակին մէջ ձգել։

Իսկ այս անգամ առանց չփոթելու՝ այլայլեցաւ, նախ՝ ինք որ միշտ իր թշնամիներուն ամէն շարժումները կ'իմանար, այս անգամ թշնամիին ձեռք խնալու վտանգին մէջ էր, պատճառը չէր կրնար մեկնել, վասն զի իր Կոստանդնուպոլսոյ լրտեսը՝ որ Կայսեր լուրը իրեն կը հասցնէր՝ դիպուածով արգիլուած էր իմացնելէն.

Երկրորդ՝ կայսրը շատ զգուշութեամբ վարուեցաւ իր արշաւանքներուն մէջ և փոքր գնդով մը իր վրայ կուգար, եւ Թորոս այս չէր կրնար երեւակայել։ Ուստի այն դրութիւնը գործածել մտածեց որ Մաղսուտ Սուլթանին դէմ ալ գործածեր էր քանի մը տարի առաջ յաջողութեամբ։

Բայց դժբաղդաբար չէր պատրաստեր ժողովուրդը, ժամանակ չկար ամէն բան աւրշտելու և լեռները քաշուելու, բայց պէտք էր շարժիլ, ուստի թողուց Տարսոն և ամէն տեղ հրամաններ ղրկեց որ լեռները ամրանան. Մարգրիտ իր զաւակներով հրաման ընդունեց քաշուիլ լերանց ամրութիւնները. Թոռնիկ միայն խնդրեց Թորոսէն մնալ և պաշտպանել Մամեստիան.

Իսկ ինք զօրքով կը հասնէր կը քաջալերէր ժողովուրդը՝ կը հասկցնէր թէ փոթորիկը կ'անցնի և երկար չկրնար տեւել։ Ամսուան մը ժամանակի մէջ

մարդ և կենդանի Տորոսի լեռները կը ծածկէին՝ երբ Յոյներուն բանակն ալ դաշտավայրը կը ծածկէր։

Տարսոն՝ Ատանա և Անարզաբա քիչ ժամանակի մէջ թշնամիին ձեռք անցան. իսկ Մամեստիա՝ Կայսրն ինք անձամբ պաշարեց, ձմեռ մը ու ամառ մը աշխատեցաւ մինչեւ որ կրցաւ առնել Թոռնկայ ձեռքէն, որ դիմադրութիւնն երբ անկարելի գտաւ, չուանով պարիսպներէն իջաւ գիշերանց և գետին մէջէն երկար տեղ լողալով ազատեցաւ թշնամիին ձեռքէն և հասաւ գտաւ Թորոսի խումբերը Սեւ լեռներուն մէջ։

Երբ Թոռնիկը տեսաւ Իշխանը ըսաւ,

— Հա՛, իրենց վերջի ընելիքն ալ ըրին Յոյները և իրենց դաշնակիցները. ալ թէ որ կ'ուզեն թող գան զմեզ հոս գտնելու։

Եւ իրօք Կայսեր դաշնակիցները կը շատնային.

Լատինները՝ Երուսաղէմի թագաւորէն սկսեալ, որ նոր փեսայ ալ եղած էր Կայսեր, Տաճարականներու մեծաւորէն սկսեալ իրենց բոլոր պարոններով, բրէններով և կոմսերով կը լեցուէին՝ կը խառնէին Յոյներու կայսեր բանակը, որ Մամեստիա արքունիք ըրած էր իրեն. հոն ահա նոր տեսարան մը վասութեան՝ սիրտ ունեցող ամէն մարդ քստմնեցուց. վասն զի ի տես ամէնուն՝

«Ներկայացաւ Անտիոքի իշխանն Ռընալտ վատ և խղճալի կերպարանքով վասն զի, ոչ միայն Յոյներուն առջեւ յանցաւոր էր, այլ և իր քաղաքացիներուն և անոնց պատրիարքին զոր անարգանքով չարչարեր էր, եկեղեցիին սպասները կողոպտելու համար, ուստի հիմա անճար և անյոյս ճգնաւորի զգեստ հագած, գըլխաբաց և բոպիկ, վիզը չուան ձգած, ինքզինք մահապարտ վճռած բոլոր Մամեստիոյ մէջ պտըտելէն ետեւ, եկաւ, ինկաւ կայսեր ոտքը՝ մերկ սուր մը մատուցանելով անոր, իբր թէ թոյլ կուտար որ ըստ արժանիքին գլուխը կտրուի. գունդ մը կրօնաւորներ ալ նոյնպէս գլխաբաց և բոպիկ ծունկի ինկած Կայսեր

գթութեան կ'ապաւինէին։ Բաւական սեպեց նա այսքան խայտառակութիւնը և թողութիւն տուաւ. պահանջելով որ Անտիոքցիները ընդունին յոյն պատրիարք մըն ալ և երբ կայսրն ուզէ՝ զրկեն գունդ մը օգնական զօրքերէն։»

Իսկ Կայսրը ժողով կ'ընէր զօրականներուն և իշխաններուն որ Թորոսը նուաճեն և շուտով՝ վասն զի բանակն արդէն նեղն էր կերակուրի համար, կենդանիները սովէն և հիւանդութենէ կը հատնէին, ուստի ժամ մը առաջ պէտք էր այս աներևոյթ ապստամբը նուաճել։

Հոն՝ որոնք որ փորձը առած էին Տորոսի և անոր բնակիչներուն դժուարութիւններուն հասկցուցին կայսեր թէ շատ դժուար և վտանգաւոր էր այդ լեռներուն մէջ պատերազմիլ արթուն թշնամիի մը հետ որ իրենց կը սպասէր. և թէ ընդհակառակն շատ դիւրին էր հնազանդութեան բերել Թորոսը, երբ բանաւոր և պատուաւոր դաշինքներ իրեն առաջարկէին և Երուսաղէմի Թագաւորը (Պալտուին Գ.) յանձնառու եղաւ բանակցութեան մտնել Հայոց իշխանին հետ։

Ուստի, Թագաւորը ինք անձամբ ելաւ փնտռելու Թորոսը և կայսեր պայմանները կ'առաջարկէր, որոնց ամէնէն ծանրը անձամբ ներկայանալն էր Մամեստիա հնազանդութիւն կայսեր համար, և անոր փոխարէն կայսրը զինք կ'ընդունէր իբրև Իշխան կուսակալ Կիլիկիոյ, միմիայն Անարզաբան պահելով իրեն։

Յանձն առաւ Թորոս և եկաւ Մամեստիա իշխանաբար՝ ոչ իբրև Ռընալտ, և այսպէս ներկայացաւ կայսեր որ ցուրտ ընդունելութիւն մը ըրաւ իրեն, անշուշտ յիշելով Կոստանդնուպոլսոյ կալանաւորը։ Բայց կէս ճամբան մնացող մարդ չէր Թորոս, յանկարծ իմացան օր մը բանակը թէ Հայը թողեր գնացեր է, և երբ այս գործողութիւնը ոմանք չարագուշակ կը մեկնէին՝ տեսան թէ Հայ ցորեններով, արջառներով և ոչ

խարներով լեցուց բանակը, և գրաստի ու ձիերու նըւազութեան առատութիւն յաջորդեց։

Արդէն կայսրը իր իմաստուն և կորովի կերպին հաւնած էր, իսկ այս վերջին գործողութեամբ բոլորովին իրեն յարեցաւ և անուանեց զայն Պանսեփաստոս և ոսկեկնիք հրովարտակով իշխանութեան մէջ հաստատեց։

Անկից վերջը Մանուէլ կայսրը ելաւ բանակովը Կիլիկիայէն և մտաւ Անտիոք ու անկից Հալէպի վրայ արշաւելու ելաւ Նուրէտտինի դէմ, բոլոր այն կողմի Քրիստոնեաներուն յոյս տալով զիրենք ազատելու Մահմետականներէն։ Բայց դանդաղութիւնները, դեգերումները, բանակցութիւնները, թոյլ պատերազմները յայտնի կ'ընէին թէ Բիւզանդական կայսրութիւնը ուրիշ դիտաւորութիւն չունէր այլ եթէ՝ տէրէլ-համար բաժնել ամէնքը։

Երբ բանակը Հալէպի մօտեցաւ, սուրհանդակ մը հասաւ Կայսեր Կոստանդնուպոլսէն որ զինք արտորնօք ետ կը կոչէր, ուստի առանց միտ դնելու Երուսաղէմի Թագաւորին և քրիստոնեայ իշխաններու աղաչանքներուն՝ որ երեք օր գոնէ ուշացնել կը խնդրէին յետադարձը, խաղաղութեան դաշինք կնքեց Սուլթանին հետ և ետ դառնալու հրաման տուաւ բանակին։

Ամէնքը մեծ ուրախութեամբ պաշարուեցան, բայց անոնք միայն որ Բիւզանդական կայսրութեան քաղաքագիտութեան տեղեակ չէին կամ անոր դաւաճանութիւնները յիշելու չափ խելք չունէին։ Ուստի Կայսեր բանակը Կիլիկիա հասաւ և Անարզաբայի մօտեցաւ, Թորոս որ յիշողութիւն ունէր և գիտէր թէ մինչև ուր կրնայ հասնիլ յունական հաւատարմութիւնը, յանկարծ իր զօրքերը առաւ և Վահկայ քաշուեցաւ, կայսրն ալ իր ճամբան շարունակեց և գնաց, զօրքերուն մէկ մասը ճամբաները ցանելով։

Ինչպէս ըսած էր Թորոս իր ժողովրդեան և իր

զօրքերուն, փոթորիկն անցաւ անհետացաւ Կայսեր հետ, Թէպէտ երկու տարուան ժամանակ ծանրացաւ Կիլիկիոյ վրայ. խաղաղութիւն եկաւ ժողովրդեան և բոլոր դաշտավայրը ծածկուեցաւ հասկերով, որթը ծանրացաւ ողկոյզներով, ուրախութեան ձայները ըսկըսան դարձեալ լսուիլ, և Հայոց իշխանը որ խաղաղութիւն կը սիրէր, վասն զի գիտէր ժողովրդեան օգտակարը՝ դաշինքները կը յարգէր, վասն զի անոնցմով միայն կարելի է տէրութիւններու սահմանները ապահովել. շարունակ իր Ստեփանէ եղբօր հետ վէճի առիթ կ'ունենար, և այս իրեն սրտին ցաւ էր։

Այս քաջ բայց անխոհեմ եղբայրը՝ շարունակ միտքը դրած առանձին իրեն իշխանութիւն մը հաստատել Բեհնոյ և Մարաշու կողմերը յարձակումներ կ'ընէր. և միշտ գանգատներու առիթներ կուտար, իրեն պէս թեթևամիտ եկեղեցականներուն խորհուրդները լսելով ոչ միայն դաշինքներու՝ այլ և երդումներու կը դըրժէր։ Եւ այսպէս առիթն եղաւ անգամ մը պատերազմի Թորոսի և Նուրէտտինի մէջ, և երբ Թորոս հաշտութիւն խօսեցաւ Նուրէտտինի հետ Ստեփանէի կամաց դէմ, սկսաւ եղբօրը դէմ մեքենայել, որով իշխանը պարտաւորուեցաւ բանտարկել զանիկա առժամանակեայ կերպով, և յետոյ արձակել ու դարձեալ իբրև եղբայր հետը վարուիլ, համոզելով զինքը թէ այդ ճամբով չէր որ իշխանութիւն մը կը կազմուէր։

Եւ օրինակը ցոյց կուտար թէ՝ ինչպէս իրեն դիւրին էր Յոյները հալածել Կիլիկիայէն, բայց ինք կ'ուզէր յարգել դաշինքները և առժամանկեայ իշխանութեան հետք մը թողուլ Յոյներու գոհութեան համար, քանի որ առիթ չէին տար իրեն դժգոհութեան և դաշինքները լուծելու։

Բայց անխոհեմ ընաւորութիւնները ո՛չ բարեկամութեան և ոչ թշնամութեան մէջ չափ չունին և ոչ կշիռ։ Ստեփանէ Յոյներուն հետ ընտանութիւնը շատցուց, և մտերմաբար սկսաւ կապուիլ Անդրոնիկոս Եւ-

փորպէնի հետ, որ Կայսեր ազգական և տեղակալն էր Կիլիկիոյ մէջ, և որ ճաշի հրաւիրելով Ստեփանէն Համուս բերդը՝ եռացած ջուրի կաթսայի մը մէջ զինքը սպաննել տուաւ։

Այս անգութ մահուան լուրը երբ տարածուեցաւ Կիլիկիա, բարկութեան և վրէժխնդրութեան կրակը բորբոքեցաւ և Թորոս որ իր զօրքերով Յոյներու վրայ կը քալէր, յանկարծ իր քովը տեսաւ քինաւորեալ Մլեհը որ խումբ մը կատաղի զօրքերու մէջտեղ ելեր էր եղբօրը մահուան վրէժը լուծելու։ Յոյներուն կոտորածը սաստիկ եղաւ, տասն հազար հոգի կոտորուեցաւ կ'ըսեն պատմիչները, Անարզաբան և դեռ ինչ բերդ և ամրոց որ մնացած էին Կիլիկիա՝ ամէնն ալ առնուեցան իրենցմէ, և ջարդը դեռ պիտի շարունակէր թէ որ Երուսաղէմի Թագաւորը միջնորդ չըլլար դադրեցնելու համար այս անգութ կոտորածը։

Իսկ Ստեփանէի մարմինը տարին եղբայրները և թաղեցին Արքայաղնի վանքին մէջ, և անմխիթար տիկինն Մարգրիտ՝ գնաց իր զաւակներով Պապեռոնի իր եղբօրը բերդը։

ԳԼՈՒԽ ԻԵ,

ԼԱՄԲՐՈՆԻ ՀԱՐՍԸ

Թորոս Եւփիմէի վերջին կամքը կատարելու մըտադիր էր միշտ, Հեթում որ իր աչքին առջեւ կը մեծնար՝ յարմար փեսայ մը կերեւէր, հայ գիտնական վարդապետ մը և յոյն ուսումնական մարդ մը կ'աշխատէին գլուխը հարստացնելու գիտութեամբ, և զինավարժութեան համար Բարձրաբերդցին Կոստանդին էր կարգուած իշխանէն զինքը մարզելու։ Իսկ Թորոս կը խօսէր երբեմն հետը, զանազան նիւթերու համար հարցումներ կ'ընէր, և առանց իր սխալ կարծիքները ուղղելու՝ իմաստուն հարցումներով տղուն իրեն ուղղել կուտար նոյն սխալները։

Բայց, դժբաղդաբար կը տեսնէր թէ ընտանեկան հոգին որ յունական էր, խոր արմատ ձգած էր դարձեալ անոր սրտին մէջ, դաստիարակութիւն և ուղղափառութեան զօրութիւն հազիւ կրնային կչիռ մը կազմել այն կաթին հետ ջամբուած գաղափարներուն հետ որոնք Լամբրոնի իշխանները ազգային շրջանէն դուրս կը հանէին և յունական համակրութեանց կողմը կը ձգէին։

Միւս կողմէն Գոհար՝ թէպէտ փոքր բայց ինչպէս գիտուած է որ աղջիկները կանխահաս են մտքի կարողութիւններով, ամենեւին ետ չէր մնար Հեթումէն, և բնական բերումով հետաքրքիր բնաւորութիւնը շարունակ հարցումներով գոհ ընել կ'ուզէր։ Եւ զարմանալին է, հօրը պատասխանները զինք աւելի գոհ կ'ընէին՝ երբ իր վարժապետներուն պատասխանները մութ էին իրեն համար։

Ուստի տղոց երկուքն ալ օր աւուր մեծնալով թէ-

պէտ թարմ հասակնուն մէջ՝ յարմար սեպեց Թորոս իրենց հարսնիքը կատարել Մամեստիոյ մէջ որ իր առաջին յաղթութիւններուն և Եւփիմէի ուրախ զըւարթ յիշատակներով լեցուն էր. և որովհետև Օշին իր փրկանքի գին չէր կրցած վճարել, այն ալ իր մէկ հատիկ զաւկին օժիտ համարեց արքայաբար, և հոնկից հարսն ու փեսան Լամբրոն ուղեւորեցան։

Լամբրոնի տէրերը, միշտ կայսեր հաւատարմութեան դրօշակիրները ըլլալով աւանդաբար որդւէ որդի, այս Ռուբէնի փափուկ շառաւիղը, յանկարծ բոլորովին օտար երկրի՝ օտար կլիմայի տակ փոխադրուած բոյս մը դարձաւ, ամէն բան, ամէն գաղափար, ամէն խօսակցութիւն նոր էին իրեն համար. ի՛նչ որ յարգել սովրեր էր իր հայրենի տունը, հոս արհամարհուած կը տեսնէր, ի՛նչ որ հոն սուրբ էր, հոս ծաղրելի էր։

Բայց որ իր սրտին ամէն բանէ առաջ ծանր կը թուէր, այն էր որ պարզ համարձակութիւնը՝ որ հայրենի տան մէջ սովորական էր, հոս բոլորովին ընդհակառակն սանձահարուած կը տեսնէր, հոս անմեղ ծիծաղը նաեւ գաղտնի պէտք էր ըլլալ, վասն զի խոժոռ երեսներ կային որ տխրութիւնը իրենց շուրջ օրէնք ըրած էին։

Այս բերդին մէջ նոր հարսին ամէն շարժումները ամէն խօսք քննութեան և յանդիմանութեան առիթ մըն էր։ Փեսան պէտք էր ըլլալ իր միմիայն ապաստանարանն ու սրտակիցը, բայց ան ալ ինքզինք հոս աւելի ճնշուած կը գտնէր քան թէ Վահկայ բերդը ուր աւելի համարձակ և ընտանի էր Թորոսի՝ քան իր հօր Օշինի հետ։

Կը հանդիպէր նաև երբեմն որ Լամբրոնի դղեակին մէջ ծանր և նախատական ակնարկութիւններ կ'ըլլային Թորոսի և Ռուբինեանց յիշատակին, որ հարսին սիրտը ծանրապէս կը վիրաւորէին, բայց ան թէպէտ թարմ հասակի մէջ՝ իբրեւ անգգայ չիմանալու

կը զարնէր։ Այսպէս տխուր կ'անցնէին իրեն համար ամիսները, երբ մեծ պատրաստութիւններ իրեն իմացուցին թէ Լամբրոնի մէջ Թորոսի այցելութիւնները կը սպասուի։

Հօր տեսութիւնը ձմեռուան տխուր օրերու՝ ճառագայթ մը եղաւ խեղճ աղջկան համար, թէպէտ արարողութիւնները կ'արգիլէին զաւակին համակրութիւնն ունենալ հօրը հետ ինչ որ առաջ· բայց Թորոս՝ որ Բիւզանդական կայսրութեան արարողութիւնները աւրշտըկեր էր բոլոր Կիլիկիա տակն ու վրայ ընելով, այդպիսի պառաւական կապերու առջեւ չէր կրնար սանձահարել· ուստի աղջիկը առաւ քովը, խօսեցաւ ամէնուն առջեւ անտարբեր և երթալու ատեն առանձին սենեակի մը դրան մէջ կենալով՝ որպէս զի ամէնքը զինքը տեսնեն բայց ձայնը չլսեն·

— Զաւակս, ուրախ եղիր, զուարթ եղիր, հայրդ քեզի չէ մոռցեր, և չկրնար մոռնալ, ըսաւ և գնաց։

Որովհետեւ առջի նայուածքը ըսեր էր Թորոսի թէ իր աղջիկը երջանիկ չէր։

Թորոս Լամբրոնի իշխանաց յունամոլութենէն գոհ չէր, բայց իր մեծ սիրտը մարդկային տկարութիւններուն բաժին հանել և ներել գիտէր· գիտէր թէ անոնք ամէն բան կայսրերէն ստացած, բնական էր իրենց հաւատարմութիւնն, բայց չէր կրնար ներել ամէն օր իր անձին և իր պետութեան դէմ նիւթուած որոգայթներուն որ ազգին դէմ մատնութիւն կը համարէր· գիտէր Մասուտ Սուլթանին թէ շատ անգամ Կայսեր բանակցութեանց գործիք եղած էին թէպէտ առանց երեւալու· գիտէր թէ Ռընալտի իրեն դէմ գրգռութեան դարձեալ գործիք եղած էին, թէպէտ Ռընալտի խօսքերուն հաւատարմութիւն չունէր։

Իսկ կայսեր իր վրայ յարձակած ժամանակ յայտնի իրենց գունդերով հոն էին Լամբրոնցիները, թէպէտ բոլոր այս գործողութիւններու ատեն իրենց Հեթումն պատանդ էր իր քով։

Իսկ հիմա նոր ձեռքը ունէր Նուրէտտինի գրուած թղթեր գրգռելու համար զանի իրեն դէմ, և այս՝ իր մէկ հատիկ աղջիկը իրենց զաւկին հետ հարսնացնելէն վերջ։

Ուստի այս անգամ ալ արհամարհելու պատրաստ էր այս փոքրիկ և անարգ բանսարկութիւնները, բայց իր զաւկին տխուր տեսութիւնը, այն զաւկին որ մօրը սիրելի յիշատակին գրաւականն էր, իր սիրտը դառնութեամբ լեցուց և երդում ըրաւ որ այդ Լամբրոնի ամբարտաւան դաւաճանութիւնը խորտակէ և չուչացնէ։

Բայց իբրեւ շրջահայեաց մարդ պէտք էր նախ զաւակը անոնց ճիրաններէն ազատել, վասն զի իր կամքով և միամտութեամբ անոնց պատանդը ազատեր և իրենը պատանդ տուեր էր, ոչ միայն իր Եփիմէին վերջին նուիրական կամքը կատարելու, այլ նաեւ ընդհանուր եղած քաղաքականութեան կանոնով որ խնամութեամբ զինաթափ ընել կը կարծէ թշնամին և բարեկամական կապով կը միացնէ։ Ուստի իր պատերազմական մտքերը չյայտնած՝ աղջիկ ազատելու հընարք մը մտածեց։

Հօրը այցելութենէն վերջը, Գոհար իբր յանցաւոր մը մնաց և ամէն աչք թէպէտ զգուշաւոր բայց երկդիմի ակնարկ մը իրեն կը ձգէին։ Շահանդուխտ՝ իր կեսուրը՝ թէպէտ լաւ սիրտ ունէր, բայց կռուելու չափ այն բնական դարձած ատելութեան դէմ որ ունին կեսուրները իր հարսերուն, բարձր սիրտ չունէր, ուստի կամ նայուածքով մը, կամ բառով մը խեղճին սիրտը կը թունաւորէր։ Իր Հեթումը՝ ինչպէս ըսինք որ մխիթարութիւն պիտի ըլլար, շատ հեռու էր այն սիրտը ունենալէն որ հասակէն աւելի գտնուելով, այսպիսի դիրքի մէջ պաշտպանութեան վահան կ'ըլլայ։

Երբ այսպէս գիշեր մը, ընթրիքէն վերջը՝ ուր խիստ ակնարկութիւններ կ'ըլլային իր հօրը դէմ և

հօրեղբօրը Ստեփանէի անունը տրուեցաւ անարժան կերպով, Գոհար երբ ինքզինքը՝ մանաւանդ թէ արցունքները կը զսպէր, կեսուրը հարսին դառնալով և չափաւորեալ խստութեամբ:

— Զաւակս, ըսաւ, դուն դեռ տղայ ես, այն օրէն որ աղջիկ մը հարս կ՚ըլլայ, ալ իր տունը և անոր պարագաները ոչ միայն պէտք է մոռնայ, այլ պէտք է ուրանայ. այս այլայլութիւնդ ալ մեծ ամօթ է:

Գոհար պատասխան չտալով, թաշկինակը երեսին և աչքերուն վրայ սեղմելով հազիւ իր սենեակը ձըգեց ինքզինքը, և հոն քիչ մը հեկեկելէն վերջը իր պատուհաններուն վրայ բացուած փոքրիկ ծաղիկներու պարտէզը ելաւ. նոր լուսաւորութեամբ շարժում մը և ստուեր մը տեսաւ, և երբ սոսկումով ետ պիտի փախչէր:

— Ո՛վ իշխանուհի ըսաւ ստուերը, հօրդ՝ Թորոս իշխանին կողմէն կուգամ քեզի:

Հօրը անունը լսելուն պէս, խեղճ աղջկան սոսկումին տեղ յոյս մը երեսին ծագեցաւ:

— Հօ՞րս կողմէն:

— Այո՛, հօրդ հրամանն է, որ վաղը կէսօրին ճիշդ երբ կերակուրի իջնեն ամէնքը՝ նոյն միջոցին դուն բերդին վերի դուռը ելնես, և նշան այս թուղթը տուաւ. զրուցեց և զարմանալի արագութեամբ վանդակին եղերքը բռնելով այն պատին ահագին բարձրութենէն սկսաւ վար իջնել, իբր թէ սանդուխ մը դրուած ըլլար: Գոհար չփոթած այս գործողութենէն թուղթը ձեռքը ծռեցաւ և կը նայէր պատանիին որ կ՚իջնէր անխռով, մինչև որ վար հասնիլը տեսաւ: Այն ատեն սիրտը հանդարտանալով՝ թուղթը ձեռքը ներս մտաւ և կանթեղին մօտենալով սա բառերը կարդաց.

« Մտիկ ըրէ, և լռէ՛ — ԹՈՐՈՍ:

— Հօրս ստորագրութիւնն է. ուրեմն «վաղը կէսօրին, ճիշդ կերակուրի ժամանակ, բերդին վերի դու-

ռը» պէտք է ելնել... ո՛հ, իմ սիրելի հայրիկս զիս չէ մոռցեր. իմացեր է որ ես հոս մարտիրոս կըլլամ... Եւ ինք ինձ ըսաւ.

«Հայրդ զքեզ չէ մոռցեր և չկրնար մոռնալ...»

«Բայց Հեթո՛ւմ... զիս կը սիրէ, այո՛, կը սիրէ, բայց իմ հօրս պէս հայր մը պէտք էր ունենալ... իմ խեղճ մայրս եթէ ողջ ըլլար հիմա, և իմանար իմ հոս քաշածս... ի՛նչ պիտի ընէր, իմ հօրս պիտի զրուցեր և թերևս այդ պատանին որ այս պատէն վար իջաւ մողէսի պէս ամիս մը առաջ պիտի բերէր հոս հրամանը... բայց ի՛նչ պիտի ընեմ ես... անշուշտ մարդիկ պիտի գան և զիս պիտի ազատեն... բայց Հեթո՛ւմ...

«Հօրս հրամանն է պէտք է լռեմ և մտիկ ընեմ... ան ամէն բան գիտէ, ամէն բան կը տեսնէ, ամէն բան կը մտածէ, միթէ Բաբկէն հայրիկ ինձ այնպէս չէր ըսեր միշտ... ո՛հ պատուական ծերունին... ես երբ հոս հարս կուգայի՝ որքան լացաւ. ես անոր լալը մօրս մեռած օրը տեսայ անգամ մըն ալ, և երբ հարսնութեանս քօղը գացի զարդարուած և ուրախութենէս կը թռչտէի... տեսայ որ աչքերը կը սրբէր. մօրուքը ձեռքովը կը շոյէր, հոս հոն կը դարձնէր աչքերը, չփոթած էր խեղճ ծերուկը:

«— Դուն ուրախ չես, Բաբկէն հայրիկ, ի՞նչ ունիս, ըսի, իմ հարս ըլլալս չէի՞ր ուզեր:

«— Ո՛հ, ինչպէս կրնայի չուզել, Գոհարիկս, ըսաւ միայն զրուցէ, աղաչէ հօրդ, Լամբրոն մի երթար, մեր քովը կեցիր իշխանուհիս:

«Եւ այս խօսքերը ըսելով՝ ալ որոշ տեսայ որ արցունքը ջուրի պէս աչքերէն կը վազէր, ես ալ կը զգուշանայի որ արցունքը իմ հագուստներուս վրայ բիծ մը չի ձգէ... երանի՛ թէ իմանայի այն արցունքներուն զօրութիւնը, և հիմայ սիրտս վէրքերով չէր բծաւորէր...: Բաբկէն միայն զիս կը սիրէ եղեր, Բաբկէն միայն իմ վրաս լացաւ... հայրս չի լացաւ...

բայց հայրս չէ՞ր գիտեր թէ ես խեղճ պիտի ըլլամ ասոնց ձեռքը, նա որ ամէն բան գիտէ...։

«Այո՛ ամէն բան գիտէ... ո՛վ իրեն գրուցեց թէ ես թշուառ եմ... ես իրեն բան մը չի գրուցեցի, չէի կրնար ալ գրուցել, ամէն աչք վրաս կը նայէին... թուղթ մը չգրեցի, ուրիշներու ձեռք կրնար անցնիլ... բայց ասոնք ինչո՛ւ մեզ չեն սիրեր... իմ խեղճ հօրեղբայրս ի՞նչ ըրեր է ասոնց...

«Ամէնքը լացին անոր մահուան վրայ՝ բացի հօրմէս... բայց նա չի լար... աչքերը գոց կը նստի երբ տխուր է... երբ որ հօրս երթամ ամէն բան պիտի ըսեմ... Բայց Հեթում տխուր էր, անոնց կամակից չէր... այն ալ կը գրուցեմ, ալ հերիք եղաւ... Նայեցէք կուգա՞յ... այսչափ ժամանակ եղաւ, գիտէ որ տխուր եմ... ես սա թուղթը պատռեմ... ահա մարդու ձեռք իյնալու վտանգն ալ չի կայ...»

Երբ դուռը բացուեցաւ՝ Հեթումին տխուր դէմքը տեսնուեցաւ, որ իր հարսին քովը եկաւ որ նոյնպէս կախ երես քինաւորեալ գլուխը վեր չէր վերցներ. իսկ Հեթում տեսնելով անոր կերպարանքը սկսաւ գանգատիլ թէ բնական էր որ Լամբրոնի մէջ մեծ սէր մը պէտք չէր յուսալ Ռուբինեանց վրայ, թէ երկու թշնամի ընտանիք պէտք էր սպասել որ կամաց կամաց մոռնան բոլորովին իրենց ատելութիւնը, ուստի մինչեւ այն ժամանակ պէտք էր սպասել և կամաւոր սուտ խուլ ըլլալ ու չիմանալ...»

— Լա՛ւ, ըսաւ Զօհար դառնութեամբ, դուն ալ ուրեմն իրաւունք կուտաս այն անգութ նախատանքներուն, միայն պէտք է յիշես թէ երբ դու Վահկայ էիր, իմ հայրս և իմ խեղճ մայրս քեզի հետ այսպէս չի վարուեցան, և մէկ ծանր բառ մը քու ծնողքներուդ և թէ քուկիններուդ համար չէի լսած ոչ իրենցմէ և ոչ ծառաներուն մէկուն բերնէն ես զքեզ երկար ժամանակ եղբայրս գիտէի, և կը կարծէի թէ մեր տունը քեզի հետ ինչպէս վարուեցան, հոս ալ

ինծի նոյն վարմունքը կը սպասէր...՝ ափսո՛ս, ափսոս, հազա՛ր ափսոս։

Եւ այս խօսքերէն վերջը, ալ արցունք չի կար, այլ անկիւն մը քաշուեցաւ լի դառնութեամբ և քուն ձևացաւ։ Իսկ Հեթում չփոթած այս յանդիմանութիւններուն վրայ, և ժամանակէն սպասելով (ինչպէս իր սկզբունքն էր) փոթորիկին անցնիլը, մօտ անկողին և քիչ մը ատենէն հանդիստ քուն եղաւ։ Այս գլին և քիչ մը ատենէն հանգիստ քուն եղաւ։ Այսքունը ալ աւելի զայրացուց տղայ կինը՝ որ ինքնիրեն կ'ըսէր.

«— Եթէ զիս սրտանց սիրէր անշուշտ զիս կ'ամոքէր, ինչ կենամ, որո՞ւ համար կենամ այս դղեակը, ուր միայն խոժոռ երես և տխուր խօսքեր կան... Բարկէն հայրիկ իրաւունք ունէր... բայց երիտասարդ տարիքի մէջ տխրութիւնն ալ քուն կը բերէ. քիչ քիչ քունը՝ ճշմարիտ քունը իր աչքերն ալ գոցեց, և երբ արթնցաւ առաւօտ էր։

Զօհար անհամբերութիւն մը ունէր նոյն օրը, և ոչ ոք բուն պատճառը չէր կրնար երեւակայել. արդէն Հեթում իր հարսին խոժոռ կերպարանքը չտեսնելու համար որսի երթալ և հեռանալ միմիայն դարման համարեցաւ վիճակին։ Ուստի ան ալ բանի մը հետ չկրնալով զբաղիլ, կէս օրին սպասելով ծաղկոցը կը պտըտէր, և առանց իմանալու շատ մը ծաղիկներ կը փեթթէր, և ակամայ աչքը հորիզոնին վրայ բան մը կը փնտռէր, իրօք ալ կէս օրը մօտ էր երբ Լերան կողմը երեք ձիաւոր տեսաւ ճերմակ վերարկուներուն փաթթուած որ դէպի բերդին ճամբան կ'իջնէին։

Սիրտը սկսաւ տրոփել, նոյն միջոցին ճաշի համար ձայն տրուեցաւ, թէպէտ անսանձ փափաք կը զգար սանդուխներէն վար վազելու՝ բայց ինքզինքը սանձեց, և անհոգ տխուր ձեւով մը աջ կողմը սեղանատան դրան առջեւ կեցաւ, աչք մը նետեց, դեռ մէկը չէր իջեր, դարձաւ դէպի ձախը որ դղեակին վերի դուռն էր և ուր նարինջի և նուռի ծառերը չու քերնին

ձգած էին, ծեր դռնապան մը դաւազանը ձեռքը նըստած էր, երբ տիրուհին տեսաւ ոտքի ելաւ, իսկ ան առանց խօսելու դրանը մօտեցաւ, գլուխը դուրս հանեց և տեսաւ որ իր նշմարած երեք հեծեալներուն ձիերուն գլուխները դրան առջեւ երկնցան:

— Բարկէն հայրիկ, դո՞ւն ես, ըսաւ Գոհար:

— Ես եմ, իշխանուհիս պատասխանեց ծերը:

Եւ այս միջոցին երկու կորովի բազուկներ զինք բարձրացուցին և Բարկէնի ձիուն վրայ դրին, Բարկէն թէպէտ եօթանասունը անցած, աջ թեւով աղջիկը գրկած և ձին մտրակելով կը սլանար դէպի Տարսոն՝ առանց գլուխը ետին դարձնելու, իսկ ծեր դռնապանը այս տեսարանը տեսնելով ջանաց ձայն հանելու, բայց նոյն միջոցին այնպիսի բռունցքի հարուած մը ստացաւ կուրծքին՝ որ կռնակն ի վար գլորեցաւ, և երիտասարդը որ ակնթարթի մը մէջ ձիէն իջեր Գոհարը Բարկէնի գիրկը և հարուածը խեղճ դռնապանին տուեր էր, քրքիջ ծիծաղով մը դարձեալ ցատկեց ձիուն վրայ և սկսաւ քշել ամենախիստ արագութեամբ հասնելու համար Բարկէնի ձիուն որուն փոշին միայն կ'երեւէր և իրօք անկարելի էր այդ նժոյգին հասնիլ թէ որ ծերը իր ընկերներուն հասնելու համար չթուլացնէր իր ընթացքը:

— Հանգի՞ստ ես, զաւակս, հարցուց ծերը:

— Փա՛ռք Աստուծոյ, հանգիստ եմ և շատ ուրախ եմ, Բարկէն հայրիկ, կ'ըսէր Գոհար, ձախ ձեռքով որ ազատ էր Բարկէնի մօրուքին թելերը մէկդի ընելով, որ աչքերը կը մտնէին, բայց ըսէ՛ ինձ, ազատեցա՞նք Լամբրոնէն:

— Անհո՛գ եղիր այս ձիուս հասնող ձի չկայ Կիլիկիոյ մէջ, Թոռնիկ այս ձին գողնալու համար մինչև Սղերդ գնաց:

— Բայց կուգան, Բարկէն հայրիկ:

— Մեր տղաքն են, Տիրուհիս, դուն հոգ մի ըներ հիմա իշխանն ուր է՝ կը հասնի:

Հազիւ թէ քառորդ մը տեղ ձիավարեցին, ամպի պէս փոշի մը երեւցաւ տռջեւնէն, և գունդ մը ձիաւորներ փոթորիկի պէս կուգային: Բարկէնի ձին սկսաւ խխնջել և առջեւի ոտքերովը գետինը զարնել:

— Ահա իշխանն է, ըսաւ Բարկէն: Կրակ մեզի աւետիս կուտայ:

Կրակն ի՞նչ է, ըսաւ Գոհար:

— Կրակը այս մեր կարմիր ձին է, որ բոցի պէս կ'երթայ՝ որ ամէն բան կ'իմանայ որ կը խօսի, կ'իմացնէ, անխելք մարդիկներէն շատ խելօք է, քեզ բերելու համար այսօր ինձ տուաւ հայրդ:

Եւ իրօք Թորոսն էր որ անձամբ կուգար դիմաւորելու աղջիկը, և երբ մօտեցան իջաւ ձիէն՝ առաւ նըստեցուց զայն պատրաստ ձիու մը վրայ, կռնակը լօդիկ մը և գլխուն բեհեզեայ քօղը տուաւ, և ծանր ծանր հասան Տարսոն:

Թէպէտ շատ պարզ և դիւրին եղաւ Գոհարի Լամբրոնէ ազատութիւնը, բայց դարձեալ բաւական ցընցուած էր խեղճ աղջիկը, որ մէկ երկու օր մը փոքրիկ ջղային անհանգստութիւն մը ունեցաւ, և որ շատ մտատանջեց Թորոսը որ չէր կրնար մտքէն հեռացնել այդ քաղաքին մէջ անոր մօրը դժբաղդ վախճանը. ուստի երբ զաւակը քիչ մը աղէկ գտաւ ինքզինք, մէկէն խումբ մը պահապան զօրքերով յանձնեց Բարկէնի՝ տանիլ Վահկայ:

Իսկ Լամբրոնի բերդէն հանուած խնդրակները հազիւ թէ երեկոյին կոր գլուխ կը դառնային իմացնելու թէ իրենց հարսը Տարսոն մտած էր իր հօր հետ և բազմութեամբ ձիաւորներու:

ԳԼՈՒԽ ԻՁ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ

Լամբրոն անառիկ անուն ունէր, ուստի Թորոս գիտէր թէ անոր տէրերը կրնային իրեն դէմ խիզախել. բայց այն լաւ գիտէր թէ դուրսէն օգնութիւն մը չի կար իրենց տեղէ մը, քանի որ յունական զօրութիւնը այն աստիճանի խոնարհեցաւ իրեն առջեւ որ Երուսաղէմի Թագաւորին միջնորդութեան դիմեցին յոյն կուսակալները դադրեցնելու հայ սուրին հարուածը իրենց ժողովուրդներուն վրայէն. ուստի երբ ամէն կողմը տեսաւ թէ Օշինի օգնութիւն չի կայ ոչ մէկ կողմէ, իր բոլոր զօրութեամբ յարձակեցաւ Լամբրոնի վրայ։

Մեզ այս եղբայրասպան պատերազմին վրայ խօսիլ ծանր է, պատերազմ, ուր հայ արիւն հայ ձեռքերէ թափուեցաւ, և ուր վերջապէս Լամբրոնի տէրը պարտաւորեցաւ իր պարիսպներուն ապաւինել, և երբ բանագնացութիւններուն ուզեց սկսիլ յաղթողին բարկութիւնը իջեցնելու, Թորոս ձիու վրայ ընդունեց պատգամաւորը որ եկեր էր խաղաղութիւն խնդրելու, և շրջապատուած այն իր զօրավարներու և ասպետներու խումբէն որ գրեթէ քսան երկայն պատերազմի տարիներու տակ ծերացեր էին, ծանր ուշադրութիւն մը տալէն վերջը պատգամաւորին ըսաւ խստութեամբ։

— Քու տէրդ ինձմէ խաղաղութիւն կը խնդրէ և չամչնար, իսկ ես հիմա որոշած եմ որ ուխտադրուժ խարդախ մարդիկներու հետ դաշնադրութեան չի մտնեմ, երբ գիտեմ թէ վաղը պարագան որ ներէ, դաշինքնին ոտեն՝ երդումին ոտնակոխ պիտի ընեն։ Ուստի գնա զրուցէ քու տիրոջդ, եթէ ազատութեան կը փափաքի՝ դռները բանալէ և Լամբրոն

ինծի յանձնելէ ուրիշ չի կայ, այն ատեն զինքը թող կուտամ. կ՚ուզէ երթայ Կոստանդնուպոլիս՝ կուզէ Իկոնիա՝ կուզէ Հալէպ, այն ամէն մայրաքաղաքները ուր գրեթէ քսան տարի է ինծի դէմ թշնամի կը փնտռէ, ամէն թշնամիներուս լրտեսութիւն կ՚ընէ, ամէնքը ինծի դէմ կը գրգռէ։

— Քու տէրդ Թորոսը կը տեսնէ, շատ կը սխալի. ես իրեն առջի օրէն երբ այս ճամբաներէն կ՚անցնէի փախստական երիտասարդ՝ իմ շղթաներէս հազիւ ազատած՝ ազգին շղթաները կուզայի խորտակել և առաջին խոչընդոտը զինք կը գտնէի. այն օրէն ես իրեն ազդ ըրի՝ զրուցեցի թէ փառք փնտռելու չէի եկած, այլ իմ ազգիս խեղճութեան ճար ճարակ ընելու։

Ինք չի հասկցաւ, վասն զի ինք ազգութիւն ի՛նչ է չի գիտէր, պէտք էր տեսնել և հասկնալ թէ Թորոս բան մը չէ, այլ իր ետին Հայութիւնը՝ այս ամէնքը որ կը տեսնես և այն ամէնքը որ Մասիսի ստորոտէն բոլոր աշխարհիս վրայ ցան ու ցիր կը տարածուին, օտարին բռնութիւններուն՝ հարստահարութիւններուն տակ կը հեծեն, որոնց կրօնքը՝ անունը՝ կեանքը և ըստացուածքը վտանգի մէջ են, այն ամէնքը այսօր իմ կռնակս կեցած են, և պէտք է զրուցեմ թէ հիմա այս վայրկենիս այս Հայութիւնը որ քու տէրդ չի ճանչնար և որուն համար ես կեանքս՝ արիւնս և ամէն ունեցածս կը զոհեմ, իմ մէջս՝ այս խեղճ Թորոսին վրայ կը կայանայ։

«Եւ քու տէրդ չա՞մչնար, ի՞նչ ամչնալ, ի՛նչ է ամօթ... Աստուծմէ չի՞ վախնար այս Տորոսի ապաստանարանը կործանելու, որ այնչափ հալածուած՝ միմիայն ապաւէն գտաւ Ռուբէն իմ նախահայրս, և որ ես նոյն Աստուծոյն կարողութեամբ նորէն հիմերէն և աւելի ընդարձակ կառուցանեմ։ Նա ինքն Աստուած վկայ, որ ես անպարտ եմ հայու արիւն թափելէն, և քու տէրդ լաւ գիտէ որ այդ արիւնը խնայելու հա-

մար իր զաւակը ինծի զաւակ ընել ուզեցի, որպէսզի թշնամութիւն վերնայ մեր մէջէն, բայց ինք չուզեց. ուրեմն թող պատիժը քաշէ, ես չեմ կրնար իմ ազգիս անունը՝ պատիւը Լամբրոնական վատութեանը զոհել.

«Նայէ՛, տես այս թուղթերը որ նոր ձեռքս կը հասնին, որ մատնութիւններուն անժխտելի վկաները են, և որ Կոռիկոսի առջեւէն ձերբակալ սուրհանդակի մը վրայէն ձեռք են ինկած. այս թուղթերը թէ իր մատնութեան վկաները են և թէ ինձ ինչ որ արդէն գիտէի թէ ինք յունական օգնութենէն յոյս պէտք չէ ունենայ երկայն ատեն, ուստի թող գիտնայ թէ ահա վրանս կը զարնեմ այս Լամբրոնի դռներուն առաջը, և այն ատեն պիտի վերնայ երբ այդ մատնոտու. բերդին քարերը հիմն ի վեր տապալին: Ահա իմ պատասխանս, և վերջին պատասխանս:

Եւ ձին մտրակեց իր հրամանները տալու որ սաստկացնեն պաշարումը, և խրօք վրանը հոն բերդին դիմացն էր, հոն կը տեսնուէին ամէն գործքեր հոնկից Կիլիկիոյ կառավարութեան ամէն հրամաններ կը մեկնէին, և անառիկ բերդը որ առաջ սպառնալիքը արհամարհել ձեւացուց. սկսաւ իր բարդին վրայ տարակուսիլ, վասն զի ամիսը անգամ մը կը տեսնէր որ պաշարող զօրքերը կը փոխուէին՝ նորերը կուգային և հիները իրենց տուները կ'երթային:

Իր յարձակմամբ գլուխ ելլել թշնամին վանել անկարելի էր, ուստի երբ ամիսները անցան, տարին սկսաւ մօտենալ, խեղճութիւնը բերդին մէջ սկսաւ տիրել, բերդապահ զօրականները սկսան գաղտնի գանգատիլ, Օշին ալ սկսաւ մտածել, երկրորդ պատգամաւորութիւն մը ղրկեց որուն գլուխը իր տղան Հեթումը դրաւ: Բայց այս առաջինէն դժբաղդ եղաւ, վասն զի յառաջապահ զօրաց պատուէր կար ամէն պատգամաւորութիւն ետ դարձնել և Իշխանին առջև չի հանել:

Ուստի Օշին երբ կը մտածէր տխուր այս վիճակին վրայ և յանդուգն գործողութեամբ մը վերջ տալ որոշած էր, Շահանդուխտ իրեն մօտենալով ըսաւ.

— Ցուսահատ տխուր մտածելն օգուտ չունի, ինծի յանձնէ և ես ճարը կը տեսնեմ այս վիճակին:

— Ո՛վ քեզ կ'արգիլէ, ըսաւ Օշին, ըրէ ինչ որ կրնաս, բայց միտքդ դիր թէ երկրորդ անգամ մըն ալ այդ անզգամին ձեռքը ողջ չեմ կրնար իյնալ:

— Ով քեզ անոր ձեռք կը ձգէ:

— Գնա՛, ըրէ ինչ որ կրնաս:

Շահանդուխտ գնաց և իմաց տալ տուաւ մատրանապետ վարդապետին ո. քաշուած առաքինի ծեր մըն էր, թէ կ'ուզէ իրեն հետ տեսնուիլ:

— Հայր սուրբ, ըսաւ Տիկինը, պէտք է որ դուն մեզի ազատես:

— Թէ որ ձեռքէս գայ, պատրաստ եմ Տիկին, խեղճ ծերը չփոթած երեսը նայելով և վախնալով որ դիմացինին խնլքին վտանգ մը հանդիպած չըլլայ:

— Այո՛ Հայր սուրբ՝ դուն միայն այս վիճակին դարման մը ընել կարող ես:

— Գիտես, Իշխանուհիս, թէ ես տկար ծերունի մըն եմ, եթէ իմ աղօթքս լսելի լինէր Աստուծոյ, այս նեղութիւնները մեզ վրայ չէին հասներ, պատասխանեց ծերը և վախնալով թէ Տիկին հրաշք մը կը սպասէ իրմէ՝ աւելցուց. Գիտես Տիկին, թէ հրկը սպասէ իրմէ՝ աւելցուց. Գիտես Տիկին, թէ հըրաշքներն ալ հիմա քիչ կը պատահին, և ես մեղաւոր անձ մըն եմ.

— Ո՛հ, ըսաւ Շահանդուխտ ժպտելով՝ ես հրաշքի չեմ սպասեր, միայն կ'ուզեմ որ յանձն առնես երթալ Թորոսի խօսիլ, դու Աստուծոյ քահանայ ես, և երբ նա զքեզ չուզէ ընդունիլ և թերեւս մոխկ ալ ընել, խնդրես որ մէյ մըն ալ հոս չի դառնաս այլ Սեւ Լեռը վանք մը քաշուիս, և ջանաս զինքը համոզել որ կարութիւնդ պատճառ բռնելով:

«Ան երբ քեզի թոյլ տայ ինչպէս որ հաւանական

է, շուտ մը երթաս Հռոմկլա մօրեղբայրներուս Սըրբազաններուն իմացնես մեր վիճակը, և խնդրես որ մէկին մէկը գայ հասնի՝ այս գազանին խօսք հասկցնէ, դեռ երեք ամսուան պաշար ունինք, ժամանակ կայ, թէ որ շուտ շարժիս կրնաս մեզ ազատել:

— Լաւ, բայց գիտե՞ս Տիկին ինչչափ ճամբայ է, ըսաւ ծեր վարդապետը մտածելով և հաշուելով:

— Գիտեմ, ըսաւ Տիկինը խստութեամբ, երկայն ճամբայ է, բայց պէտք է մտածես թէ՝ Հայր սուրբ, քու աղօթքներովդ որչափ հոգի որ չես փրկած այսչափ տարիներու մէջ հիմա պիտի փրկես այս ճամբորդութիւնովդ:

— Բայց ես իրաւ ծեր եմ, բայց հիւանդութիւն մը չունիմ, սո՞ւտ ալ զրուցեմ:

— Հայր սուրբ, խնդրեմ, այսպիսի բարակ խըղճմըտանքի ժամանակ չէ․ մեր բոլոր ազատութիւնը քեզի է մնացեր:

Վերջապէս կրօնաւորը յանձն առաւ կամայ ակամայ այս ծանր պաշտօնը կատարել, և խեղճ մարդը ճգնաւոր ըլլալուն Օշինի երեսը կիրակիէ կիրակի և եկեղեցին միայն կը տեսնէր, այն ալ երբ բեմը կ'ելլէր այն ատեն միայն, հիմա երթալ դեսպանութեամբ այնպիսի Իշխանի մը հետ խօսիլ որ իբրեւ արիւնարբու գազան իրեն կը նկարագրէին, իր գործը չէր, բայց ճար չի կար, ուստի յանձն առաւ․ և Շահանդուխտ զինքը լաւ մը կարդացնելէ վերջ հրաման ըրաւ Հայր սուրբին ջորի մը տալ և դռները բանալ որ երթայ:

Թորոսի երբ իմացուցին թէ ծեր վարդապետ մը եկեր և կ'ուզէր իրեն հետ խօսիլ, առանց գլուխը վեր վերցնելու․

«Թող երթայ Օշինի քարոզէ Քրիստոսի Աւետարանը, ըսաւ, որ չի ճանչնար, ես հոս նոյն Աւետարանին պաշտպանութեանը համար կեցեր եմ:»

Այս պատասխանին վրայ, խեղճ ծերը բոլորովին տարակուսեցաւ, բայց դարձեալ աղաչեց ծեր զօրա-

վարին որ այս պատասխանը իրեն կը բերէր, զինք պարապ չի հանել: Իսկ ծեր զօրավարը, որ քաջածանօթ Բաբկէնն էր, գթալով տարեկից կղերականին վըրայ որ իր կորովն ալ չունէր, ակնարկ ըրաւ և վրանին դուռը ցուցուց որ մտնէ, և ինք հեռացաւ:

Վարդապետը որ կը կարծէր թէ դահիճներէ շըրջապատուած մէկը պիտի տեսնէր, զարմացաւ երբ տեսաւ Թորոս երեք չորս հատ վեղարաւորներէ շըրջապատուած որոնք չորս կողմը նստած գործերու վըրայ շարունակ կը գրէին ինչ որ Իշխանը տուն կուտար, և որ մտնող մը տեսնելով գլուխը վեր վերցուց և թէպէտ նեղացաւ, բայց նայելով թէ ծեր կորագլուխ եկեղեցական մըն է, ոտք ելաւ և առանց խօսելու ձեռքէն բռնեց քովը նստեցուց և իր մեծ ու խոշոր աչքերը վրան սեւեռած՝ սպասեց որ խօսի․ այս ընդունելութիւնը խեղճը բոլորովին շփոթեց:

— Կը տեսնես, Հայր սուրբ, թէ ես որչափ զբաղուած եմ, զրուցէ, ի՛նչ պիտի զրուցես, միայն առաջուց կ'իմացնեմ թէ բերդը անպայման ինծի յանձնելէ զատ ուրիշ դաշինք չեմ ընդունիր:

— Եթէ այդ այդպէս անդառնալի վճռուած է, ըսաւ ծերը, գոնէ ինծի հրաման տուր, մեծ Իշխան, որ երթամ վանք մը քաշուիմ, վասն զի հիւանդ և տկար անձ մըն եմ:

— Բայց ներսը քեզմէ զատ քահանայ կա՞յ:

— Երկու քահանաներ ալ կան:

— Լաւ, ազատ ես, ըսաւ Թորոս և իր թուղթերը ձեռք առաւ:

Պաշարումը կը շարունակէր և Թորոս այս բանակի կեանքը յամառութեամբ կ'անցընէր․ կ'ելլէր երբեմն իր շրջանը կ'ընէր և դարձեալ կը դառնար, միտքը որոշ դրած հիմնայատակ ընել Լամբրոն․ Եւ երբ իր դիտաւորութիւնները անխախտ՝ այս վիճակին մէջն էր ահա իմացուցին իրեն թէ Եպիսկոպոս մը կաթողիկո-

սին կողմէն օրհնութեան թուղթ մը բերելով հասեր էր բանակը։

Հրամայեց բերել և վրանին դրանը առջեւ ելաւ դիմաւորելու և առջի աչք ձգելուն կշռեց թէ սովորական մարդ մը չէ դիմացինը։ Պարզ և պարկեշտ թէ հագուստին թէ ձեւին մէջ, միջահասակ՝ գեղեցիկ և քաղցր աչքերով ալեւոր մըն էր, և որ բերանը չի բացած թուղթ մը հանեց և տուաւ Իշխանին յարգանքով։ Իսկ ան, հրաւիրելով հիւրը նստելու, կարդաց թուղթը ամենայն ուշադրութեամբ, և քովը դնելէն վերջը։

— Մեր պարտքն է, Սրբազան, եկեղեցին և մեր կրօնական գլխուն հրամաններուն հնազանդիլ երբ խնդիրը կրօնական է։ Ինձմէ աւելի մէկը կարելի է չգտնուի Հայ ազգին մէջ նոյն հրամանները յարգելու համար բայց ամէն բան սահման մը ունի. երբ խընդիրը եկեղեցիին իրաւասութենէն դուրս է, և ազգին ալ վնասակար, ես չեմ կարծեր որ Հայոց ազգին վեհաշնորհ կրօնական գլուխը այնպիսի բան մը առաջարկէ որ անիրաւ ըլլայ։ Իսկ որովհետեւ դուք հեռաւոր ճամբայէ կը հասնիք, և յոգնած էք, այս նիւթին վրայ հիմա խօսիլ անտեղի է, հանգչեցէք, վերջը ինծ ալ մտիկ կ'ընէք, և թէ որ արդարութեան հետք մը միայն անոնց քով գտնէք, ես ձեզի խօսք կուտամ ձեր երկու եղբայրներուն սրբազնութեան փափաքը լիովին կատարել։

— Այս կերպով ըսուած խօսքի, ես ի՞նչ պատասխան կրնամ տալ, Իշխանդ մեծ, ըսաւ քաղցրութեամբ Եպիսկոպոսը որ նոյն ինքն Ներսէսն էր Շնորհալին, եղբայր Գրիգորիս Կաթողիկոսի։ Ես ուրախ եմ որ այնպիսի վեհազնի մը հետ գործ ունիմ որ ազգին օգուտը նախադասել և կրօնքի պատուիրաններն յարգել կանոն ընել կը խոստովանի. ասկից աւելի ի՛նչ շնորհ կրնայի խնդրել Աստուծմէ։

— Հիմա, Սրբազան հայր, ըսաւ Իշխանը ոտքի

ելնելով, ներեցէք որ հրաման ընեմ, ձեզի լաւ վրան
մը պատրաստեն։

— Թէ որ հրաման և թոյլտուութիւն ընէք երթա-
լու Լամբրոն.

— Ձեզի համար արգելք չկայ, երբ որ ուզէք կա-
րող էք մտնել, ամէն դուռ ձեզի բաց է։

Ներսէս ոտքի ելաւ հրաժարական ողջոյն տալու
և մտաւ Լամբրոն։ Քիչ մը վերջը՝ իր փոքրաւորնե-
րէն մէկը որ պահեր էր Թորոս, կերակուրներու հան-
դերձանքներով կը մտնէր սովեալ բերդին մէջ ուր
քանի մը ամիսէ ի վեր հացի պաշարէ զատ բան մը
չէր մնացեր։

Կրնանք երեւակայել թէ լեզուանի կին մը, եղբօր-
դուստր բարձրաստիճան եկեղեցականին, շատ դըժ-
ուարութիւն չքաշեց զայն համոզելու և դառնու-
թեամբ լեցնելու Թորոսի դէմ, մանաւանդ երբ ակն-
յանդիման կը ցուցնէր իրեն տարիի մը մօտ պաշար-
ման վիճակը, իրենց անդրանիկը տարին չկատարուած
այրիութեան դատապարտուած փախստական հարսէն
և ամէն պատգամաւորի անգութ և անփոփոխ պա-
տասխանը հիմնայատակ կործանելու համար Լամբրոնը։

Ներսէսի աղաւնակերպ սիրտը չէր հասկնար այս-
պիսի խստութիւն և անգթութիւն, բայց Թորոսի վսեմ
կերպարանքը և խօսքերուն ազդեցութիւնը իրեն կը
գրուցէր թէ կար նաև ուրիշ պատճառ մը որ անշուշտ
յայտնի պիտի ըլլար։

Ուստի երկրորդ օրը երբ բանակը եկաւ, և սկսաւ
խօսք բանալ, Թորոս բացարձակ իրեն իմացուց թէ
զինք իբրեւ դատաւոր ընդունելու պատրաստ էր,
միայն թէ Օշին պէտք էր որ գար ներկայ ըլլար և
պատասխանէր ամէն ամբաստանութիւններու։ Թէ-
պէտ Օշին այս պայմանը ընդունելու շատ դէմ կեցաւ,
բայց կնոջն ու բոլոր ընտանիքին յորդորներուն չ'ըր-
նալով դիմադրել, մանաւանդ թէ փրկութեան ուրիշ

յոյս մըն ալ չունենալով, պարտաւորեցաւ յանձն առնել։

Եւ ահա խաղաղութեան հրեշտակը ակամայ եղաւ դատաւոր։ Թորոս հոն մի առ մի կը ցուցնէր բոլոր անցեալին մէջ թէ ինչչափ աւելի և վնասակար գտած էր միշտ պատերազմը և թէ անոր համար իր երկու եղբայրներուն հետ քանի՛ քանի՛ անգամ աւրուած էր, և թէ ի՞նչպէս պարտաւորած իր ազգին պատիւին և ազատութեան համար պատերազմելու ընդդէմ Յոյներու և այլազգիներու և թէ միշտ այս ամէն-պատերազմներու մէջ թէ որ Օշինի անձը իրեն դէմ գտնուած չէր, իր գրգռութիւնները միշտ գտնուած էին. թէ որ իր եղբօրը Ստեփանէի անգութ սպանութեան գործակից չէր, կամակից ըլլալուն ապացոյցները ի ձեռին ունէր։

«Թէ որ անոր մահուանէն վերջը Թորոս և Հայերը Յոյները խորտակեցին և անկարող ըրին, Օշին աւելի Յոյն քան բոլոր Յոյները՝ թուղթ թուղթի վրայ կը գրէր հրաւիրելով դարձեալ Կայսրը պատերազմի և իմացնելով թէ՝

«Քանի որ Ռուբինեան ապստամբ զարմը մնար աշխարհիս վրայ և բնաջինջ չըլլար, Կիլիկիա խաղաղութիւն պիտի չգտնէր յաւիտեան»։

Եւ այս թունաւոր խօսքերը այն միջոցին կը գըրուէին երբ ինք Թորոս իր մէկ հատիկ զաւակը անոր տղուն հարսնութեան կուտար, շնորհելով փրկանքի գինը և պատանդը իր փեսայացնելով։ Եւ խօսքերը բաւական չհամարելով կ'առնէր կը դնէր մէջտեղ Օշինի ստորագրութեամբ գրուած գրերը որ անուրանալի վկաներ էին իր ըսածներուն։ Եւ երբ ան և Ներսէս ինքն ապշած ընդարմացած բերան չէին բանար, այն ատեն դառնալով առ դատաւորն։

— Հա՛յր Սրբազան, ըսաւ, թէ որ Մերուժան, թէ որ Վեստ Սարգիս հոս սա մարդուն հետ նստած ըլլային, կարծեմ թէ իմ մի միայն պարտքս այս մար-

դը անոնցմէ տարբերել չէր, այլ հաւասարապէս պատժել պէտք էր ըլլալ, շատ եղաւ այսչափ տարիներու համբերութիւնս, և ես հիմա իմ անձիս միայն պարտաւոր չեմ այդ դղեակը հիմնայատակ կործանելու, այլ սուրբ պարտաւորութիւն մըն է ինձ իմ ազգիս համար այս մատնութեան, դաւաճանութեան բոյնը անհետ ընել, վասն զի հոն՝ անոր հանդիպակաց պարիսպներուն մէջ գրուեցան պատրաստուեցան այդ դըբութիւնները, հոնկից ելան Հայ զինուած ձեռքեր իրենց եղբայրներուն արիւններուն մէջ թաթխուելու համար, անոր համար ահա տարի մը ժամանակ կ'ըլլայ որ ես հոս այս վրանին տակ կը սպասեմ, ափսո՛ս ձեզի, Սրբազան, որ այսպիսի փեսի մը վիճակեր էք, այնչափ և աւելի թերևս ափսո՛ս ինծի որ այդպիսի հօր մը զաւակը ինծի փեսայացուցեր եմ։

Այս խօսքերը թէպէտ առանց կիրքի և հանդարտ ձեւով զրուցուած՝ այնչափ արհամարհանքի ծանրութիւն բեռնաւորեցին Օշինի վրայ, որ գլուխը կուրծքին վրայ խոնարհեցաւ, արձանի պէս մնաց, և Ներսէս տխուր հարցուց իրեն թէ՝ այն թուղթերը իրենը ըլլալը կ'ընդունէ՞ր։ Իսկ երբ նա աչքով միայն «Այո» մը զրուցեց, այն ատեն հրաւիրեց զինքը Լամբրոն դառնալ, և մնաց Թորոսի եւ անոր զօրականներուն հետ։ Սկսաւ իր շնորհալի լեզուովը ճառել համոզիչ խօսքերով թէ քրիստոնէական պարտաւորութիւններուն առաջիններէն մէկն է ներողամիտ ըլլալ, և թէ վրէժխնդրութիւնը ինչչափ որ քրիստոնէական ըսկըզբունքներու դէմ էր, նոյնչափ և աւելի մեծ և վեհ սրտերու չէր վայելեր։

— Լա՛ւ, Հայր Սրբազան, դուք Քրիստոսի և Հայոց մեծ հայրապետին անունով զիս կը յորդորէք սիրոյ և խաղաղութեան, ես ալ որ առաջինին կը հաւատամ և երկրորդը կը յարգեմ, յանձն կ'առնեմ վերցնել պաշարումը և թողուլ Լամբրոնը Ռուբինեանց քար դայթակղութեան. միայն թէ դուք ալ որ Լու-

սաւորչի ցեղէն կ'իջնէք և անոր սուրբ աթոռին վրայ նստած էք գինուորի մը աստուածաբանական յորդորը չմոռնաք, Հայ եկեղեցիին փոքր դրօշակը անկախ պահեցէք, ինչպէս ես ազգային անկախութեան դրօշակը անկախ պահելու կը ջանամ։ Հռոմկլայի և Լամբրոնի գաղափարներուն մէջ նաև ազգակցութիւն մը ցաւօք կը նշմարեմ, վասն զի ինձ այնպէս կ'երևայ թէ սխալ ճամբու մը կը հետևիք թէ միացնել կ'ուզէք ձեր եկեղեցին յունականին հետ։

— Քրիստոսի եկեղեցին մէկ է, ըսաւ Ներսէս, և մեր պարտքն է ջանալ միշտ ի սէր և ի խաղաղութիւն բերել ամէնքը․

— Ես աստուածաբանական խնդիրներու չեմ մըտներ, բայց կշռեցէք նախ և այնպէս գործեցէք․ այս է իմ ըսելիքս։

Խաղաղութեան դաշինքները դրուեցան, Շնորհալին ինք եղաւ երաշխաւոր Օշինի, և Թորոս խոստացաւ որ Գոհար տարւոյն մէկ մասը Լամբրոն անցընէ։ Լաւ յարաբերութիւնները հաստատուեցան ընտանիքներու մէջ որ մինչև Թորոսի մահը տևեցին։

ԳԼՈՒԽ ԻԷ.

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ

Հոգևորական իշխանութեան շարժումը այն միջոցին, Թորոսի ախորժելի չէր։ Գրիգորիս կաթողիկոսը բանակցութեան վրայ էր յունաց կիռ Մանուէլ կայսեր հետ, որ ժամանակին կրօնասիրական գաղափարներու և իր քաղաքագիտական օգուտին հետևելով կը փափաքէր միութեան հայ եկեղեցիին հետ։

Իսկ Թորոս միութեան մէջ նախ սուզման վտանգ կը տեսնէր, երկրորդ հայ եկեղեցիին մէջ՝ եթէ ոչ բաժանումը՝ գոնէ տարաձայնութեան վտանգ կը նշմարէր անոր համար, Հռոմկլայ սկսած և ըլլալիք կրօնական բանակցութիւնները վնասակար դատելովն ալ, այնչափ սիրելի և պատկառելի գտաւ իրեն հաշտարար դեսպան եկած անձը՝ որ համառօտ քանի մը խօսք միայն զրուցել բաւական համարեց, ինչպէս տեսանք, և այլ ամենևին այդ խնդիրով զբաղիլ չուզեց։

Մանաւանդ որ իր ծրագիրը ընդարձակ էր և շարունակ պատերազմները հազիւ թէ ժամանակ ձգած էին իրեն իր ժողովուրդը մեծցնել գաղթականութեամբ, որ խրօք կը յաջողէր, բայց ոչ իր փափաքներուն համաձայն, ինք որ կը փափաքէր Հայաստան մը ընել երկիրը, Հայաստան մը զօրաւոր և անթափանց բնութեան պարիսպներու և ծովու սահմանին մէջ պարփակուած․ ուստի երբ կարծելով թէ ալ խաղաղութիւն գտած էր բաւական երկիրը, ոչ արտաքին թշնամիի և ոչ ներքին բանսարկութեան վտանգին ենթակայ էր, իր բոլոր գործունէութիւնը տուած այս իր դիտաւորութեան կ'աշխատէր՝ կը շրջագայէր՝ նոր եկողներուն կ'օգնէր կը տեղաւորէր՝ չունեցողին կուտար և ստացուածքի ապահովութեան կը հսկէր, և իր

յոգնած մարմին հանգիստ և զուարճութիւն՝ որսն էր, և քանի մը հազուագիւտ և իմաստուն անձանց տեսութիւնը։

Իր բոլոր զօրավարները և սպետները այն մարդիկն էին՝ որ իր Կիլիկիա ոտք կոխած օրէն թեւ և թիկունք եղան՝ պատերազմեցան հսկաներու պատերազմը, յոյնը՝ թուրքմէնը՝ սկիւթացին և արաբացին վանեցին, և Թորոս անոնց մէկուն աշխատութիւնը անվարձ չի թողուց, կամ բերդի կամ դղեակի մը տէր էին, կամ կառավարիչներ քաղաքի կամ աւանի, վերջապէս չկար մէկը որ իր աշխատութեան վարձքը առած չըլլար· այն գժգոհները որ քննադատութեան մոլութիւնն ունենալով երբեմն չարունակ կը գանգատէին, ալ հիմա Թորոսի ըսածն ու ըրածը գերագոյն կը գտնէին առանց անգամ խորհրդածութեան, բաւական էր թէ ան հրամայած ըլլար, և այս՝ ոչ բռնաբար, այլ համոզում մը դարձած էր թէ ինչ որ անոր գըլխէն կը ծնէր՝ իմաստուն կշռողութեան հետեւանքն էր։

Միայն մէկ մարդ մը կար անուղղելի, որ գոհ պիտի ըլլար մինչեւ իր մահուան օրը, և այս մարդը այնպիսի անձ մըն էր՝ որ իր քաջութեան և յանդուգն կորովին և Ռուբինեան սերունդէն ըլլալուն համար ոչ ոք կրնար դիմադրաւել· ահա այս մարդն էր որուն գլխէն անցած պատահարները, աղէտները և ժամանակ օգուտ մը չէին ըրած իր խելքին միշտ յանդուգն միշտ անհանդարտ, միշտ անդուռ բերան, միշտ անխորհուրդ ձեռնարկներ կ'ընէր, Թորոս ձանձրացած էր իրեն դէմ եղած գանգատներէն, ժողովուրդը ձանձրացած իրեն դէմ բողոքելէ, մանաւանդ որ ամէնը գիտէին թէ վիշտ և վէրք մըն էր այդ եղբայրը իշխանին սրտին։ Ուստի որոնք որ անոր չուրջն էին կը ջանային անոր վրայ եղած գանգատներուն մէկ մասը ծածկելու, շատ անգամ Իշխանին չիմացուցած Բաբկէն, Սարգիս, Թոռնիկ, և մինչեւ Կոստանդին՝ անըզգամ և անգութ գործերը կը պահէին, վասն զի գի-

տէին թէ Թորոսի սիրտը կը վշտանար։ Գիտէին մանաւանդ որ Ստեփանէի մահուանէն վերջը Մլեհի Կիլիկիա դարձը և եղբօրը հետ համակամ և միաբան չարժիլը ու անոր եղբայրաբար վրիժառու չարժումը անտարբեր չէին երեւցած Թորոսի։

Ուրեմն այս վիճակին մէջ, երբ Բաբկէն և Թոռնիկ (որ շատ սիրելի եղած էր Թորոսի իր հայրենական և անձնական քաջութիւններուն և ուղղութեան համար) անցեալին վրայ խօսելով ժամանակ կ'անցընէին Վահկայ բերդը,՝ Սարգիս ներս մտաւ և նստաւ, բայց իր զուարթ բնաւորութիւնը իբրեւ թէ կորսուած էր այն օրը, ան որ միշտ ուրախ էր և միշտ զաւեշտը կը սիրէր։

— Հէ՜ տղայ, ըսաւ Բաբկէն, այսօր սգաւո՞ր ես որ բերանդ չէ բացուիր, մամուդ մեռնելուն տարեդա՞րձն է։

— Այն օրը չեմ գիտեր, Խաչի մեռելով օրը երէկ էր, բայց ես ոչ մեռելը կը սիրեմ և ոչ մեռնիլը։ Իմ սրտս նեղութիւն կայ այսօր, բայց դուք ալ ուրախ մարդիկ չէք, որսի երթալու փափաք մը ունիմ այս սրտիս նեղութիւնը վանելու համար, ո՞վ ընկեր կայ, և ե՞րբ, այն տեսնենք։

— Դու ալ Իշխանին պէս յոգնութիւնդ որսի աշխատութեամբ կ'առնես, ան քսան և չորս ժամ կ'աշխատի՝ կը վազէ՝ կը գրէ՝ գրել կուտայ, ետքը որսի կը հեծնէ, յոգնութիւնը յոգնութեամբ կ'առնէ· դու ալ այն խելքէ՞ն ես։

— Ես ծերացայ, տղայ, հիմա հազիւ թէ կ'ուզեմ չարժիլ։

— Պատերազմի համար ի՞նչպէս ես, Բաբկէն հայրիկ։

— Պատերազմը ուրիշ է, հոն մարդու երիտասարդութիւնը քիչ մը ետ կը դառնայ· փողին ձայնին արիւնը կը դառնայ, սիրտը կ'եփի։

— Թէ որ դու այդպէս կ'ըսես, Մլեհ իշխանը ինչ

կ՚ըսէ որ երեք օր մարդու թապըլտկիլ իր սուրին կամ նիզակին հարուածին տակ չի տեսնէ՝ գիշերն ի բուն չի քնանար, ըսաւ Թոռնիկ խնդալով:

— Մլեհ իշխանը... ըսաւ և կեցաւ Սարգիս:

— Մի՛ կարեր, լմնցո՛ւր խօսքդ, գրուցեց Բարկէն:

— Չեմ լմնցներ, վասնզի թէ որ ես լմնցնեմ դուն առաջինը կ՚ըլլաս բարկանալու:

— Լռութիւն մը տիրեց, Բարկէնի խորը աչքերը քիչ մը պզտիկցան և չուրջ չորս կողմը զննելէն վերջը՝

— Սարգի՛ս, ըսաւ, դուն այսօր ծանր մտածում ունիս, լեզուիդ տակն ալ գաղտնիք մը ունիս, այս դռնէն ներս մտնելէդ ի վեր կը փնտռուիս որ յայտնես և չես ուզեր· Աստուած վկայ, թէ որ Թոռնիկ հոս չըլլար, ես մինակ որ ըլլայի պիտի բանայիր, այդպէս չէ՞, շիտակ խօսէ՛:

— Եղբայր, թէ որ այդպէս է, ահա ես կերթամ, ըսաւ Թոռնիկ ելնելով:

— Ո՞ւր, կեցիր, ըսաւ Բարկէն թեւէն բռնելով և նստեցնելով· որդեակ Սարգիս, ինչ որ ծանր բան ունիս ինծի զրուցելու, մի՛ վախնար, Թոռնիկին ալ կրնաս ըսել· ես զինքը լաւ ճանչցեր եմ:

— Ես անկից կասկած չունիմ, մեծ վստահութիւն ալ ունիմ, բայց պապերու առակ է «Գաղտնիք երեք հոգիի մէջ գաղտնիք չեն, յայտնիք են»... Թոռնիկ, հոգիդ սիրես, մի առնուիր, նստէ, ես Բարկէն հայրիկ թէ չըլլայի, քեզ պիտի զրուցէի· չփոթեր մնացեր եմ, խնդիրը ծանր է· Իշխանին սիրտս չի տանիր որ համարձակիմ բանալ:

Բարկէն ուժով մը ձեռքէն քաշելով առաւ Սարգիս բազմոցին ծայրը նստեցուց և կամաց ձայնով մը ըսաւ·

— Ի՛նչ է, զրուցէ, որդեակ Սարգիս, մենք երեքս մէկ հոգի ենք, ես մարդիկ լաւ կը ճանչնամ· տէ՛ զրուցէ:

Այս դիրքին մէջ երեք գլուխ իրարու մօտեցան, Թոռնիկին լայն և պարզ ճակատը՝ անկեղծ և մաքուր նայուածքը, Սարգսին սուր և կասկածոտ աչքերը գըրեթէ կը ծածկէին, իրարու հակառակ դէմքերով զարմանալի միութիւն մը կը կազմէին այս երեք անձանց մէջ· Սարգիս սկսաւ իր գաղտնիքը պատմել:

«Քու առջեւդ էր, Բարկէն, երբ Իշխանը ինծի հըրամայեց որ Հալէպ երթամ, անծանօթ՝ քաղաքը մըտնեմ, իբրեւ վաճառական քիչ մը ապրանք առնեմ, աչքէ անցունեմ, իմանամ թէ ի՞նչ կ՚ընէ Նուրէտտին ի՞նչ կը խօսի ժողովուրդը, ի՞նչ շարժում կայ հոն, շաբաթ մը հազիւ կենամ ու դառնամ· կեցայ, նայեցայ, ապրանքներն ալ իշու մը վրայ բարձած, ես ալ դուրսէն անզէն, մեր տղոցմէ մէկը մինակ հետս առած կը դառնայի:

«Արեգի վանքը հասայ, տղուն ըսի որ կենդանին առնէ բերդը տանի· ժամուայ մը ճամբայ կար դղեակը հասնելու, և արեւն ալ իջնելու մօտ էր· մտայ անտառը որ գետակին մէջ լուացուիմ, ձայներ կային, կամաց կամաց մօտեցայ· հինգ վեց թիւրքմէն նստած էին, ես թիւրքմէն կ՚ըսեմ՝ դուք աւազակ իմացէք, իրենց լեզուով կը խօսին· ի՞նչ եղաւ զարմանքս երբ Մլեհը անոնց գլուխը տեսայ:

«Չէ, կ՚ըսէր ցուլի պէս մարդ մը, հազար ոսկի ալ տաս ես այդ մարդուն վրայ չեմ քալեր· ո՛վ որ անոր վրայ կը քալէ մահուան բերանը կը քալէ, այս աւանակները կ՚ուզես համոզէ· տասն և ութը տարու էի՝ Ոստանի ճամբան՝ երբ հինգ վեց հազար հոգի մենք անոր փոքրիկ խումբին վրայ ինկանք, ողջ բռնել կը կարծէինք, այն պզտիկ խումբը կարծես մեծցաւ, շատցաւ, մեր արիւնը ջուրի պէս կը վազէր· այդ քու եղբայրդ վիշապ դարձաւ, ամէն մէկ շրջանին յաջն ու ձախ սուրը կայծակի պէս կ՚իջնէր, ինկողը ալ չէր ելլեր: Ես ծառի մը կռնակ կծկուած պահուած կը դողայի ու կը նայէի, մինչեւ որ կամաց մը ծառն ի վեր

ելայ, անկից կը տեսնէի, աներեւի պէս կը թափէին ամէնքը անոր սուրին տակ. այն օրէն մինչեւ այսօր շատ պատերազմ տեսայ, շատ տեղ գտնուեցայ, ես այդ մարդուն պէս մարդ չտեսայ. ո՛վ կ'ուզէ քեզ հետ թող երթայ. ես այդ գործին մէջ մաս չունիմ:

«Եւ ահա սկսաւ Մլեհ բարձրաձայն խնդալ մարդուն վատութեան վրայ և ծաղրել:

«Ածիլեցէք այս մօրուքները՝ կնիկ եղէք» ըսելը լսեցի ու տեսայ որ ոտք ելաւ. անոնք ալ ոտք ելան. ես կամաց մը քաշուեցայ մտայ թուփերուն ետին, դարձայ և կը տեսնէի Մլեհ որ կ'անցնէր դիւական ծիծաղ մը ձգելով այդ աւազակ թիւրքմէններուն վրայ: Իրաւ առուտուրը աւրուեցաւ, բայց այդ մարդը եղբօրը հոռը կը փորէ, գինովութեանը դուրս կուտայ, որ մըն ալ կ'ելլէ այնպէս բան մը կ'ընէ, որ մեր բոլորին ու ազգին գլուխը ձիւն կը բերէ: Ես այս տեսածս ու լսածս իշխանին պատմելու չեմ համարձակիր, կ'ամըչնամ, անոր համար քեզ ըսելու եկայ. դու մեր ծերն ու խելօքն ես, ի՞նչ ընեմ... մանաւանդ թէ ի՞նչ ընենք. ահա Թոռնիկին ալ երեսին գոյնը դարձաւ:

Եւ իրօք, ազնուական երիտասարդին երեսը ճեփ ճերմակ կտրեցաւ, ճակատը մարգրտի պէս քրտնեցաւ և սրտին զարնուածքը քովիններուն կրնային լսել եթէ ուշադիր ըլլային, և չի կրնալով դիմանալ՝ առանց բերանը բանալու ելաւ և սկսաւ սենեակին մէջ վեր վար պտըտիլ:

Բաբկէն անշարժ ու անխռով մտիկ ընելէն վերջը աչքերը գոցած իբրեւ թէ կը քնանար, և ձայն չէր հաներ, յայտնի է թէ կը մտածէր:

Իսկ Սարգիս երբ բաւական սպասեց, ա՛լ համբերութիւնը հատնելով՝

— Եղբայրներ, ըսաւ, ես ձեզի բան խօսեցայ, մէկերնիդ արձան եղաք անշարժութեան, միւսնիդ նըստիլը մոռցաք. տէ՛ խօսեցէք, այս անզգամը ո՛վ գիտէ ի՛նչ կը նիւթէ հիմա եղբօրը դէմ:

—. Հիմա ան նստած հովանոցը, իր օղին շիշը կը
պարպէ, ես որ դալուս հոնկից կ'անցնէի տեսայ,
մեղք որ Իշխանին եղբայրն է, ես ալ քեզի պէս չեմ
համարձակիր մարդու զրուցել այդ վատ դաւը՝ ուր
միայց եղբօրը, ըսաւ Թոռնիկ:
— Ուրեմն ի՞նչ ընելու է, կ'ըսէր Սարգիս, Բաբ-
կէնի դառնալով:
— Ինչ ընելու է . . . ըսաւ Բաբկէն, ինչ պիտի
ընեմ, կենամ որ անկարծելի ժամանակ այդ անզգամ
խենթը ազգին տունը փլցնէ. հիմա Իշխանը ուր որ
է կուգայ. առջի խօսքս իրեն՝ այդ պատմութիւնը
ըլլայ, դուք ալ մի՛ հեռանաք որ եղելութիւնը տեղն
ի տեղ յայտնէք:
Սենեակին մէջ երկար լռութիւնն որ տեւեց միայն
ձիերուն սմբակներուն ձայնէն ընդհատեցաւ, Իշխանն
էր որ կը դառնար: Բաբկէն որ անոր երեսը գիտէր
կարդալ աչք մը նետելուն, սանդուխին գլխէն երկու
սպետներուն որ քովն էին՝
— Ախտո՛ս, կըսէր, այս երեկոյ որ իշխանը զուարթ
է, պիտի դառնացնենք զինքը, տեսէք կրակին պարա-
նոցը կը չոյէ, ձիապանին հետ կը խօսի···
Բայց Բաբկէն կուշացնէր իր խօսքը:
— Կերակուրը հանգիստ ուտէ Իշխանիկս, կ'ըսէր
ինքնիրեն, դեռ քիչ մը ժամանակ ալ անցնի:
Երբ կերակուրէն ելան, և տեսաւ որ Թորոս իր
սենեակները պիտի քաշուէր, ալ Բաբկէն ելաւ դիմա-
ցը կանգնեցաւ: Երբ այն կեցուածքը տեսաւ Իշխանը
որ նոյնպէս իր ծերունին ամէն շարժումներուն նը-
շանակութիւնը գիտէր, շուտ մը իմացաւ թէ ծանր
բան մը կայ:
— Խօսէ, Բաբկէն հայրիկ, շուտ ըրէ, դուն կարե-
ւոր բան մը ունիս ինձ իմացնելու. ի՞նչ է:
— Մլեհ իշխանն է դարձեալ Տէր:
— Նոր յիմարութիւն մը:
— Յիմարութիւններու վատթարագոյնը:

— Ի՞նչ, ըսաւ Թորոս ընքուինները իրարու կպցնելով։

— Քեզ կուզէ սպաննել։

— Ո՞վ է տեղեկացեր, ըսաւ քննող աչք մը նետելով Սարգսի և Թոռնիկի վրայ, որոնք մէկ կողմ կայներ էին առջեւնին նայելով իբրեւ յանցաւոր։

— Սարգիս տղայ, պատմէ ամէն բան, ըսաւ Բաբկէն։

Երբ Թորոս անշշունչ մտիկ ըրաւ ամէն բան։

— Գիտե՛ս, Բաբկէն հայրիկ, ըսաւ, Ստեփանէ կասկածով մը տասն ամիս բանտարկեցի, սրտիս վէրք է այդ գործս, իրաւ Մլեհ Ստեփանէ չէ, բայց դարձեալ խելքին փչածը դուրս կուտայ, աւելի կը խօսի քան թէ կ՚ընէ. ասոնք ամէնքը պէտք է մտածել, ետքը շարժիլ։

— Տէր իմ, ըսաւ Բաբկէն բարկութեամբ, գոնէ ինձ հրաման տուր որ պէտք եղած զգուշութիւններն ընեմ։

— Լա՛ւ, ըսաւ Թորոս ծիծաղելով, քեզի հրաման, առանց դուրսը ձայն տարածելու և առանց գլխս անհանգիստ ընելու գիտցածդ ընել։

— Միայն Թոռնիկ քեզ անձնապահապետ ըլլայ, գոնէ զայն կընդունիս։

— Լա՛ւ։

— Ես Սարգսի հետ միացած զգուշութիւնները կը հոգանք։

— Լա՛ւ, լա՛ւ, լա՛ւ. Բաբկէն հայրիկ, գիտցածդ ըրէ, բաւական է թէ ինձ գանգատ չհասնի։

Հոգ մի՛ ըներ Իշխանիկս։

— Եւ երբ Թորոս քաշուեցաւ գնաց, մեր երեք բարեկամները իրարու երես կը նայէին։

— Ալ իշխանին կեանքը ուղղակի քեզի յանձնըւած է, Թոռնիկ։

— Առաջ Աստուած, ըսաւ քաջ երիտասարդը, որուն պայծառ կերպարանքին վրայ սրտին մաքրու-

թիւնը կը փայլէր, ես ոտքս հետքէն չեմ զատեր, ինք ուր է՝ տունս ալ թող հոն ըլլայ։

— Ապրիս որդեակ։ Իսկ մենք, Սարգիս, ա՛լ Մլեհ ուր երթայ, ինչ ընէ՝ մեզի բան գործ ընենք։

— Լա՛ւ, ըսաւ Սարգիս. և երեքն ալ գացին իրենց սենեակները պառկելու։

Ալ Թոռնիկ անբաժանելին եղաւ Թորոսի, իր յատկութիւնները անոր քով աւելի կատարելագործուեցան։

Բայց շատ անգամ կը տեսնուէին Թորոսի քով երկու դեռահաս երիտասարդներ, Ռուբէն և Լեւոն, որոնց սգաւոր Պապեռոնէ զիրենք կը բերէր իրենց հօրեղբօրը Վահկայ բերդը. Թշուառ Ստեփանէի երկու զաւակներուն կերպարանքը կը վկայէին արդէն թէ Ռուբինեան զարմին շառաւիղներն էին։

Հօր գութ և սէր թէպէտ ունէր Թորոս երկուքին վրայ հաւասարապէս, բայց Բաբկէն որ գուշակութեան ձիրքը ունէր։

«Սա պզտիկը հօրեղբօրը տեղը բռնելու յոյս կուտայ, Ռուբէն հօրը զաւակն է, Լեւոն հօրեղբօրը ելած է»։

Եւ իրօք տղան դիտող բնաւորութիւն և մեծ համակրութիւն ունէր հօրեղբօրը. ամէն բերնէն ելած խօսքերուն ուշադրութիւն կուտար՝ երբ Ռուբէն զըւարճութիւնը ամէն բանէ աւելի կը սիրէր։

Քանի մը ամիս անցած էր Սարգիսի այն դիպուածէն վերջը, երբ Թորոս օր մը որսի պիտի ելլէր «Պեռամայ ակունք» ըսուած տեղը յանկարծ երկինք մըթընցաւ և սոսկալի փոթորիկ մը արգիլեց։

— Վաղը մեր որսը, ըսաւ Թոռնիկին։

— Եւ երկրորդ առաւօտուն հեծաւ որսը, ինչպէս իր սովորութիւնն էր կանուխ, չորս հինգ հոգի միայն կային հետը։ Իրեն ընկերացած էր նաեւ Լեւոն եղբօրորդին։ Հազիւ թէ ձիերը ձգեցին և իրենք սկսան ցրուիլ այծեամներու խումբ մը պաշարելու համար,

ահա Թոռնիկ որ Լեւոնի քովն էր նոյն միջոցին կանգ առաւ՝ «Ետեւէս եկո՛ւր ըսաւ, և ճամբան փոխելով շիտակ դէպի այն կողմը սրացաւ ուր արշաւեր էր Թորոս վասն զի զէնքերու փայլ մը կարծեց նշմարել այն կողմը, և իրօք երբ քիչ մը յառաջացաւ տեսաւ որ չորս հինգ սպառազէններ Թորոսը շրջապատեր էին․ իսկ ան այս յանկարծակի յարձակումը տեսնելով մեծ ծառի մը բունին կռնակը տուած պաշտպանողական դիրքի մը մէջ անխռով կը դիմէր զինք պաշարողները և դեռ Թոռնիկ չը հասած՝ իր ահագին Լեւոնեան սուրը շողաց և երկու թշնամի սուրեր օդին մէջ թռան։

Ճիշդ այն միջոցին Թոռնիկ հասնիլն ու սուրի հարուածով անզգամներուն մէկը գետինը ձգելը մէկ ըրաւ․ Լեւոն այն միջոցին իր եռանդուն տարիքին ձայնին միշտ լսելով՝ առանց սպասելու՝ քիչ մը հեռուն կեցած բարձրահասակ մարդ մը տեսնելով՝ որ սաղաւարտին դիմակովը ծածկուած՝ սուրը ձեռքը աւելի հանդիսաւոր կ՚երեւէր և հրամանատար յարձակեցաւ անոր վրայ, որ ճանճ մը վռնտելու պէս երիտասարդին սուրը կանգուններով հեռու նետեց և առանց քայլ մը առնելու իր պատերազմողներուն վրայ կը նայէր անշարժ արձանի մը պէս, որոնք Թորոսի և Թոռնիկի հարուածներուն տակ կը կործանէին իրարու վրայ, և երբ տեսաւ թէ չորս հինգ հոգի արդէն ինկած էին և երկու երեքն ալ ծանր վտանգի մէջ, ետին դարձաւ՝ ցատկեց ահագին խրամ մը, և սկսաւ ժայռոտ ու մացառուտ լեռն ի վար ցատկել, բայց հազիւ թէ ութը տասը քայլ վազած՝ երեք հոգի դիմացը արձանացան․ Սարգիս իր երկու եղբայրներով։

— Մէկդի՛, ըսաւ զրահաւորը, հաստ՝ կամաց և անխռով ձայնով մը։

— Մէկդի՛․․․ ըսաւ Սարգիս, ե՞ս, դաւաճաններու առջեւէն, ո՛վ որ ալ ըլլան սովորութիւն չունիմ փախչելու, թո՛ղ զէնքդ և անձնատուր եղիր։

— Այս խօսքերուն պատասխան սոսկալի սուրի եր-

կու հարուած ընդունեցաւ իրարու վրայ Սարգիս, ոչ միայն սուրը ձեռքէն թռաւ, այլ նաեւ ձախ ուսին վրայ վիրաւորեցաւ, իր երկու եղբայրները նոյն միջոցին վրէժխնդրութեան ոգիով յարձակեցան զրահաւորին վրայ, բայց իրենց հարուածները ոչինչ էին այն մարդուն և իր զրահներուն դէմ, որ իբրեւ թէ կը ծիծաղէր։

Երբ Սարգիս առանց սուրի մնացած և թէպէտ վիրաւոր՝ բայց իր զարմանալի արագութեամբ և իբր թէ գետնէն սողալով մտաւ անոր սրունքներուն մէջ և քաշը գետին տապալեց․ կռիւը որ լմնցած կը կարծուէր անոր իյնալով՝ վայրկենին նորոգուեցաւ, վասն զի ան ժամանակ չի տուաւ և ակնթարթի մը մէջ ոտքի վրայ էր դարձեալ և պատրաստ իր երեք թըշնամիները կործանելու, որոնք սատանայի մը քան թէ մարդու հետ գործ ունենալ կարծելով սկսան ետ ետ երթալ։

Այս միջոցիս Թորոս՝ Թոռնիկ և Լեւոն վրայ հասան և երբ ան վեց սուր իր վրան տեսնելով, անխըռով ճիշդ նոյն դիրքին մէջ՝ որու մէջ քիչ առաջ Թորոս կը գտնուէր, կռնակը ապահովցուցած՝ չի կըրնալով համբերել․

— Հա՛, յարձակեցէք տեսնեմ, թէ որ քաջ էք, պոռաց մեծ ձայնով, և ամէն զինք շրջապատողները իրարու երես նայեցան․ Թորոս՝ սուրը գետինը կըրթնցուցած՝ ծանր ձայնով․

— Մլե՛հ, կանչեց, թո՛ղ զէնքդ, մեծ եղբայրդ և իշխանդ է որ քեզ կը հրամայէ։

Մեծ եղաւ ամէնուն զարմանքը․ այս խօսքերը հազիւ թէ լսուեցան՝ կարծես թէ աներեւոյթ զօրութիւն մը սանձահարեց զրահաւորը, սուրը խոնարհեցաւ և ձեռքէն ինկաւ, և երկու ձեռքն ամփոփելով կուրծքին վրայ կեցաւ։

— Առ սա սուրը, ըսաւ Թորոս Թոռնիկին․․․ Հեծէ՛ք տղաք, ետ դառնանք։

Լռութիւն տիրեց ամէնուն վրայ. շուտ մը Սարգիսի վէրքը պատեցին եղբայրները, և երբ այն գործողութիւնն ալ լմնցաւ, հեծաւ Թորոս առջեւէն, Մլեհ և ամէնը ետեւէն: Ոչ ձայն, ոչ խօսք, ոչ քըրթմընջիւն չէր լսուեր, այլ խիստ լռութիւնը միայն ձիերու սմբակները կ'ընդհատէին, մինչեւ հասան Վահկայ:

Երբ ձիէն իջաւ Թորոս, դարձաւ եղբօրը.

— Գնա՛, նստէ՛ հովանոցդ, սպասէ հրամանիս, ըսաւ:

Մլեհ առանց պատասխանելու հնազանդեցաւ և գնաց:

Հազիւ թէ Թորոս մտաւ իր դիւանը, սուրհանդակներ գնացին բոլոր շրջակայ բերդերը և նոյն իրիկունը մեծ ժողովի մը մէջ բոլոր իշխաններուն և զօրավարներուն ներկայութեան՝ Մլեհ բերուեցաւ և Իշխանը բոլոր անոր ըրած անգթութիւնները՝ յիմար և անխելք վարմունքը՝ եղբօրը անձին դէմ բիւր ըսպառնալիքները և վերջի նոյն դաւաճանութիւնը համրելէն ետքը՝ աւելցուց և հարցուց.

— Հիմա, Մլեհ, թէ որ ես ասոնք ըրած ըլլայի, դու որ շիտակ կը խօսիս. զրուցէ, ի՞նչ կընէիր:

— Այսչափ չէի սպասեր, շատոնց զքեզ սպաննած կըլլայի, պատասխանեց ան խիստ ձայնով մը:

— Բայց ես, չեմ ուզեր որ Ռուբինեանց մէջ մէկը զրուցուի պատմութեան մէջ թէ եղբօր արեան ձեռք մխեց. ուստի գնա, գնա՛ այս երկրէն դուրս, հեռացիր, շատ է որ ես երկու եղբայր բուռն մահուամբ կորուսի յունական ձեռքերէ: Ես կը կարծէի թէ Ստեփանէի թշուառ մահը բաւական էր զքեզ զգաստացընելու համար, կարծեցի թէ այս աթոռին օրինաւոր ժառանգ դուն միայն մնալով զգաստացեր ես, բայց անօգուտ, դու մահապարտ ես, ես քեզի կը ներեմ, բայց չեմ ներեր որ իմ մահուընէս վերջը այս աթոռին վրայ նստիս, վասն զի դու ոչ միայն նախատինք՝

այլ մահաբեր կրնաս ըլլալ այս իշխանութեան և ազգիդ:

Այս խօսքերէն վերջը եղբայրաբար և իշխանաբար վարուելով դարձեալ՝ «շատ ոսկի, արծաթ, և ձի ու ջորի» տուաւ և հանեց զինք երկրէն: Իսկ ան Սուլթան Նուրէտտինին գնաց դարձեալ:

ԳԼՈՒԽ ԻԸ.

ՅՈՒՆԱՑ ՎԵՐՋԻՆ ՃԻԳԸ

Այս տխուր դիպուածէն վերջը Թորոս զզուանք
մը խմացաւ եղբօրմէն. ինչպէս իմացեր էր իր փեսէն։
Մտքին մէջ չարունակ Դիոնիսին խօսքերը կը դառնա-
յին, որ երբեմն իշխանութեան ժառանգութեան վրայ
ըսած էր. եթէ իրեն նման քանի մը յաջորդներու ա-
թոռը ձգելու բարեբաղդութիւնը ունենար, կրնար
յուսալ թէ Ռուբինեանց հարստութիւնը տեւողու-
թիւն պիտի ունենար. ուստի նայելով չուրջը՝ Ստե-
փանէի մեծ որդին ալ՝ Ռուբէն նաեւ իր տղայամտու-
թեամբ յուսահատութիւն կը բերէր իրեն. Լեւոն մի-
այն՝ անոր պզտիկ եղբայրը յոյս մըն էր, բայց Մլեհ
և Ռուբէն արգելք մըն էին։

Այս խորհրդածութեամբ, տխուր՝ շատ անգամ
կը մտածէր, և միտքը կուգար այն հին Եղլադայի և
Հռոմի հասարակապետութիւններուն՝ ուր ազգի մը
բաղդը մարդու մը կարողութենէն չէր կախուեր,
այլ ազգին բարոյական զօրութենէն. բայց ո՞ւր էր
այդ բարոյական զօրութիւնը ստեղծելու դաստիարա-
կութիւնը։

Այս մտածութիւններն ահա՝ իր Եւփիմէին սու-
գին յիշատակը առանց իր սրտէն վերցնելու՝ զինք
յորդորեցին ժառանգ մը տալու համար աթոռին, ա-
մուսնութիւն մը ընելու Թովմաս անուն իշխանի մը
աղջկան հետ, որ ըստ իր փափաքներուն մանչ զաւակ
մը իրեն տուաւ և զոր ի յիշատակ ցեղապետին և իր
սիրելի եղբօր՝ Ռուբէն անուանեց։

Բայց բաղդը չէր ներեր որ Թորոս հանգիստ առ-

նէր պատերազմներէ, կռիւ մը հազիւ կը վերջանար,
նոր մը կը ծնէր. երբ իր երկիրը՝ հիւսիս, հարաւ և
արեւելքի կողմերէն կ՚ապահովէր, պէտք էր արեւ-
մուտքը իրեն դէմ թշնամի յարուցանէր։ Հիմա ալ
նոյնպէս ահա հին օձը գլուխ կը վերցնէր. իր բան-
տերէն, իր գերութենէն ճողոպրած, Անդրոնիկոս Կոմ-
նին Մանուէլ կայսեր հետ հաշտուած մեծագանձ պար-
գեւներով ճոխացած, իմացաւ թէ իր վրայ կուգայ,
ուստի իր պատրաստութիւնները տեսաւ և արթուն
կը սպասէր արժանաւոր ընդունելութիւն ընելու հա-
մար։

Եւ իրօք երբ Մամեստիա նստած էր Թորոս իր բա-
նակովը՝ լուր առաւ թէ Յոյներու նաւատորմը Աղեք-
սանդրիոյ ծոցը կը մտնէր և Անդրոնիկոս ցամաք կել-
լէր, գիտնալով թշնամիին յանդգնութիւնը՝ թոյլ տը-
ւաւ որ ան իր բանակին վրայ արշաւէ և նոյն միջոցին,
ինք քանի մը ընտիր գունդեր հետն առած՝ Ամանոսի
բարձանց վրայէն կը դիտէր յունական բանակին խը-
ւմբերը և աւարառուներուն մեծ և պզտիկ խում-
բերու անզգուշութիւնները՝ յանկարծահաս յարձակու-
մով մեծ բանակէն բաժնելով բնաջինջ կը կոտորէր։

Իսկ Անդրոնիկոս թէպէտ հաւասար իր չարութեան
քաջութիւն ալ ունէր, և ինչպէս անառակութիւննե-
րու նոյնպէս պատերազմներու մէջ ալ ծերանար, գիտ-
նալով նաեւ իր թշնամիին արթուն քաջութիւնը ո-
րուն փորձը առած էր, բայց տեղութեան կատաղու-
թենէն կուրցած՝ արհամարհել կը ձեւացնէր իր թըշ-
նամին, և ամբարտաւան պատգամաւորներ կ՚ուղար-
կէր Թորոսի, զայն հնազանդութեան կոչելով։

Իսկ Թորոս դեսպաններուն ամէն ըսածներուն լուրջ
և հանդարտ մինչեւ եղբը մտիկ ընելէն վերջը, նոյն
ինքն Մանուէլ կայսեր ոսկի հրովարտակը առջեւնին
նետեց արհամարհանօք։

— Գնացէ՛ք, ըսէ՛ք, ձեր զօրավարին, ըսաւ, թէ
ես զինքը ոչ օրինաւոր սպարապետ՝ այլ աւազակա-

պետ մը կը համարիմ, թէ որ իր տէրը՝ որ մեծազօր ինքնակալներու յաջորդ է և չգիտեր իր այս հրովարտակը յարգել, թէ որ իր տեղակալները անգութ և անզգամ դաւաճանութեամբ ամէն դաշինք ոտնակոխ ըրին և զմեզ բռնադատեցին արդար վրէժխնդրութեամբ յոյն իշխանութեան հետքն ու անունը այս երկրէն ջնջելու, հիմա նոյն կայսրը չամչնար՝ չի՞ կարմըրիր առնել իմ վրաս ըրկել այդ ոչինչ մարդը՝ որուն գոռոզ ամբարտաւանութեան հաւասար է պատերազմական տգիտութիւնը:

«Իրաւ ուրեմն՝ արդար է որ կ'իմանամ թէ ձեր Կայսրը աստուածաբանական գիտութիւններու ինքզինքը տալով բոլորովին յիշողութիւնն ալ կորուսեր է, մոռցեր է թէ այլ իր ընտրած զօրավարը նոյն այդ մարդն է որ ասկից տասնեւհինգ տարի առաջ իմ վրաս գալով և այսպէս դարձեալ մեծ մեծ ջարդելով անարգաբար կիսամերկ փախաւ:

«Թէպէտ նոյն ատենն ալ դարձեալ հռոմէական կեսար անունը կ'աղտոտէր և Սպարապետ անունը ծիծաղելի կ'ընէր. տէ՛ ղացէք, դուք խեղճ մարդիկ, նայեցէք որ իրմէ առաջ փախչելու ճարը տեսնէք, վասն զի հիմա իմ զօրքերս ձեր Անդրոնիկոսներուն՝ ձեր կեսարներուն՝ ձեր խեղճ զինուորներուն խնայութիւն ընել չեն գիտեր, այլ մինչեւ վերջինը սպաննել ուխտած են: Գացէք ձեր բանակը այսպէս պատմեցէք»:

Այս պատասխանը Անդրոնիկոսի կատաղութիւնը յիմարութեան վիճակի մը հասցուց, և իր բանակին նորահնար ձեւ մը տալ ուզելով, կենդանիի մը կերպարանք տուաւ կ'ըսէ պատմութիւնը, գլխով, ոտքերով և ագիով, և այսպիսի դասաւորութեամբ մը յարձակեցաւ Թորոսի բանակին վրայ: Իսկ Թորոս որ այսպիսի պատկերահանութենէ չէր հասկնար, այլ միշտ իր լեռներուն և անտառներուն դիրքէն օգուտ քաղելէ կը հասկնար, նոյնպէս այս անգամ ամէն իր

բանակն այնպէս յարդարեց որ թշնամիին փախչելու ճամբայ չի ձգէ, ուստի ամէն կողմ թշնամին պատեց դարանամուտ զօրքով, և իր բանակին ճակատը հօղապատնէշներով ամրացնելէն վերջը, ընտիր հեծելադունդով մը անցաւ թշնամիին կռնակը:

Եւ երբ Անդրոնիկոս իր գլխովն ու ոտքերով՝ թեւերովն ու ագիով կը պատերազմէր՝ իր դրացի բանակին հետ աջէն ու ձախէն և կռնակէն հարուած հարկին հետ աջէն ու ձախէն և կռնակէն հարուած հարուածի վրայ հասնելով բանակը քայքայուեցաւ և խորտակուեցաւ և անխուսափելի խայտառակութիւնը երկրորդ անգամ վերահաս նկատելով, երբ յուսահատ կը մտածէր, տեսաւ Թորոսը գրաւած խորտակելու իր զօրքերուն վերջին ճիգը իր աջ թեւին վրայ, գազանի մը պէս իր բոլոր զօրութեամբ յարձակեցաւ անոր վրայ, որ հազիւ ժամանակ ունեցաւ վահանը դէմ դնելու անակընկալ հարուածին և ձիէն վար ինկաւ: Բայց Անդրոնիկոս՝ երբ ինկած թշնամին նոյն վայրկենին ոտքի վրայ տեսաւ և որ դարձեալ ակնթարթի մէջ նորէն ձիուն վրայ կը ցատկէր, իմացաւ վտանգը և ձիուն գլուխը դարձուց ու բռնեց նոյն խըստեան Անտիոքի ճամբան, որ երբեմն իր կեանքը ագատեր էր: կեանք մը որ ամէն չարութեամբ լեցուն՝ չարաչար սկսած՝ թէպէտ կայսերական գահերու վրայ ալ չարաչար պիտի վերջանար:

Անդրոնիկոսի այս պարտութեան լուրը երբ Կոստանդնուպոլիս հասաւ, Մանուէլ կայսրը այսչափ նատանդնուպոլիս հասաւ, Մանուէլ կայսրը այսչափ նախատինք բաւական չհամարելով, նոր մը նոր բանակ մը կազմեց և Կոստանդին Կալաման դուքսը ընտիր պարապետ կարգելով Թորոսի վրայ ղրկեց, վերջին փորձ մըն ալ ընելով: Պատերազմը Տարսոնի քովերը տեղի ունեցաւ և յունական բանակը սպառապուռ խորտակուած և զօրավարը գերի բռնուեցաւ Թորոսէն, և Բիւզանդիոնի կայսրութիւնը՝ իր բոլոր ամբարտաւանութեամբ իր ապստամբ թշնամիին ձեռքէն ծախու առնել ստորնացաւ այս մեծ իշխանը ծանր փրկանք վճարելով:

Ա՛լ անկից վերջը խաղաղութեամբ տիրեց ամբողջ Կիլիկիոյ և մեծ Իսաւրիոյ և Փռիւգիոյ․ հաստատեց իր աթոռը Մամեստիայի մէջ իբրև կեդրոն իր իշխանութեան։ Անոնք որ իր քսանևհինգ տարուան պատերազմներուն փառքով և սպիներով էին զարդարուած՝ իշխանութեամբ և ասպետութեամբ բարձրացուց, վասն զի իր սկզբունքն էր առաքինութիւնը վարձատրել և անզգամութիւնը պատուհասել։

Իր օրով Հայը որ ամէն տեղ հարստահարուած, թշուառութեան էր դատապարտուած, Թորոսի Երկիրը հանգստութիւն և պաշտպանութիւն կը գտնէր։

Զինուորը քաջ էր և աներկիւղ անոր օրով, և բոլոր շրջականներուն ահաւոր եղաւ Ռուբինեան խաչը՝ որ հայ դրօշակին վրայ կը ծածանէր։

Տօրոսի լեռները ուրախութեան և նուագարաններուն ձայներուն արձագանգ կուտային՝ այլ անոնց երկիրը իր մետաղական հարստութեամբ աշխատող ժողովուրդը կը վարձատրէր։

Վանքերը Սև լերան վրայ Աստուծոյ փառաբանութիւնները երկինք կը բարձրացնէին, այլ նաև ժողովրդեան դպրոցներն էին։ Կիլիկոյ բեղմնաւոր դաշտերը մշակուած՝ հասկերով և պտղատու ծառերով կը զարդարուէին, ամէն տեսակ ընտանի կենդանիներու հօտեր իր հարստութեան աղբիւրներն էին։

Բաց պատերազմի մէջ՝ արդար և աշխարհաշէն խաղաղութեան մէջ՝ ոչ միայն մեծ Իշխանի անուն ունեցաւ, այլ առաքինի և ազնիւ մարդու համարում ստացաւ․ իր բարեկամութիւնը փնտռեցին իր սահմանակից իշխաններ և թագաւորներ ու յարգեցին, վասն զի տեսան որ պաշտպան էր որբին ու տկարին։

Ո՛վ որ ազգային պատմութիւնը սորվի ուշադրութեամբ, հայ գիւղացիներու առաջին կարգին մէջ կը նշմարէ այս մեծ հանճարը՝ որ ոչ միայն իր ժամանակէն՝ այլ նաև իր բաղդէն վեր էր։ Իր քաջութեան հաւասար էր իր խոհեմութիւնը, վասն զի գիտէր

դժուարին և ապերախտ պարագաներէն օգուտ քաղել, գիտէր ժամանակին տեղի տալ և սպասել, որ իշխաններուն առաջին կատարելութիւնն է թէպէտ ռամկական աչքեր չի շլացնէ։

Կրօնաւէր առանց նախապաշարումի, այնպիսի ժամանակի մէջ՝ և այնպիսի քաղաքի մը մէջ դաստիարակուած՝ որ իշխանները և ինքնակալները անբացատրելի աստուածաբանական խնդիրներով կը զբաղէին երկրին պիտոյքը երեսի վրայ թողած, ան գիտցաւ իր միտքը և իրենները անարատ պահել այդ ժիմարական հիւանդութենէն, ինչպէս գիտցաւ կրօնքի ճշմարտութիւնները յարգել և յարգել տալ իր ժողովրդեան։

ԳԼՈՒԽ ԻԹ.

ԹՈՐՈՍԻ ՄԱՀԸ

Այսպէս ահա երբ խաղաղութիւն գտած երկրին բարեկարգութիւնը նկատելով՝ իր փոքրիկ Ռուբէնին զարգանալը ախորժ աչքով կը տեսնէր, և անոր դաստիարակութեան կերպը կը մտածէր· երկու նպատակ մի էին իր մտքին մէջ, ազգն ու զաւակը, զորս չէր կրնար զատել:

Բայց Նախախնամութիւնը ուրիշ կերպ որոշեր էր: Բուռն հիւանդութիւն մը վրայ հասաւ, և այդ զօրաւոր կազմուածքը որ այնչափ պատերազմներու այնչափ մտատանջութիւններու, այնչափ կսկիծներու և այնչափ բարոյական նեղութիւններու անընկճելի դիմացեր էր· տեսաւ թէ մահը կը մօտենար, անոր առջևն ալ դարձեալ անընկճելի կեցաւ և հանդարտ սպասեց:

Իր հիւանդութեան լուրը բոլոր Կիլիկիոյ իշխանները ու բերդակալները, զօրավարներն ու ասպետները և հայ ժողովուրդները ահուդողի և տխրութեան մէջ ընկղմեց: Մամեստիոյ ճամբաներն ու եկեղեցիները ժողովուրդը կը խռնուէր, հոն իրարու կը հարցընէին առողջութեան ձայն մը յոյս մը փնտռելու համար· հոս ծերերն ու կիները, փոքրիկ տղաքները սուրբ սեղաններու առջին ձգած՝ անոնց անմեղութիւնը կուզէին միջնորդ առնուլ առ Աստուած: Արքունի սրահներուն և գաւիթներուն մէջ կը վխտային ամէն հասակի՝ ամէն կարգի զինուորականները, և այդ խրոխտ արևէն սևցած ժանդոտած կերպարանքներ՝ որ պատերազմական փողին ձայնին, նոյնն է մահուան ձայնին, քսան և հինգ տարիներ անխռով մնա-

ցեր էին, հիմա անձայն, անշշուկ իրարու կը մօտենային՝ առանց բարևելու իրարու կը նայէին՝ շըրթունքնին կ'ամփոփէին և վերջը անսովոր արցունք մը ծածկելու համար առանձին տեղուանք կը փընտռէին:

Բոլոր հայ Կիլիկիոյ մէջ անխռով մարդ մը միայն ինք Թորոս թերևս մնացեր էր, որ մահուան անկողնին մէջ տարածուած, իր վերջի կամքերը կը կտակէր և ի՞նչ էին իր վերջին կամքերը:

Փոքրիկ տղայ մը՝ Ռուբէն՝ վեց եօթը տարու, շըփոթած ամէնուն արցունքներէն և տխրութենէն կեցեր էր հօրը մահճակալին քով, տղուն պապը՝ Թովմաս իշխանը՝ տխուր, բայց յուսահատ տխրութեամբ արձանի պէս անոր քով կը կենար· անկողնին միւս կողմը Գոհար ծունկի վրայ՝ ծածուկ արցունքներէ և անքուն գիշերներէ աչքերուն փայլը կորսուած, մէյ մը հօրը երեսը, մէյ մը երկինք կը նայէր յուսոյ նշոյլ փնտռելով· քիչ մը անդին կեցած էին Ռուբէն և Լևոն իր եղբօրորդիները: Իսկ իշխաններուն և զօրավարներուն երևելիները սենեակին չորս կողմը կազմած էին· շնչառութեան ձայն անգամ չէր լըսուեր· լռութիւնը այնչափ սաստիկ էր:

Երբ ամէնքը չորս կողմը շարուած տեսաւ Թորոս աչքերը փայլ մը առին, հսկայ իրանը անգամ մը շարժեցաւ, և հանդարտ ձայնով մը սկսաւ խօսիլ·

— Ո՛վ դուք սիրելիներ իմ, բարեկամներ և նիզակակիցներ իմ որ հոս զձեզ փափաքեցայ անգամ մըն ալ տեսնելու՝ հրաժարական ողջոյնս տալու և վերջին յանձնարարութիւններս ընելու համար... դուք որ միշտ ձեր քաջութիւնը ցոյց տուիք մինչև այսօր պէտք է որ այս հանդիսաւոր վայրկենիս նաև քաջ և անխռով կենաք, տկարութիւն հեռի՛ մեզմէ: Մտիկ ըրէ՛ք ուրեմն այն մարդուն վերջի կամքերը՝ որուն երեսուն տարի բարեբաղդութիւն շնորհեց Աստուած ձեր Իշխանը ըլլալու:

«Այո՛, Աստուածային մեծ շնորհքն էր և ես կը խոստովանիմ և միշտ կը յիշեմ այն օրը՝ որ տարադիր անծանօթ, պանդուխտ և մոռցուած այս ափերը կելլէի քանի մը ընկերներով և նաև չէի հաւատար թէ իմ Նախահայրերուս գործերէն աւելի մեծերը, անոնց իշխանութենէն աւելի ընդարձակը սահմաներ էր ինծի Նախախնամութեան ձեռքը՝ իմ ազգիս գլխ առաջնորդ և պաշտպարան ըլլալու համար, և այս գործիս մէջ ձեր քաջութեան ձեռնտուութիւնը ինծ տուաւ:

«Հիմա որ ես կ՚երթամ, առաջի Աստուծոյ՝ ետքը ձեզի աւանդ կը յանձնեմ այս տկար տղան. թէ որ Տիրոջ կամքն է, այս ալ կը մեծնայ կը զօրանայ՝ հօրը պէս իր ազգին նեցուկ և առաջնորդ ըլլալու, մանաւանդ թէ ձեր կորովի բազուկները օգնական ըլլան իրեն: Ուրեմն սիրով եղէք, միաբան եղէք իրարու հետ, ազգին համար, ձեզի համար, և այս անմեղ տղուն համար:

Մի՛ մոռնաք թէ Հայ խաչին դրօշակը այս լեռներուն վրայ եղբայրութեան սիրով հաստատուեցաւ, ատելութիւն նախանձ՝ ամբարտաւանութիւն առաջին օրը որ զայն կործանեն, գերութիւն և թշուառութիւն կը հասնին հաւասար մեր ամէն զաւակներուն վրայ. նաև ամէն այն Հայոց վրայ որ աշխարհիս յետին ծայրերէն հոս կը դիմեն ազատութեան օդ շնչելու համար: Մնաք բարեաւ սիրելի նիզակակիցներս, Աստուած ձեզի օգնական ըլլայ միշտ՝ ինչպէս երբեմն որ մէկտեղ էինք»:

Շրջանը աւրուեցաւ, հեկեկանքի ձայներ ոմանք ափերնուն մէջ ոմանք թաշկինակներու մէջ կը խեղդէին, ամէնէն քաջերը աչքերնին արցունքով լեցուն կուգային լռիկ՝ առնելու և համբուրելու այն աջը որ այնչափ տարիներ առաջնորդեր էր իրենց պատերազմի և խաղաղութեան մէջ, և փառքով ու մեծութեամբ լեցուցեր էր զիրենք: Բայց Թորոս դեռ դրան կը նայէր և առանց հարցնելու մարդ կը փնտռէր: Բարկէն

չէր երեւար, խեղճ ծերը թէպէտ ուժսունը անցած՝ իմանալուն պէս ելեր էր Ամուտայ բերդէն գալու համար, բայց դեռ չէր հասեր. Թոռնիկ հազիւ կրցաւ երեւալ և իր այլայլութիւնը ծածկելու համար փախուստ կուտար: Ամէնէն թշուառը ամէնէն երջանիկն էր նոյն միջոցին Ռուբէն որդին իր ապագայ թշուառութեան չափն ալ չէր կրնար իմանալ, և չէր կրնար հասկնալ խեղճ որբը՝ թէ այնպիսի հայր մը կորսնցնելով իշխանութեան ժառանգութիւնը սպառնալիք մըն էր իր անմեղ կեանքին:

Ոչինչ պակաս թշուառ չէր նաև Գոհարի ապագան, որ չէր գիտեր թէ ի՞նչ ընդունելութիւն պատրաստած էին իր Լամբրոնացիները, որ հօրը վախէն մինչեւ այն օրը լաւ կը վարուէին իրեն հետ: Բայց խեղճ կինը զինք մոռցեր էր այն միջոցին, միայն այնպիսի հօրմէ բաժնուիլը կը նկատէր:

Իսկ Թորոս այն վայրկեանին որ մահը դէմ առ դէմ տեսաւ, հանդերձեալ անմահութիւնն ալ տեսաւ. յանձնեց Նախախնամութեան իր ազգն ալ՝ իր երկու զաւակներն ալ՝ իր հոգին ալ:

Կրօնական ամէն պարտաւորութիւնները կատարեց, և երկրորդ օրը եկեղեցին իր տխուր երգերը կ՚երգեր, իսկ ազգը կուլար այնպիսի Իշխանի մը վրայ՝ որ հայր եղեր էր ժողովրդեան, և անոր ողբը տարիներ քշեց մինչեւ որ Լեւոն իր հօրեղբօրը յաջորդելով ազգին արցունքները սրբեց:

Թաղուեցաւ Թորոս համանուն հօրեղբօր քով Դրազարկի մէջ, ուր Եւփիմէի աճիւնը տարիներով առաջ իրեն կը սպասէր.

ՎԵՐՋ

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ՊԻՏԻ ՏԵՍՆԷ

Անմահն վիպագիր ԾԵՐԵՆՑ-ի «Թորոս - Լեւոնի» վէպին ընթերցողներուն կողմէ գտած անօրինակ ընդունելութենէն քաջալերուած՝ այս անգամ կը սկսինք հրատարակել դարձեալ Մեծանուն վիպագրին գործերէն «ԵՐԿՈՒՆՔ» անուն զուտ ազգային-պատմական մէկ վէպը։

Աւելորդ կը համարինք գովեստը հիւսել հեղինակին գործերուն՝ քանի որ ընթերցողները կրցան գնահատել զանոնք։

Խնամուած տպագրութեամբ և մաքուր կազմով հրապարակ պիտի ելլէ։

ՄՕՏ ՕՐԵՐՍ

ՓՆՏՌԵՑԷՔ

ՓՆՏՌԵՑԷՔ

ՓՆՏՌԵՑԷՔ

ՀԱՄԱՌՕՏ ԺԱՄԱԳԻՐՔ

ՍԱԿԱՒԱԹԻՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ ՄԻԱՅՆ ՄՆԱՑԱԾ

Համառօտ և ամփոփ ԺԱՄԱԳԻՐՔ մը, ուր եկեղեցասէր հայեր և Եկեղեցիի պաշտօնեաներ բացի սովորական ժամասացութենէն պիտի գտնեն ՊԱՏԱՐԱԳԻ ԾՆՆԴԵԱՆ ու ՄԿՐՏՈՒԹԵԱՆ, ԱՒԱԳ ՇԱԲԹՈՒ և ԶԱՏԿԻ, ինչպէս նաեւ ՄԵԾ ՊԱՀՈՑ և ԱՐԵՒԱԳԱԼԻ երգերը։

ԳԻՆ 50 ՍԷՆԹ

Ստանալու համար դիմելու են միայն

ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Ընդարձակ Գրացուցակը ձրի կը ղրկենք փափաքողին

H. G. BERBERIAN

837 Washington St. Boston Mass.

Թղթակցութեան հասցէ՝

H. G. BERBERIAN

P. O. Box 34 Sta. A,

Boston, Mass.

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ Է

ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ

ՊԻՏԻ ՏԵՍՆԷ

ՇԱՆԹ-ի

"ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ"ը

Հայկական Թատրոնի գլուխ գործոցը, որ՝ արժանացած է թէ Պոլսոյ և թէ Թիֆլիզի ու արտասահմանի ամենաբարձր գնահատման։ Կուզե՞ս հայ Շէյքսպիրը կարդալ, հատ մը կանխաւ ապսպրէ, որովհետև շատ սահմանափակ օրինակներ պիտի տպուին։

ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

H. G. BERBERIAN

837 Washington St. Boston Mass.

Թղթակցութեան հասցէ՝

H. G. BERBERIAN

P. O. Box 34 Sta. A.

Boston Mass.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԷՆԷ ԱՆԳԼԻԵՐԷՆ

ԿԸ ԲԱՂԿԱՆԱՅ ՄՕՏ 400 ԷՋԵՐԷ ԵՒ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

1. *Զրուցատրութիւն, ճշգրիտ հնչումներով*
2. *Ընթերցանութիւն Առանց Ուսուցչի,*
3. *Քերականական գիտելիքներ,*
4. *Նամակագրութիւն կանոններով,*
5. *Կարեւոր Գիտելիքներ, Գունաւոր Քարտէսներ,*

Դրօշակներ եւայլն:

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԻՆ $ 1,50

ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

H. G. BERBERIAN

837 Washington St. Boston, Mass.

Թղթակցութիւն

P. O. Box 34, Sta. A.

Boston, Mass.

ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ԿԱՐԴԱ ԵՒ ՋՈՒՏԻ ՋՂՋԱՍ

Կուզե՞ս որ ամէն ժամանակ և ամէն պարագայի տակ անգլիերէն բառերու համար չի նեղուիս, գնէ մէկ հատ փրոֆ. Յ. Յակոբեանի գրպանի Անգլիերէնէ Հայերէն բառարանէն, որը պատրաստուած է յարենըման Ուէպստըրի «The Metropolitan Vest-Pocket» *բառագրքոյկին և* Standard *բառարանին բառերուն ամենաճիշդ և նորագոյն նշանակութիւնները դրուած են։ Չի կայ ուէ բառարան մը որ ասոր նման յարմարութիւն ունենայ գրպանիդ մէջ կրելու առանց նեղութեան։ Հատ մը ապահովէ քանի սպառած չէ։*

ԳԻՆ 50 ՍԷՆԹ

Ընդարձակ գրացուցակ ձրի կը ղրկուի

Դիմել՝

H. G. BERBERIAN

837 Washington St. Boston, Mass.

Թղթակցութեան հասցէ՝

H. G. BERBERIAN

P. O. Box 34, Sta. A.

Boston, Mass.

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՆԱՄԱԿԱՆԻ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ 400 ԵՐԵՍ

Յ. Յ. ՉԱԳՄԱԳՃԵԱՆ

ԱՄԵՆԱՃՈԽ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

ԵՒ ՄԻԱԿԸ ԻՐ ՏԵՍԱԿԻՆ ՄԷՋ

Ամերիկահայ նամականին կը պարունակէ Բարեկամական, Ընտանեկան, Ցորդորական, Շնորհաւորական, ցաւակցական, Սիրային, Հարսանեկան եւ Առեւտրական նամակներ: Բազմաթիւ օրինակներ տրուած են նշանաւոր դէմքերու խիստ հետաքրքրական նամակներէն:

Ամերիկահայ Նամականին կուտայ Ամերիկայի մէջ ընդունուած նամակագրութեան կանոններու ամփոփումը, ակնարկներ առեւտրական օրէնքներու վրայ, և տեղեկութիւններ Միացեալ Նահանգներու Թղթատարական օրէնքներու և գիներու վրայ:

Ընթերցանութեան համար հաճելի, նորեկներու համար դաստիարակիչ, իսկ առեւտրականներու համար անհրաժեշտ գիրք մը: Անգլիերէն սորվելու ընտիր միջոց մը:

ԳԻՆ ՄԷԿ ՏՈԼԱՐ

Ստանալու համար դիմել՝

ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

837 Washington St. Boston, Mass.

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԻՆ $ 1.50

Ժողովրդային երգարան մը գնելու ես որովհետեւ

Ժողովրդային Երգարանը իր 750 երեսներուն մէջ կը պարունակէ մօտ 500 ընտիր երգեր—Ազգային, Յեղափոխական, Սիրային, Զաւեշտական, Կրօնական են։

Ժողովրդային Երգարանին ձայնագրուած բաժինը ծանօթ հայ երգչուհի Տիկ. Փանոսեան յատկապէս երգած՝ և մեծահամբաւ երաժիշտ Ն. Ամիրխանեանց նօթագրած է։

Ժողովրդային Երգարանը կը պարունակէ բազմաթիւ Հեղինակներու Լուսանկարներ, Նկարներ և Զարդեր։

Ժողովրդային Երգարանը կը գերազանցէ իր նախորդները իր ճոխութեամբ, գեղեցկութեամբ եւ կազմով։

Ժողովրդային Երգարանը պատրաստուած է նոր մեթոտով մը, որով կարելի է ակընթարթի մը մէջ գտնել փնտռած երգը։

Ժողովուրդը ընտրած է անոր երգերուն մեծ մասը և այդ պատճառով "Ժողովրդային Երգարան" անունը կը կրէ։

ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՈՍՏՈՒՆ

837 Washington St. Boston, Mass.

Թղթակցութեան հասցէ՝

P. O. Box 34, Sta. A. Boston, Mass.

Гос. Библиотека ՀԱՍՌ ССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0349458

35208